

Լիափորնա

Գնրագույն Համաժողովի Ելույթները

Կանչվեցին նոր
Յոթանասունականներ,
Երիտասարդ տղամարդկանց
գնրագույն նախագահությունը
և Երեխաների խմբի գնրագույն
նախագահությունը

Հայտարարվել են երեք նոր
տաճարներ



© GREG OLSEN, ՉԲՐԱՍՆԱԲՆԵՆԻ

Էմմաուսի ճանապարհին, Գրեգ Օլսեն

«Եւ սեսա նորանցից երկուսը միեւնոյն օրը մի գիտէին զնոս, որ վաթսուն ասպարէզ Երոուսաղէմիցը հեռու էր, անունն Էմմաուս: . . .
Եւ եղաւ որ նորանք խօսելիս եւ վիճաբանելիս, հէնց ինքն Յիսուսը մօտեցաւ եւ զնոս էր նորանց հետ: . . .
Եւ եղաւ երբոր նա նորանց հետ սեղան նստեց, հաց առաւ՝ օրհնեց, կտրեց եւ տոռաւ նորանց:
Եւ նորանց աչքերը բացուեցան եւ նորան ճանաչեցին. Եւ նա աներևոյթ եղաւ նորանցից:
Եւ իրար ասեցին. Չէ՞ որ մեր սրտերը բոլորովն էին մեզանում, երբոր ճանապարհին մեզ հետ խօսում էր, եւ ինչպէս գրքերը բաց էր անում մեզ համար» (Ղուկաս ԲԴ. 13, 15, 30–32):

Կանանց գերագույն նիստ

- 8 Լցնել մեր տները լույսով
և ճշմարտությամբ
Շերիլ Ա. Էսփին
- 11 Ընտանիքն Աստուծուց է
Քերոլ Մ. Սթենֆենս
- 14 Ընտանիքի մասին
հայտարարության
պաշտպանները
Բոննի Լ. Օսկարսոն
- 17 Մխիթարիչը
Նախագահ Հենրի Բ. Սյրինգ

Շաբաթ առավոտյան նիստ

- 22 «Ահա սա է ծոմը, որին ես
հավանում եմ»:
Նախագահ Հենրի Բ. Սյրինգ
- 26 Երջանկության ծրագիրը
Նախագահ Բոյդ Զ. Փաքեր
- 29 Մենք միասին կբարձրանանք
Լինդա Զ. Բըրթոն
- 32 Սերմնացանի առակը
Երեց Դալլին Հ. Օուքս
- 36 Ընտրիր հավատքը
Երեց Լ. Ուիթնի Զլնյթոն
- 39 Ինչո՞ւ են կարևոր ամուսնությունն
ու ընտանիքն ամբողջ
աշխարհում:
Երեց Լ. Թոմ Փերի

Շաբաթ ցերեկային նիստ

- 43 Եկնդեցու պաշտոնյաների
հաստատումը
Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆ
- 45 Եկնդեցու աուդիտի բաժնի
հաշվետվություն, 2014
Քեվին Ռ. Յերգենսեն
- 45 Վիճակագրական
հաշվետվություն, 2014
Բրուք Պ. Հեյլս
- 46 Հետևաբար նրանք զսպեցին
իրենց վախը
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
- 50 Ինչո՞ւ ամուսնանալ, ինչո՞ւ
ընտանիք ունենալ
Երեց Դ. Թոդ Զրիստոֆերսոն
- 54 Ավետարանի նրաժշտությունը
Երեց Վիլֆրիդ Վ. Անդերսեն
- 56 Վերջին Օրերի Սրբերը
շարունակում են ճիգ թափել
Երեց Դեյվ Գ. Ուելլանդ

- 59 Իսկապես լավը ու ննջությունից
զուրկ
Երեց Մայքլ Տ. Ռինգլո
- 62 Տերն է իմ լույսը
Երեց Զվենթին Լ. Զուր

Քահանայության գերագույն ժողով

- 67 Երիտասարդ ամուսինների
ամենահոյակապ սնունդը
Երեց Մ. Ռասսել Բալլարդ
- 70 Այո՛, մենք կարո՞ղ ենք և
կհաղթե՞նք:
Երեց Ուիլսոն Սոարես
- 77 Հայրություն՝ մեր հավերժական
ճակատագիրը
Լարի Մ. Գիբսոն
- 80 Անկեղծ լինելու մասին
Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆ
- 84 Քահանայությունը և անձնական
աղոթքը
Նախագահ Հենրի Բ. Սյրինգ
- 88 Քահանայություն՝ սրբազան
պարզ
Նախագահ Թոմաս Ա. Մոնտն

Կիրակի առավոտյան նիստ

- 91 Տաճարի օրհնությունները
Նախագահ Թոմաս Ա. Մոնտն
- 93 Վերադարձ հավատքին
Ռոզմարի Մ. Վիքսոն
- 96 Փսոթելով Տիրոջը
Երեց Հուս Ա. Թեքսելյա
- 98 Դեռևս հրաշալի՞ է դա ձեր
համար:
Եպիսկոպոս Ջեյմս Կոսե
- 101 Սպասելով մոլորվածին
Երեց Բրենտ Հ. Նիլսոն
- 104 Որտեղ հանդիպում են
արդարադատությունը, սերն
ու ողորմածությունը
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
- 107 Ընտրի՞ պարզը
Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆ

Կիրակի ցերեկային նիստ

- 111 Պահպանել ազատ կամքը,
պաշտպանել կրոնական
ազատությունը
Երեց Ռոբերտ Դ. Հեյլս
- 114 Մնացե՛ք ձառի մոտ
Երեց Զեվին Վ. Փիրսոն

- 117 Ավետարանի հավերժական
հեռանկարը
Երեց Ռաֆայել Ի. Փինո
- 119 Գայ ջո արքայությունը
Երեց Նիլ Լ. Ստերսեն
- 123 Եթե լինե՞ք պատասխանատու
Երեց Ջորջ Ֆ. Ջեբարդ
- 126 Աճեցե՛ք, բազմացե՛ք, և տիրեցե՛ք
երկիրը
Երեց Ջոզեֆ Վ. Սիտատի
- 129 Կիրակին բերկրանք է
Երեց Ռասսել Մ. Նելսոն
- 72 Հիսուս Քրիստոսի Վերջին
Օրերի Սրբերի Եկնդեցու
Բարձրագույն Իշխանությունները
և Բարձրագույն Պաշտոնյաները
- 133 Համաժողովի պատմությունների
ցուցիչ
- 134 Նրանք խոսեցին մեզ հետ.
համաժողովը մեր կյանքի մասը
դարձնելը
- 136 Եկնդեցու նորությունները



185-րդ ամենամյա գերագույն համաժողով

Շաբաթ նրնկո, 28 մարտի, 2015, կանանց գերագույն ժողով
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն Վարող. Քույր Լինդա Ք. Բրոքսն Բացման աղոթք. Բեվերլի Թինգլի Փակման աղոթք. Ռեյնա Ի. Աբուրտո Երաժշտությունը՝ Երեխաների Միության, Երիտասարդ Կանանց և Սկոփոդ Միության միացյալ երգչախմբի կողմից Սուրբ Լեյք, Մյուրեյ, Կամաս և Պարկ Միթի ցցերից, Յուտա; խմբավար. Էրին Փայք; երգեհոնահար. Լինդա Մարջեթս. “How Firm a Foundation,” *Hymns*, no. 85; musical presentation, “The Family Is of God,” Neeley, arr. Zabriskie, unpublished; “From Homes of Saints Glad Songs Arise,” *Hymns*, no. 297, arr. Wilberg, unpublished; Medley: “Love at Home,” *Hymns*, no. 294; “Let Us Oft Speak Kind Words,” *Hymns*, no. 232; “Our Savior’s Love,” *Hymns*, no. 113, arr. Tall/Margetts, unpublished.

Շաբաթ առավոտ, 4 ապրիլի, 2015, գերագույն նիստ
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն Վարող. Նախագահ Դիտեր Ֆ. Ուլսոթրֆ Բացման աղոթք. Երեց Տիմոթի Ջ. Դայչես Փակման աղոթք. Երեց Լարի Ջ. Էրո Հոթ Երաժշտությունը՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավարներ. Մաք Վիլբերգ և Ռայան Մրրֆի, երգեհոնահարներ. Էնդրյու Անսվորթ և Քլեյ Քրիսչենսեն. “Guide Us, O Thou Great Jehovah,” *Hymns*, no. 83; “Glory to God on High,” *Hymns*, no. 67; “Have I Done Any Good?” *Hymns*, no. 223, arr. Zabriskie © HolySheetMusic.com; “High on the Mountain Top,” *Hymns*, no. 5; “Come unto Jesus,” *Hymns*, no. 117, arr. Murphy, unpublished; “I Believe in Christ,” *Hymns*, no. 134, arr. Wilberg, pub. by Jackman.

Շաբաթ ցերեկ, 4 ապրիլի, 2015, գերագույն նիստ
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն Վարող. Նախագահ Էնրի Բ. Այրինգ Բացման աղոթք. Ջին Ա. Սթիվենս Փակման աղոթք. Երեց Ռենդի Դ. Ֆանկ Երաժշտությունը՝ երիտասարդ ամուրիների միացյալ երգչախումբ Դեյվիս և Վերեր Քաունթրիի ցցերից, Յուտա; խմբավար. Մոնյա Սկերլինգ, երգեհոնահարներ. Բոննի Գուդլիֆ և Լինդա Մարջեթս. “Praise to the Lord, the Almighty,” *Hymns*, no. 72, arr. Wilberg, pub. by Oxford; “I Stand All Amazed,” *Hymns*, no. 193, arr. Murphy, unpublished; “We Thank Thee, O God, for a Prophet,” *Hymns*, no. 19; “Let Us All Press On,” *Hymns*, no. 243, arr. Elliott, pub. by Jackman.

Շաբաթ նրնկո, 4 ապրիլի, 2015, Զահանայության գերագույն նիստ
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն Վարող. Նախագահ Դիտեր Ֆ. Ուլսոթրֆ Բացման աղոթք. Դեյվիդ Լ. Բեք Փակման աղոթք. Երեց Ռոբերտ Ք. Գեյ Երաժշտությունը՝ Բրիգամ Յանգ Համալսարանի քահանայության երգչախումբ; խմբավար. Ռոնալդ Մթահելի, երգեհոնահարներ. Ռիչարդ Էլիոթ և Էնդրյու Անսվորթ. “For the Strength of the Hills,” *Hymns*, no. 35, arr. Tom Durham, pub. by Jackman; “On This Day of Joy and Gladness,” *Hymns*, no. 64, arr. Staheli, unpublished; “Hark, All Ye Nations!” *Hymns*, no. 264; “Master, the Tempest Is Raging,” *Hymns*, no. 105, arr. Staheli, unpublished.

Կիրակի առավոտ, 5 ապրիլի, 2015, գերագույն նիստ
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն Վարող. Նախագահ Էնրի Բ. Այրինգ Բացման աղոթք. Քույր Լինդա Ս. Ռիվս Փակման աղոթք. Երեց Քեվին Ս. Համիլտոն Երաժշտությունը՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավար՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մրրֆի, երգեհոնահարներ՝ Բոննի Գուդլիֆ և Լինդա Մարջեթս. “Lo, the Mighty God Appearing!” *Hymns*, no. 66; “He Is Risen!” *Hymns*, no. 199, arr. Wilberg, unpublished; “Consider the Lilies,” Hoffman, arr. Lyon, pub. by Jackman; “I Know That My Redeemer Lives,” *Hymns*, no. 136; “Jesus Has Risen,” *Children’s Songbook*, 70, arr. Murphy, unpublished; “Christ the Lord Is Risen Today,” *Hymns*, no. 200, arr. Wilberg, unpublished.

Կիրակի ցերեկային նիստ, 5 ապրիլի, 2015, գերագույն նիստ
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն Վարող. Նախագահ Դիտեր Ֆ. Ուլսոթրֆ Բացման աղոթք. Երեց Ս. Գիֆֆորդ Նիլսեն Փակման աղոթք. Երեց Կոլի Սոյազի Երաժշտությունը՝ Թաբերնաքլի երգչախումբ; խմբավարներ. Մաք Վիլբերգ և Ռայան Մրրֆի, երգեհոնահարներ. Բոննի Գուդլիֆ և Լինդա Մարջեթս. “My Redeemer Lives,” *Hymns*, no. 135, arr. Wilberg, unpublished; “He Sent His Son,” *Children’s Songbook*, 34, arr. Hofheins, unpublished; “Come, O Thou King of Kings,” *Hymns*, no. 59; “Tell Me the Stories of Jesus,” *Children’s Songbook*, 57, arr. Murphy, unpublished; “Lord, I Would Follow Thee,” *Hymns*, no. 220, arr. Murphy, unpublished.

Համաժողովի ելույթները մատչելի են
Գերագույն համաժողովի ելույթները տարբեր լեզուներով մատչելի են

համացանցում՝ conference.lds.org կայքում, որտեղ կարող եք ընտրել լեզուն: Ելույթները մատչելի են նաև Gospel Library mobile app-ում: Մովոդաբար համաժողովից վեց շաբաթ անց անգլերեն լեզվով առողիտ և վիդեո տեսագրությունները նույնպես մատչելի են բաշխման կենտրոններում: Հաշմանդամ անդամների համար հասանելի ձևաչափերով գերագույն համաժողովի տեղեկությունը մատչելի է disability.lds.org կայքում:

Տնային և այցելող ուսուցիչների ուղեւորներ
Տնային և այցելող ուսուցիչների ուղեւորների համար խնդրում ենք ընտրեք այն ելույթը, որը լավագույնս է համապատասխանում նրանց կարիքներին, ում այցելում եք:

Կազմի վրա
Սոջնում. Լուսանկարը՝ Քոդի Բելլի:
Ետնում. Լուսանկարը՝ Լեալի Նիլսոնի:

Համաժողովի լուսանկարները
Լուսանկարները հետևյալ լուսանկարիչների՝ Սուրբ Լեյք Սիթի՝ Վեդդեն Ս. Անդերսեն, Քոդի Բել, Ջանե Բինգհեմ, Եյլ Բորգես, Ռենդի Քոյլեր, Վեստոն Քոլթոն, Մարկ Դեյվիս, Քրեյգ Դայմոնդ, Նաթանիել Ռեյ Էդվարդս, Բրենդոն Ֆլինթ, Էշլի Լարսեն, Օզրոտ Միլլեր, Լեալի Նիլսոն, Բրեդ Սեյդ և Քրիստինա Մմիթ; արևածաղիկների լուսանկարը տրամադրել է Քլեյնթին Լ. Քուրի ընտանիքը: օդանավի անձնակազմ՝ Քրեյգ Մարշալ Յակոբսեն; Վուդբորի, Միլենստոտա, ԱՄՆ՝ Մանդրա Ուոլքիս; ՄակՄինլի, Օրեգոն, ԱՄՆ՝ Ջեյդ Ռեեսո; Արիզոնա, Փոլոսկրի արհ՝ Լյուսյեն և Ագաթ Աֆոռոներ և Ֆիլիպ և Անելիս Աստարներ; Պերայինյան, Ֆրանսիա՝ Ռենե Կաստանյո; Նեյսինկի, Ֆինլանդիա՝ Կուկկա Ֆրիսթրոմ; Յոհանեսբուրգ, Հարավային Աֆրիկա՝ Քրիսթոֆել Գոլդենի ընտանիքի կողմից; Վատիկան Սիթի՝ Humanium; Բանգկոկ, Թայլանդ՝ Մաթիթ Կաիվալաբանա; Մումբայ, Հնդկաստան՝ Վենդի Քիլեր; Մոնրեալ, Կանադա՝ Լորեն Լյուսյոյի; Սիդադ դել Կարմեն, Կամպեչե, Մեքսիկա՝ Նեկտոր Մենյուել Հերանդեզ Մարտինեզ; Սան Մարտին դե Լուս Անդես, Արգենտինա՝ Քոլթոն Մոնդրագոն; Հոնգ Կոնգ, National Geographic մրցույթի լուսանկարը՝ Բրայան Յանի կողմից; Նաթալ, Ռիո Գրանդե դո Նորտե, Բրազիլիա՝ Քլեյնթեր Թեքս; և Լոնդոն, Անգլիա՝ Քամի Ռեդիք: Էջ 77. Նկարները՝ Բրայան Քոլի:



**ՄԱՅԻ Ա 2015 ՀԱՏՈՐ 16 ՀԱՄԱՐ 2
ԼԻԱՀՈՆԱ 12565 201**

Հիսուս Քրիստոսի Կերպին Օրերի Սրբերի եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Մտաջին Նախագահություն. Թոմաս Ա. Մոնտևո, Զենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուստորթ

Տասներկու Առաքյալների Զվարճում. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Ս. Ռասսել Բալլարդ, Ռիչարդ Գ. Աքոթ, Ռոբերտ Դ. Հելլ, Ջեֆրի Ռ. Նոլանդ, Դեյվիդ Ա. Բերնար, Թվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Մանդրես

Խմբագիր. Քրեյգ Ա. Ջարդոն
Նորդիդատներ. Մերվին Բ. Սոնոլդ, Քրիստոֆե Գուդել, Լարի Ռ. Լորենս, Ջեյմս Բ. Մարտին, Ջոզեֆ Վ. Սիտատի

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Տ. Ուոլթեր
Ընտանիքների և անդամների աջակցման տնօրեն. Կինսենթ Ս. Վոգս

Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Այան Ռ. Նոյերդ
Գործարար ղեկավար. Գարթ Քեյն

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն

Գլխավոր խմբագրի օգնական. Ռայան Քար
Հրատարակման օգնական. Լիզա Կարդինա Լոպեզ
Գործընդերձ և խմբագրողներ. Լիզա Կարդինա Լոպեզ, Դեյվիդ Ա. Եդվարդս, Մեթյու Դ. Ֆիլիփս, Լորի Ֆուլեր, Գարթ Ք. Գարթ, Լասել Փոլթեր Գանթ, Միլոկի Են Լիվիթ, Մայքլ Ռ. Ուորիս, Սայի Ջոնսոն Օնգերլի, Ջոշուա Ջ. Փերկի, Յան Փինթրո, Ռիչարդ Մ. Ռոմին, Պոլ Վանդերբերգ, Մարիսա Վիդլինսոն

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Աքոթ Նադսեն

Արվեստի տնօրեն. Թեդ Ռ. Փեքերտոն

Ձևավորում. Ջանետ Ենդրյուս, Ֆեյ Պ. Անդրուս, Մեդի Ս. Բեկթի, Մ. Քիմբլա Բոր, Թոմաս Հայրդ, Նեյթ Ջինս, Բալլին Հինգի, Էրից Պ. Ջոնսոն, Սյուզան Լոֆգրեն, Արթուր Մ. Մոյ, Մարք Վ. Ռոբինս, Բրեդ Թրոյ, Կ. Լիդլ Վոլկենհորտ

Մտավոր սեփականության համակարգող. Թրեք Նեբերձեր Օս

Հրատարակչության տնօրեն. Ջեյմս Են Փեքեր
Հրատարակում. Քրիստի Քոթոլի Բրիջ, Ջովի Բրոդբեր, Քեթ Դանթլ, Բայրն Վ. Գիջո, Դենիզ Քրոջի, Գիլմի Ջ. Նիլսոն, Գել թեյթ Ռաֆերթի Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Վ. Մեյսլիկ
Բաշխման տնօրեն. Սթենֆն Ռ. Քրիչեսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գները մասին տեղեկանալու համար այցելե՛ք store.lds.orgstore.lds.org կամ դիմե՛ք եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոն կամ ծխիցուղի ղեկավարին:

2.org-ը գտնվում է հարցերը ներկայացրե՛ք առցանց՝ liahona.lds.org, է-փոստով՝ liahona@ldschurch.org, կամ փոստով՝ Liahona, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տեքստը, որը նշանակում է «կողմնացույց» կամ «որոշույց») հրատարակվում է անգլերեն, պարսերեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, ռուսերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թունգերեն, ինդոնեզերեն, իսպաներեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիբիթա, կորեերեն, հանգուրեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հինդուս, հունգարերեն, ճապոներեն, մալայալերեն, մարչալերեն, մոնտրոն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռուսերեն, ռուսերեն, սամոյթ, սինհալա, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, սլոնի, սերբերեն, սինհալերեն, ֆիլիպիներեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակչության համապատասխանումը տարբերվում է բոլոր լեզուներին):

© 2015 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և տեղական նյութերը կարող են բազմացվել եկեղեցում կամ տանը առանձին, ոչ-առևտրային օգտագործման նպատակով: Տնտրական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սեփականության հատուկ նշում է արված: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղե՛ք հետևյալ հասցեով: Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով: cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada:

May 2015 Vol. 16 No. 2. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA subscription price is \$4.00 per year; Canada, \$4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 707.4.12.5). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.



Խոսնակների ցուցիչ
Այրինգ, Զենրի Բ., 17, 22, 84
Անդերսեն, Լիլ Լ., 119
Անդերսեն, Վիլֆորդ Վ., 54
Բալլարդ, Մ. Ռասսել, 67
Բենդար, Դեյվիդ Ա., 46
Բրոդբեր, Լիդար Բ., 29
Գիբսոն, Լարրի Ս., 77
Ջեքսոն, Ջորջ Ֆ., 123
Եսփլին, Չերիլ Ա., 8
Թեքերտոն, Չոնս Ա., 96
Կոսե, Ջոնադ, 98
Հելլ, Բորթ Դ., 45
Հելլ, Ռոբերտ Դ., 111
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 104
Մոնսոն, Թոմաս Ա., 88, 110
Յեդրեսեն, Ջեյմս Ռ., 45
Նելսոն, Ռասսել Մ., 129
Նիլսոն, Բրեդ Ք., 101
Ուստորթ, Դիտեր Ֆ., 43, 80, 107
Ռեյսոլ, Դեյվ Պ., 56
Ռիչարդս, Մայքլ Տ., 59
Սթենֆնս, Ջորջ Ա., 11
Սիտատի, Ջոզեֆ Վ., 126
Սոարես, Ուիլյամ, 70
Վիքսոն, Ռոզմարի Մ., 93
Փաքեր, Բոյդ Ք., 26
Փերի, Լ. Թոմ, 48
Փիսո, Ռաֆայել Ի., 117
Փրոսոն, Ջեյմս Վ., 114
Ջեյմս, Լ. Վիլյամ, 36
Քուք, Թվենթին Լ., 62
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 50
Օուքս, Դալլին Հ., 32
Օսկարսոն, Բոննի Լ., 14

Թեմաների ցուցիչ
Ադամս ու Եվան, 26, 46, 50, 104, 117
Ակտիվացում, 93, 101
Աղոթք, 22, 84, 110, 114
Ամուսնություն, 14, 26, 29, 48, 50, 67, 126
Աշակերտություն, 32, 59, 67, 80, 114, 123
Ապաշխարություն, 26, 56, 107
Անաշխահեթոթություններ, 32
Աստվածային Ընդունում, 11, 126
Բարոյականություն, 26
Բարոություն, 29
Գայթակցություն, 70
Դարձ, 32, 56, 93
Եկեղեցու աճ, 45, 119
Եկեղեցու կոչումներ, 59, 88
Երիտասարդ չափահասներ, 67
Երկրորդ Գալուստ, 119
Զատիկ, 110, 104, 107
Ընկերակցություն, 93
Ընտանեկան պատմություն, 129
Ընտանիք, 8, 11, 14, 26, 48, 50, 62, 101, 126, 129
Ընտրություն, 36, 70, 111, 123
Փամարտություն, 67
Ինստիտուտ, 67
Լույս, 8, 36
Խաղաղություն, 17, 46, 110
Խոսարություն, 59, 104
Օտարություն, 22, 59, 80, 104, 129
Օտոլներ, 14, 48, 50, 54, 126, 129
Օմնապահություն, 22, 67, 104, 129
Կասկած, 36, 93, 101
Կարեկցանք, 11, 17
Կրոնական ազատություն, 111
Համբերություն, 54, 101, 129
Հայտնություն, 104
Հայր Աստված, 11, 77
Հայրություն, 14, 29, 77
Հանգստության օր, 36, 62, 67, 129
Հանդուրժողականություն, 111

Հավաստք, 36, 46, 62, 104, 93, 98, 101, 114
Հավերժական կյանք, 114, 117
Հարություն, 104, 107
Հեռանկար, 117, 119
Հիսուս Քրիստոս, 17, 36, 46, 50, 62, 67, 77, 80, 110, 93, 96, 101, 104, 107, 111, 114, 119
Հույս, 36, 101, 117
Հրաշքեր, 98, 119
Չախտություն, 11, 17, 36, 62, 110, 96, 117, 119
Ճշմարտություն, 8
Մայրություն, 14
Սիրություն, 11, 62
Սիստերնական աշխատանք, 110, 111, 126
Սորմոնի Գիրք, 8, 114
Շտրի, 36, 46, 50, 59, 80, 104, 107
Ուստորթ, 11, 17, 29, 46, 59, 114, 129
Ուրախություն, 26, 93, 96
Պարտավորություն, 88, 123
Պոռնոգրաֆիա, 67, 70
Ջոզեֆ Սմիթ, 8, 111
Սեմիարիա, 67
Սեր, 11, 26, 29, 50, 62, 80, 96, 101, 104
Սուրբ Հոգի, 8, 17, 54, 104, 98, 111
Սուրբ գրությունների ուսումնասիրություն, 98, 129
Սխալ, 46
Վկայություն, 36, 67, 70, 80, 93, 101
Տաճարներ, 26, 110
Տեխնոլոգիա, 67, 96
Տեսիլներ, 104
Տուև, 8, 14, 54, 62
Փրկության ծրագիր, 14, 26, 50, 111, 117, 126
Քահանայություն, 77, 104, 88
Քավություն, 17, 46, 50, 56, 62, 70, 96, 104, 107, 123
Օրհնություններ, 22, 36, 88, 110



Ուշագրավ մանրամասներ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու 185-րդ ամենամյա գերագույն համաժողովից

«**Գ**երագույն համաժողովի ելույթները հանձնարարվում են ոչ թե իշխանություն ունեցող մարդու կողմից, այլ Հոգու հուշումով, - բացատրեց Երեց Դավիթն Լ. Օուքսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից (էջ 32): Ոգեշնչող գերագույն համաժողովին, որը մեկնարկեց կանանց գերագույն նիստով և ավարտվեց Չատկի կիրակի, ավետարանի բազմաթիվ այլ սկզբունքների հետ մեկտեղ խոսնակներն ուսուցանեցին ընտանիքի, ծննդաբանության, տաճարային աշխատանքի, աշակերտության, հանգստության օրվա և Փրկչի

Քվորության մասին (տես էջ 3):

Ստորև տրվում են մի քանի ուշագրավ մանրամասներ.

- Նախագահ Թոմաս Մ. Մոնտոնը հայտարարեց նոր տաճարների կառուցման մասին Աբիջանում, Փոդոկոկի ակի, Պորտոպրենսում, Հաիթի և Բանկոկում, Թայլանդ: Այդ մասին նա ասաց. «Ինչպիսի հրաշալի օրհնություններ են սպասվում մեր հավատարիմ անդամներին, որ ապրում են այդ և աշխարհի մյուս բոլոր տաճարների տարածքներում» (էջ 91):
- Եկեղեցու անդամները հաստատեցին Յոթանասունի Առաջին

Քվորումի հինգ նոր անդամների, Երիտասարդ Տղամարդկանց նոր գերագույն նախագահությունը և Երեխաների Միության գերագույն նախագահության նոր խորհրդակալնի:

- Տարեկան վիճակագրական հաշվետվությունը հրապարակեց հետևյալ տվյալները՝ 15.3 մլն. Եկեղեցու անդամ 3114 ցցերում և 561 շրջաններում: Երեք նոր տաճարներ նվիրագործվեցին անցած տարի, հասցնելով գործող տաճարների թիվը 144-ի:
- Համաժողովը թարգմանվեց 95 լեզուներով: Անցած հոկտեմբերին իրականացված նորամուծությանը հետևելով՝ երեք խոսնակ ելույթ ունեցան ոչ անգլերեն լեզվով:
Չատկի շաբաթ-կիրակի օրերի իրենց ելույթներում խոսնակները վկայեցին Փրկչի Հարության մասին: «Նա է Աստծո Որդին», - վկայեց Նախագահ Թոմաս Մ Մոնտոնը: «Այդ առաջին Չատկի առավոտյան Նա դուրս եկավ գերեզմանից, Իր հետ բերելով հավիտենական կյանքի պարզև Աստծո բոլոր զավակներին» (էջ 93): ■









Զնրիլ Ա. Եսփիկս

Երեխաների Խմբի Գերագույն Նախագահության Երկրորդ Խորհրդակալ

Լցնել մեր տները լույսով և ճշմարտությամբ

Աշխարհի ճնշումներին դիմակայելու համար մենք և մեր ընտանիքները պետք է լցված լինենք լույսով և ավետարանի ճշմարտությամբ:

Իմ սիրտը լցվեց Հոգով, մինչ Ես լսում էի, թե ինչպես էին այս ընտանիքներն ուսուցանում այդ սուրբ ճշմարտությունը՝ «Ընտանիքն Աստծուց է»:¹ Ոգեշնչված երաժշտությունը բազմաթիվ ուղիներից լոկ մեկն է, որի օգնությամբ մենք կարող ենք զգալ, որ Հոգին շնչում է մեզ՝ լցնելով մեզ լույսով և ճշմարտությամբ:

Լույսով և ճշմարտությամբ լցված լինելու գաղափարն ինձ համար շատ կարևոր դարձավ տարիներ առաջ իմ ունեցած մի փորձառության շնորհիվ: Ես հաճախել էի մի ժողովի, որտեղ Երիտասարդ Կանանց Բարձրագույն խորհրդի անդամներն ուսուցանում էին հոգևոր առումով ուժեղ ընտանիքներ և տներ ստեղծելու մասին: Պատկերավոր կերպով դա ցուցադրելու համար Երիտասարդ Կանանց ղեկավարներից մեկը ցուցադրեց սողայի երկու տուփ: Մի ձեռքում նա ուներ մի տուփ, որը դատարկ էր, և մյուս ձեռքում՝ տուփ, որը բացված չէր և լցված էր սողայով: Առաջինը, նա ձեռքում սեղմեց դատարկ տուփը. այն սկսեց ծռմուխել և չդիմացավ ուժի ազդեցությանը: Հաջորդը, իր մյուս ձեռքով նա

սեղմեց չբացված տուփը: Այն փոփոխության չենթարկվեց: Այն չծռմուխեց և չենթարկվեց ուժի ազդեցությանը դատարկ տուփի նման, քանի որ այն լիքն էր:

Մենք համեմատեցինք այս ցուցադրումը մեր անձնական կյանքի և մեր տների ու ընտանիքների հետ: Երբ լցված ենք Հոգով և ավետարանի ճշմարտությամբ, մենք զորություն ենք ունենում դիմակայելու դրսից եկող աշխարհի ուժերին, որոնք շրջապատում և ճնշում են գործադրում մեզ վրա: Սակայն, եթե մենք լցված չենք հոգևորապես, մենք չենք ունենում ներքին ուժ, դիմակայելու դրսի ճնշումներին և կարող ենք կործանվել, երբ ուժերը ճնշում են գործադրում մեզ վրա:

Սատանան գիտի, որ աշխարհի ճնշումներին դիմակայելու համար մենք և մեր ընտանիքները պետք է լցված լինենք լույսով և ավետարանի ճշմարտությամբ: Ուստի, նա անում է ամեն հնարավոր բան, որպեսզի թուլացնի, աղավաղի և կործանի ավետարանի ճշմարտությունը և մեզ հեռու պահի այդ ճշմարտությունից:

Մեզանից շատերը մկրտվել և ստացել են Սուրբ Հոգու պարգևը,



որի դերն է՝ հայտնել և ուսուցանել ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ:² Այդ պարզևի արտոնության հետ միասին գալիս է նաև ճշմարտությունը փնտրելու, մեր իմացած ճշմարտության համաձայն ապրելու և ճշմարտությամբ կիսվելու և այն պաշտպանելու պատասխանատվությունը:

Վայրերից մեկը, որտեղ մենք լավագույնս կարող ենք լցվել լույսով և ճշմարտությամբ, մեր իսկ տներն են: Մեր լսած երգի կրկներգի բառերը հիշեցնում են մեզ. «Աստված մեզ ընտանիքներ տվեց, որ օգնի դառնալու այն, ինչ Նա է ուզում, որ լինենք»:³ Ընտանիքները Տիրոջ արհեստանոցներն են երկրի վրա, որտեղ Նա օգնում է մեզ սովորել ավետարանը և ապրել ավետարանին համաձայն: Մենք գալիս ենք մեր ընտանիքներ սրբազան պարտականությամբ՝ օգնելու ամրացնել միմյանց հոգևորապես:



Ամուր հավերժական ընտանիքները և Հոգով լցված տները պատահական չեն ստացվում: Դրանք մեծ ջանքեր են պահանջում, դրանք ժամանակ են պահանջում, և դրանք ընտանիքի յուրաքանչյուր անդամից պահանջում են կատարել իրենց մասը: Յուրաքանչյուր տուն տարբեր է, սակայն յուրաքանչյուր տանը, որտեղ նույնիսկ մեկ անհատը ճշմարտություն է փնտրում, կարող է շատ բան փոխվել:

Մեզ մշտապես խորհուրդ են տալիս ավելացնել մեր հոգևոր գիտելիքները աղոթքի, սուրբ գրությունները և ապրող մարգարեների խոսքերն ուսումնասիրելու և դրանց շուրջ խորհելու միջոցով: Գերագույն համաժողովի ժամանակ լույսի և ճշմարտության մասին վկայություն ստանալու վերաբերյալ իր ելույթում Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆն ասել է.

«Հավերժական և Ամենակարող Աստվածը . . . կյտսի նրանց հետ,

ովքեր կյանդրեն իրեն մաքուր սրտով և անկեղծ միտումով:

Նա կյտսի նրանց հետ երազների, տեսիլքների, մտքերի և զգացմունքների միջոցով:

Նախագահ Ուլտորֆը շարունակել է. «Աստված մտահոգվում է ձեզ համար: Նա կյսի և Նա կպատասխանի ձեր անձնական հարցերին: Ձեր աղոթքների պատասխանները կզան Նրա ձեռով և Նրա ժամանակին, և, ուստի, դուք պետք է սովորեք լսել Նրա ձայնը»:⁴

Մի կարճ ընտանեկան պատմություն պարզաբանում է այս խորհուրդը:

Մի քանի ամիս առաջ ես կարդացի իմ նախապապի քրոջ՝ Էլիզաբեթ Մուսհեյլի Վաքերի վկայությունը: Մանուկ հասակում Էլիզաբեթն իր ընտանիքի հետ միասին Շվեյցարիայից ներգաղթել էր Ամերիկա:

Ամուսնանալուց հետո Էլիզաբեթը և նրա ամուսինն ու երեխաներն

ապրում էին Յուտայում՝ Նևադայի սահմանի մոտ, որտեղ նրանք փոստային ծառայություններ էին կատարում: Նրանց տունը ճանապարհին օթևան գտնելու վայր էր ճամփորդների համար: Ողջ օրվա և գիշերվա ընթացքում նրանք պետք է պատրաստ լինեին ճամփորդների համար ուտելիք պատրաստելուն և մատուցելուն: Դա դժվարին, հոգնեցուցիչ աշխատանք էր և նրանք քիչ էին հանգստանում: Սակայն ամենաշատը Էլիզաբեթին մտահոգում էին այն մարդկանց խոսակցությունները, ում հետ նրանք շփվում էին:

Էլիզաբեթն ասում էր, որ մինչ այդ պահը նա հարցականի տակ չէր դնում այն փաստը, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը լիազորված էր Աստծո կողմից անելու այն, ինչ արել էր, և որ նրա ուղերձը կյանքի և փրկության ծրագիրն էր: Սակայն այդ պահին ունեցած կյանքի փորձառություններից

և ոչ մեկը չէին ամրապնդում այդ համոզմունքները:

Ճամփորդներից ոմանք, ովքեր կանգ էին առնում իրենց մոտ, շատ կարդացած, կրթված, խելացի մարդիկ էին և նրա սեղանի շուրջ նրանք միշտ խոսում էին այն մասին, որ Ջոզեֆ Սմիթը «խորամանկ խաբեբա» էր, ով ինքն էր գրել Մորմոնի Գիրքը և ապա տարածել էր այն գումար վաստակելու նպատակով: Նրանց համար այլ կերպ մտածելն անհեթեթություն էր և նրանք հայտարարում էին, «որ մորմոնիզմն անմտություն է»:

Այս բոլոր խոսակցությունները ստիպում էին Էլիզաբեթին զգալու իրեն մեկուսացված և միայնակ: Չկար մեկը, ում հետ նա կարող էր խոսել, ժամանակ չկար նույնիսկ իր աղոթքներն ասելու համար, չնայած, որ նա աղոթում էր աշխատելիս: Նա չափազանց վախեցած էր որևէ բան ասելու համար նրանց, ովքեր ծաղրում էին իր կրոնը: Նա ասում էր, որ ստիպված էր ձևացնելու, թե նրանք ճիշտ բաներ էին ասում, և նա զգում էր, որ չէր կարող պաշտպանել իր համոզմունքները, եթե անգամ փորձեր:

Հետագայում Էլիզաբեթը և նրա ընտանիքը տեղափոխվեցին: Էլիզաբեթը պատմում է, որ նա ավելի շատ ժամանակ ուներ մտածելու համար և որ իրեն նախկինի պես անընդհատ չէին շեղում: Նա հաճախ իջնում էր նկուղ և աղոթում էր Երկնային Հորն այն մասին, ինչն անհանգստացնում էր իրեն. այն պատմությունների մասին, որոնք խելացի թվացող մարդիկ էին պատմել, թե իբր ավետարանն անմտություն էր, ինչպես նաև պատմություններ Ջոզեֆ Սմիթի և Մորմոնի Գրքի մասին:

Մի գիշեր Էլիզաբեթը երազ տեսավ: Նա պատմեց. «Կարծես թե ես կանգնած էի նեղ ճանապարհի եզրին, որը գտնվում էր բլրի ստորոտում: Բլրի լանջին ես տեսա մի մարդ, ով ցած էր նայում և խոսում էր, կամ թվում էր, թե խոսում էր մի պատանու հետ, ով ծնկի էր իջել և կռացել մի փոսի վրա: Նրա ձեռքերն առաջ էին մեկնված, և թվում էր, թե նա ինչ-որ բան էր հանում փոսից: Ես կարողանում էի տեսնել



քարե մի խուփ, որը հավանաբար հանվել էր փոսից, որի վրա կռացել էր տղան: Ճանապարհին շատ մարդիկ կային, սակայն նրանցից ոչ մեկը բոլորովին չէր հետաքրքրվում բլրի լանջին գտնվող երկու մարդկանցով: Մի բան կար, որը եկավ երազի հետ միասին, որն այնքան ուժեղ տպավորություն թողեց ինձ վրա, որ ես անմիջապես արթնացա: . . . Ես չէի կարող պատմել իմ երազը որևէ մեկին, սակայն, կարծես, ես համոզված էի, որ դրա նշանակությունը կայանում էր նրանում, որ Մորմոնի հրեշտակը ցուցումներ էր տալիս պատանի Ջոզեֆին այն պահին, երբ նա վերցնում էր թիթեղները»:

1893թ. գարնանը Էլիզաբեթը զնաց Մոյթ Լեյք Միթի՝ տաճարի նվիրագործմանը: Նա նկարագրել է իր փորձառությունը. «Այնտեղ ես տեսա նույն պատկերը, որը տեսել էի իմ երազում: Կարծում եմ, դա խճապակյա պատուհան էր: Ես վստահ էի, որ եթե իրականում տեսնեի Կումորա Բլուրը, այն ավելի բնական չէր երևա: Ես համոզված եմ, որ երազում ինձ ցույց էր տրվել այն պատկերը, երբ Մորմոնի հրեշտակը ոսկե թիթեղները տալիս էր Ջոզեֆ Սմիթին»:

Այս երազը տեսնելուց հետո տարիներ անց և 88 տարեկան

հասակում նրա մահանալուց մի քանի ամիս առաջ Էլիզաբեթը գորեղ տպավորություն ստացավ: Նա ասել է. «Մի միտք տրվեց ինձ այնքան պարզ . . . ասես մեկն ասաց ինձ. «Մի թաղիր քո վկայությունը հողի մեջ»»:⁵

Մերունդներ անց, Էլիզաբեթի սերունդները շարունակում են ուժ ստանալ նրա վկայությունից: Էլիզաբեթի նման մենք էլ սպրում ենք բազում կասկածամիտների և քննադատների աշխարհում, ովքեր ծաղրում և դժմ են դուրս գալիս այն ճշմարտություններին, որոնք շատ թանկ են մեզ համար: Մենք կարող ենք լսել շփոթեցնող պատմություններ և հակասական ուղերձներ: Էլիզաբեթի նման մենք նույնպես պետք է անենք մեր լավագույնը, հենվելով այն լույսի և ճշմարտության վրա, որն ունենք ներկա պահին, հատկապես բարդ իրավիճակներում: Մեր աղոթքների պատասխանները միգուցե չտրվեն աչքի զարնող միջոցներով, սակայն մենք պետք է գտնենք լուռ պահեր՝ ավելի մեծ լույս և ճշմարտություն փնտրելու համար: Եվ երբ մենք ստանում ենք այն, մեր պարտականությունն է՝ սպրել դրանով, կիսվել դրանով և պաշտպանել այն:

Ես թողնում եմ ձեզ իմ վկայությունը, որ ես գիտեմ, որ երբ մենք լցնում ենք մեր սրտերը և տները Փրկչի լույսով և ճշմարտությամբ, մենք կունենանք ներքին ուժ՝ դիմակայելու ցանկացած իրավիճակում: Հիտուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Նշում. 2015թ. ապրիլի 4-ին բույր Էսիլինն ազատվել է Երեխաների Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդակցանի իր կոչումից և կանչվել է որպես ստացին խորհրդակցան:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Ընտանիքն Աստծուց է», 2014 Միացյալ ժամի ծրագիր. *Ընտանիքները հավերժ են. 2014թ. Միացյալ ժամի ծրագիր* (2013), 28–29:
2. Տես Մորմոնի 10.5:
3. «Ընտանիքն Աստծուց է»:
4. Դիտեր Ֆ. Ուլտորֆ, «Մտանալ վկայություն լույսի և ճշմարտության մասին», *Լիստնուս*, նոյ. 2014, 21:
5. Elizabeth Taheli Walker, “My Testimony, Written for My Children and Their Children after I Am Gone,” 1939, 22–26, University of Nevada, Las Vegas, Special Collections; կետադրությունը, մեծատառերը և ուղղագրությունը ստանդարտացված են:



Քնրու Մ. Սթենյան

Սփուփոլ Միության գերագույն նախագահության առաջին խորհրդական

Ընտանիքն Աստծուց է

Մեզանից յուրաքանչյուրը պատկանում է Աստծո ընտանիքին, որտեղ կա մեր կարիքը:

Կա՞ արդոք Երեխաների միության երգերում ուսուցանվող ավետարանական պարզ ու անաղարտ ճշմարտություններից առավել զեղեցիկ և կարևոր բան: Այս երեկո այստեղ գտնվող Երեխաների միության աղջիկներ, դուք բոլորդ գիտեք այն երգը, որի մասին խոսելու եմ: Անցյալ տարի դուք սովորել եք դա Երեխաների միության ծրագրի շրջանակում:

Այս ժողովի սկզբում հնչած «Ընտանիքն Աստծուց է»¹ երգի խոսքերով մեզ հիշեցվում է պարզ վարդապետությունը: Մենք սովորում ենք, որ բացի այն, որ ընտանիքն Աստծուց է, յուրաքանչյուրս Աստծո ընտանիքի մասն է կազմում:

Երգի առաջին տողն ուսուցանում է. «**Մեր Հայրն ընտանիք ունի: Դա ես եմ: Դու, նա, բոլորս՝ Նրա զավակներն ենք:**» Ընտանիքի հայտարարությունից մենք սովորում ենք. «Նախաերկրային աշխարհում հոգևոր որդիներն ու դուստրերը ճանաչում և երկրպագում էին Աստծուն, որպես իրենց Հավերժական Հորը»: Այդ աշխարհում մենք իմացանք կնոջ՝ մեր հավերժական ինքնության մասին: Մենք գիտեինք, որ մեզանից յուրաքանչյուրը «Երկնային ծնողների . . . սիրելի դուստրն է»:²

Մեր մահկանացու ճամփորդությունը դեպի երկիր չփոխեց այդ ճշմարտությունները: Մեզանից յուրաքանչյուրը պատկանում է Աստծո ընտանիքին, որտեղ կա մեր կարիքը: Երկրի վրա բոլոր ընտանիքները տարբեր են: Եվ մինչ մենք ջանասիրաբար փորձում ենք ամուր ավանդական ընտանիքներ ստեղծել, Աստծո ընտանիքի անդամ լինելը կախված չէ որևէ տեսակի կարգավիճակից, լինի դա ամուսնական, ծնողական, ֆինանսական,

սոցիալական և թե անգամ սոցիալական կայքերում նշված կարգավիճակ:

Մենք պատկանում ենք Աստծո ընտանիքին: «Մենք դուստրերն ենք մեր Երկնային Հոր, ով սիրում է մեզ, և ում սիրում ենք մենք»:³

Երգի երկրորդ տողը ընդլայնում է առաջին տողը: «**Մենք ուղարկվել ենք երկիր ապրելու, ընտանիքում սովորելու:**»:

Նախաերկրային կյանքում մենք իմացանք, որ մի մահկանացու շրջան պետք է անցնեինք: Մենք «ընդունեցինք [Երկնային Հոր] ծրագիրը, ըստ որի Նրա զավակները կարող էին ֆիզիկական մարմիններ ձեռք բերել և աշխարհիկ փորձ կուտակել՝ դեպի կատարելություն ընթանալու և [մեր] աստվածային ճակատագիրը որպես հավերժական կյանքի ժառանգներ բացառիկ կերպով գիտակցելու համար»:⁴

Երեց Ռիչարդ Գ. Սքոթը բացատրել է, որ «նախաերկրային աշխարհում մենք ուսուցանվեցինք, որ այստեղ գալու մեր նպատակը՝ ստուգվել, փորձվել և աճելն էր»:⁵ Մարդն աճում է անհատական տարբեր փորձառությունների արդյունքում: Ես երբեք չեմ ամուսնալուծվել, ապրել ցավ ու անապահովություն, որ գալիս է լքված լինելու արդյունքում, կամ կրել միայնակ մոր պատասխանատվությունը: Ես



չեմ իմացել, ինչ է զավակի մահը, անպտղությունը կամ համասեռամոլությունը: Ես չեմ ենթարկվել բռնության, չեմ ունեցել խրոնիկ հիվանդություն կամ հակվածություն: Դրանք իմ աճի համար առիթ չեն հանդիսացել:

Այս պահին ումանք կմտածեն. «Քույր Սթեֆենս, դուք պարզապես չեք հասկանում»: Ես կպատասխանեմ՝ գուցե դուք ճիշտ եք: Ես խորապես չեմ հասկանում ձեր խնդիրները: Բայց ի շնորհիվ *իմ* անձնական փորձառությունների և փորձությունների, որոնք *ինձ* ծնկի են բերել աղոթելու, ես քաջածանոթ եմ Նրան, ով հասկանում է, ով «ցավի տեղյակ եղավ»,⁶ ով անցավ ամեն ինչի միջով և հասկանում է ամեն ինչ: Բացի այդ, ես անցել եմ իմ հիշատակած բոլոր մահկանացու փորձությունների միջով՝ լինելով դուստր, մայր, տատիկ, քույր, մորաքույր, հորաքույր և ընկեր:

Որպես Աստծո ուխտ պահող դուստրեր մենք հնարավորություն ունենք սովորել ոչ միայն մեր խնդիրներից, այլև կարեկցանքով և գթասրտությամբ միավորվել, երբ աջակցում և նեցուկ ենք կանգնում

Աստծո ընտանիքի մյուս անդամներին իրենց մաքառումների մեջ, ինչպես ուխտել ենք ամեն:

Այդպիսով մենք նաև հասկանում և վստահում ենք, որ Փրկիչը տեղյակ է կյանքի դժվարություններին և կարող է առաջնորդել մեզ մեր ճանապարհին հանդիպող բոլոր ցավերի և հիասթափությունների պահերին: Նա է իսկական գթասրտությունը, և Նրա սերը «տևում է հավերժ»,⁷ մասնավորապես մեր միջոցով, երբ մենք հետևում ենք Նրան:

Որպես Աստծո դուստրեր և Հիսուս Քրիստոսի աշակերտներ, այդ ժամանակ մենք «գործում ենք ըստ այն համակրանքների, որոնք Աստված արմատավորել է մեր սրտերում»:⁸ Մեր ազդեցության շրջանակը չի սահմանափակվում մեր ընտանիքի անդամներով:

Վերջերս ես առիթ ունեցա այցելելու Չիլիի Արիզոնա ցցից Քույր Յազինի իր խրճիթում: Երբ նա ինձ ողջունեց իր տանը, առաջին բանը, որ ես նկատեցի, պատին կախված և սեղանների վրա դրված տարբեր շրջանակների մեջ ընտանիքի և միսիոներների լուսանկարներն էին: Ես հարցրեցի. «Քանի՞ թոռ ունեք դուք»:

Չարմացած իմ հարցից նա թոթովեց ուսերը: Նրա պատասխանից շփոթված ես նայեցի նրա դստերը՝ Քույր Յելոուիեյրին, ով պատասխանեց. «Նա չգիտի քանի թոռ ունի: Բոլոր երեխաները նրան «տատիկ» են ասում, նա բոլորի տատիկն է»:

Քույր Յազին իր սերն ու ազդեցությունը չի սահմանափակում իր անձնական ընտանիքով: Նա հասկանում է, թե ինչ է նշանակում ընդլայնել իր ազդեցության շրջանակը, երբ շրջում է բարիք գործելով, օրհնելով, հոգ տանելով և պաշտպանելով Աստծո ընտանիքը: Նա հասկանում է, որ «երբ կինն ամրացնում է երեխայի հավատքը, նա նպաստում է ընտանիքի ամրությանն՝ այժմ և ապագայում»:⁹

Երգի երրորդ տողը շարունակում է բացատրել մեր մահկանացու նպատակը. «**Աստված մեզ ընտանիք տվեց, որ դառնանք այն, ինչ ուզում է Նա:**» Փրկիչն ուսուցանել է. «Եղեք մեկ. և եթե դուք մեկ չեք, դուք իմը չեք»:¹⁰ Ընտանիքի հայտարարությունն ուսուցանում է, որ որպես երկնային ծնողների սիրելի դուստրեր մենք ունենք աստվածային բնույթ, հավերժական ճակատագիր և նպատակ: Աստված ուզում է, որ մենք մեկ լինենք, ուխտ պահող դուստրեր՝ միավորված մեր տարբեր անհատական կյանքերով¹¹ ձգտելով սովորել անհրաժեշտ ամեն բան, որպեսզի վերադառնանք Նրա ներկայություն, և կնքվենք Նրա հետ որպես Նրա հավերժական ընտանիքի մաս:

«Մուրբ տաճարներում կատարվող սրբազան արարողությունների և ուխտերի շնորհիվ հնարավոր է դառնում [մեզ] համար՝ դեպի Աստծո ներկայություն վերադարձը, իսկ ընտանիքների համար՝ հավերժական միասնությունը»:¹² Արարողությունները, որ ստանում ենք, և ուխտերը, որ կապում ենք, մկրտության ժամանակ և սուրբ տաճարներում, կապում են Աստծո ընտանիքը վարագույրի երկու կողմում, կապելով մեզ մեր Հոր հետ Նրա Որդու միջոցով, ով աղոթեց. «Որ ամենքը մեկ լինեն, ինչպես դու, Հայր, ինձանում, և ես քեզանում, որ նորանք էլ մեզանում մեկ լինեն»:¹³



Երբ այս աշխարհում մեր ժամանակն օգտագործում ենք Փրկչի ուսմունքներն ուսումնասիրելով և կիրառելով, մենք էլ ավելի ենք նմանվում Նրան: Մենք հասկանում ենք, որ միայն ու միայն Նրա օգնությամբ կարող ենք հաղթահարել մահկանացու կյանքի խնդիրները, բժշկվել և վերադառնալ մեր երկնային տուն:

Երգի վերջին տողը վերադառնում է սկիզբ. **«Այդպես Նա սեր ցույց տվեց, երբ ընտանիք մեզ տվեց»:** Իր զավակների համար Հոր ծրագիրը սիրո ծրագիր է, և նպատակ ունի միավորել Իր զավակներին, Իր ընտանիքն Իր հետ: Երեց Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է. «Երկնային Հայրն ունի երկու ցանկություն Իր զավակների համար . . . անմահություն և հավերժական կյանք, որը նշանակում է կյանք կրկին տանը Իր հետ»:¹⁴ Այդ ցանկությունները կարող են իրականանալ միայն, երբ մենք ևս ունենանք այն սերը, որը Երկնային Հայրը տաժում է Իր ընտանիքի հանդեպ՝ հասանելի դարձնելով Նրա ծրագիրը մյուսների համար:

Քսան տարի առաջ, Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը դիմեցին ողջ աշխարհին, հրատարակելով ընտանիքի վերաբերյալ հռչակագիրը: Այդ ժամանակից ի վեր ընտանիքի վրա հարձակումներն ավելացել են:

Եթե ուզում ենք հաջողությամբ կատարել մեր սուրբ պարտականությունները որպես Աստծո ղուստրեր, մենք պետք է հասկանանք մեր Երկնային Հոր ծրագրի մասին ճշմարտություններ ուսուցանելու հավերժական նշանակությունը և մեր անհատական պատասխանատվությունը: Նախագահ Հովարդ Վ. Հանթերը բացատրել է.

«Մեծ է Եկեղեցու կանանց համախմբվելու կարիքը, որպեսզի նրանք կանգնեն Եղբայրների հետ և նրանց կողքին՝ մեզ շրջապատող չարիքն արմատախիլ անելու և մեր Փրկչի գործն առաջ տանելու համար: . . .

. . . Այնպես որ մենք աղաչում ենք ձեզ՝ ծառայեք բարու ձեր հզոր ազդեցությամբ ի գործացում մեր



ընտանիքների, եկեղեցու և մեր համայնքների»:¹⁵

Քույրեր, մենք ընդգրկված ենք, մենք սիրված ենք, մեր կարիքը կա, մենք աստվածային նպատակ, գործ, տեղ և դեր ունենք Եկեղեցում, Աստծո արքայությունում և Նրա հավերժական ընտանիքում: Ձեր սրտի խորքում գիտե՞ք արդյոք, որ ձեր Երկնային Հայրը սիրում է ձեզ և ցանկանում է, որ դուք և ձեր սիրելիները լինեն Իր հետ: Դիշտ ինչպես «Երկնային Հայրը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսն են կատարյալ, . . . մեզ հետ կապված Նրանց հույսերն են կատարյալ»:¹⁶ Մեզ համար Նրանց ծրագիրը կատարյալ է, և Նրանց խոստումները հաստատուն: Այդ ճշմարտությունների մասին ես երախտազիտությամբ վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Ընտանիքը Աստծուց է», *Ընտանիքները հավերժ են*. 2014թ. Միացյալ ժամի ծրագիր (2013), 28–29:
2. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», *Լիստենուս*, նոյ. 2010, 129:

3. «Երիտասարդ կանանց թեմա», *Երիտասարդ կանանց անձնակազմի զարգացում* (բրոշյուր, 2009), 3:
4. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին»:
5. Richard G. Scott, “Make the Exercise of Faith Your First Priority,” *Լիստենուս*, նոյ. 2014, 92:
6. Եսայիա 53:3
7. Մորոնի 7:47
8. Joseph Smith, in *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 16.
9. *Daughters in My Kingdom*, 159.
10. Վարդապետություն և Ուխտեր 38:27
11. Stu Patricia T. Holland, “One Thing Needful”: Becoming Women of Greater Faith in Christ,” *Ensign*, Oct. 1987, 26–33:
12. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին»:
13. Հովհաննես 17:21
14. R. Scott Lloyd, “God Wants His Children to Return to Him, Elder Nelson Teaches,” Church News section of LDS.org, Jan. 28, 2014, lds.org/church/news/god-wants-his-children-to-return-to-him-elder-nelson-teaches.
15. Howard W. Hunter, in *Daughters in My Kingdom*, 157; see also “To the Women of the Church,” *Ensign*, Nov. 1992, 96.
16. M. Russell Ballard, “Let Us Think Straight” (Brigham Young University devotional, Aug. 20, 2013); speeches.byu.edu.



Բոննի Լ. Օսկարսոն
Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահ

Ընտանիքի մասին հայտարարության պաշտպանները

Եկեք օգնենք կառուցել Աստծո արքայությունը՝ համարձակ կանգնելով
և պաշտպանելով ամուսնությունը, ծնող լինելը և տունը:

հնչյախի արտոնություն և
ուրախություն է աղջիկների
և կանանց այս հրաշալի
հավաքի մի մասը լինելը: Որքան
օրհնված ենք մենք՝ այս երեկո
միաբանությամբ և սիրով որպես
կանայք միասին հավաքվելով:
Ես վերջերս կարդացի Մերի
Մադելին Քարդոնի պատմությունը,
ով իր ընտանիքի հետ միասին

ստացել էր Հիսուս Քրիստոսի վերա-
կանգնված ավետարանի ուղերձը
Իտալիայում ծառայության կանչված
առաջին միսիոներներից 1850թ.: Նա
17 կամ 18 տարեկան երիտասարդ
կին էր, երբ նրանք մկրտվեցին:
Մի կիրակի, մինչ երկրպագության
ծառայություն էր անցկացվում իրենց
տանը հյուսիսային Իտալիայի
բարձր Ալպերում, տղամարդկանց

զայրացած ամբոխը տեղի մի քանի
քահանաների հետ միասին հա-
վաքվեցին տան շուրջը և սկսեցին
աղաղակել, գոռոզալ և պահանջել,
որ միսիոներները դուրս բերվեին:
Չեմ կարծում, թե նրանք պարզապես
զայրացած էին ավետարանն ուսու-
ցանելու առիթով. նրանք մտադրված
էին մարմնական վնասներ հասցնել:
Երիտասարդ Մերին էր, որ վճռա-
կան քայլերով դուրս եկավ տանից՝
ամբոխի հետ երես առ երես հանդի-
պելու համար:

Նրանք շարունակեցին իրենց կա-
տաղի գոռոզոցներով պահանջել,
որ միսիոներները դուրս բերվեին:
Մերին բարձրացրեց իր Աստվածա-
շունչը և հրամայեց նրանց հեռանալ:
Նա ասաց նրանց, որ երեցները
գտնվում էին նրա պաշտպանության
ներքո և որ նրանք չէին կարող վնա-
սել նրանց գլխի մեկ մազն անգամ:
Լսեք նրա իսկ խոսքերը. «Բոլորն
ապշած կանգնել էին: . . . Աստված
ինձ հետ էր: Նա դրեց այդ խոսքերն
իմ բերանում, այլապես ես չէի կա-
րող ասել դրանք: Մեկ ակնթարթում
ամեն բան խաղաղվեց: Այդ վայրագ
տղամարդկանց խումբն անօգնա-
կան կանգնել էր թույլ, դողացող,
սակայն անվախ աղջկա առաջ»:
Քահանաները խնդրեցին ամբոխին
հեռանալ, ինչը նրանք լուռ արեցին՝
ամոթով, վախով և զղջումով: Փոք-
րիկ խումբը խաղաղ պայմաններում
ավարտին հասցրեց իր ժողովը:¹

Կարո՞ղ եք պարզապես պատ-
կերացնել այդ խիզախ երիտասարդ
կնոջը, ձեզանից շատերի տարիքին,
կանգնած ամբոխի առաջ և պաշտ-
պանելիս իր նոր գտած համոզ-
մունքները խիզախությամբ ու
վստահությամբ:

Քույրեր, մեզանից քչերը ստիպ-
ված կլինեն երբևէ կանգնել բար-
կացած ամբոխի առջև, սակայն մի
պատերազմ է մղվում աշխարհում,
որի հարձակման թիրախը մեր
ամենափայփայած և հիմնական
վարդապետություններն են: Ես
հատկապես խոսում եմ ընտանիքի
վարդապետության մասին: Տան
սրբությունը և ընտանիքի կարևորա-
գույն նպատակները հարցականի
տակ են դրվում, քննադատության



և կատաղի հարձակման են ենթարկվում ամեն կողմից:

Երբ նախագահ Գորգոն Բ. Հինքլին առաջին անգամ կարդաց «Ընտանիք. հայտարարություն աշխարհին» հայտարարությունը սրանից 20 տարի առաջ, մենք երախտապարտ էինք և արժևորում էինք հայտնությամբ ստացված այս փաստաթղթի հատակությունը, պարզությունը և ճշմարտացիությունը: Այն ժամանակ մենք քիչ էինք գիտակցում, թե որքան անհետաձգելիորեն մենք կունենայինք այս հիմնական հայտարարությունների կարիքն այսօրվա աշխարհում որպես չափանիշներ, որոնցով մենք կկարողանայինք կարծիք կազմել յուրաքանչյուր նոր քամու բերած աշխարհիկ անառարկելի պնդումների մասին, որոնք թափվում են մեզ վրա լրատվամիջոցների, համացանցի, գիտնականների, հեռուստատեսության, ֆիլմերի և նույնիսկ օրենսդրություն սահմանողների կողմից: Ընտանիքին վերաբերող հայտարարությունը դարձել է մեր չափանիշը աշխարհի փիլիսոփայությունների շուրջ կարծիք կազմելու հարցում, և ես վկայում եմ, որ այս հայտարարության մեջ ներկայացված սկզբունքները նույնքան ճշմարիտ են այսօր, որքան այն ժամանակ, երբ դրանք տրվեցին մեզ Աստծո մարգարեի կողմից՝ գրեթե 20 տարի առաջ:

Կարո՞ղ եմ նշել մի ակնհայտ բան: Կյանքը հազվադեպ է ընթանում ճիշտ ըստ նախատեսվածի, և մենք քաջատեղյակ ենք, որ ոչ բոլոր կանայք ունեն այն փորձառությունը, որը նկարագրվում է հայտարարության մեջ: Այնուամենայնիվ, կարևոր է հասկանալ և ուսուցանել Տիրոջ տված օրինակը և ձգտել լավագույնս իրականացնել այն:

Յուրաքանչյուրս ծրագրում պետք է կատարենք մեր դերը, և մեզանից յուրաքանչյուրը հավասարապես արժեքավոր է Տիրոջ աչքում: Մենք պետք է հիշենք, որ սիրառատ Երկնային Հայրը գիտի մեր արդար ցանկությունները և կմեծարի Իր խոստումները, որ ոչինչ հետ չի պահվի նրանցից, ովքեր հավատարմորեն պահում են իրենց ուխտերը:



Երկնային Հայրը առաքելություն և ծրագիր ունի մեզանից յուրաքանչյուրի համար, սակայն Նա նաև ունի դրանց համար նախատեսված Իր իսկ ժամանակը: Այս կյանքի ամենադժվար մարտահրավերներից մեկը առ Տիրոջ ժամանակը հավատք ունենալն է: Լավ գաղափար է մտքում այլընտրանքային ծրագիր ունենալը, որն օգնում է մեզ լինել ուխտեր պահող, գթառատ և արդարակյաց կանայք, ովքեր կառուցում են Աստծո արքայությունը՝ անկախ այն բանից, թե որ ուղղությամբ է ընթանում մեր կյանքը: Մենք պետք է ուսուցանենք մեր դուստրերին ձգտել կատարելության, սակայն ծրագրեր ունենալ ճգնաժամային իրավիճակների համար:

Ընտանիքի հայտարարության այս 20-րդ հոբելյանական տարում ես կցանկանայի մարտահրավեր հղել բոլորիս՝ որպես Եկեղեցու կանայք լինել «Ընտանիք. հայտարարություն աշխարհին» հայտարարության պաշտպանները: Ճիշտ ինչպես Մերի Մադելին Քարդինը խիզախաբար պաշտպանեց միսիոներներին և իր նոր գտած համոզմունքները, մենք պետք է համարձակորեն պաշտպանենք Տիրոջ հայտնած վարդապետությունները, որոնք նկարագրում են ամուսնությունը, ընտանիքները, տղամարդկանց և կանանց աստվածային դերերը և տան կարևորությունը որպես սրբազան վայր,

նույնիսկ այն ժամանակ, երբ աշխարհն աղաղակում է մեր ականջներին, որ այս սկզբունքները հնացել են, սահմանափակող են և այլևս տեղին չեն: Յուրաքանչյուրը, անկախ ամուսնական կարգավիճակից կամ երեխաների քանակից, կարող է պաշտպանել Տիրոջ ծրագիրը, որը նկարագրվում է ընտանիքի վերաբերյալ հայտարարությունում: Եթե դա Տիրոջ ծրագիրն է, այն պետք է նաև մեր ծրագիրը լինի:

Հայտարարության մեջ ուսուցանվում են երեք սկզբունքներ, որոնք, իմ կարծիքով, կարիք ունեն անսասան պաշտպանների: Առաջինը ամուսնությունն է տղամարդու և կնոջ միջև: Սուրբ գրությունները մեզ ուսուցանում են. «Բայց դարձեալ ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ, Տէրումը»:² Յուրաքանչյուրի համար, ով ցանկանում է ձեռք բերել քահանայության բոլոր օրհնությունները, անհրաժեշտ է ամուսնու և կնոջ կնքումը Տիրոջ տանը, ովքեր միասին աշխատում են արդարակեցությամբ և հավատարիմ են մնում իրենց ուխտերին: Մա Տիրոջ ծրագիրն է Իր զավակների համար և հասարակական ոչ մի ճառ կամ քննադատություն ի գորու չի լինի փոխելու այն, ինչ հայտարարել է Տերը: Մենք պետք է շարունակենք արդարակյաց ամուսնությունների օրինակ լինել, փնտրել այդ օրհնությունը մեր կյանքում և հավատք ունենալ, եթե դանդաղ ենք հասնում այդ նպատակին: Եկեք լինենք պաշտպաններն այն ամուսնության, որը կարգվել է Տիրոջ կողմից, մինչ կշարունակենք սեր և կարեկցանք ցուցաբերել նրանց հանդեպ, ովքեր ունեն այլ տեսակետներ:

Հաջորդ սկզբունքը, որն ունի մեր պաշտպանող ձայների կարիքը, մայրերի և հայրերի աստվածային դերերի կարևորումն է: Մենք ջանասիրաբար սովորեցնում ենք մեր երեխաներին վեհ նպատակներ ունենալ այս կյանքում: Մենք հատկապես ցանկանում ենք համոզված լինել, որ մեր դուստրերը գիտեն, որ իրենք ներուժ ունեն հասնելու և լինելու այն ամենը, ինչ կարող են երևակայել: Մենք հույս ունենք, որ

նրանք կսիրեն ուսումը, կրթություն կստանան, տաղանդավոր կլինեն և միգրացե նույնիսկ կդառնան հաջորդ Մարի Կյուրին կամ Էլիզա Ռ. Մնուն:

Արդյո՞ք մենք նաև ուսուցանում ենք մեր որդիներին ու դուստրերին, որ չկա ավելի մեծ պատիվ, ավելի վեհ տիտղոս և ավելի կարևոր դեր այս կյանքում, քան մայր և հայր լինելը: Ես հուսով եմ, որ երբ մենք կքաջալերենք մեր երեխաներին լավագույնին ձգտել այս կյանքում, մենք նաև կուսուցանենք նրանց պատվել և վեհացնել դերերը, որ մայրերն ու հայրերը խաղում են մեր Երկնային Հոր ծրագրում:

Մեր կրտսեր դուստրը՝ Էբբին, եզակի հնարավորություն տեսավ կանգնելու որպես մայրության դերի պաշտպան: Մի օր իր երեխաների դպրոցից նրան տեղեկացրեցին, որ նրանք դպրոցում անց էին կացնելու Կարիերայի Օրվան նվիրված շնորհանդեսներ: Ծնողներին հրավիրեցին ուղարկել դիմումներ, եթե ցանկանում էին գալ դպրոց՝ ուսուցանելու համար երեխաներին իրենց աշխատանքների մասին, և Էբբին ոգեշնչում ստացավ խոսելու մայրության մասին: Նա պատասխան չստացավ դպրոցից, և երբ մոտենում էր Կարիերայի Օրվան նվիրված օրը, նա, ի վերջո, զանգեց դպրոց, մտածելով, որ նրանք միգրացե կորցրել էին իր դիմումը: Կազմակերպիչները փորձեցին գտնել դասարան, որտեղ նա կարող էր խոսել, և գտան երկու ուսուցիչներ, ովքեր համաձայնեցին, որ Էբբին գար և խոսեր նրանց դասերի ժամանակ Կարիերայի Օրվա վերջում:

Երեխաներին ուղղված իր շատ զվարճալի ելույթի ժամանակ Էբբին սովորեցրեց նրանց այլ բաների հետ մեկտեղ, որ որպես մայր նա պետք է փորձառու լիներ այնպիսի հարցերում, որոնք վերաբերում էին բժշկությանը, հոգեբանությանը, կրոնին, ուսուցանմանը, երաժշտությանը, գրականությանը, արվեստին, ֆինանսներին, ձևավորմանը, վարսահարդարմանը, վարորդությանը, սպորտին, խոհարարական արվեստին և շատ այլ ոլորտների: Երեխաները տպավորված էին:



Վերջում նա խնդրեց երեխաներից յուրաքանչյուրին հիշել իրենց մայրերին, գրելով շնորհակալական բացիկ, երախտագիտություն արտահայտելով ամեն օր սիրով նրանց մատուցված բազմաթիվ ծառայությունների համար: Էբբին զգաց, որ երեխաները տեսան իրենց մայրերին լիովին նոր յույսի ներքո և որ մայր կամ հայր լինելը շատ արժեքավոր բան է: Նա դիմեց այս տարի կրկին այդ ուղերձով կիսվելու համար և հրավիրվեց ելույթ ունենալու վեց դասարաններում:

Իր փորձառության մասին Էբբին ասել է. «Ես այնպիսի զգացողություն ունեի, որ կարծես հեշտ կարող էր լինել այս աշխարհում երեխայի համար տպավորություն ստանալը, որ ծնող լինելը երկրորդական գործ է կամ երբեմն նույնիսկ անհրաժեշտ անհարմարություն: Ես ցանկանում եմ, որ յուրաքանչյուր երեխա զգա, որ ինքը ամենակարևոր առաջնահերթությունն է իր ծնողների համար,

և միգրացե նրանց ասելը, թե որքան կարևոր է ինձ համար ծնող լինելը, կօգնի նրանց գիտակցել այն ամենը, ինչ նրանց ծնողներն անում են իրենց համար»:

Մեր սիրելի մարգարեն՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնտոնը, կանանց և մայրությունը պատվելու հրաշալի օրինակ է, հատկապես, երբ դա վերաբերում է իր մորը: Անդրադառնալով մեր երկրային մայրերին, նա ասել է. «Թող որ մեզանից յուրաքանչյուրը փայլալից այս ճշմարտությունը. մարդը չի կարող մոռանալ իր մորը և հիշել Աստծուն: Մարդը չի կարող հիշել մորը և մոռանալ Աստծուն: Ինչո՞ւ: Քանի որ նրանք երկուսն էլ սուրբ անձնավորություններ են՝ Աստված և մեր [երկրային] մայրը գործընկերներ են արարման, սիրո, գոհաբերության, ծառայության մեջ, նրանք մեկ են»:³

Վերջին սկզբունքը, որը մենք պետք է պաշտպանենք, տան սրբությունն է: Մենք պետք է վերցնենք

մի տերմին, որի մասին երբեմն ծաղրանքով են խոսում, և վեհացնենք այն: Դա *տնային տնտեսուհի* տերմինն է: Մենք բոլորս՝ կանայք, տղամարդիկ, երիտասարդները և երեխաները, ամուրիները կամ ամուսնացածները, կարող ենք աշխատել տնային տնտեսուհիներ լինելու համար: Մենք պետք է դարձնենք մեր տները ապաստարաններ, սրբության և ապահովության վայրեր: Մեր տները պետք է լինեն վայրեր, որտեղ մեծապես կարելի է զգալ Տիրոջ Հոգին և որտեղ ուսումնասիրվում և ուսուցանվում են սուրբ գրությունները և որտեղ ապրում են դրանց համաձայն: Ինչ մեծ փոփոխություն տեղի կունենար աշխարհում, եթե բոլոր մարդիկ տեսնեին իրենց որպես արդար տներ ստեղծողներ: Եկեք պաշտպանենք տունը որպես մի վայր, որը սրբության առումով իր տեղը զիջում է միայն տաճարին:

Քույրեր, ես շնորհակալ եմ, որ ապրում եմ այս վերջին օրերում: Մենք ունենք հեռանկարներ և հնարավորություններ, որոնք ոչ մի այլ սերնդի կանայք չեն ունեցել աշխարհում: Եկեք օգնենք կառուցել Աստծո արքայությունը՝ համարձակ կանգնելով և պաշտպանելով ամուսնությունը, ծնող լինելը և տունը: Տերը ցանկանում է, որ մենք լինենք քաջ, անսասան և անխախտ ռազմիկներ, ովքեր կպաշտպանեն Իր ծրագիրը և կսովորեցնեն եկող սերունդներին Նրա ճշմարտությունները:

Ես վկայում եմ, որ Երկնային Հայրն ապրում է և սիրում մեզանից յուրաքանչյուրին: Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, մեր Փրկիչն ու Քավիչն է: Ես թողնում եմ այս վկայությունը ձեզ հետ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Stu Marie Madeline Cardon Guild, "Marie Madeline Cardon Guild: An Autobiography," cardonfamilies.org/Histories/MarieMadelineCardonGuild.html: տես նաև Marie C. Guild autobiography, circa 1909, Church History Library, Salt Lake City, Utah.
2. Ա Կորնթացիս ԺԱ.11:
3. Thomas S. Monson, "Behold Thy Mother," *Ensign*, Jan. 1974, 32.



Նախագահ Հենրի Բ. Այրիսզ
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

Մխիթարիչը

Ես վկայում եմ, որ կենդանի Քրիստոսն այն մարդկանց է ուղարկում Սուրբ Հոգին, Մխիթարիչին, որոնց մխիթարելու համար մենք երդվել ենք օգնել Նրան:

Իմ սիրելի քույրեր, ուրախ եմ այսօր ձեզ հետ լինելու համար: Ես մտածել եմ իմ մոր, իմ կնոջ, իմ աղջիկների, իմ հարսների, իմ թոռնուհիների մասին, որոնցից շատերն այստեղ են: Այս հիանալի ծրագրի միջոցով ես ավելի եմ գնահատում նրանց: Ես գիտակցել եմ, որ այդպիսի հրաշալի ընտանիք ունեմ նրա շնորհիվ, որ նրանք դրել են Փրկչին իրենց կյանքի կենտրոնում: Այս երեկո մենք Նրան հիշատակել ենք՝ Երաժշտության, աղոթքների

և ոգեշնչող քարոզների մեջ: Փրկչի հատկանիշներից մեկը, որը մենք անչափ գնահատում ենք, դա Նրա անսահման կարեկցանքն է: Այս երեկո դուք զգացել եք, թե ինչպես Նա գիտի ձեզ և սիրում է ձեզ: Դուք զգացել եք Նրա սերն այն մարդկանց հանդեպ, ովքեր նստած են ձեր շրջապատում: Նրանք ձեր քույրերն են՝ Երկնային Հոր հոգևոր դուստրերը: Նա հոգ է տանում նրանց մասին այնպես, ինչպես Նա հոգ է տանում ձեր մասին: Նա



հասկանում է նրանց բոլոր վշտերը: Նա ցանկանում է կարեկցել նրանց:

Իմ ուղերձն այսօր այն մասին է, որ դուք կարողանաք և լինեք այն կարևոր մասը Նրա, որ մխիթարություն տաք նրանց, ովքեր մխիթարության կարիքն ունեն: Դուք կարող եք ձեր մասը լավագույն կերպով անել, եթե դուք ավելին իմանաք, թե ինչպես է նա պատասխանում օգնության այդ աղոթքներին:

Շատերն են Երկնային Հորն աղոթում ազատման՝ իրենց վշտի, միայնակության և վախի բեռը կրելու օգնության համար: Երկնային Հայրը լսում է այդ աղոթքները և հասկանում է նրանց կարիքները: Նա և Նրա Միերեկի Որդին, հարություն առած Հիսուս Քրիստոսը, խոստացել են օգնություն:

Հիսուս Քրիստոսը տվել է այս հաճելի խոստումը.

«Ինձ մօտ եկեք, ամեն վաստակածներ եւ բեռնատրուածներ, եւ ես հանգիստ կ'տամ ձեզ:

Ձեզ վերայ առեք իմ լուծը եւ ինձանից սովորեցեք. Որովհետեւ ես հեզ եմ եւ սրտով խոնարհ. Եւ ձեր անձերի համար հանգստութիւն կ'զտնեք:

Որովհետեւ իմ լուծը քաղոք է, եւ իմ բեռը՝ թեթեւ:»¹

Այն բեռը, որը պետք է կյանքում կրեն Իր հավատարիմ ծառաները,

թեթևացել է Նրա Քավության շնորհիվ: Մեղքի բեռը կարելի է հեռու տանել, սակայն մահկանացու կյանքի փորձությունները դեռևս կարող են ծանր բեռ լինել լավ մարդկանց համար:

Այդպիսի փորձությունների ականատես եք եղել ձեր սիրելի մարդկանց կյանքում: Դուք ցանկություն եք ունեցել օգնելու նրանց: Նրանց հանդեպ ձեր կարեկից զգացողության համար, կա պատճառ:

Դուք Հիսուս Քրիստոսի Եկեղեցու ուխտյալ անդամ եք: Մեծ փոփոխություն տեղի ունեցավ ձեր սրտում, երբ միացաք Եկեղեցուն: Դուք ուխտ կապեցիք, և խոստում ստացաք, որը փոխեց ձեր ողջ բնույթը:

Մորմնի ջրերում Ավան իր խոսքերով նկարագրեց մկրտության ժամանակ ձեր խոստացածը և այն, թե ինչ նշանակություն կունենա դա ձեր և ձեր շրջապատի՝ հատկապես ձեր ընտանիքների համար: Նա խոսում էր նրանց հետ, ովքեր պատրաստվում էին մտնել այն ուխտի մեջ, որը դուք կապել եք և նաև նրանք ստացան այն խոստումը, որը Տերը տվել է ձեզ:

«Նայե՛ք, ահա Մորմնի ջրերը, (քանզի այդպես էին նրանք կոչվում) և արդ, քանի որ դուք փափագում եք զալ Աստծո հոտը և կոչվել նրա

ժողովուրդը, և հոժար եք կրելու մեկը մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն,

Այո, և հոժար եք սգալու նրանց հետ, ովքեր սգում են. այո, և մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության, և կանգնելու որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ դուք կարող է լինեք, նույնիսկ մինչև մահ, որպեսզի դուք կարողանաք փրկագնվել Աստծո կողմից և համարվեք նրանց հետ, ովքեր պատկանում են առաջին հարությանը, որպեսզի դուք կարողանաք հավերժական կյանք ունենալ:»²

Այդ պատճառով է, որ դուք ցանկանում եք օգնել այն մարդուն, ով դժվարանում է վշտի և դժվարության բեռի տակ առաջ շարժվել: Դուք խոստացաք, որ կօգնեք Տիրոջը, որ թեթևացնի նրանց բեռը և մխիթարի նրանց: Մուրբ Հոգու պարզ ասանալուց հետո, Ձեզ տրվեց զորություն՝ թեթևացնելու այդ բեռը:

Իր խաչվելուց անմիջապես առաջ Փրկիչը նկարագրեց, թե ինչպես է Նա օգնում թեթևացնել բեռը և ուժ տալիս դրանք կրելու համար: Նա գիտեր, որ Իր աշակերտները կտխրեն: Նա գիտեր, որ նրանք կվախենային իրենց ապագայի համար: Նա գիտեր, որ նրանք վստահ չեն զգա իրենց՝ առաջ շարժվելու համար:

Այսպիսով Նա տվեց մի խոստում նրանց, որը Նա տալիս է նաև մեզ և Իր բոլոր ճշմարիտ աշակերտներին.

«Եւ ես Հօրը կ'աղաչեմ եւ ուրիշ Մխիթարիչ կ'տայ ձեզ. Որ մնայ ձեզ հետ յաւիտեան:

Ճշմարտութեան Հոգին, որին աշխարհքս կարող չէ ընդունել. Որ չէ տեսնում նորան. Եւ ոչ. Էլ ճանաչում նորան. Բայց դուք նորան ճանաչում եք, որովհետեւ ձեզ մօտ է մնում եւ ձեզ հետ կ'լինի:»³

Ապա Նա խոստացավ.

«Բայց Մխիթարիչը՝ Մուրբ Հոգին, որ Հայրը կ'ուղարկէ իմ անունովը, նա ամեն բան կ'սովորեցնէ ձեզ, եւ կ'յիշեցնէ ձեզ ամեն ինչ որ ձեզ ասեցի:

Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. Ոչ թէ ինչպես աշխարհքն է տալիս՝ ես





պատահաբար, երբ իր ընտանիքի հետ գտնվում էր արձակուրդում: Բնձ կրկին անգամ հնարավորություն տրվեց ականատես լինել, թե ինչպես է Տերն թեթևացմամբ և համբերելու ուժով օրհնում հավատարիմներին:

Ես հետևում էի, թե ինչ եղանակով Տերը թեթևացրեց նրանց մեծ բեռը: Ես նրանց հետ էի, որպես Տիրոջ ուխտյալ ծառա, ինչպես դուք հաճախ կլինեք ձեր կյանքում, «որպեսզի սզայի նրանց հետ, ովքեր սգում են, և մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության»:⁵

Մումբայ, Հնդկաստան

որ սգում եմ նրանց հետ, բայց միայն Տերը գիտի և կարող է նրանց ցավը և վիշտը ամբողջովին զգալ:

Այդ մի քանի բառերն ասելուց հետո, ես զգացի, որ պետք է սիրով լսեմ, մինչ նրանք խոսում են իրենց զգացմունքների մասին:

Այդ մեկ ժամի ընթացքում նրանք ավելի շատ խոսեցին, քան ես: Ես նրանց ձայնից կարող էի զգալ և նրանց աչքերում կարող էի տեսնել, որ Սուրբ Հոգին դիպչում էր նրանց: Դարձ վկայության խոսքերով նրանք պատմեցին, թե ինչ էր պատահել և ինչպիսի զգացումներ էին ունեցել: Սուրբ Հոգին նրանց արդեն պարզել էր այն խաղաղությունը, որը գալիս է հավերժական կյանքի մասին հույս ունենալուց, երբ նրանց որդին, ով անմեղ էր մահացել, կարող էր ընդմիջտ լինել իրենց հետ:

Երբ ես նրանցից յուրաքանչյուրին տվեցի քահանայության օրհնություն, ես շնորհակալություն հայտնեցի Սուրբ Հոգուն՝ այնտեղ ներկա լինելու համար: Մխիթարիչը եկավ՝ բերելով նրանց և մեզ բոլորիս հույս, խիզախություն և մեծ ուժ:

Այդ երեկո ես ականատես եղա, թե ինչպես է Տերն աշխատում մեզ հետ, որպեսզի թեթևացնի Իր ժողովրդի բեռը: Դուք հիշում եք Մորմոնի Գրքում, երբ Իր ժողովուրդը գրեթե ջախջախված էր այն բեռի տակ, որը նրանց մեջքի վրա էր դրվել դաժան վերակացումների կողմից:

Ժողովուրդն աղերսում էր փրկության համար, ինչպես նրանցից շատերը, որոնց մենք սիրում ու ծառայում ենք: Ահա այն գրառումը, որը ես գիտեմ, որ ճշմարիտ է.

«Եվ ես նաև կթեթևացնեմ բեռները, որոնք դրվել են ձեր ուսերին, որպեսզի դուք մինչև անգամ չզգաք դրանք ձեր մեջքին, նույնիսկ մինչ դուք ճորտության մեջ եք. և սա ես կանեմ, որպեսզի հետագայում դուք կարողանաք կանգնել որպես վկաներ ինձ համար, և որպեսզի դուք կարողանաք հաստատ իմանալ, որ ես՝ Տեր Աստվածս, այցելում եմ իմ ժողովրդին իրենց չարչարանքների մեջ:

Եվ արդ, եղավ այնպես, որ բեռները, որոնք դրվել էին Ավալի ու



տալիս եմ ձեզ. ձեր սիրտը չ'խռովի ես չ'վախենալ»:⁴

Վերջին մի քանի շաբաթների ընթացքում, ես ականատես եմ եղել, թե ինչպես է Սուրբ Հոգին ուղարկելու այդ խոստումն իրականանում ստոծ այն զավակների կյանքում, ովքեր աղոթքով աղաչում էին, որ իրենց բեռը թեթևացվի: Բեռի թեթևացման հրաշքը տեղի ունեցավ այն ձևով, ինչպես Տերն էր խոստացել: Նա և Երկնային Հայրը ուղարկեցին Սուրբ Հոգուն՝ որպես Մխիթարիչ օգնելու Իր աշակերտներին:

Վերջերս ընտանիքի երեք սերունդներ սգում էին հինգամյա տղայի մահը: Նա մահացել էր

Քանի որ ես գիտեի, որ դա ճշմարիտ էր, ես գոհ էի և խաղաղ էի զգում, երբ տատիկն ու պապիկը հուղարկավորությունից առաջ հրավիրեցին ինձ հանդիպել իրենց և փոքրիկ տղայի ծնողների հետ:

Ես աղոթեցի, որպեսզի իմանայի, թե ինչպես կարող էի օգնել Տիրոջը մխիթարել նրանց: Մենք նստեցինք մեր հյուրասենյակում: Բովսարիում մի փոքր կրակ էի վառել, որպեսզի տաքացնեի սենյակը այդ ցուրտ երեկոյան:

Ես զգացի, որ պետք է ասեի, որ սիրում էի նրանց: Ես ասացի նրանց, որ ես զգացել եմ Տիրոջ սերը նրանց հանդեպ: Մի քանի բառով ես ասացի,



նրա եղբայրների վրա, թեթևացան. այո՛, Տերն ուժեղացրեց նրանց, որ նրանք կարողանային իրենց բեռները հեշտությամբ տանել, և նրանք զվարթությամբ ու համբերությամբ հնազանդվեցին Տիրոջ ողջ կամքին»:⁶

Ես այդ հրաշքին կրկին ու կրկին անգամ ականատես եմ եղել: Մենք ուրիշների բեռը լավագույն կերպով թեթևացնում ենք, երբ օգնում ենք Տիրոջն ուժեղացնել նրանց: Այդ պատճառով է Տերը ուրիշներին մխիթարելու մեր պարտականության մեջ պատվիրել, որ լինենք Նրա վկաները բոլոր ժամանակներում և բոլոր վայրերում:

Այդ երեկոյան հյուրասենյակում, այդ փոքրիկ տղայի հայրը և մայրը վկայություն բերեցին Փրկչի մասին: Սուրբ Հոգին ներկա գտնվեց և մենք բոլորս մխիթարվեցինք: Ծնողները ուժ ստացան: Բեռը և վիշտը չանհայտացան, բայց դրանք օգնեցին դիմանալ տխրությանը: Նրանց հավատքը մեխացավ: Եվ նրանց ուժը կշարունակի անել, եթե նրանք խնդրեն դա և ապրեն դրա համար:

Այդ երեկո ներկա գտնվող Քավության մասին Հոգու վկայությունն էր, որ ուժեղացրեց Հոբին՝ կրելու իր բեռը.

«Իսկ ես գիտեմ որ Փրկիչս կենդանի է, եվ նա վերջը պիտի կանգնե հողի վերայ:

Եվ իմ մորթը այսպես թափուելույ յետոյ, այն ժամանակ իմ մարմնիցը տեսնելու եմ Աստուծուն»:⁷

Դա այդ Հոգու վկայությունն էր, որ դիմանալու ուժ տվեց: Նա կանցնի իր շուրջը գտնվող մարդկանց սգո և մխիթարության պակասի միջով, որպեսզի տեսնի այն ուրախությունը, որը կգա այն հավատարիմներին, ովքեր հավատարմորեն անցնում են իրենց փորձությունների միջով:

Այդպես էր նաև Հոբի դեպքում: Օրհնությունները նրան եկան այս կյանքում: Հոբի պատմությունը վերջանում է այսպիսի հրաշքով.

«Եվ Եհովան օրհնեց Յոբի վերջը նորա սկզբիցն ավելի: . . .

Եվ Յոբի աղջիկների պես գեղեցիկ կանայք չէր գտնուիլ այն երկրումը. եվ նորանց հայրը նորանց ժառանգութիւն տուավ իրանց եղբայրների մեջ:

Եվ Յոբը սորանից յետոյ հարիւր քառասուն տարի ապրեց և տեսավ իր որդիքն ու որդկանցը որդիքը՝ չորս սերունդ:

Եվ Յոբը մեռավ ծերացած և օրերիցը կշտացած»:⁸

Գալիք Քավության վերաբերյալ Հոգու վկայությունն էր, որը Հոբը տեսավ կյանքի նախատեսած փորձությունների շնորհիվ՝ մեզ բոլորիս համար: Դա երջանկության մեծ ծրագրի մի մասն էր, որ Հայրը տվեց մեզ: Նա թույլ տվեց, որ Իր Որդին՝ Իր քավիչ գոհաբերության շնորհիվ հույս բերի, որը կմխիթարի մեզ անկախ նրանից, թե որքան

դժվար կլինի ճամփան դեպի տուն՝ դեպի Նա:

Հայրը և Որդին ուղարկեցին Սուրբ Հոգուն, որպեսզի նա մխիթարի և ուժեղացնի Վարպետի աշակերտներին իրենց ճամփորդության ժամանակ:

Ես մխիթարության այդ հրաշքը տեսա, երբ ժամանեցի այն սենյակի մոտ, որտեղ պետք է տեղի ունենար փոքրիկ տղայի հուղարկավորությունը: Ինձ կանգնեցրեց մի սիրավիր երիտասարդ կին, որին ես չէի ճանաչում: Նա ասաց, որ մասնակցում էր հուղարկավորությանը, որպեսզի անհրաժեշտության դեպքում սզար և մխիթարեր:

Նա ասաց, որ մասնակցում էր հուղարկավորությանը մասամբ իրեն մխիթարելու համար: Նա ասաց ինձ, որ իր առաջնեկը վերջերս էր մահացել: Նա գրկել էր մի գեղեցիկ փոքրիկ աղջկա: Ես կռացա, որպեսզի տեսնեի փոքրիկ աղջնակի ժպտացող դեմքը: Ես հարցրեցի փոքրիկի մայրիկին. «Ի՞նչ է նրա անունը»: Նա արագ և ուրախ պատասխանեց. «Նրա անունը Ուրախություն է: Ուրախությունը միշտ հետևում է տխրությանը»:

Նա իր վկայությունն էր բերում ինձ: Ես տեսնում էի, որ այդ խաղաղությունը և սփոփանքը գալիս էր միայն մեկ հավաստի աղբյուրից: Միայն Աստված է ճանաչում սրտերը, և իրականում միայն Նա կարող է ասել. «Ես գիտեմ, թե ինչպես ես դու զգում»: Այսպիսով, ես կարող էի միայն պատկերացնել նրա ուրախությունը և դրան նախորդած տխրությունը, բայց Տերը, ով սիրում է նրան, գիտի՝ դա:

Ես միայն կարող եմ մասամբ իմանալ, թե որքան է Նա ուրախանում, երբ ամեն անգամ՝ դուք, որպես Նրա աշակերտներ օգնում եք Նրան խաղաղության և ուրախության պահեր պարզելու մեր Երկնային Հոր զավակին:

Ես բերում եմ իմ վկայությունը, որ Տերը խնդրել է յուրաքանչյուրիս՝ Իր աշակերտներին, օգնել կրելու միմյանց բեռը: Մենք խոստացել ենք անել դա: Ես բերում եմ իմ վկայությունը, որ Տերն՝ Իր

Քավության և Հարության շնորհիվ, կոտրել է մահվան գորությունը: Ես վկայում եմ, որ կենդանի Քրիստոսն այն մարդկանց է ուղարկում Մուրբ Հոգին, Մխիթարիչին, որոնց մխիթարելու համար մենք երդվել ենք օգնել Նրան:

Ինչպես ես, դուք բոլորդ էլ ականատես եք այն արձանագրության ճշմարտացիությանը, որը գրված էր մորս քորոցի վրա, որը նա կրել էր շուրջ 20 տարի, որպես Սփոփող Միության գերագույն խորհրդի անդամ: Այն կարդացվում է՝ «Մերը երբեք չի խափանվում»:⁹ Ես դեռևս չեմ հասկանում այդ բառերի ամբողջ իմաստը: Բայց ես պատկերացում եմ կազմել, երբ տեսել եմ նրան կարիքավորներին հասնելիս: Մուրբ գրության մեջ կարդում ենք հետևյալ ճշմարտությունը՝ «Գթությունը Քրիստոսի մաքուր սերն է»:¹⁰

Նրա սերը երբեք չի խափանվում և մենք նույնպես մեր սրտերում չպետք է դադարենք ունենալ ցանկություն՝ «սզալու նրանց հետ, ովքեր սգում են. . . և մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության»:¹¹ Ոչ էլ Նրա խոստացած խաղաղությունը երբևէ պետք է լքի մեզ, եթե հանուն Նրա մենք ծառայում ենք իրար:

Որպես Նրա վկա, ես իմ երախտագիտությունն եմ հղում ձեզ այն բանի համար, ինչ դուք այդքան լավ եք անում, որպեսզի օգնեք Կենդանի Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին և Մուրբ Հոգուն՝ Մխիթարիչին, ամրապնդել տկար ծնկները և բարձրացնել կախ ընկած ձեռքերը:¹² Ես իմ ողջ սրտով շնորհակալ եմ իմ կյանքի այն կանանց համար, ովքեր որպես Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներ օգնել ու օրհնել են ինձ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՐՈՒՄՆԵՐ

- 1. Մատթեոս 11.28–30:
- 2. Մոսիա 18.8–9:
- 3. Հովհաննես 14.16–17:
- 4. Հովհաննես 14.26–27:
- 5. Մոսիա 18.9:
- 6. Մոսիա 24.14–15:
- 7. Հոբ 19.25–26:
- 8. Հոբ 42.12, 15–17:
- 9. Ա Կորնթացիս 13.8:
- 10. Մորոնի 7.47:
- 11. Մոսիա 18.9:
- 12. Տես Վարդապետություն և Ուխտեր 81.5:





Նախագահ Հենրի Բ. Այրիսզ
Առաջին Նախագահության առաջին խորհրդակցան

«Ահա սա է ծովը, որին ես հաւանում եմ»

Չեր ծովի նվիրատվությունն ավելին կանի, քան մարմինը կերակրելն ու հագցնելը: Այն սրտեր կբժշկի ու կփոխի:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ինձ համար ուրախություն է իմ սերը հայտնել ձեզ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու այս գերագույն համաժողովին: Այդ ուրախությունը գալիս է Հոգու վկայությունից, որ Փրկչի սերը հասնում է ձեզանից յուրաքանչյուրին և Երկնային Հոր բոլոր զավակներին: Մեր Երկնային Հայրը ցանկանում է, որ Նրա զավակներն օրհնվեն հոգեպետ և ֆիզիկապես: Նա հասկանում է նրանց կարիքները, նրանց ցավերն ու նրանց հույսերը:

Երբ մենք օգնություն ենք առաջարկում ինչ-որ մեկի, Փրկչին զգում է այնպես, կարծես թե Իրեն սաստարելու ձեռք ենք մեկնել:

Նա մեզ ասել է, որ դա իրականություն կլինի, երբ նկարագրում էր ապագայի մի դրվագ, երբ բոլորս կտեսնենք Նրան այս աշխարհում մեր կյանքն ավարտելուց հետո: Այդ պատկերն իմ մտքում ավելի վառ էր դառնում օրեցօր, երբ աղոթում ու ծով էի պահում, որ իմանամ այսօրվա ուղերձի մասին: Տերը նկարագրել է գալիք այդ առանձնագրույցն Իր աշակերտներին, և այն նշում է մի բան, ինքներս՝ մեր

ողջ սրտով կցանանայինք, որ ճշմարիտ լինեք նաև մեզ համար.

«Այն ժամանակ թագաւորը կ'ասէ իր աջ կողմիներին, Եկէք, ով իմ Հօր օրհնածները, ժառանգեցէք աշխարհքի սկզբից ձեզ համար պատրաստուած թագաւորութիւնը:

Որովհետեւ սովեցի, եւ դուք տուիք ինձ ուտել. Ծարաւեցի եւ խմեցիք ինձ. օտար էի, եւ ինձ ձեզ մօտ առաք.

Մերկ էի, եւ հագցրիք ինձ. Հիւանդ էի, եւ ինձ այցելեցիք. բանտի մէջ էի, եւ ինձ մօտ եկաք:

Այն ժամանակ արդարները կ'պատասխանեն նորան եւ կ'ասեն. Տէ՛ր, ե՞րբ տեսանք քեզ սոված, եւ կերակրեցիք, կամ ծարաւ, եւ խմեցրիք:

Ե՞րբ տեսանք քեզ օտար, եւ մեզ մօտ առանք, կամ մերկ, եւ հագցրիք:

Ե՞րբ տեսանք քեզ հիւանդ, կամ բանտի մէջ, եւ եկանք քեզ մօտ:

Թագաւորն էլ կ'պատասխանէ եւ կ'ասէ նորանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, որովհետեւ այս իմ փոքր եղբայրներից մէկին արիք, ինձ արիք»¹:

Թե՛ դուք, թե՛ ես ջերմ ընդունելության ենք ցանկանում արժանանալ Փրկչի կողմից: Բայց ինչպե՞ս կարող ենք արժանանալ դրան: Երկնային

Հոր զավակներից այնքան շատերն ունեն ուտելիքի, տանիքի ու ընկերության կարիք, որ բոլորին հնարավոր չէ օգնության հասնել: Իսկ այդ թիվն ավելի է աճում ու մեր հասնելությունից հեռանում:

Այդպիսով, Տերը մեզ մի բան է հանձնարարել, որ բոլորս կարող ենք անել: Այդ պատվիրանն այնքան հասարակ է, որ երեխան էլ կարող է հասկանալ: Դա հրաշալի խոստումով մի պատվիրան է ինչպես կարիքի մեջ գտնվողի, այնպես էլ մեզ համար:

Դա ծոմապահության օրենքն է: Ես այիայի գրքի խոսքերով Տերը նկարագրել է այդ պատվիրանն ու օրհնությունը, որը մատչելի է մեզ՝ Նրա Եկեղեցու անդամներին.

«Ահա սա է ծովը, որին ես հաւանում եմ. Լուծիր անիրաւութեան կապանքները, բաց արա լուծի կոշկոռները. Եւ ջարդուածներին ազատ թող տուր, եւ ամեն տեսակ լուծ կոտրեցէք:

Այո, հացը կտրիք տուր սովածին, եւ թափառական խեղճերին տար տունդ, երբոր մի մերկ տեսնես, նորան հագցրու, եւ քեզ պէս մարմին ունեցողից քեզ մի ծածկիր:


Այն ժամանակ քո լոյսը արշալոյսի պէս պիտի ծագի, եւ քո բժշկութիւնը շուտով պիտի բուսնի, եւ քո արդարութիւնը պիտի գնայ քո առաջից, Տիրոջ փառքը պիտի պահէ քեզ ետելից:

Այն ժամանակ դու կ'կանչես, եւ Տերը կ'պատասխանէ. Դու կ'աղաղակես, եւ նա կ'ասէ. Ահա ես: Եթէ որ հեռացնես քո միջից լուծը, մատնելը եւ շարախօսութիւնը դէն զցես,

Եւ կերակրես սովածին ախորժանօքդ, եւ կարօտի հոգին կշտացնես, այն ժամանակ քո լոյսը կ'ծագի խաւարումը, եւ քո խաւարը կ'լինի կէտ օրուայ պէս:

Եւ Տերը քեզ միշտ կ'առաջնորդէ, եւ կ'կշտացնէ քո անձը երաշտներումը, եւ ոսկորներիդ կ'զօրացնէ, եւ ջրարբի պարտեզի նման կ'լինես, եւ ջրի ակնի պէս՝ որի ջուրը չի պակասի»²:

Այդպիսով, Տերը մեզ հասարակ պատվիրան ու սքանչելի խոստում է տվել: Եկեղեցում մենք այսօր հնարավորություն ունենք ամիսը



մեկ անգամ ծոմ պահել ու առատ ծոմի նվիրատվություններ անել մեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի միջոցով աղքատներին ու կարիքավորներին օգնելու համար: Ձեր նվիրածի մի մասը կարող է օգտագործվել շրջապատի մարդկանց, գուցեև ձեր իսկ ընտանիքի անդամների համար: Տիրոջ ծառաները կաղոթեն և ծոմ կպահեն, որպեսզի հայտնությամբ զիտելիք ստանան, թե ում օգնեն և ինչ ձևով օգնեն: Այն, ինչն անհրաժեշտ չի լինի ձեր տեղական Եկեղեցու միավորի անդամներին օգնելու համար, մատչելի կդառնա օրհնելու համար կարիքի մեջ գտնվող Եկեղեցու անդամներին ողջ աշխարհում:

Աղքատների օգտին ծոմ պահելու պատվիրանին բազմաթիվ օրհնություններ են կցված: Նախագահ Սփենսեր Վ. Քիմբլայն այդ օրհնքին հետևելու թերաջումն անվանել է բացթողնման մեղք՝ ծանր զևով. Նա գրել է. «Հարուստ խոստումներ են տրվել Տիրոջ կողմից նրանց, ովքեր ծոմ են պահում և սատարում են կարիքավորներին. . . Ոգեշնչում ու հոգևոր առաջնորդություն կտրվի նրանց և դրան կուղեկցի արդարությունն ու մերձեցումը մեր Երկնային

Հորը: Ծոմապահության արդար գործը բաց թողնելը կզրկի մեզ այդ օրհնություններից»:³

Ես ստացել եմ այդ օրհնություններից մեկն ընդամենը մի քանի շաբաթ առաջ: Քանի որ գերագույն համաժողովը համընկնում է հանգստյան օրերին, որոնք սովորաբար ներառում են ծոմն ու վկայության ժողովը, ես ծոմ պահեցի ու աղոթեցի, որ իմանամ, թե ինչպես հնազանդվեմ կարիքի մեջ գտնվողների մասին հոգալու պատվիրանին:

Շաբաթ օրը՝ դեռևս ծոմն չավարտած, ես արթնացա առավոտյան 6.00-ին և կրկին աղոթեցի: Ես զգացում ունեցա, որ պետք է կարդամ համաշխարհային նորությունները: Այնտեղ ես կարդացի զեկույցը.

«Փամ անունով արևադարձային ցիկլոնը ավերել է բազմաթիվ տներ, հարվածելով անմիջապես Վանուատուի մայրաքաղաքի՝ Պորտ Վիլայի վրա: Ըստ առաջին հաստատված տվյալների՝ այդ երբևէ ցամաքին հարվածած ամենահզոր փոթորիկներից մեկի հետևանքով Վանուատուում առնվազն վեց մարդ է զոհվել:

Խաղաղովկիանոսյան այդ երկրով հեծեժող ցիկլանից՝ գրեթե ոչ մի ծառ կանգուն չէր մնացել»:⁴

«Վորլդ Վիժն» կազմակերպության արտակարգ իրավիճակների գնահատման թիմը նախատեսում էր փոթորիկի մեղմանալուց հետո գնահատել վնասը:

Նրանք բնակիչներին խորհուրդ էին տվել ապաստան գտնել ամուր շինություններում, ինչպես օրինակ՝ համալսարաններում ու դպրոցներում:

«Ամենամուր կառույցները, որ նրանք ունեն, ցեմենտից եկեղեցիներն են», - ասել էր Ինգա Մեֆամը՝ «CARE International» կազմակերպությունից: Շատերը դա էլ չունեն: Դժվար է կառույց գտնել, որը կդիմակայի 5-րդ կարգի ուժգնության (փոթորիկի):⁵

Երբ կարդում էի, ես հիշեցի իմ այցելությունը Վանուատուի փոքր տներ: Մտքիս մեջ պատկերացնում էի մարդկանց՝ կուչ եկած քամուց ավերված տներում: Սպա հիշեցի Վանուատուի ժողովրդի իմ հանդեպ ցուցաբերած ջերմ ընդունելությունը: Պատկերացրեցի, թե ինչպես են նրանք իրենց հարևանների հետ պատսպարվում ցեմենտից ժողովատանը:

Հետո ես պատկերացրեցի եպիսկոպոսին և Սփոփող Միության



նախագահին նրանց մեջ քայլելիս՝ մխիթարելով, վերականգնել, սնունդ, ուտելիք և խմելու ջուր բաժանելով: Ես պատկերացնում էի վախից մեկտեղ կույզ եկած երեխաներին:

Նրանք այնքան հեռու էին տնից, որտեղ ես կարողում էի զեկույցը, այնուամենայնիվ, ես գիտեի, թե ինչ էր անելու Տերը Իր ծառաների միջոցով: Ես գիտեի, թե ինչն էր հնարավոր դարձրել, որ նրանք սատարեին Երկնային Հոր այդ զավակներին՝ դա ծովի նվիրատվությունն էր, որն ազատ կամքով նվիրվում է Տիրոջ աշակերտների կողմից, ովքեր հեռու են իրենցից, բայց մոտ են Տիրոջը:

Այնպես որ, ես չսպասեցի կիրակի օրվան: Ես իմ ծովի նվիրատվությունը տարա իմ եպիսկոպոսին այդ առավոտյան: Գիտեմ, որ իմ այդ նվիրատվությունը կարող է օգտագործվել եպիսկոպոսի և Միտոփոլ Միության նախագահի կողմից՝ օգնելու շրջապատի մարդկանցից մեկին: Իմ փոքրիկ նվիրատվությունը, միգուցե, պետք չլինի իմ և իմ ընտանիքի շրջապատի մարդկանց օգնելու համար, սակայն տեղական ավելցուկը հնարավոր է հասնի նույնիսկ մինչև Վանուատու:

Այլ փոթորիկներ ու ողբերգություններ վրա կհասնեն աշխարհում մարդկանց, որոնց Տերը սիրում է և ում վշտերը Նա կխում է: Այս ամսվա իմ և ձեր ծովի նվիրատվության մի մասը կօգտագործվի օգնելու ինչ-որ մեկին, ինչ-որ տեղ, որի սփոփանքը Տերը կզգա որպես Իր սեփականը:

Ձեր ծովի նվիրատվությունն ավելին կանի, քան մարմինը կերակրելն ու հագցնելը. Այն սրտեր կբժշկի ու

կփոխի: Ազատ կամքով նվիրատվությունը կարող է ստացողի սրտում ուրիշ կարիքավորներին ձեռք մեկնելու ցանկության պտուղ տալ: Դա տեղի է ունենում ամբողջ աշխարհում:

Դա տեղի է ունեցել քույր Աբի Թուրեի կյանքում, ով ապրում է Միեռա Լեոնե հանրապետությունում, որտեղ քաղաքացիական պատերազմ էր սկսվել 1991թ.: Շարունակվելով մի տասնամյակ՝ այն ավերել էր երկիրը: Միեռա Լեոնեն դարձել էր ամենաաղքատ երկրներից մեկը աշխարհում. «Պատերազմի ժամանակ պարզ չէր, թե ով է [վերահսկում] երկիրը՝ բանկերը. . . . փակվել էին, կառավարական գրասենյակները՝ կողպվել, ոստիկանական ուժերը [անարդյունավետ էին ապստամբ ուժերի դեմ]. . . . և զերիշխում էր քառուր, սպանությունն ու վիշտը: Տասնյակ հազարավոր մարդիկ կորցրեցին իրենց կյանքը և ավելի քան երկու միլիոն մարդ ստիպված էին լքել իրենց տները՝ սպանդից խուսափելու համար»:⁶

Նույնիսկ այդպիսի իրավիճակում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցին աճում էր:

Առաջին ճյուղերից մեկը կազմավորվել էր քույր Թուրեյի ապրած քաղաքում: Նրա ամուսինն առաջին ճյուղի նախագահն էր: Քաղաքացիական պատերազմի ժամանակ նա ծառայում էր որպես շրջանի նախագահ:

«[Մյժմ] երբ հյուրեր են այցելում քույր Թուրեյի տուն, նա սիրում է ցույց տալ պատերազմից մնացած երկու [մասունք]. կապույտ-սպիտակ գծավոր վերնաշապիկ [նա ստացել

էր] օգտագործված հագուստի հակից [Եկեղեցու անդամների կողմից նվիրված] և մի վերմակ, որն այժմ մաշված է ու ծակծկված անցքերով»:⁷

Նա ասում է. «Այս վերնաշապիկը առաջին. . . . հագուստն էր, որ [ստացա]. . . . Ես այն հագնում էի աշխատանքի գնալիս, այն շատ լավն էր: [Ես ինձ շատ գեղեցիկ էի զգում]: Ուրիշ հագուստ ես չունեի:

Պատերազմի ընթացքում այս վերմակը ինձ և իմ երեխաներին տաք էր պահում: Երբ ապստամբները հարձակվում էին մեզ վրա, սա միակ բանն էր, որ ձեռքս էր ընկնում [երբ մենք փախչում էինք մացառուներում թաքնվելով]: Այնպես որ, մենք վերցնում էինք վերմակը մեզ հետ: Այն մեզ ջերմացնում էր և պաշտպանում էր մոծակներից»:⁸

Քույր Թուրեյը երախտագիտություն է հայտնում միսիայի նախագահին, որը վերադառնում էր պատերազմական երկիր [փող ունենալով] իր գրպանում: Ձեզ նման մարդկանց կատարած ծովի նվիրատվության այդ միջոցները, հնարավորություն էին տալիս, որ Մրբերը գնեին սնունդ, որ Միեռա Լեոնեի բնակիչների մեծ մասը չէր կարող իրեն թույլ տալ:⁹

Քույր Թուրեյը, խոսելով նրանց մասին, ովքեր այդքան մեծահոգի են եղել՝ նվիրատվություն անելու նրանց համար, որ գոյատևեն, ասում է. «Երբ մտածում եմ մարդկանց մասին, ովքեր անում են այս, . . . ես զգում եմ, որ [նրանք] ուղարկվել են Աստծո կողմից, այն բանի շնորհիվ, որ հասարակ մարդկային էակները նման քայլ են անում [մեզ] համար»:¹⁰

Վերջերս Միացյալ Նահանգներից մի այցելու գրույցի էր նստել Աբիի հետ: Այդ գրույցի ժամանակ Աբիի գրուցակցի աչքին ընկավ «սուրբ գրությունների մի հատոր, որ սեղանի վրա էր»: Նա կարող էր ասել, որ դրանք մի գանձ են եղել. «Կա նշված՝ այլուսակներում գրառումներ: Էջերը մաշված էին, մի քանիսը՝ պատռված: Կազմն անջատվել էր գրքից»:

Զրուցողները չիր ձեռքը վերցրեց սուրբ գրությունները և մեղմորեն շրջեց էջերը: Թերթելու ընթացքում

նա գտավ տասանորդի նվիրատվության դեղին թերթիկի մի օրինակ: Նա կարողացավ նկատել, որ մի երկրում, որտեղ լղուարը ոսկու կշիռ ուներ, Աբի Թուրեյը վճարել էր մեկ դոլար որպես իր տասանորդ, մեկ դոլար որպես միսիոներական ֆոնդ և մեկ դոլար որպես ծովի նվիրատվություն նրանց համար, ովքեր, իր խոսքերով, «իրապես աղքատ» էին:

Այցելուն փակեց Քույր Թուրեյի սուրբ գրությունները և մտածեց, որ կանգնելով աֆրիկացի այդ հավատարիմ մոր կողքին, նա կանգնած էր սուրբ հողին:¹¹

Ճիշտ ինչպես իմ և ձեր ծովի նվիրատվության թերթիկը կարող է սրտեր փոխել, այնպես էլ ուրիշների համար ծով պահելը կարող է փոփոխություն կատարել: Նույնիսկ երեխան կարող է զգալ այն:

Շատ երեխաներ և որոշ մեծահասակներ, կարող են անձնական պատճառներով 24-ժամյա ծովը դժվարություն համարել: Կարող է թվալ, Եսայիայի խոսքերով ասած, որ ծով պահելով «իրենց հոգին ճզնում է»: Իմաստուն ծնողները զիտակցում են, որ նման հավանականություն կա, և ուստի, զգուշորեն հետևում են Նախագահ Ջոզեֆ Ֆ. Մաիթի խորհրդին. «Ավելի լավ է սովորեցնել նրանց սկզբունքը, և թույլ տալ, որ նրանք պահեն այն, երբ մտավորապես բավականաչափ հասուն են»:¹²

Վերջերս ես նկատեցի այդ խորհրդի օրհնությունը: Իմ թոռներից մեկի համար 24-ժամյա ծովն

իր դիմադրողականությունից վեր էր: Մակայն նրա իմաստուն ծնողները դեռևս սերմանում էին այդ սկզբունքն իր սրտում: Իր դպրոցի ընկերներից մեկը, վերջերս, դժբախտ պատահարի արդյունքում կորցրեց իր հորեղբոր փոքր որդուն: Օժուպահության օրը, մոտավորապես այն ժամին, երբ թոռս պատրաստ էր դադարեցնել իր ծովը, նա հարցրեց մորը, որ եթե նա շարունակեր ծով պահելը, արդյոք դա կօգնե՞ր, որ իր վշտահար ընկերը լավ զգար:

Նրա հարցը հաստատումն էր Նախագահ Ջոզեֆ Ֆ. Մաիթի խորհրդի: Իմ թոռը հասել էր այն կետին, երբ նա ոչ միայն հասկացել էր ծովապահության սկզբունքը, այլ դրա սերմը ծիլ էր տվել իր սրտում: Նա սկսել էր զգալ, որ իր ծովն ու աղոթքը Մատծ կողմից կարիքի մեջ գտնվող ինչ-որ մեկի օրհնությունը կդառնա: Եթե նա ավելի հաճախ ապրի այդ սկզբունքով, ապա հրաշալի արդյունքներ կունենա իր կյանքում, ինչպես խոստացել էր Տերը: Նա կունենա ոգեշնչում՝ ստանալու հոգևոր օրհնություն և ավելի մեծ կարողություն ձեռք կբերի զայթակղություններին դիմակայելու:

Մենք չգիտենք բոլոր պատճառները, թե ինչու Հիսուս Քրիստոսը զնաց անապատ, որպեսզի ծով պահեր և աղոթեր: Մակայն գիտենք հետևանքներից առնվազն մեկը: Փրկիչը կարողացավ լիովին դիմադրել Իր աստվածային իշխանությունը չարաշահելու Մատանայի զայթակղություններին:

Այն կարճ ժամանակը, որ ծով ենք պահում ամեն ամիս և փոքր գումարը, որ նվիրաբերում ենք աղքատների համար, հնարավոր է միայն մի փոքր չափով ներգործի այլևս չարիք չգործելու մեր էության փոփոխության վրա: Մակայն, երբ անում ենք ողջամտորեն հնարավորը, որպեսզի աղոթենք, ծով պահենք և նվիրաբերենք նրանց համար, ովքեր կարիքի մեջ են, մենք մի մեծ խոստում ունենք:

«Այն ժամանակ քո լոյսը արշալոյսի պես պիտի ծագի, եւ քո բժշկութիւնը շուտով պիտի բուսնի, եւ քո արդարութիւնը պիտի գնայ քո առաջից, Տիրոջ փառքը պիտի պահէ քեզ ետեւից:

Այն ժամանակ դու կ'կանչես, եւ Տէրը կ'պատասխանէ. Դու կ'աղաղակես, եւ նա կ'սաւէ. Ահա ես»:¹³

Իմ աղոթքն է, որ մենք հայցենք այդ մեծ օրհնությունները մեզ համար և մեր ընտանիքների համար:

Ես բերում եմ իմ վկայությունը, որ Հիսուսը Քրիստոսն է, որ Իր Եկեղեցում մենք հրավեր ունենք օգնելու Նրան, մինչ Նա հոգում է աղքատների մասին Իր ձևով, և որ Նրան օգնողներին խոստացված հավիտենական օրհնություններ կտրվեն: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով՝ ամեն: ■

ՇՐՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս 25,34–40:
2. Եսայիա 58,6–11:
3. Spencer W. Kimball, *The Miracle of Forgiveness* (1969), 98.
4. Stu /Steve Almsy, Ben Brumfield, and Laura Smith-Spark, “Cleanup Begins in Vanuatu after Cyclone Batters Islands,” Mar. 14, 2015, edition.cnn.com:
5. Stu Sean Morris, Steve Almsy, and Laura Smith-Spark, “‘Unbelievable Destruction’ Reported in Tropical Cyclone Pam’s Wake,” Mar. 14, 2015, edition.cnn.com:
6. Peter F. Evans, “Sister Abie Turay’s Story,” unpublished manuscript.
7. Evans, “Sister Abie Turay’s Story.”
8. Abie Turay, quoted in Evans, “Sister Abie Turay’s Story.”
9. Peter F. Evans, “Sister Abie Turay’s Story.”
10. Abie Turay, quoted in Peter F. Evans, “Sister Abie Turay’s Story.”
11. Peter F. Evans, “Sister Abie Turay’s Story”; a video about Sister Turay, “We Did Not Stand Alone,” is available at lds.org/media-library.
12. Joseph F. Smith, “Editor’s Table,” *Improvement Era*, Dec. 1903, 149.
13. Եսայիա 58,8–9:





Նախագահ Բոյր Կ. Փաքնր
Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ

Երջանկության ծրագիրը

*Եկեղեցում ողջ գործունեության վախճանն է տեսնել, որ տղամարդը
և կինը իրենց երեխաներով երջանկ են տանը, կնքված միասին
ժամանակի և ողջ հավերժության համար:*

Շատ տարիներ առաջ, II Համաշխարհային Պատերազմից հետո, ես հաճախում էի քոլեջ: Այնտեղ ես հանդիպեցի Դոննա Սմիթին: Գրեթե այդ պահերին ես կարդացի, որ հաջող ամուսնության համար երկու հիմնական բաղադրիչներ են՝ մի թխվածքաբլիթը և համբույրը: Ես մտածեցի, որ դա բավականին լավ հավասարակշռություն էր:

Մտավոտյան ես հաճախում էի քոլեջ, իսկ հետո ետ գնում Բրիգամ քաղաք՝ կեսօրին աշխատելու հայրիկիս մեքենաների վերանորոգման ավտոտնակում: Դոննայի առավոտյան վերջին դասը տնային տնտեսությունն էր: Ես կանգնում էի նրա դասարանի առջև նախքան մեկնելը: Դուրս փայլատ ապակի ուներ, բայց եթե ես մոտիկ էի կանգնում ապակուն, նա տեսնում էր իմ ստվերը դրսում: Նա դուրս էր սողոսկում մի թխվածքաբլիթով և համբույրով: Մնացածը պատմությունն է: Մենք ամուսնացանք Լոզան Տաճարում, և դա սկիզբ դրեց մեր կյանքերի մեծ արկածին:

Տարիների ընթացքում ես հաճախեմ ուսուցանել մի կարևոր սկզբունք:

Եկեղեցում ողջ գործունեության վախճանն է տեսնել, որ տղամարդը և կինը իրենց երեխաներով երջանկ են տանը, կնքված միասին ժամանակի և ողջ հավերժության համար:

Սկզբում.

«Աստվածներն իջան ներքև, որ կազմավորեն մարդուն իրենց իսկ պատկերով, որ Աստվածների պատկերով ձևավորեն նրան, արու և էգ ձևավորեն նրանց:

Եվ Աստվածներն ասացին. Մենք կօրհնենք նրանց: Եվ Աստվածներն ասացին. Մենք այնպես կանենք, որ նրանք լինեն պտղաբեր և բազմանան, և լցնեն երկիրը, և տիրեն նրան» (Աբրահամ 4.27–28):

Եվ այսպես մարդկային կյանքի փուլը սկսվեց այս երկրագնդի վրա, քանի որ «Ադամը զիտեցավ իր կնոջը, և նա որդիներ և դուստրեր բերեց նրա համար, և նրանք սկսեցին բազմանալ և լցնել երկիրը:

Եվ . . . Ադամի որդիներն ու դուստրերը սկսեցին երկրի վրա բաժանվել երկու- երկու, . . . և նրանք նույնպես ծնեցին որդիներ և դուստրեր» (Մովսես 5.2–3):

Բազմանալու և երկիրը լցնելու պատվիրանը երբեք չեղյալ չի համարվել: Դա կարևոր է փրկագնաման ծրագրի համար և մարդկային երջանկության աղբյուրն է: Այս գործության արդար գործածման միջոցով, մենք կարող ենք մոտենալ մեր Երկնային Հորը և զգալ ուրախության լիություն, նույնիսկ աստվածայնություն: Օննդաստեղծ գործությունը պատահական մաս չէ երջանկության ծրագրում, դա երջանկության ծրագիրն է, դա երջանկության բանալին է:

Մարդկության զուգավորման ցանկությունը մշտական է և շատ ուժեղ: Մեր երջանկությունը մահկանացու կյանքում, մեր ուրախությունն ու վեհացումը կախված են նրանից, թե ինչպես ենք արձագանքում այս մշտական, պարտադրող ֆիզիկական ցանկություններին: Երբ ծննդաստեղծ ուժը հասունանում է վաղ տղամարդկության և կանացիության շրջանում, խիստ անձնական զգացմունքներ են առաջանում, բնական ձևով, որը նման չէ որևէ այլ ֆիզիկական փորձառության:

Իդեալապես, զուգավորումը սկսվում է ռոմանտիկայից: Չնայած ավանդույթները կարող են տարբեր լինել, այն ծաղկում է հուզմունքի, սպասման, նույնիսկ երբեմն մերժման բոլոր սիրավեպային զգացմունքներով: Առկա է լուսնի լույս, վարդեր, սիրային նամակներ, սիրային երգեր, բանաստեղծություններ, ձեռք բռնել և քնքշանքի այլ արտահայտություններ երիտասարդ աղջկա և երիտասարդ տղայի միջև: Աշխարհն անհետանում է զույգի կողքին և նրանք ունենում են ուրախության զգացումներ:

Եվ եթե դուք ենթադրում եք, որ երիտասարդ ռոմանտիկ սիրո փթթող հրճվանքը հնարավորությունների հանրագումարն է, որը բխում է կյանքի աղբյուրներից, դուք դեռ չեք ապրել՝ տեսնելու երկարատև ամուսնական սիրո նվիրումն ու հարմարավետությունը: Ամուսնացած զույգերը փորձվում են գայթակղությամբ, թյուրմբռնմամբ, ֆինանսական խնդիրներով, ընտանեկան ճգնաժամերով և

հիվանդությամբ և ողջ ժամանակ սերն ուժեղանում է: Հասուն սերն ունի մի երանություն, որը նույնիսկ չեն պատկերացնում նոր ամուսնացածները:

Ճշմարիտ սերը պահանջում է զսպվածություն՝ մինչև որ ամուսնությունից հետո կիսվեք այն քնքշանքով, որը բացում է կյանքի աղբյուրի սրբազան ուժերը: Դա նշանակում է խուսափել իրավիճակներից, որտեղ ֆիզիկական ցանկությունը կարող է վերցնել վերահսկողությունը: Մաքուր սերը ենթադրում է, որ միայն հավերժական հավատարմության խոստովից հետո, պաշտոնական և օրինական ծիսակատարության, և իդեալապես տաճարում կնքման արարողությունից հետո են այդ ծննդաստեղծ ուժերը արձակվում Սստծո աչքում՝ սիրո լիակատար արտահայտման համար: Այն պետք է կիսվի լոկ և միայն այն մեկի հետ, ով ձեր գուգրնկերն է հավիտյան:

Երբ արժանավորապես եք մտնում, այդ գործընթացը միավորում է ամենասքանչելի և վեհացնող ֆիզիկական, հուզական և հոգևոր զգացմունքները, որոնք կապված են *սեր* բառի հետ: Կյանքի այդ մասը չունի հավասար, ոչ մի երկնամասակ մարդկային ողջ կյանքի փորձառության մեջ: Դա կտևի հավերժորեն, երբ ուխտեր են կապվում և պահվում «քանզի նրանում են կարգված սուրբ քահանայության բանալիները, որ դուք կարողանաք պատվի ու փառքի արժանանալ» (ՎևուՄ 124.34), «փառք, որը կլինի սերունդների լիությունը և շարունակությունը հավիտյանս հավիտենից» (ՎևուՄ 132.19):

Բայց ռոմանտիկ սերն անավարտ է, դա նախերգանքն է: Մերը սնուցվում է երեխաների գալով, ովքեր բխում են կյանքի աղբյուրից, որը վստահվում է գույգերին ամուսնության մեջ: Բեղնավորումը տեղի է ունենում ամուսնու և կնոջ միջև ամուսնական զրկախառնության ժամանակ: Մի փոքրիկ մարմին է սկսում ձևավորվել հիասքանչ բարդ կառուցվածքով: Երեխան առաջ է գալիս ծննդյան հրաշքով, ստեղծված իր երկրային հոր և մոր պատկերով: Նրա մահկանացու մարմնի ներսում



նզի է, որը կարող է զգալ և ընկալել հոգևոր բաներ: Այս երեխայի այդ մահկանացու մարմնում ննջող վիճակում իր իսկ պատկերով հետնորդ ծնելու ուժն է:

«Ոգին ու մարմինը մարդու հոգին են» (ՎևուՄ 88.15), և կան հոգևոր և ֆիզիկական օրենքներ հնազանդվելու, եթե մենք պետք է երջանիկ լինենք: Կան հավերժական օրենքներ, ներառյալ՝ օրենքներ կապված կյանք տալու այս գործության հետ «անդարձորեն հրամանագրված, այս աշխարհի հիմնադրումից առաջ, որի վրա հիմնված են բոլոր օրհնությունները» (ՎևուՄ 130.20): Դրանք հոգևոր օրենքներ են, որոնք սահմանում են բարոյական չափանիշը մարդկության համար (տես Ջոզեֆ Մմիթ Թարգմանություն, Հռովմեացիս Է.14–15 [Սստվածաշնչի հավելվածում], 2 Նեփի 2.5, ՎևուՄ 29.34, 134.6): Կան ուխտեր, որոնք կապում են, կնքում և պահպանում և հավերժական օրհնությունների խոստում տալիս:

Ալման հորդորեց իր որդի Միբրոնին. «Տես, որ դու սանձես բոլոր քո կրթերը, որ դու լցվես սիրով» (Ալմա 38.12): Սանձն օգտագործվում է առաջնորդելու, ուղղորդելու, զսպելու համար: Մեր կիրքը պետք է վերահսկվի: Երբ օրինավորապես է օգտագործվում, ծննդաստեղծ ուժը կօրհնի և կսրբագործի (տես *Եկեղեցու Նախագահների Տոմարները՝ Ջոզեֆ Ֆ. Մմիթ* [1998], 158):

Գայթակղությունները միշտ ներկա են: Քանի որ հակառակորդը չի կարող կյանք ծնել, նա նախանձում է բոլոր նրանց, ովքեր ունեն այդ գերագույն ուժը: Նա և նրանք, ովքեր հետևեցին նրան, դուրս գցվեցին և մերժվեցին մահկանացու մարմին ունենալու իրավունքից: «Նա ջանում է, որ բոլոր մարդիկ լինեն թշվառ, ինչպես ինքը» (2 Նեփի 2.27): Նա կգայթակղի, եթե կարող է, կայլասերի, կփչացնի և եթե հնարավոր է կկործանի այս պարզևր, որի միջոցով մենք կարող ենք, եթե արժանի լինենք, ունենալ հավերժական աճ (տես ՎևուՄ 132.28–31):

Եթե մենք աղտոտում ենք մեր կյանքի աղբյուրները, կամ ուրիշներին տանում օրինազանցության, կլինեն տույժեր ավելի «սուր» և «ծանր տանելու» (ՎևուՄ 19.15), քան ողջ ֆիզիկական հաճույքը, որ երբևէ կարող է արժենար:

Ալման ասաց իր որդի Կորիանթոնին. «Չգիտե՞ս որդիս, որ այս բաները պղծություն են Տիրոջ աչքում, այո, ամենապիղծը բոլոր մեղքերից, բացի դա լինի անմեղ արյուն թափելը կամ Մուրք Հոգին ուրանալը (Ալմա 39.5): Մենք չենք կարող խուսափել հետևանքներից, երբ մենք օրինազանցում ենք:

Ծննդաստեղծ ուժերի միակ օրինական, լիազորված արտահայտությունը ամուսնու և կնոջ միջև է՝ տղամարդու և կնոջ միջև, ովքեր պաշտոնապես և օրինավորապես

ամուսնացած են: Որևէ այլ բան, քան այս, խախտում է Աստծո պատվիրանները: Մի անձնատուր եղեք հակառակորդի սոսկալի գայթակհություններին, քանի որ օրինագանցության ամեն պարտք պետք է վճարվի «մինչև որ չվճարես վերջին նաքարակիրը» (Մատթեոս Ե.26):

Ոչ մի տեղ Աստծո մեծահոգությունն ու ողորմածությունն ավելի ցայտուն չեն դրսևորվում, որքան ապաշխարության մեջ:

Մեր ֆիզիկական մարմինները, երբ վնասվում են, կարող են վերականգնվել ինքնուրույնորեն, երբեմն էլ բժշկի օգնությամբ: Եթե վնասը մեծ է, այնուամենայնիվ, հաճախ սպի է մնում, որպես հիշեցում վնասվածքի մասին:

Այլ հարց է մեր հոգևոր մարմինների հետ: Մեր հոգիները վնասվում են, երբ մենք կատարում ենք սխալներ և գործում մեղքեր: Բայց ի տարբերություն մեր մահկանացու մարմինների դեպքից, երբ ապաշխարության գործընթացն ավարտվում է, ոչ մի սպի չի մնում Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ: Խոստումն է. «Միա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես Տերս, այլևս չեմ հիշում դրանք» (Վևու 58.42):

Երբ մենք խոսում ենք ամուսնության և ընտանեկան կյանքի մասին, անխուսափելիորեն մեր միտքն է գալիս «Ի՞նչ կասեք բացառությունների մասին» հարցը: Ոմանք ծնվում են սահմանափակումներով և չեն կարողանում ունենալ երեխաներ: Որոշ անմեղների ամուսնությունները խորտակվում են՝ նրանց ամուսինների անհավատարմության պատճառով: Մյուսները չեն ամուսնանում և ապրում են արժանավոր միայնակ կյանքով:

Այժմվա համար ես առաջարկում եմ այս միտքարությունը. Աստված մեր Հայրն է: Ողջ սերն ու մեծահոգությունը, որը դրսևորվում է կատարյալ երկրային հոր մեջ, մեծանում է Նրանում, ով մեր Հայրն է և մեր Աստվածը մահկանացու մտքով մեր ընկալելու կարողությունից վեր: Նրա դատաստաններն արդար են, Նրա ողորմածությունն առանց սահմանի, Նրա փոխհատուցելու գործությունը՝



վեր որևէ երկրային համեմատությունից: «Եթե միայն այս կեանքումն ունինք յոյս Քրիստոսի վերայ, ամեն մարդկանցից անելի ողորմելի ենք» (Ա Կորնթացիս ԺԵ.19):

Այժմ ես ակնածանքով օգտագործում եմ *տանալ* բառը: Ես պատկերացնում եմ կնքման մի սենյակ և մի գոհասեղան այնտեղ ծնկի եկած երիտասարդ զույգի հետ: Այս սրբազան տանալային արարողությունն ավելին է, քան հարսանիքը, քանի որ այս ամուսնությունը կարող է կնքվել Խոստումի Սուրբ Հոգու կողմից և սուրբ գրությունները հայտարարում են, որ մենք «կժառանգենք գահեր, թագավորություններ, իշխանություններ, և գործություններ, տիրապետություններ» (Վևու 132.19): Ես տեսնում եմ ուրախությունը, որը սպասում է նրանց, ովքեր ընդունում են այս գերագույն պարգևը և օգտագործում այն արժանիորեն:

Քույր Դոննա Մմիթ Փաքերը և ես եղել ենք կողք-կողքի ամուսնության մեջ մոտավորապես 70 տարի: Երբ խոսքը վերաբերում է իմ կնոջը, մեր երեխաների մորը, ես առանց խոսքերի եմ: Չզգացմունքն այնքան խորն է և երախտագիտությունն այնքան հզոր, որ ես գրեթե անխոս եմ մնում: Մեծագույն պարգևը, որ մենք ստացել ենք այս կյանքում և գալիք կյանքում, մեր երեխաներն են և մեր թոռները: Մեր միասին անցկացրած մահկանացու օրերի ավարտին մոտ, ես իմ երախտագիտությունն եմ արտահայտում յուրաքանչյուր պահի

համար, որ ես եղել եմ նրա հետ կողք-կողքի և խոստման համար, որ Տերն է տվել, որ չի լինելու վերջ:

Ես բերում եմ վկայություն, որ Հիսուսը Քրիստոսն է և կենդանի Աստծո Որդին: Նա կանգնած է Եկեղեցու գլխին: Նրա Քավության միջոցով և Քահանայության գործությամբ, ընտանիքները, որոնք սկսվել են մահկանացու կյանքում, կարող են միասին լինել հավերժությունների մեջ: Քավությունը, որը կարող է ետ պահանջել մեզանից յուրաքանչյուրին, չի կրում ոչ մի սպիներ: Դա նշանակում է, որ անկախ նրանից, թե ինչ ենք մենք արել կամ որտեղ ենք մենք եղել կամ ինչպես է ինչ որ բան պատահել, եթե մենք իսկապես ապաշխարում ենք, Նա խոստացել է, որ Նա կքավի: Եվ երբ Նա քավեց, այն կարգավորեց դա: Այնքան շատերն են մեզանից, ովքեր կարծես մտրակվում են հանցանքի զգացումներից, չիմանալով թե ինչպես ազատվեն: Դուք ազատվում եք՝ ընդունելով Քրիստոսի Քավությունը և այն բոլորը, ինչ սրտնեղություն էր, կարող է դառնալ զեղեցկություն և սեր ու հավերժություն:

Ես այնքան երախտապարտ եմ Տեր Հիսուս Քրիստոսի օրհնությունների համար, ծննդատեղծ գործության համար, փրկագնման գործության համար, Քավության համար՝ Քավություն, որը կարող է մաքուր վանալ ամեն բիծ, անկախ նրանից թե որքան դժվար կամ որքան երկար կամ որքան անգամներ է կրկնվել: Քավությունը կարող է ձեզ ազատ դարձնել կրկին առաջ շարժվելու, մաքրությամբ և արժանավորությամբ, հետամուտ լինելով այն ուղուն, որ դուք ընտրել եք կյանքում:

Ես բերում եմ վկայություն, որ Աստված ապրում է, որ Հիսուսը Քրիստոսն է, որ Քավությունը ընդհանուր մի բան չէ, որը ողջ Եկեղեցու համար է: Քավությունը անհատական է և եթե դուք ունեք ինչ որ բան, որը ձեզ անհանգստացնում է, երբեմն այնքան վաղուց, որ դուք հազիվ եք հիշում այն, գործի դրեք Քավությունը: Այն կմաքրի դա և դուք, ինչպես Նա է անում, այլևս երբեք չեք հիշի ձեր մեղքերը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Լիսդա Ք. Բրոթըն
Սփուփոլ Միության Գերագույն Նախագահ

Մենք միասին Կբարձրանանք

Որպես ուխտեր պահող կանայք և տղամարդիկ մենք պետք է բարձրացնենք միմյանց և օգնենք դառնալ այնպիսի մարդիկ, ինչպիսին Տերն է ուզում, որ լինենք:

Ոգեշնչող ելույթների, երաժշտության և աղոթքների հետ մեկտեղ, որոնք միշտ դիպչում են մեր սրտերին՝ գերագույն համաժողովի ժամանակ, շատ քայլեր ասել են ինձ, որ նրանց ամենաշատը դուր է գալիս տեսնելը Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի անդամներին, երբ դուրս են գալիս այս ամբիոնից՝ իրենց հավերժական զուգընկերների հետ միասին: Եվ արդյո՞ք մենք բոլորս չենք ուրախանում, երբ լսում ենք, թե ինչպես են Եղբայրները քնքշանքով արտահայտում իրենց սերը իրենց կանանց հանդեպ:

Խոսելով իր կնոջ՝ Դոննայի մասին, Նախագահ Բոյդ Ք. Փաքերն ասել է. «Շնորհիվ այն պաշտոնի, որը ես կրում եմ, ես ունեմ հանդիսավոր պարտականություն ասելու՝ ճշմարտությունը. նա կատարյալ է»:¹

«Նա իմ կյանքի արևի շողն է»,² ասել է Նախագահ Դիտեր Ֆ. Ուլստորֆն իր կնոջ՝ Հարիեթի մասին:

Նախագահ Հենրի Բ. Այրինգը, անդրադառնալով իր կնոջը՝ Քեթլինին, ասել է. «Նա մի անձնավորություն է, ով իմ մեջ միշտ ցանկություն

է առաջացրել լինելու լավագույնը, որ ես կարող եմ լինել»:³ Եվ Նախագահ Թոմաս Ս. Մոնտոնը, խոսելով իր սիրելի Ֆրենսիսի մասին, ասել է. «Նա իմ կյանքի սերն էր, իմ վստահելի սրտակիցը և իմ ամենամտերիմ ընկերը: Ասելը, որ ես կարոտել եմ նրան, չի կարող փոխանցել իմ զգացմունքների խորությունը»:⁴

Ես ևս կցանկանայի արտահայտել իմ սերը իմ սիրելի զուգընկերոջ՝ Քրեյգի հանդեպ: Նա թանկագին պարզ է ինձ համար: Ամուսնուս



մասին մի նվիրական ու սրբազան արտահայտություն իմ հայրապետական օրհնության մեջ խոստանում է, որ իմ կյանքը և իմ երեխաների կյանքը ապահով կլինեն նրա շնորհիվ: Ինձ համար ակնհայտ է, որ Քրեյգը այդ խոստումի իրականացումն է: Մեջբերելով Մարկ Թվեյնին, կասեմ, որ «կյանքն առանց [Քրեյգի] կյանք չէր լինի»:⁵ Ես սիրում եմ նրան, նրա սիրտն ու հոգին:

Աստվածային դերեր և պարտականություններ

Այսօր ես ցանկանում եմ պատվել ամուսիններին, հայրերին, եղբայրներին, որդիներին և հորեղբայրներին, ուլքեր գիտեն, թե ուլքեր են իրենք, և ուլքեր անում են իրենց լավագույնը, իրականացնելու իրենց աստվածատուր դերերը, ինչպես նկարագրված է Ընտանիքի հայտարարության մեջ, ներառելով արդարությամբ ղեկավարելը և իրենց ընտանիքներին ապահովելը և պաշտպանելը: Խնդրում եմ, իմացեք, որ ես ցավալիորեն տեղյակ եմ, որ հայրության, մայրության և ամուսնության թեմաները կարող են մտահոգիչ լինել շատերի համար: Ես գիտեմ, որ որոշ Եկեղեցու անդամներ զգում են, որ իրենց տները երբեք չեն հասնի նրան, ինչն իրենք համարում են կատարյալ: Շատերը ցավ են պատճառում անտեսված լինելու, վատ վերաբերմունքի, վատ սովորությունների, սխալ ավանդույթների և մշակույթի պատճառով: Ես չեմ արդարացնում այն տղամարդկանց կամ կանանց գործողությունները, ուլքեր գիտակցելով կամ առանց գիտակցելու ցավ, տառապանք և հուսահատություն են պատճառում իրենց ընտանիքներին: Մակայն այսօր ես խոսում եմ մեկ այլ բանի մասին:

Ես համոզված եմ, որ ամուսինը երբեք ավելի գրավիչ չի լինում իր կնոջ համար, քան այն ժամանակ, երբ նա ծառայում է իր աստվածատուր դերերում որպես արժանի քահանայություն կրող, ամենակարևորը՝ տանը: Ես սիրում եմ Նախագահ Փաքերի այս խոսքերը և հավատում դրանց, որոնք ուղղված են արժանի ամուսիններին և

հայրերին. «Դուք ունեք քահանայության գործունեությունը՝ հենց Տիրոջից՝ պաշտպանելու ձեր տունը: Կլինեն ժամանակներ, որ ձեր ընտանիքի և հակառակորդի հարվածների միջև գտնվող միակ վահանը կլինի այդ գործունեությունը»:⁶

**Հոգևոր առաջնորդներ
և ուսուցիչներ տանը**

Այս տարվա սկզբին ես ներկա գտնվեցի մի արտակարգ, սակայն միևնույն ժամանակ սովորական մի մարդու՝ իմ ամուսնու հորեղբայր Դոնի թաղման արարողությանը: Հորեղբայր Դոնի որդիներից մեկը կիսվեց մի փորձառությամբ, որն ունեցել էր մանուկ հասակում, երբ իր ծնողները գնել էին իրենց առաջին տունը: Քանի որ նրանք պետք է կերակրեին և հագցնեին հինգ փոքր երեխաների, բավականաչափ գումար չկար բակը ցանկապատելու համար: Լուրջ մտենալով աստվածային իր դերերից մեկին, որպես իր ընտանիքի պաշտպան, հորեղբայր Դոնը մի քանի փայտյա ցից խրեց հողի մեջ, վերցրեց մի պարան և կապեց այն ցցերին ամբողջ բակի շուրջը: Ապա նա իր մոտ կանչեց իր երեխաներին: Նա ցույց տվեց նրանց ցցերը և պարանները և բացատրեց նրանց, որ եթե մնային այդ ժամանակավոր ցանկապատի ներսում, նրանք ապահով կլինեին:

Մի օր այցելող ուսուցիչները զարմացան, երբ մոտեցան տանը և տեսան հինգ փոքրիկ երեխաների, ովքեր հնազանդ կանգնած էին ցանկապատի ծայրին, և փափագով նայում էին զնդակին, որը դուրս էր եկել իրենց թույլատրելի սահմանից և հայտնվել փողոցում: Փոքրիկներից մեկը վազեց կանչելու հայրիկին, ով էլ, ի պատասխան, վազեց և բերեց զնդակը:

Թաղման արարողության վերջում ավագ որդին արցունքներն աչքերին ասում էր, որ իր ողջ կյանքում նա հույս է փայփայել, որ կարող է նմանվել իր սիրելի հայրիկին:

Նախագահ Էզրա Թավո Բենտոնն ասել է.

«Օ՛հ, Իսրայելի ամուսնիկներ և հայրեր, դուք շատ բան կարող եք



անել ձեր ընտանիքի փրկության և վեհացման համար: . . .

Հիշեք ձեր սուրբ կոչումը որպես հայր Իսրայելում, ձեր ամենակարևոր կոչումը ժամանակավոր կյանքի և հավերժության մեջ, կոչում, որից դուք երբեք հետ չեք կանչվի:

Դուք պետք է հիմնեք մի տուն, որտեղ կարող է լինել Տիրոջ Հոգին»:⁷

Որքան կիրառելի են այդ մարգարեական խոսքերն այսօր:

Ուխտի մեջ գտնվող տղամարդկանց համար շատ դժվար է ապրել մի աշխարհում, որը ոչ միայն նվաստացնում է իրենց աստվածային դերերը և պարտականությունները, այլ նաև սխալ ուղերձներ է ուղարկում այն մասին, թե ինչ է նշանակում լինել «խսկական տղամարդ»: Մխալ ուղերձներից մեկն ասում է. «Ես ամենակարևորն եմ իմ կյանքում»: Կշեռքի մյուս կողմում է նվաստացնող և ծաղրող ուղերձը, որ ամուսինների ու հայրերի կարիքն այլևս չկա: Ես աղերսում եմ ձեզ, որ դուք չլսեք սատանայի ստերը: Նա զրկվել է ամուսին և հայր դառնալու այդ սուրբ արտոնությունից: Քանի որ նա նախանձում է նրանց, ովքեր ունեն սուրբ դերերը, որոնք նա երբեք չի ունենա, նա մտադրված է դարձնելու «բոլոր մարդկանց . . . թշվառ, ինչպես ինքն է»:⁸

**Բարձրացնել և օգնել մեր
լրացուցիչ դերերում**

Եղբայրներ և քույրեր, մենք ունենք միմյանց կարիքը: Որպես ուխտեր պահող կանայք և տղամարդիկ մենք պետք է բարձրացնենք

միմյանց և օգնենք դառնալ այնպիսի մարդիկ, ինչպիսին Տերն է ուզում, որ լինենք: Եվ մենք պետք է միասին աշխատենք՝ բարձրացնելու աճող սերունդին և օգնելու նրանց հասնել իրենց աստվածային ներուժին որպես հավերժական կյանքի ժառանգներ: Մենք կարող ենք վարվել այնպես, ինչպես Երեց Ռոբերտ Դ. Հեյլը և նրա կինը՝ Մերին են վարվել և հետևել «Դու բարձրացրու ինձ և ես կբարձրացնեմ քեզ, և մենք միասին կբարձրանանք» առածին:⁹

Սուրբ գրություններից մենք գիտենք, որ «լա չէ որ մարդը միևնակ լինի»: Դա էր պատճառը, որ մեր Երկնային Հայրը «օգնական» ստեղծեց «իրան հարմար»:¹⁰ Օգնական բառը նշանակում է «պիտանի, արժանի և իրեն հարմար օգնական»:¹¹ Օրինակ, մեր երկու ձեռքերը նման են իրար, սակայն նույնը չեն: Դեռ ավելին, դրանք իրականում հակապատկերներ են, սակայն դրանք լրացնում են միմյանց և պիտանի են միմյանց: Միասին աշխատելով դրանք ավելի ուժեղ են դառնում:¹²

Ընտանիքների վերաբերյալ Եկեղեցու ձեռնարկը պարունակում է այս հայտարարությունը. «Տղամարդու և կնոջ հոգիների էությունն այնպիսին է, որ դրանք լրացնում են միմյանց»¹³ Խնդրում եմ, ուշադրություն դարձրեք, որ այն ոչ թե ասում է «մրցապայքարի են ելնում միմյանց դեմ», այլ ասում է՝ «լրացնում են միմյանց»: Մենք այստեղ ենք օգնելու, բարձրացնելու և իրար հետ ուրախանալու համար, մինչ փորձում ենք դառնալ լավագույն էակները: Քույր

Բարբարա Բ. Մմիթը իմաստությամբ սովորեցրել է. «Ավելի շատ երջանկություն կարող ենք ունենալ, երբ մենք կարողանում ենք ուրախանալ ուրիշների և ոչ միայն մեր հաջողություններով»:¹⁴ Երբ մենք փնտրում ենք «լրացնել», այլ ոչ թե «մրցապայքարի ելնել», շատ ավելի հեշտ է լինում միմյանց ուրախացնելը:

Երբ ես մի քանի փոքր երեխաների երիտասարդ մայր էի, օրվա վերջում, որը լի էր բարությունով, ամանները լվանալով և կարգուկանոն հաստատելով, ոչ ոք ավելի շեշտադրված չէր երգում «Ես շատ եմ ուրախանում, երբ հայրիկը գալիս է տուն»:¹⁵ Երեխաների խմբի երգը: Ես տխրությամբ եմ խոստովանում, այնուամենայնիվ, միշտ չէի ուրախությամբ լի, երբ Քրեյգը, թվում էր, թե վազելով ներս էր մտնում դռնից՝ աշխատանքային ծանրաբեռնված օրվա վերջում: Նա միշտ ողջունում էր մեզանից յուրաքանչյուրին գրկելով և համբուրելով, և դարձնում էր շատ դժվար և երբեմն անհաջող օրերը սքանչելի օրեր՝ հայրիկի հետ անցկացրած ժամանակի շնորհիվ: Երանի թե ես կարողանայի մի փոքր ավելի քիչ մտահոգվել շատ բաների մասին, որոնք դեռ պետք է ավարտին հասցնել մինչև օրվա վերջը և ավելի իմաստուն կերպով կենտրոնացած լինելի, ինչպես նա էր անում, բաների վրա, որոնք ամենակարևորն էին: Ես պետք է ավելի հաճախ կանգ առնեի և վայելելի ընտանեկան սրբազան պահերը և ավելի հաճախ շնորհակալություն հայտնեի նրան՝ մեր կյանքն օրհնելու համար:

Եկեք հաճախ բարի խոսքեր ասենք միմյանց

Վերջերս Եկեղեցու մի հավատարիմ քույր կիսվեց ինձ հետ խորը մտահոգությամբ, որի համար աղոթում էր որոշ ժամանակ: Նրա մտահոգությունը վերաբերում էր իր ծխի որոշ քույրերին: Նա պատմեց ինձ, թե որքան մեծ սրտի ցավ էր զգացել, երբ տեսել էր, որ նրանք երբեմն անհարգալից էին խոսում իրենց ամուսինների հետ և իրենց ամուսինների մասին, մինչև անգամ

իրենց երեխաների ներկայությամբ: Մայա նա պատմեց ինձ, թե ինչպես էր որպես երիտասարդ կին նախապես ցանկացել և աղոթել, որ գտնեի և ամուսնանար արժանի քահանայություն կրողի հետ և կառուցել երջանիկ տուն նրա հետ: Նա մեծացել էր մի տանը, որտեղ նրա մայրն էր դեկավարում տունը և նրա հայրը կատարում էր իր մոր պահանջները, որպեսզի խաղաղություն պահպանվեր տանը: Նա զգացել էր, որ գոյություն ունի ավելի լավ տարբերակ: Նա չէր ունեցել այդ օրինակն այն տանը, որտեղ մեծացել էր, սակայն երբ նա ջերմեռանդորեն աղոթել էր առաջնորդության համար, Տերն օրհնել էր նրան իմանալու, թե ինչպես հիմնել մի տուն իր ամուսնու հետ միասին, որտեղ Հոգին ջերմորեն կընդունվեր: Ես եղել եմ այդ տանը և կարող եմ վկայել, որ դա սուրբ վայր է:

Քույրեր և եղբայրներ, որքա՞ն հաճախ ենք մենք կանխամտածված «բարի խոսքեր ասում միմյանց»:¹⁶

Մենք կարող ենք փորձել մեզ տալով մի քանի հարցեր: Մի փոքր փոփոխելուց հետո, այս հարցերը կարող են կիրառելի լինել մեզանից շատերի համար, անկախ այն բանից, մենք ամուսնացած ենք, թե ամուրի, ինչպիսին էլ որ լինի մեր տան իրավիճակը:

1. Ե՞րբ եմ ես վերջին անգամ գովեստի խոսքեր ասել իմ կողակցին, լինի դա առանձին կամ մեր երեխաների ներկայությամբ:



2. Ե՞րբ եմ վերջին անգամ շնորհակալություն հայտնել, իմ սերն արտահայտել կամ ջերմեռանդորեն ու հավատքով աղոթել նրա համար:
3. Ե՞րբ եմ ես վերջին անգամ կանգ առել և չեմ ասել մի բան, ինչը գիտեի, որ կարող էր ցավ պատճառել:
4. Ե՞րբ եմ վերջին անգամ ներողություն խնդրել և խոնարհաբար ներում հայցել, առանց «բայց եթե դու այսպես անեիր» կամ «բայց եթե դու դա չանեիր» բառերն ավելացնելու:
5. Ե՞րբ եմ ես վերջին անգամ ընտրել լինելու երջանիկ, այլ ոչ թե պահանջել, որ լինեմ «ճիշտ»:

Այսպիսով, եթե այս հարցերից ինչ-որ մեկը ստիպեց ձեզ խոժոռել ձեր հոնքերը կամ մի փոքր մեղավոր զգալ, հիշեք, որ Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է, որ «մեղավոր զգալը մեր հոգու համար նույնն է, ինչ ցավը մեր մարմնի համար՝ վտանգի նախագգուշացում և լրացուցիչ վնասներից պաշտպանություն»:¹⁷

Ես հրավիրում եմ մեզանից յուրաքանչյուրին լսել Երեց Ջեֆրի Ա. Հոլլանդի աղերսը. «Եղբայրներ և քույրեր, մեր Փրկչին ավելի շատ նմանվելու այս երկար ու հավերժական փնտրտուքում թող որ մենք փորձենք լինել «կատարյալ» տղամարդիկ ու կանայք թերևս այժմ այս մեղմ եղանակով. խոսքերով չվիրավորենք, կամ ավելի լավ կլինի ասել, խոսենք նոր լեզվով, հրեշտակների լեզվով»:¹⁸

Մինչ ես պատրաստվում էի այսօր խոսելու այս հնարավորության համար, Հոգին ուսուցանեց ինձ, և ես պարտավորվեցի ավելի հաճախ ասել բարի խոսքեր իմ թանկագին կողակցին և նրա մասին, բարձրացնել իմ ընտանիքի տղամարդկանց և երախտագիտություն հայտնել եղանակների համար, որոնցով նրանք կատարում են իրենց աստվածային և իրար լրացնող դերերը: Եվ ես պարտավորվել եմ հետևելու «Դու բարձրացրու ինձ և ես կբարձրացնեմ քեզ, և մենք միասին կբարձրանանք» կոչին:

Դուք կմիանա՞ք ինձ, փնտրելով Մուրֆ Հոգու օգնությունը, որ սովորեցնի մեզ, թե ինչպես մենք կարող ենք ավելի լավ բարձրացնել իրար՝ մեկմեկու լրացնող դերերում, որպես մեր սիրառատ երկնային ծնողների ուխտյալ որդիներ և դուստրեր:

Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսի Քավության հնարավորություն սովոր գործության և Նրա հանդեպ ունեցած հավատքի շնորհիվ մենք կարող ենք անել դա: Ես աղոթում եմ, որ մենք մեր վստահությունը դնենք Նրա վրա, օգնելու մեզ օգնել իրար, ապրելու ավելի երջանիկ և հավիտյան, մինչ մենք միասին կբարձրանանք, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Boyd K. Packer, in “Donna Smith Packer Receives Family History Certificate from BYU,” news.byu.edu/archive12-jun-packer.aspx.
2. Dieter F. Uchtdorf, in Jeffrey R. Holland, “Elder Dieter F. Uchtdorf: On to New Horizons,” *Liahona*, Mar. 2005, 10.
3. Henry B. Eyring, in Gerald N. Lund, “Elder Henry B. Eyring: Molded by ‘Defining Influences,’” *Liahona*, Apr. 1996, 31.
4. Թոմաս Ս. Մոնսոն, «Քեզ հետ կլինեմ. քեզ չեմ թողի եւ քեզ անտես չեմ անիլ», *Լիստնուս*, նոյ. 2013, 85:
5. Մարկ Թվեյն, *Եվալի Օրսպիրը* (1905), 107:
6. Բոյդ Բ. Փաքեր, «Քահանայության գործությունը» “The Power of the Priesthood,” *Լիստնուս*, մայիս 2010, 9:
7. Ezra Taft Benson, “To the Fathers in Israel,” *Ensign*, Nov. 1987, 50–51.
8. 2 Նեփի 2:27:
9. Robert D. Hales, “Strengthening Families: Our Sacred Duty,” *Liahona*, July 1999, 40; see also LaRene Gaunt, “Elder Robert D. Hales: ‘Return with Honor,’” *Liahona*, Apr. 1995, 31.
10. Ծննդոց Բ. 18:
11. Ծննդոց Բ. 18, հղում ք:
12. Տես Bruce K. Satterfield, “The Family under Siege: The Role of Man and Woman” (presentation given at Ricks College Education Week, June 7, 2001), 4; emp.byui.edu/SATTERFIELD/PDF/RoleManWoman2.pdf:
13. *Handbook 2: Administering the Church* (2010), 1.3.1.
14. Barbara B. Smith, “Hearts So Similar,” *Ensign*, May 1982, 97.
15. “Daddy’s Homecoming,” *Children’s Songbook*, 210.
16. “Let Us Oft Speak Kind Words,” *Hymns*, no. 232.
17. Դեյվիդ Ս. Բեդնար, «Մենք հավատում ենք մաքրաբարո լինելուն», *Լիստնուս*, մայիս 2013, 44:
18. Զեֆրի Ռ. Հոլլանդ, «Հրեշտակների լեզուն», *Լիստնուս*, մայիս 2007, 18:



Երեց Դավիթ Ն. Օուլսոն
Տասներկու Առաքյալների Քվորում

Մերմնացանի առակը

Դա կախված է յուրաքանչյուրիցս, մենք պետք է դնենք առաջնահերթություններ և անենք բաներ, որոնք մեր հողը կդարձնեն պարարտ, իսկ մեր բերքը՝ առատ:

Գերագույն համաժողովի ելույթները հանձնարարվում են ոչ թե իշխանություն ունեցող մարդու կողմից, այլ Հոգու հուշումով: Շատ թեմաներ անդրադառնում են այն հոգսերին, որ բոլորս ունենք: Մակայն ճիշտ ինչպես Հիսուսը չէր ուսուցանում ինչպես հաղթահարել Իր օրերի դժվարությունները կամ քաղաքական ճնշումները, Նա սովորաբար ոգեշնչում է մեր օրերի Իր ծառաներին խոսել այն մասին, թե ինչ պետք է մենք անենք, որպեսզի վերափոխենք մեր անձնական կյանքը և պատրաստվենք վերադառնալու մեր երկնային տուն: Այս գատկի օրերին ես զգացի, որ պետք է խոսեմ Հիսուսի առակներից մեկում բացահայտված թանկագին և հավիտենական ուսմունքների մասին:

Մերմնացանի առակը պատկանում է այն մի քանի առակների թվին, որոնք տեղ են գտել բոլոր երեք նմանատիպ Ավետարաններում: Դա նաև պատկանում է այն մի քանի առակների թվին, որոնք Հիսուսը մեկնաբանեց Իր աշակերտներին: Ցանված սերմը «արքայության խոսքն» էր (Մատթեոս 13:19), «խոսքը» (Մարկոս 4:14), կամ «Աստծո խոսքը» (Լուկաս 8:11) – Վարդապետի և Նրա ծառաների ուսմունքները:

Տարբեր տեսակի հողերը, որտեղ ընկնում էին սերմերը, ներկայացնում էին թե ինչպիսի տարբեր ուղիներով են մարդիկ ստանում այդ ուսմունքները և հետևում դրանց: Ուստի, այն սերմերը, որոնք «ճանապարհի մոտ ընկան» (Մարկոս 4:4), չհասան պարարտ հողին, որտեղ կարող էին ծլարձակել: Դրանք այն ուսմունքներն են, որոնք ընկնում են կարծրացած կամ անպատրաստ սրտի մեջ: Ես այդ մասին ավելին չեմ խոսի: Իմ ուղերձը վերաբերում է մեզանից նրանց, ովքեր ստանձնել են լինելու Քրիստոսի հետևորդները: Ինչպե՞ս ենք մեր կյանքում վերաբերվում Փրկչի ուսմունքներին:

Մերմնացանի առակը զգուշացնում է մեզ այն հանգամանքների և վերաբերմունքի մասին, որ կարող է խանգարել ավետարանի ուղերձը ստացած մարդուն լավ բերք տալ:

1. Զարքարոտ հող, առանց արմատ

Որոշ սերմեր «ընկնում են քարքարոտ տեղ, շատ հող չկար, և շուտով բուսավ՝ հողը խոր չլինելուն համար. Եվ երբոր արեգակը ծագեց՝ տաքացավ և արմատ չունենալուն համար չորացավ» (Մարկոս 4.5–6):

Հիսուսը բացատրեց, որ սա նկարագրում է նրանց, ովքեր «երբոր



խոսքը լսում են, շուտով ուրախությունով ընդունում են նորան», սակայն քանի որ «իրանց մեջ արմատ չունեին, . . . երբոր այն խոսքի համար նեղություն կամ հալածմունք է լինում, շուտով գայթակղվում են» (Մարկոս 4.16–17):

Ի՞նչն է պատճառ հանդիսանում, որ ունկնդիրներն «իրանց մեջ արմատ չունենան»: Դա նոր անդամների իրավիճակն է, ովքեր պարզապես դարձի են եկել առ միսիոներները, Եկեղեցու բազմաթիվ գրավիչ հատկանիշները կամ Եկեղեցու անդամության բազում լավ պտուղները: Խոսքի մեջ արմատներ չունենալով՝ ընդդիմության ի հայտ գալուն պես, նրանք նվաղում և չորանում են: Բայց նույնիսկ Եկեղեցում մեծացած լինելով և Եկեղեցու երկար տարիներ անդամ եղած

անձինք կարող են հայտնվել մի իրավիճակում, որ արմատներ չունենան իրենց մեջ: Ես ճանաչել եմ որոշ անդամների, ովքեր հաստատուն և տևական դարձի չէին եկել առ Հիսուս Քրիստոսի ավետարանը: Եթե մենք արմատներ չենք զցել ավետարանի ուսմունքներում և չենք ապրում դրանցով, մեզանից ցանկացած ոք կարող է դառնալ քար սիրտ, որը քարքարոտ հող է հոգևոր սերմերի համար:

Հոգևոր սնունդ է անհրաժեշտ հոգևոր գոյատևման համար, հատկապես մի աշխարհում, որը հեռանում է առ Աստված հավատքից և ճշմարտության ու սխալի բացարձակություններից: Համացանցի այս դարում, երբ մեծարվում են հավատքը խաթարող հաղորդագրությունները, մեր հավատքը

գորացնելու և ավետարանում արմատները պահելու համար մենք պետք է ամրացնենք հոգևոր ճշմարտության հանդեպ մեր դիրքորոշումը:

Երիտասարդներ, եթե այս ուսուցումը շատ ընդհանուր է թվում, կբերեմ մի հատուկ օրինակ: Եթե հաղորդության խորհրդանիշները սպասավորելու ընթացքում դուք հաղորդագրություն եք ուղարկում, շնջում, խաղում տեսախաղ կամ տարվում մեկ այլ զբաղմունքով, ձեզ գրկելով հիմնական հոգևոր սննդից, դուք կտրում եք ձեր հոգևոր արմատները և տեղափոխվում քարքարոտ հողի վրա: Դուք խոցելի եք դառնում հոգևոր տկարության համար, երբ բախվում եք նեղությանը, ինչպիսին է՝ մեկուսացումը, ահաբեկումը կամ ծաղրը: Եվ սա չափահասներին էլ է վերաբերում:

Հոգևոր արմատների մեկ այլ պոտենցիալ կործանիչ է հանդիսանում ավետարանի կամ Եկեղեցու մասին թերի տեսակետը՝ արագացված ներկայիս տեխնոլոգիաների և ոչ միայն դրանց կողմից: Այդ սահմանափակ տեսակետը կենտրոնանում է որոշակի վարդապետության, գործունեության կամ ղեկավարի թերացման վրա և անտեսում է ավետարանի ծրագրի և դրանից բխող օրինությունների ամբողջական համայնապատկերը: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ներկայացրել է այդ թերի տեսակետի մի ցայտուն նկարագրություն: ԲՅՀ-ի լսարանին նա պատմել է քաղաքական մեկնաբանների մասին, ովքեր «բռնկվել էին» այն ժամանակվա լուրերի թողարկման ընթացքում: «Նրանք պերճախոս ձևով գայրույթով լի տարատեսակ վիրավորական խոսքեր էին ասում: . . . «Անշուշտ, ավարտել էր նա, այս ժամանակներում և տեղերում վիրավորանքներով խոսացողներն ընդունելի են»:¹ Ի տարբերություն դրան, ավետարանում ամուր արմատներ ունենալու համար մենք պետք է մեղմ և չափավոր լինենք քննադատության մեջ և մշտապես ձգտենք ունենալ ավելի մեծ տեսադաշտ Աստծո փառափառ աշխատանքի վերաբերյալ:



**II. Փշեր.Այս աշխարհի հոգսերը
և հարստության խաբեությունը**

Հիսուսն ուսուցանեց, որ որոշ սերմեր «ընկան փշերի մեջ, և փշերը դուրս եկան և խեղդեցին նորան. և պտուղ չտուավ» (Մարկոս 4.7): Նա բացատրեց, որ այդ «նրանք են, որ խոսքը լսում են, բայց աշխարհիս հոգսերը և հարստության խաբեությունը և ուրիշ բաների ցանկությունները մտնում են խոսքը խեղդում. և անպտուղ է լինում» (Մարկոս 4.18–19): Անշուշտ, սա է այն նախագծույցում, որին մենք բոլորս պետք է ականջ դնենք:

Նախ կխոսեմ հարստության խաբեության մասին: Անկախ նրանից մեր հոգևոր ճամփորդության որ հատվածում ենք գտնվում, դարձի ինչ կարգավիճակ ունենք, բոլորս էլ գայթակղվում ենք դրանով: Երբ մոտեցումները կամ առաջնահերթությունները կենտրոնացած են գույքի ձեռքբերման, օգտագործման կամ պահպանման վրա, մենք դա կոչում ենք նյութապաշտություն: Այնքան շատ է խոսվել և գրվել նյութապաշտության մասին, որ քիչ բան կարելի է ավելացնել այստեղ:² Ովքեր հավատում են այսպես կոչված

բարգավաճման աստվածաբանությանը, տառապում են հարստության խաբեությունից: Հարստություն կամ էական եկամուտ ունենալը նշան չէ երկնային բարեհաճության, իսկ դրա բացակայությունը՝ երկնային անհավանության: Երբ Հիսուսն ասաց հավատարիմ հետևորդին, որ նա կարող էր ժառանգել հավերժական կյանքը, եթե միայն բաժաներ իր ողջ ունեցվածքը աղքատներին (տես Մարկոս 10.17–24), նա նշում էր, որ չարիքը ոչ թե հարստություն *ունենալու*, այլ դրա հանդեպ այդ հետևորդի *վերաբերմունքի* մեջ էր: Ինչպես բոլորս գիտենք, Հիսուսը գովաբանեց բարի Սամարացուն, ով օգտագործեց նույն մետաղադրամն իր մերձավորին ծառայելու համար, մինչդեռ Հուդան դա օգտագործեց իր Փրկչին դավաճանելու համար: Ամեն չարիքների արմատը ոչ թե փողն է, այլ *սեղրը փողի հասնելու* (տես Ա Տիմոթեոս 6.10):

Մորմոնի Գիրքը պատմում է այն ժամանակի մասին, երբ Աստծո Եկեղեցին «սկսեց թերանալ իր առաջընթացի մեջ», (Ավմա 4.10) որովհետև «եկեղեցու ժողովուրդը սկսել էր . . . դնել իրենց սրտերը

հարստությունների վրա ու աշխարհի ունայն բաների վրա» (Ավմա 4.8): Ով մեծ նյութական ունեցվածք ունի, գտնվում է հարստություններով և աշխարհիկ այլ բաներով հոգևորապես «ինքնաբավարարված լինելու» վտանգի տակ:³ Դա համապատասխան նախաբան է Փրկչի ուսմունքներից հաջորդի համար:

Առավել նուրբ փշերը, որոնք թուլացնում են ավետարանի խոսքի ազդեցությունը մեր կյանքում, աշխարհիկ ուժերն են, որոնք Հիսուսը կոչում էր «հոգսեր, հարստություն և կյանքի զվարճություններ» (Դուկաս 8.14): Դրանք թվարկելու համար անչափ շատ են: Մի քանի օրինակները կբավականացնեն:

Մի առիթով Հիսուսը հանդիմանեց Իր գլխավոր Առաքյալին, ասելով Պետրոսին. «Դու գայթակղություն ես ինձ. որովհետև դու միտք չես անում Աստուծոյ՝ այլ մարդկանց բաները» (Մատթեոս 16.23; տես նաև Վևո 3.6–7; 58.39): Միտք անել մարդկանց բաները նշանակում է այս աշխարհի հոգսերը վեր դասել Աստծո բաներից՝ մեր գործերով, մեր առաջնահերթություններով և մեր մտածելակերպով:

Մենք տրվում ենք «այս կյանքի հաճույքներին», երբ կախվածության մեջ ենք ընկնում, որը խաթարում է ազատ կամքի Աստծո թանկագին պարզը, երբ մենք գայթակղվում ենք հասարակ շեղումներով, որոնք մեզ հեռացնում են հավերժական կարևորության բաներից, և երբ մենք ունենք արժանավորության մտածելակերպ, որը դանդաղեցնում է անձնական աճը, իսկ դա անհրաժեշտ է մեր հավերժական ճակատագրին արժանանալու համար:

Մենք տարվում ենք «այս կյանքի հոգսերով, երբ մեզ պատում է ապագայի հանդեպ վախը, որը խանգարում է մեզ հավատքով առաջ գնալ, վստահել Աստծուն և Նրա խոստումներին: Քսաներկու տարի առաջ ԲՅՀ-ի իմ պատվելի ուսուցիչը՝ Հյու Վ. Նիբլին խոսեց աշխարհի հոգսերով տարվելու վտանգի մասին: Մի հարցազրույցի ժամանակ նրան հարցրեցին, թե արդյոք աշխարհի պայմանները և ավետարանը

տարածելու մեր պարտականությունը ցանկություն է առաջացնում ձգտել ինչ-որ կերպ «Եկեղեցու մեր գործելակերպով հարմարվել աշխարհին»:⁴

Նա պատասխանեց. «Դա եղել է Եկեղեցու ողջ պատմությունը, այնպես չէ՞: Պետք է կարողանա վիրավորել, շիսկի գնալ: Այդտեղ է, որ օգնության է հասնում հավատքը: . . . Մեր պարտականությունը փորձություն է, դա դժվար է, դա ձեռնտու չէ՛ այս աշխարհի չափանիշներով»:⁵

ԲՅԼ-ում մի քանի ամիս առաջ ավետարանի այդ առաջնահերթությունը հաստատեց, Ֆիլադելֆիայի արքեպիսկոպոս պատվելի կաթոլիկ ղեկավար Չարլզ Յ. Չապուտը: Խոսելով «ԿՕՍ և կաթոլիկ համայնքներին անհանգստացնող մտահոգություններից», որոնք են՝ «ամուսնության և ընտանիքի, սեռական բնույթի, մարդկային կյանքի սրբության և կրոնական ազատության հրատապ հարցերը», նա ասաց.

«Ես ցանկանում եմ կրկին շեշտել իրականում մեր համոզմունքներով ապրելու կարևորությունը: Դա պետք է առաջնահերթություն լինի, ոչ միայն մեր անձնական և ընտանեկան կյանքում, այլև եկեղեցում, մեր քաղաքական ընտրություններում, գործարքներում, աղքատներին վերաբերվելիս, այսինքն՝ մեր բոլոր գործերում:

Սիա թե ինչու է դա կարևոր: Սովորեք կաթոլիկ եկեղեցու փորձից: Մենք՝ կաթոլիկներս հավատում ենք, որ մեր նպատակը հասարակության մեջ թթխմորի դեր կատարելն է: Բայց մի նուրբ սահման կա հասարակության *մեջ* թթխմոր լինելու և հասարակության *կողմից* մարսվելու միջև»:⁶

Փրկչի զգուշացումն այն մասին, որ այս աշխարհի հոգսերով տարվելը խեղդում է Աստծո խոսքը մեր կյանքում, անկասկած, մեզ կոչ է անում մշտապես պահել մեր առաջնահերթություններն ու ցանկությունները Աստծո պատվիրանների և Նրա Եկեղեցու ղեկավարության շուրջ:

Փրկչի օրինակները գուցե մեզ ստիպում են այս առակը համարել հողի վերաբերյալ առակ: Հողի



պիտանիությունը կախված է այն մարդու սրտից, որտեղ ընկնում է ավետարանի սերմը: Հոգևոր ուսմունքներն ընկալելու առումով որոշ սրտեր կարծրացած և անպատրաստ են, որոշ սրտեր քարացել են անգործությունից, իսկ որոշներն էլ՝ դրված են աշխարհի բաների վրա:

III. ԸՆԿՆՆԻ ԿԱՐԱՐՈՒ ՏՈՒՄ ԵՎ ԿՍՏՈՒՄ

Մեր մնացանի առակի վերջում Փրկիչը նկարագրում է այն սերմերը, որոնք «ընկան բարի երկրի վրա, և պտուղ էին տալիս» տարբեր չափերով (Մատթեոս 13.8): Ինչպե՞ս կարող ենք պատրաստվել լինելու այդ կարարտ հողը և լավ բերք ունենալ:

Հիսուսը բացատրեց, որ «այն կարարտ երկրի միջինը, նորանք են, որ բարի և հոժար սրտով խոսքը լսում և ընդունում են, և համբերությունով պտուղ են տալիս» (Ղուկաս 8.15): Մենք ունենք ավետարանի խոսքի սերմը: Դա կախված է յուրաքանչյուրիցս, մենք պետք է դնենք առաջնահերթություններ և անենք բաներ, որոնք մեր հողը կդարձնեն կարարտ, իսկ մեր բերքը՝ առատ: Մենք պետք է ձգտենք ամուր արմատներ գցել և դարձի գալ առ Հիսուս Քրիստոսի ավետարանը (տես Կողոսացիս 2.6–7): Մենք այդ դարձին հասնում ենք աղոթքով, սուրբ գրություններն ընթերցելով, ծառայելով և մշտապես հաղորդությունը ճաշակելով, որպեսզի միշտ Նրա Հոգին մեզ հետ ունենանք: Մենք նաև պետք է ձգտենք սրտի այն մեծ փոփոխությանը (տես Ավմա 5.12–14), որը չար

ցանկությունները և եսասեր մտահոգությունները փոխարինում է Աստծո սիրով և Նրա ու Նրա զավակների ծառայելու ցանկությամբ:

Ես վկայում եմ այդ ամենի ճշմարտացիության մասին, և ես վկայում եմ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի մասին, ում ուսմունքները ցույց են տալիս ուղին, և ում Քավությունը հնարավոր է դարձնում այդ ամենը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Gordon B. Hinckley, “Let Not Your Heart Be Troubled” (Brigham Young University devotional, Oct. 29, 1974), 1; speeches.byu.edu.
2. Stu օրինակ, for example, Dallin H. Oaks, “Materialism,” chapter 5 in *Pure in Heart* (1988), 73–87.
3. Ես պարտական եմ երեց Նիլ Ս. Մաքսվելին այս հիշարժան նկարի համար (տես “These Are Your Days,” *Ensign*, Oct. 2004, 26).
4. James P. Bell, in “Hugh Nibley, in *Black and White*,” *BYU Today*, May 1990, 37.
5. Hugh Nibley, in “Hugh Nibley, in *Black and White*,” 37–38.
6. Charles J. Chaput, “The Great Charter at 800: Why It Still Matters,” *First Things*, Jan. 23, 2015, firstthings.com/web-exclusives/2015/01/the-great-charter-at-800; see also Tad Walch, “At BYU, Catholic Archbishop Seeks Friends, Says U.S. Liberty Depends on Moral People,” *Deseret News*, Jan. 23, 2015, deseretnews.com/article/865620233/At-BYU-Catholic-archbishop-seeks-friends-says-US-liberty-depends-on-moral-people.html. Արքեպիսկոպոս Չապուտը նաև ասաց, որ «մեր լավագույն կաթոլիկ հաստատություններից մի քանիսը կամ կորցրել են կամ էլ մեծապես թուլացրել իրենց կրոնական ինքնությունը . . . Բրիգամ Յանգն արտասովոր համայնքներ է . . . քանի որ դա իր կրոնական պատկանելությանը հարազատ մնացած կրթօջախ է: Մի կորցրեք դա» (“The Great Charter at 800”):



Երեց Լ. Ուիթնի Զլնյթոս
Յոթանասունական

Ընտրեք հավատքը

Փրկիչը տրամադրում է Իր Ավնտարանը, որպես լույս՝ ուղեկցելու նրանց, ովքեր ընտրում են հավատալ և հետևել նրան:

Անցյալ հունվարին, յոթամյա Մեյյոր Գուդզլերը և նրա ընտանիքը թռչում էին Ֆլորիդայից Իլինոյս՝ մասնավոր ինքնաթիռով: Մեյյորի հայրը վարում էր ինքնաթիռը: Գիշերամուտից անմիջապես հետո, ինքնաթիռը մեխանիկական խնդիրներ ունեցավ և Կենտուկիի շատ մութ բարձունքներում, մի շատ խորդուբորդ տեղանքում գլխիվայր ջախջախվեց: Բոլորը, բացի Մեյյորից, մահացան վթարից: Նրա դաստակը փշուր-փշուր էր եղել: Նա կտրվածքներ ու քերծվածքներ էր ստացել և կորցրել էր իր կոշիկները: Զերմաստիճանը ֆարենհայտով 38 աստիճան էր (կամ Ցելսիուսով 3 աստիճան), – Կենտուկիի մի ցուրտ, անձրևոտ, ձմեռային գիշեր էր, – և Մեյյորը հագին ուներ միայն կարճ անդրավարտիք կարճաթև շապիկ և մեկ կիսագուլպա:

Նա կանչեց մորը և հորը, բայց ոչ ոք չպատասխանեց: Հավաքելով իր ունեցած քաջության յուրաքանչյուր հատիկը, նա սկսեց քայլել բոքիկ ոտքերով քաջաբար կտրել անցնելով դաշտավայրերը, ձորակների ծանծաղուտները, փոսերը և կամանիկայի փշերի միջով փնտրելով օգնություն: Մոտավորապես մեկ մղոն հեռավորության վրա, Մեյյորը լույս նշմարեց տարածության մեջ:



Մթության մեջ սայթակելով և անցնելով թփերի, ծառերի, բույսերի միջով դեպի այդ լույսը նա, վերջապես, հասավ մի բարի մարդու օջախ, ում նախկինում նա երբեք չէր հանդիպել, ով արագ հոգ տարավ նրա մասին: Մեյյորը ապահով էր: Նրան շուտով տարան հիվանդանոց և օգնեցին առողջանալ:¹

Մեյյորը կենդանի մնաց, որովհետև տարածության մեջ նա լույս տեսավ և պայքարեց, որ հասնի դրան՝ չնայած վայրի դաշտավայրերին, այն ողբերգության խորությանը, որ նա վերապրեց և այն վնասվածքներին, որ նա դիմացավ: Դժվար է պատկերացնել, թե ինչպես Մեյյորը կարողացավ անել այն, ինչ նա արեց այդ գիշեր: Բայց ինչ մենք իսկապես հասկացանք, այն է, որ նա այդ հեռավոր տան լույսի մեջ տեսավ իր փրկության հնարավորությունը: Այնտեղ հույս կար: Նա քաջություն հավաքեց այն փաստից, որ նշանակություն չունեք, թե որքան վատ էին գործերը, իր փրկությունը կգտնվեր այդ լույսի մեջ:

Մեզանից քչերը երբևէ կդիմակայեն մի այնպիսի ցավոտ փորձառության, ինչպիսին Մեյյորին էր: Բայց մենք բոլորս, ինչ-որ ժամանակ, ստիպված կլինենք, հոգևոր առումով պայքարել մեր սեփական, դժվար փորձությունների դեմ և ձեռնարկել մեր սեփական, դժվար, զգացմունքային ճանապարհորդությունները: Այդ պահերին, որքան էլ մութ կամ թվացյալ անհույս նրանք լինեն, եթե մենք փնտրենք այն, *միշտ* կլինի մի հոգևոր լույս, որը մեզ նշան կանի, տալով մեզ փրկության և թեթևացման լույս: Այդ լույսը գալիս է ողջ մարդկության Փրկչից, ով Աշխարհքի լույսն է:

Հոգևոր լույսը ըմբռնելը տարբեր է ֆիզիկական լույսը տեսնելուց: Փրկչի հոգևոր լույսը ճանաչելը սկսում է մեր հավատալու պատրաստակամությունից: Աստված ի սկզբանե պահանջում է, որ նախ մենք նվազագույնը հավատալու ցանկություն ունենանք: «Եթե դուք արթնանաք և արթնացնեք ձեր ունակությունները... և գործադրեք հավատքի մի *մասնիկ*, – ուսուցանում է մարգարե

Ալման, – նույնիսկ, եթե դուք չեք կարող ավելին, քան *ցանկանալ* հավատալ, թույլ տվեք, որ այդ ցանկությունը գործի ձեր մեջ, մինչև որ դուք հավատաք, այնպես որ դուք կարողանաք տեղ տալ [Փրկչի] խոսքերի մի մասին»:²

Ալմայի մեզ ուղղված՝ հավատալ ցանկանալու և Փրկչի խոսքերին մեր սրտում «տեղ տալու» կոչը մեզ հիշեցնում է, որ դավանանքը և հավատքը պահանջում են մեր անձնական ընտրությունը և գործողությունը: Մենք պետք է «արթնանանք և արթնացնենք [մեր] ունակությունները»: Մենք պետք է խնդրենք նախքան մեզ կտրվի. մենք պետք է փնտրենք մինչև կգտնենք. մենք պետք է թակենք, նախքան այն կբացվի մեզ համար: Որից հետո մեզ տրվում է այս խոստումը. «Քանզի ամեն մեկը, որ խնդրում է, ստանում է, և նա ով փնտրում է, գտնում է, և նրան, որ թակում է, կբացվի»:³


Ուրիշ ոչ ոքից հավատալու այդքան ջերմեռանդ խնդրանք չէր եղել, քան հենց Իրենից՝ Փրկչից, երբ, Իր երկրային սպասավորության ընթացքում, նա դիմեց Իր անհավատ լսողներին.

«Եթե իմ Հօր գործերը չեմ գործում, մի հաւատաք ինձ:

Ապա՝ եթե գործում եմ, թէեւ ինձ էլ չհաւատաք, գոնե գործերին հաւտացեք, որ ճանաչեք եւ հաւտաք, թե Հայրն ինձանում է եւ ես նրա մեջ»:⁴

Յուրաքանչյուր օր, մեզանից յուրաքանչյուրը ենթարկվում է փորձության: Այն փորձության է մեզ ենթարկում մեր ողջ կյանքի ընթացքում: Արդյոք մենք կընտրե՞նք Նրան հավատալը և թույլ կտանք Նրա Ավետարանի լույսին աճել մեր մեջ, թե կհրաժարվենք հավատալ և կընտրենք մթության մեջ միայնակ ճամփորդելը: Փրկիչը տրամադրում է Իր Ավետարանը, որպես լույս՝ ուղեկցելու նրանց, ովքեր ընտրում են հավատալ և հետևել նրան:

Վթարից հետո, Մեյյորը ընտրություն ունեւ: Նա կարող էր ընտրել մնալ ինքնաթիռի մոտ մթության մեջ, միայնակ և վախեցած: Բայց մի երկար գիշեր էր առջևում և ավելի էր սկսում ցրտել: Նա այլ ճանապարհ



ընտրեց: Մեյյորը բարձրացավ մի բարձունք, և այդտեղ նա լույս տեսավ հորիզոնի վրա:

Աստիճանաբար, մինչ նա գիշերով իր ճանապարհն էր հարթում դեպի լույսը, այն ավելի էր պայծառանում: Դեռևս, պետք է, որ լինեին ժամանակներ, երբ նա չէր կարող տեսնել այն: Թերևս, այն տեսադաշտից դուրս էր մնում, երբ նա խորը կիրճում էր կամ թփերի ետևում, բայց նա շարունակում էր առաջ գնալ: Երբ էլ, որ նա կարողանում էր տեսնել լույսը, Մեյյորը վկայություն էր ունենում, որ ճիշտ արահետի վրա էր: Նա դեռևս ճշգրիտ չգիտեր թե ինչ էր այդ լույսը, բայց շարունակում էր քայլել դեպի այն, հիմնվելով այն բանի վրա, ինչ գիտեր, վստահելով և հուսալով, որ նա կրկին այն կտեսներ, եթե ճիշտ ուղղությամբ շարունակեր

առաջ գնալ: Այդպես վարվելով՝ նա հնարավոր է, փրկեր իր կյանքը:

Մեր կյանքը նույնպես կարող է այդ ամենի նման լինել: Հնարավոր է, որ եղել են պահեր, երբ մենք եղել ենք խոցված, հոգնած և մեր կյանքը թվացել է մռայլ ու սառը: Կարող են լինել պահեր, երբ մենք չենք կարող որևէ լույս տեսնել հորիզոնում և ունենալ այնպիսի զգացողություն, որ հանձնվում ենք: Եթե մենք պատրաստ ենք հավատալ, եթե մենք ընտրում ենք հավատքը, ապա Փրկչի ուսմունքները և օրինակը ցույց կտան մեզ առաջ տանող կաժանը:

Ըստրիք Հավատքը

Նույն ձևով, ինչպես Մեյյորը ստիպված էր հավատալ, որ նա ապահովություն կգտներ այդ հեռավոր լույսում, մենք ևս պետք



է ընտրենք բացել մեր սրտերը Փրկչի աստվածային իրականության առաջ, Նրա հավերժական կրակի առաջ և Նրա բուժող գթասրտության առաջ: Մարգարեները ողջ պատմության ընթացքում քաջալերել են մեզ և նույնիսկ անկեղծորեն աղերսել հավատալ Քրիստոսին: Նրանց քարոզները արտացոլում են սկզբունքային փաստ: Աստված չի ստիպում մեզ հավատալ: Դրա փոխարեն, նա հրավիրում է մեզ հավատալ, ուղարկելով կենդանի մարգարեներ և առաքյալներ՝ ուսուցանելու, տրամադրելով սուրբ գրություններ և նշան անելով մեզ Իր Հոգու միջոցով: Մենք այն մարդիկ ենք, ովքեր պետք է ընտրեն օգտվել այդ հոգևոր հրավերից՝ ընտրելով տեսնել իրենց հոգևոր զգայարաններով այն հոգևոր լույսը, որով նա մեզ կանչում է: Հավատալու որոշումը ամենակարևոր ընտրությունն է, որ մենք երբևէ կատարում ենք: Այն ազդում է մեր բոլոր այլ որոշումների վրա:

Աստված չի ստիպում մեզ հավատալ, ոչ ավելին, քան Նա ստիպում է մեզ պահել պատվիրանները, ի հակառակ մեզ օրհնելու Նրա կատարյալ բաղձանքի: Բայց և այնպես Նրա կոչը ուղղված մեզ՝ հավատալու Նրան՝ գործադրելու հավատքի այդ մասնիկը և տեղ տալու Նրա խոսքերին, այսօր ուժի մեջ է: Ինչպես Փրկիչն է ասել, «ես

վկայում եմ, որ Հայրը պատվիրում է բոլոր մարդկանց, ամեն օր, զոջալ և հավատալ ինձ»:⁵

Դավանանքը, վկայությունը և հավատքը պասիվ սկզբունքներ չեն: Նրանք առանց ջանքի չեն հայտնվում մեր մեջ: Դավանանքը մի բան է, որ մենք ընտրում ենք՝ մենք հույս ենք կապում նրա հետ, մենք աշխատանք ենք կատարում նրա վրա և մենք զոհաբերվում ենք նրա համար: Մենք պատահականորեն չենք հավատա Փրկչին և Նրա Ավետարանին, ոչ ավելին, քան պատահականորեն կաղոթենք կամ տասանորդ կվճարենք: Մենք գործնականորեն ենք ընտրում հավատալը, հենց այնպես, ինչպես ընտրում ենք պահել մյուս պատվիրանները:

Հավատքը գործի վերածնել

Մեյլերը չէր կարող իմանալ սկզբում, թե արդյոք նրա ջանքերը արդյունավետ կլինեի՞ն, երբ իր ճանապարհն էր հարթում մացառուների միջով: Նա կորել էր և վնասված էր. մութ էր և ցուրտ: Բայց նա հեռացավ վթարի վայրից և ռիսկի դիմեց, հուսալով փրկվել, սողալով և դժվարությամբ առաջ անցնելով, մինչև որ տարածության վրա լույս տեսավ: Մեկ անգամ տեսնելով այն, նա ինչ կարող էր արեց, որ հասնի դրան՝ հիշելով թե ինչ է տեսել:

Մենք նմանապես պետք է տեղ տանք հուսալուն, որ կգտնենք հոգևոր լույսը, ավելի շուտ ընդունելով հավատքը, քան տարակուսելով: Մեր գործողությունները մեր դավանանքի վկայություններն են և դառնում են մեր հավատքի էությունը: Մենք ընտրում ենք հավատքը, երբ ծով ենք պահում, երբ հանգստության օրը սուրբ ենք պահում և տաճարում երկրպագում ենք: Մենք ընտրում ենք հավատքը, երբ մկրտվում ենք և մասնակցում հաղորդությանը: Մենք ընտրում ենք հավատքը, երբ զոջում ենք և փնտրում աստվածային ներումը և բժշկող սերը:

Երբեք մի հասնավիր

Երբեմն, հոգևոր խնդիրներում առաջադիմությունը կարող է դանդաղ կամ ընդմիջվող թվալ: Երբեմն, մենք կարող ենք զգալ, որ հետադիմել ենք, որ սխալներ ենք արել կամ մեր լավագույն ջանքերը ուղղված Փրկչին գտնելուն արդյունավետ չեն: Նրանք, ովքեր կարող են նման զգացողություն ունենալ, խնդրում ենք, մի՛ հանձնվեք, երբե՛ք: Շարունակեք հավատալ Նրան, Նրա ավետարանին և Նրա Եկեղեցուն: Ձեր գործողությունները հավատքի հետ միասին մի գծի վրա դրեք: Այն պահերին, երբ ձեր հավատքը թուլանում է, թող որ ձեր Փրկչի սիրո նկատմամբ

հույսը և շնորհը, որը գտել եք Նրա ավետարանում և Նրա Եկեղեցում, հաղթահարի ձեր տարակուսանքը: Ժամանակի ընթացքում դուք կտեսնեք, որ լավագույն ընտրությունն էք կատարել, որը կարող էիք կատարած լինել: Ձեր խիզախ որոշումը Նրան հավատալ կօրհնի ձեզ անսահմանորեն և միշտ:

Հավատքի Օրհնությունները

Ես իմ կյանքում զգացել եմ Փրկչի բարեգութ սերը: Ես փնտրել եմ Նրան իմ սեփական վիատության պահերին, և, նա ինձ ձեռք է մեկնել Իր բուժիչ լույսով: Իմ կյանքի մեծ ցնծություններից մեկը եղել է իմ տիկնոջ՝ Քեթիի հետ ճանապարհորդելը, եկեղեցու անդամների հետ հանդիպելը երկրագնդի շատ անկյուններում: Այդ հոյակապ հանդիպումները սովորեցրել են ինձ և սովորեցրել են մեզ Աստծո սիրո մասին իր զավակների նկատմամբ: Նրանք ինձ ցույց են տվել երջանկության անսահման ներուժը, որը դառնում է այն մարդկանց օրհնությունը, ովքեր ընտրում են մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի ուսմունքներին հետևելը: Ես սովորել եմ, որ Նրան և Նրա Փրկագնող ուժին հավատալը այն իրական արահետն է, որը տանում է դեպի «խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք՝ հանդերձյալ աշխարհում»:⁶

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը լույսի աղբյուր և հույս է բոլորիս համար: Ես աղոթում եմ, որ մենք բոլորս հավատանք Նրան: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՐՈՒՄՆԵՐ

1. Տես Լինդսի Բիվր, «Ինչպես յոթամյա Մեյլոր Գուդզլերը կենդանի մնաց օդանավի վթարից»: *Վաշինգթոն Փոստ*, Հունվ. 5, 2015; washingtonpost.com «Կենդանի մնացած աղջիկը հույս ուներ, որ ընտանիքը պարզապես քնած էր»: Հունվ. 4, 2015, myfox8.com; «Կենտուկիի ինքնաթիռի վթարը շորս մահացած, փոքրիկ աղջիկը կենդանի է մնացել»: Հունվ. 4, 2015, news.com.au; Associated Press, «Երիտասարդ աղջիկը, կենտուկիի ինքնաթիռի վթարի միակ կենդանի մնացածը»: Հունվ. 3, 2015, jems.com.
2. Ալմա 32.27, շեշտադրումն ավելացված է
3. 3 Նեփի 14.8 տես նաև 7-րդ հատվածը:
4. Հովհաննես 10.37-38.
5. 3 Նեփի 11.32
6. Վարդապետություն ԵՎ Ուխտեր 59.23



Երնց Լ. Թոմ Փոլի
Տասներկու Առաքյալների Քվորում

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԿԱՐՆՈՐ ԱՄՈՒԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՂՆՏԱՆՍԻՔՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐԻՈՒՄ:

Ընտանիքը կյանքի առանցքն է և հավերժական երջանկության բանալին

Անցյալ նոյեմբերին ես պատիվ ունեի նախագահ Հենրի Բ. Այրինգի և Եպիսկոպոս Ժերարդ Կոսեի հետ միասին հրավիրվելու Վատիկանում (Հռոմ, Իտալիա)



կայանալիք ամուսնությանը և ընտանիքին նվիրված կոնֆերանսին: Ներկա էին 14 տարբեր հավատքների կրոնական ներկայացուցիչներ՝ վեց մայրցամաքներից, բոլորը հրավիրված էին իրենց մտքերն արտահայտելու այն թեմայի շուրջ, թե ինչ է տեղի ունենում ընտանիքի հետ ներկայիս աշխարհում:

Հռոմի պապ Ֆրանցիսկոսը կոնֆերանսի առաջին նիստի բացումն արեց հետևյալ արտահայտությամբ. «Մենք այժմ ապրում ենք աշխարհիկ մշակույթի ներքո, որում ավելի ու ավելի շատ մարդիկ պարզապես հրաժարվում են ամուսնությունից, որպես հանրային պարտավորություն: Այս վարվեցողության և բարոյականության հեղափոխությունը հաճախ ազատության դրոշի տակ է հանդես գալիս, սակայն, ըստ էության, այն բերել է հոգևոր և նյութական ավերածություն անթիվ մարդկանց, հատկապես՝



վկայությունը բերեց նախագահ Հենրի Բ. Այրինգը: Նա հզոր վկայություն բերեց ամուսնության գեղեցկության մասին և որ մենք հավատում ենք հավերժական ընտանիքների խոստացված օրհնությանը:

Համաժողով ամուսնության և ընտանիքի վերաբերյալ, Վատիկան Սիթի

ամենաաղքատ և խոցելի: . . . Հենց նրանք են ամենաշատը տառապում այս ճգնաժամից»:¹

Դիմելով աճող սերնդին, նա ասաց, որ կարևոր է, որ նրանք «չհանձնվեն աշխարհիկի թունավոր [մտածողությանը], այլ, ավելի շուտ, հեղափոխականներ լինեն՝ քաջություն ունենալով փնտրելու իսկական և տևական սեր, դեմ գնալով ընդունված ձևաչափերին», նրանք պետք է դա անեն:²

Բացմանը հաջորդեց կրոնական առաջնորդների հետ երեքօրյա ներկայացում և քննարկում, որի ընթացքում խոսվեց տղամարդու և կնոջ միջև ամուսնության մասին: Լսելով աշխարհի կրոնական ղեկավարների բավական լայն գանգվածին, ես իմացա, որ նրանք լիովին համաձայն են միմյանց հետ և իրենց աջակցությունն են հայտնում մեկը մյուսի հավատքի հետ կապված՝ ամուսնության կարգման սրբության և ընտանիքների կարևորության վերաբերյալ, որպես հասարակության հիմնական միավորների: Ես ունեցա նրանց հետ ընդհանրության ու միասնության մի հզոր զգացում:

Այնտեղ շատերը կային, որ նկատեցին ու արտահայտեցին այս միասնությունը, և նրանք դա տարբեր եղանակներով արեցին: Ինձ դուր եկավ մի մահմեդական մտավորական Իրանից, ով բառացիորեն մեջբերեց երկու պարբերություն «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» մեր հռչակագրից:

Համագումարի ընթացքում ես նկատեցի, որ երբ տարբեր հավատքներ, դավանանքներ և կրոններ միասնական են ամուսնության և ընտանիքի հարցում, նրանք նաև միասնական են այն արժեքների,



հավատարմության ու նվիրվածության հարցում, որոնք, բնականաբար, կապված են ընտանիքի միավորի հետ: Ինձ համար հատկանշական էր տեսնելը, թե ինչպես են ամուսնության և ընտանիքի վրա կենտրոնացած առաջնահերթությունները կոտրում քաղաքական, տնտեսական, կամ կրոնական տարբերություններն ու առաջնային դառնում: Երբ խոսքը վերաբերում է ամուսնու կամ կնոջ սիրուն և հույսին, անհանգստություններին, և երեխաների հետ կապված մեր երազանքներին, մենք բոլորս նույնն ենք:

Մքանչելի էր հանդիպումներ ունենալ ներկայացուցիչների հետ ամբողջ աշխարհից, քանի որ նրանք համընդհանուր ուղղում էին իրենց զգացումները տղամարդու և կնոջ միջև ամուսնության կարևորության շուրջ: Նրանց յուրաքանչյուր ելույթը ուղեկցվում էր վկայություններով՝ կրոնական մյուս առաջնորդների կողմից: Կոնֆերանսի վերջին

Նախագահ Այրինգի վկայությունն արժանի ավարտ էր այդ երեք հատուկ օրերի համար:

Այժմ, հնարավոր է դուրս հարցնեք. «Եթե մեծամասնությունը զգաց այդ նմանությունը ընտանիքի առաջնահերթության և համոզմունքների միջև, եթե բոլոր այդ հավատքներն ու կրոնները, ըստ էության, համաձայնել են նրա հետ, թե ինչպիսին պետք է լինի ամուսնությունը, և եթե նրանք բոլորը համաձայնել են այն արժեքին, որը պետք է սահմանվի տների և ընտանեկան հարաբերությունների հարցում, ապա ինչո՞վ ենք մենք տարբերվում: Ինչպե՞ս է տարբերվում և առանձնանում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցին մնացյալ աշխարհից»:

Ահա պատասխանը. Մինչդեռ հրաշալի էր տեսնել և զգալ, որ մենք այդքան ընդհանուր բաներ ունենք մնացած աշխարհի հետ մեր ընտանիքների առումով, միայն մենք

ունենք վերականգնված ավետարանի հավերժական հեռանկարը:

Այն, ինչ քննարկման է դնում վերականգնված ավետարանը ամուսնության և ընտանիքի վերաբերյալ, այնքան մեծ է ու այնքան կարևոր, որ այն պետք է հստակ հնչի. մենք դարձնում ենք այս թեման հավերժական: Մենք տանում ենք ամուսնության նվիրվածությունն ու սրբությունը ավելի բարձր մակարդակի, մեր հավատքի և հասկացողության շնորհիվ, որ ընտանիքները եղել են մինչև այս երկրի արարումը և որ նրանք կարող են շարունակվել հավերժ:

Այս վարդապետությունը շատ պարզ, գորավոր և գեղեցիկ ձևով ուսուցանվում է Երեխաների խմբի երգի համար գրված Ռութ Գարդների խոսքերում. «Ընտանիքները կարող են հավերժ միասին լինել»: Դադար առեք մի պահ և մտածեք երեխաների մասին ամբողջ աշխարհում, ովքեր լիաթոք երգում են այս երգն իրենց մայրենի լեզվով, այնպիսի ոգևորությամբ, որը կարող էր առաջացնել միայն սերն ընտանիքի հանդեպ.

*«Ընտանիքները կարող են հավերժ միասին լինել
Երկնային Հոր ծրագրի շնորհիվ:
Ուզում եմ միշտ լինել ընտանիքիս հետ,
Տեղը ցույց է տվել՝ թե ինչպես»:³*

Մեր վերականգնված ավետարանի ամբողջ թեմոլոգիան կենտրոնացած է ընտանիքների և ամուսնության նոր ու հավիտենական ուխտի վրա: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մենք հավատում ենք նախաերկրային կյանքին, որտեղ մենք բոլորս ապրել ենք, որպես Աստծո՝ մեր Երկնային Հոր իրական հոգևոր զավակներ: Մենք հավատում ենք, որ Նրա ընտանիքի անդամներն ենք եղել և շարունակում ենք լինել:

Մենք հավատում ենք, որ ամուսնությունը և ընտանեկան կապերը կարող են շարունակվել մահից հետո, որ ամուսնությունները, որոնք կատարվում են Նրա տաճարում,



նրանց կողմից, ովքեր ունեն համապատասխան իշխանություն, շարունակելու են գործել գալիք աշխարհում: Մեր ամուսնության արարողությունները բացառում են «մինչև մահը մեզ բաժանի» արտահայտությունը, դրա փոխարեն ասելով «ժամանակի և ողջ հավերժության համար»:

Մենք նաև հավատում ենք, որ ամուր ավանդական ընտանիքները հիմնական միավորներն են ոչ միայն կայուն հասարակության, տնտեսության, և կայուն մշակույթի արժեքների, այլ նաև հիմնական միավորներն են հավերժության և Աստծո թագավորության ու կառավարության:

Մենք հավատում ենք, որ երկնքի կազմակերպությունը և կառավարությունը կկառուցվի ընտանիքների և ընդլայնված ընտանիքների շուրջ:

Մեր հավատքի շնորհիվ, որ ամուսնությունները և ընտանիքները հավերժ են, մենք, որպես եկեղեցի, ուզում ենք առաջնորդ և մասնակից լինել աշխարհի շարժումներին, ամրապնդելով դրանք: Մենք գիտենք, որ ոչ միայն նրանք, ովքեր ակտիվ են հոգևոր առումով, կհստում են հավերժ ամուսնությունների և ամուր ընտանեկան հարաբերությունների ընդհանուր արժեքներն ու առաջնահերթությունները: Մեծ թվով աշխարհիկ մարդիկ եկել են այն եզրակացության, որ հավատարիմ

ամուսնությունը և ընտանեկան ապրելակերպը՝ ապրելու ամենագլխաբան, ամենատնտեսող և ամենաերջանիկ ուղին է:

Ոչ ոք դեռ չի բացահայտել հաջորդ սերունդը մեծացնելու ավելի արդյունավետ եղանակ, քան ամուսնացած ծնողներից և նրանց երեխաներից կազմված «ընտանիքը»:

Ինչո՞ւ են կարևոր ամուսնությունն ու ընտանիքն ամենուրեք: Հանրային կարծիքի հարցումները ցույց են տալիս, որ ամուսնությունը շարունակում է մնալ բոլոր տարիքային խմբերի մարդկանց մեծամասնության երազանքն ու հույսը, նույնիսկ այս վերջին մի քանի տասնյակ տարիների ընթացքում ապրող սերնդի համար, երբ մենք այսքան շատ ենք լսում ամուրի մնալու, անձնական ազատության և ամուսնության փոխարեն միասին պարզապես ապրելու մասին: Փաստն այն է, որ մարդկանց զգալի մեծամասնությունն ամբողջ աշխարհում դեռ ցանկանում է երեխաներ ունենալ և ստեղծել ամուր ընտանիքներ:

Երբ մենք ամուսնացած ենք և երբ երեխաներ ունենք, ապա ողջ մարդկության համար ընդհանրությունն ավելի ակնհայտ է դառնում: Որպես «ընտանիքի կողմնակիցներ», անկախ նրանից, թե որտեղ ենք մենք ապրում կամ ինչպիսի կրոնական համոզմունքներ ունենք, մենք ունենում ենք նույն ձգտումները, նույն հարմարվողականությունը, հույսը, անհանգստությունն ու երազանքները մեր երեխաների վերաբերյալ:

Ինչպես ասել է *New York Times*-ի լրագրող Դեյվիդ Բրուքսը. «Մարդիկ ավելի լավ կյանքով չեն ապրում, երբ նրանց առավելագույն անձնական ազատություն է տրվում՝ անելու այն, ինչ ուզում են: Նրանք ավելի լավ կյանք են ունենում, երբ կապված են պարտավորություններով, որոնք ավելի առաջնային են, քան իրենց անձնական ընտրությունը. պարտավորություններ՝ ընտանիքի, Աստծո, աշխատանքի և երկրի հանդեպ»:⁴

Խնդիր կա, որ աշխարհի առաջարկած լրատվամիջոցներն ու ժամանցային ծրագրերը չեն համապատասխանում մարդկանց



մեծամասնության առաջնահերթություններին և արժեքներին: Ինչևէ, մեր հեռուստատեսությունը, ֆիլմերը, երաժշտությունը, և համացանցը մեծամասամբ առաջարկում են այն դասական տարբերակը, երբ փոքրամասնությունը հանդես է գալիս որպես մեծամասնություն: Անբարոյականությունն ու այլասերվածությունը, սկսած ծայրաստիճան բռնությունից, ավարտած ազատ սեռական հարաբերություններով, մատուցվում են որպես նորմալ երևույթ և կարող են պատճառ դառնալ, որ նրանք, ովքեր բարոյական չափանիշներ ունեն, զգան իրենց հետամնաց՝ անցյալ դարաշրջանի մարդիկ: Այսպիսի լրատվության և համացանցային գերակայության աշխարհում երբեք այսքան դժվար չի եղել մեծացնել պատասխանատու երեխաներ, և միասնական պահել ամուսնություններն ու ընտանիքները:

Չնայած նրան, թե ինչ կարող են առաջարկել լրատվամիջոցների և ժամանցային կենտրոնների մեծամասնությունը, և չնայած որոշ մարդկանց՝ ամուսնությունից և ընտանիքից շեղվելու միտմանը, մարդկության զգալի մեծամասնությունը դեռ հավատում է, որ ամուսնությունը պետք է լինի մեկ տղամարդու և մեկ կնոջ միջև: Նրանք հավատում են ամուսնական հավատարմությանը, և ամուսնական երդմանը. «հիվանդության և առողջության» և «մինչև մահը կբաժանի մեզ»:

Մենք պետք է մեկընդմիջտ հիշենք, ինչպես ինձ հիշեցվեց

Հոմում, այն հրաշալիորեն վստահեցնող և մխիթարող փաստը, որ ամուսնությունն ու ընտանիքը դեռևս մարդկանց մեծ մասի ձգտումն ու երազանքն է, և որ մենք միայնակ չենք այդ համոզմունքներում: Երբեք այսքան դժվար չի եղել գտնել իրական հավասարակշռություն աշխատանքի, ընտանիքի և անձնական կարիքների միջև, որքան այժմ՝ մեր օրերում է: Որպես եկեղեցի, մենք ցանկանում ենք աջակցել, ինչպես կարող ենք, ամուսնություններն և ընտանիքներ ստեղծելու և քաջալերելու հարցում:

Մա է պատճառը, որ եկեղեցին ակտիվորեն մասնակցում է և ղեկավարություն ստանձնում տարբեր կոալիցիաներում և միասնական ջանքերում, որոնք ուղղված են ընտանիքն ամրապնդելուն: Մա է պատճառը, որ մենք տարածում ենք ընտանիքի վրա կենտրոնացած արժեքները մամուլում և սոցիալական լրատվամիջոցներում: Մա է պատճառը, որ մենք կիսում ենք մեր ծագումնաբանական և ընդլայնված ընտանեկան պատմությունները բոլոր ազգերի հետ:

Մենք ցանկանում ենք, որ մեր ձայնը լսվի՝ դեմ լինելով բոլոր կեղծ և այլընտրանքային ապրելաձևերին, որոնք փորձում են փոխարինել ընտանեկան կազմակերպությանը, որն Աստված Ինքն է ստեղծել: Մենք ցանկանում ենք նաև, որ մեր ձայնը լսվի՝ հաստատելով այն ուրախությունն ու կատարելությունը, որ բերում են ավանդական ընտանիքները: Մենք պետք է շարունակենք

արտահայտել մեր կարծիքն ամբողջ աշխարհում, հայտարարելով, թե ինչու են ամուսնությունն ու ընտանիքն այդքան կարևոր, որ ամուսնությունն ու ընտանիքը, իրոք, նշանակություն ունեն, և միշտ կունենան:

Իմ եղբայրներ և քույրեր, վերականգնված ավետարանը կենտրոնանում է ամուսնության և ընտանիքի վրա: Նաև ամուսնության և ընտանիքի հարցում է, որ մենք կարող ենք լավագույնս համախմբվել մյուս հավատքների հետ: Ամուսնության և ընտանիքի շուրջ է, որ մենք կարող ենք մեծ ընդհանրություն գտնել ամբողջ աշխարհի հետ: Ամուսնության և ընտանիքի շուրջ է, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին մեծագույն հնարավորություն ունի՝ լինելու լուսը լեռան վրա:

Թույլ տվեք ավարտել, վկայություն բերելով (և իմ ինը տասնյակ տարիներն այս երկրի վրա լիովին որակավորում են ինձ ասելու դա), որ որքան ես մեծանում եմ, այնքան ավելի եմ գիտակցում, որ ընտանիքը կյանքի առանցքն է և հավերժական երջանկության բանալին:

Ես շնորհակալ եմ իմ կնոջ համար, իմ երեխաների համար, թոռներիս ու ծոռներիս, և բոլոր զարմիկներիս, հարսներիս ու փեսաներիս, և ընդլայնված ընտանիքիս համար, ովքեր դարձնում են իմ սեփական կյանքն այսքան հարուստ, և, այո՛, նույնիսկ հավերժական: Այս հավերժական ճշմարտության մասին ես բերում եմ իմ ամենամուր և ամենասուրբ վկայությունը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՍՄԵՐ

1. Հոմմի պապ Ֆրանցիսկոսի ելույթը՝ Humanum: An International Interreligious Colloquium on the Complementarity of Man and Woman, Nov. 17, 2014, humanum.it/en/videos; mtu iwsl zenit.org/en/articles/pope-francis-address-at-opening-of-colloquium-on-complementarity-of-man-and-woman:
2. Հոմմի պապ Ֆրանցիսկոս, Colloquium on the Complementarity of Man and Woman.
3. «Ընտանիքները կարող են հավերժ միասին լինել», *Ophélieqեր*, համ. 300:
4. David Brooks, “The Age of Possibility,” *New York Times*, Nov. 16, 2012, A35, nytimes.com/2012/11/16/opinion/brooks-the-age-of-possibility.html.



Ներկայացրեց Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆը
Առաջին Նախագահության Երկրորդ խորհրդական

Եկեղեցու ղեկավարների հաստատումը

Երբայրներ և քույրեր, առաջարկվում է, որ հաստատենք Թոմաս Սպենսեր Մոնտոնին որպես մարգարե, տեսանող, հայտնող և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, Հենրի Բենիոն Այրինգին որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական և Դիտեր Ֆ. Ուլտորֆին՝ որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական:

Ուլքեր կողմ են, կարող են արտահայտել դա:

Ուլքեր դեմ են, եթե այդպիսիք կան, կարող են արտահայտել դա: Քվեարկությունը ընդունվեց:

Առաջարկվում է, որ հաստատենք Բոյդ Քենեթ Փաքերին որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ և հետևյալ անձանց որպես այդ քվորումի անդամներ. Բոյդ Կ. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դավիդ Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք,

Դ. Թոդ Քրիստոֆերսոն և Նիլ Լ. Անդերսեն:

Ուլքեր կողմ են, խնդրում են արտահայտել դա:

Ուլքեր դեմ են, կարող են արտահայտել նույն կերպ:

Շնորհակալություն: Քվեարկությունը ընդունվեց:

Առաջարկվում է, որ հաստատենք Առաջին Նախագահության խորհրդականներին և Տասներկու Առաքյալների Քվորումին որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Բոյր նրանք, ուլքեր կողմ են, խնդրում են արտահայտել դա:

Դեմ լինելու դեպքում, եթե այդպիսիք կան, արտահայտեք նույն կերպ:

Քվեարկությունը ընդունվեց:

Առաջարկվում է, որ հետևյալ անձինք ազատվեն Տարածքային Յոթնասունականների իրենց կոչումներից 2015թ. մայիսի 1-ից. Խուան Ս. Ավիլա, Ֆիլիպ Կ. Բասի, Ռենն Ջ. Կաբրերա, Ռենատո Կապելլետի, Պոլ Դ. Մ. Քրիսչենսեն, Մեմյուել Վ. Քլարք, Ռոջերիո Գ. Ռ. Կրուզ, Ջորջ Ռ. Դոնալդսոն, Ինի Բ. Էկոնգ, Քրիստիան Հ. Ֆինգերլի, Քրեյգ Գ. Ֆիշեր, Ջերիլ Լ. Գարնս, Մ. Քեյթ Գիբբենս, Ալլեն Դ. Հեյնի, Ժուի Չենգ Ժուան, Ջորջ Մ. Քելի, Վոն Գ. Քիչ, Կացումի Կուսումե, Ջերման Լաբորիել, Ջ. Քրիստոֆեր Լանսինգ, Գուստավո Լոպես, Դմիտրի Վ. Մարչենկո, Պիտեր Ֆ. Մյուրս, Տ. Ջեկսոն Մյուսթելա, Հյուգո Մոնտոյա,





Վալենտին Ֆ. Նունեզ, Հի Կյուն Օհ, Ջեֆրի Ի. Օլսոն, Ռ. Ինգվար Օլսոն, Նորբերտ Կ. Օունյու, Ռոբերտ Ն. Փաքեր, Նաթանիել Ռ. Փայնե, Սիգար Ա. Պերես կրտ., Մայքլ Ջ. Ռիալ, Էդսոն Դ. Գ. Ռիբեյրո, Բրադ Կ. Ռայզենմեյ, Վոլթեր Ս. Մելդեն, Մոզարթ Բ. Մոարես, Կառլոս Մոլիս, Նորլանդ Սյուգա, Վերն Պ. Սթենֆիլ, Տ. Մարամա Տարատի, Կուգու Տաշիրո, Ռուբեն Դ. Տոբես, Օմար Վիլալոբոս, Ջեք Դ. Վարդ, Ալան Ջ. Վեբ, Ջերարդո Ջ. Վիլիելմո և Ջիմ Լ. Բայթ:

Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են միանալ մեզ շնորհակալություն հայտնելու նրանց գերազանց ծառայության համար, խնդրում եմ արտահայտել դա:

Առաջարկվում է՝ անկեղծ երախտագիտությամբ ազատել Եղբայրներ Դեյվիդ Լ. Բեքին, Լերի Մ. Գիբսոնին և Ռանդոլ Լ. Ռիդին որպես Երիտասարդ տղամարդկանց գերազույն նախագահություն: Մենք նմանապես ազատում ենք Երիտասարդ տղամարդկանց գերազույն խորհրդի բոլոր անդամներին:

Այս պահին նաև ազատում ենք Քույր Ջին Ա. Սթիվենսին որպես Երեխաների Միության գերազույն նախագահության առաջին խորհրդական և Քույր Չերիլ Ա. Էսփիլին որպես Երեխաների Միության

գերազույն նախագահության երկրորդ խորհրդական:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ շնորհակալություն հայտնելու այդ եղբայրներին և քույրերին նրանց հրաշալի ծառայության և նվիրվածության համար, խնդրում եմ արտահայտել դա:

Առաջարկվում է, որ հաստատենք որպես Յոթանասունի Առաջին Քվորումի անդամներ Քիմ Բ. Քլարկին, Վոն Գ. Քիչին, Ալլեն Դ. Հեննին, Հյուգո Մոնտոյային և Վերն Պ. Սթենֆիլին:

Բոլոր նրանք ովքեր կողմ են, խնդրում եմ արտահայտել դա:

Եթե կան դեմ, արտահայտեք նույն կերպ:

Առաջարկվում է, որ հաստատենք հետևյալ անձանց որպես նոր Տարածքային Յոթանասունականներ. Նելսոն Արդիլա, Խոսե Մ. Բատալլա, Լորենս Պ. Բլանկ, Բրադֆորդ Ս. Բովեն, Մարկ Ա. Բրազ, Մերջիո Լուի Կարբոնի, Արմանդո Կարեոն, Ս. Մարկ Քլեյ կրտ., Ջ. Դոմինիկ Դեկայ, Օսվալդո Ռ. Դիաս, Մայքլ Մ. Դոուլի, Մարկ Պ. Դուրիամ, Ջեյմս Ի. Էվանսոն, Պասկուալ Ֆ. Ֆորտունատո, Պատրիսիո Մ. Ջիոֆրա, Դենիել Պ. Հոլլ, Թորո Հայաշի, Փոլ Ֆ. Հինցե, Ջ. Կ. Չուկուեմեկա Իգլե, Մեունգ Հունգ Քու, Մինգ – Շուն Քուան, Ջոննի

Լ. Լեոտա, Կարլո Մ. Լեզանո, Ջոել Մարտինեզ, Ջ. Վաուն ՄաքՍթոր, Քայլ Մ. ՄաքՔեյ, Հելաման Մոնտելյո, Ա. Ֆաբիո Մոսկոսո, Մայքլ Բ. Մյուրեյ, Նորման Բ. Նեմրոու, Ս. Մարք Պալմեր, Ֆերդինանդ Պ. Պանգան, Խայրուս Կ. Պերես, Սթիվեն Մ. Փիթերսեն, Վոլֆգանգ Պից, Ջեյ Դ. Պիմենթել, Ջոն Բ. Փինգրի կրտ, Էդվարդ Բ. Փինթո կրտ., Էվան Ա. Շանուց, Բ. Դեյվիդ Սքոթ, Փոլ Հ. Սինքլեր, Բենջամին Թ. Սինջու, Բուրն Ֆ. Սթեյսի, Դեյվիդ Լ. Սթեյսիթոն, Կարլ Մ. Թիլեման, Վիլիամ Ռ. Թիթերա, Մեյջի Տոքուզավա, Կառլոս Ռ. Տոլեդո, Սիգար Ի. Վիլար, Խուան Պաբլո Վիլար, Դեյվիդ Թ. Ուորներ, Գերի Բ. Ուայդ և Ռոբերտ Բ. Վիլիամ:

Ովքեր կողմ են, խնդրում եմ արտահայտել:

Ովքեր դեմ են, եթե կան:

Առաջարկվում է, որ այժմ հաստատենք Չերիլ Ա. Էսփիլին որպես Երեխաների Միության գերազույն նախագահության առաջին խորհրդական և Մերի Լ. Դուրիամ որպես երկրորդ խորհրդական:

Նաև առաջարկվում է, որ հաստատենք Եղբայր Սթեֆան Վ. Օուենին որպես Երիտասարդ տղամարդկանց գերազույն նախագահ, Դուգլաս Դի Հոլմսին որպես առաջին խորհրդական և Մոնտե Ջոզեֆ Բրոն որպես երկրորդ խորհրդական:

Ովքեր կողմ են, խնդրում ենք արտահայտել:

Ովքեր դեմ են, կարող են նույն կերպ արտահայտել:

Նախագահ Մոնտե, քվերակությունը տեղի ունեցավ: Ովքեր դեմ քվեարկեցին որևէ առաջարկությանը, խնդրում ենք կապվել ձեր ցցերի նախագահների հետ: Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, շնորհակալություն ենք հայտնում ձեր հավատքի և Եկեղեցու ղեկավարների համար ասված ձեր աղոթքների համար:

Այժմ նոր Բարձրագույն Իշխանավորներին և նոր բարձրագույն օժանդակ նախագահությունների անդամներին հրավիրում ենք զբաղեցնել իրենց տեղերը բեմահարթակի վրա: ■

Եկեղեցու Աուդիոսի բաժանմունքի հաշվետվություն, 2014

Ներկայացրեց՝ Քեվին Ռ. Յերգենսենը
Գլխավոր տնօրեն, Եկեղեցու Աուդիոսի Բաժանմունք

*Ուղղված է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի
Եկեղեցու Առաջին Նախագահությանը*

Հարգելի Եղբայրներ. Ղեկավարվելով Վարդապետություն և Ուխտեր 120-րդ բաժնում տրված հայտնությամբ, Եկեղեցու ֆոնդերի ծախսերը թույլատրում է Տասանորդների տնօրինման խորհուրդը, որը կազմված է Առաջին Նախագահությունից, Տասներկու Առաքյալների Քվորումից և Նախագահող Եպիսկոպոսությունից: Եկեղեցու միավորները վճարում են ֆոնդերը ըստ հաստատված բյուջեների, քաղաքականությունների և ընթացակարգերի:

Եկեղեցու Աուդիոսի Բաժանմունքը, որի աշխատակազմը բաղկացած է որակավորված մասնագետներից և գործում է Եկեղեցու այլ բաժանմունքներից անկախ, պատասխանատվություն է կրում աուդիտներ կատարել՝ ստացված ավանդների, կատարված ծախսերի և Եկեղեցու ակտիվները պահպանելու վերաբերյալ ողջամիտ

հավաստիացում ապահովելու նպատակով:

Հիմնվելով կատարված աուդիտների վրա, Եկեղեցու Աուդիոսի Բաժանմունքն այն կարծիքին է, որ 2014 թվականին նյութական առումով մուտքերը, ստացված նվիրատվությունները, արված ծախսերը և Եկեղեցու ակտիվները գրանցվել և տնօրինվել են Եկեղեցու հաստատված բյուջեների, քաղաքականությունների և հաշվապահական գործառնությունների համաձայն: Եկեղեցին հետևում է այն գործելաոճին, որ ուսուցանում է իր անդամներին, որն է՝ ապրել բյուջեի սահմաններում, խուսափել պարտքերից և խնայել կարիքի ժամանակների համար:

Հարգանքով ներկայացրեց՝
Եկեղեցու Աուդիոսի Բաժանմունք
Քեվին Ռ. Յերգենսեն
Գլխավոր տնօրեն ■



Վիճակագրական հաշվետվություն, 2014

Ներկայացրեց Բրուք Պ. Շեյլսը
Առաջին Նախագահության քարտուղար

Առաջին Նախագահությունը հրապարակել է Եկեղեցու աճի և կարգավիճակի վերաբերյալ հետևյալ վիճակագրական հաշվետվությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Եկեղեցու միավորներ

Ցցեր	3114
Միսիսներ	406
Շրջաններ	561
Ծխեր և ճյուղեր	29621

Եկեղեցու անդամություն

Անդամների ընդհանուր թիվը	15372337
Նոր գրանցված երեխաներ	116409
Մկրտված նորադարձներ	296803

Միսիոներներ

Լիաժամկետ միսիոներներ	85147
Եկեղեցու ծառայության միսիոներներ	30404

Տաճարներ

2014թ. նվիրագործված տաճարներ (Ֆորթ Լաուդերդեյլ Ֆլորիդա, Գիլբերթ Արիզոնա և Ֆինքս Արիզոնա)	3
Վերանվիրագործված տաճարներ (Օգդեն Յուտա)	1
Տարեվերջի դրությամբ գործող տաճարներ	144



միայն Նա կարող էր պարզել: (տես 2 Նեփի 2.8): Եվ Փրկչի պաշտպանիչ աչալուրջ հսկողության մասին իմացությունը հնարավորություն է տալիս մարդկանց՝ զսպել իրենց սեփական վախերը:

Այդ ստույգ իմացությունը և Տիրոջ նկատմամբ հավատքը հնարավորություն են տալիս մեզ՝ զսպել մեր սեփական վախերը, որովհետև Հիսուս Քրիստոսը հաստատուն խաղաղության միակ աղբյուրն է: Նա հայտարարել է. «Մովորի ինձանից և լսիր իմ խոսքերը. քայլիր իմ Հոգու հեզությամբ, և դու խաղաղություն կունենաս ինձանում»: (Վևու 19.23):

Տերը նաև բացատրել է. «Բայց իմացեք, որ նա, ով արդարության գործեր է անում, պիտի ստանա իր վարձքը, այսինքն՝ խաղաղություն՝ այս աշխարհում և հավերժական կյանք՝ գալիք աշխարհում» (Վևու 59.23):

Հիսուսի նկատմամբ հավատն ու վստահությունը և պատրաստակամ ապավինումը Նրա արժանիքներին, գթասրտությանը և ողորմածությանը տանում են դեպի հույս՝ Նրա Քավության, Հարություն և հավերժական կյանքի միջոցով (տես Մորոնի 7.41): Այդպիսի հավատը և հույսը մեր կյանք են բերում գիտակցության քաղցր խաղաղություն, որին մենք

բոլորս ձգտում ենք: Քավության գործությունը հնարավոր է դարձնում ապաշխարությունը և ճնշում է մեղքի պատճառած հուսահատությունը. այն նաև ուժեղացնում է մեզ՝ տեսնելու, կատարելու և լավը դառնալու այն ուղիներով, որոնք մենք երբեք չէինք կարող իմանալ և կատարել՝ մեր սահմանափակ մահկանացու կարողությամբ: Իրոք, նվիրված հետևողը լինելու հրաշալի օրհնություններից մեկը «Աստծո խաղաղությունն է, որ ամեն մտքից վեր է» (Ֆիլիպպեցիս 4.7):

Խաղաղությունը, որ Հիսուսն է տալիս, մեզ թույլ է տալիս մահացությանը նայել հավերժության թանկարժեք հեռանկարի միջոցով և ապահովում է հոգևոր ամրություն (տես Կողոսացիս 1.23), որն օգնում է մեզ կայուն կիզակետում պահել մեր երկնային նպատակակետը: Ուստի, մենք կարող ենք օրհնված լինել՝ զսպելու մեր վախերը, որովհետև Նրա վարդապետությունը նպատակ և ուղղություն է ապահովում մեր կյանքի բոլոր կողմերի համար: Նրա արարողություններն ու ուխտերը ամրապնդում և սփռվում են թե՛ լավ, թե՛ վատ ժամանակներում: Իսկ Նրա քահանայության իշխանությունը երաշխիք է տալիս, որ ամենամեծ

նշանակություն ունեցող բաները կարող են գոյատևել բոլոր ժամանակներում և հավերժության մեջ:

Բայց արդյո՞ք մենք կարող ենք զսպել մեր վախերը, որոնք այնքան հեշտությամբ և հաճախակի պաշարում են մեզ՝ մեր ժամանակակից աշխարհում: Այս հարցի պատասխանը պարզորոշ «այո» է: Երեք հիմնական սկզբունքներ կենտրոնական դեր են կատարում այս օրհնությունները մեր կյանքում ստանալու համար. (1) նայիր Քրիստոսին, (2) կառուցիր Քրիստոսի հիմքի վրա, և (3) առաջ գնա՝ հավատքով առ Քրիստոս:

Նայիր Քրիստոսին

Խորհուրդը, որ Ալվան տվեց իր որդի Հելամանին, այսօր ճշգրտորեն կիրառելի է յուրաքանչյուրիս համար. «Եվ արդ, տես որ նայես առ Աստված և ապրես» (Ալմա 37.47): Մենք պետք է նայենք և մեր կենտրոնը հաստատուն կերպով ամրացնենք Փրկչի վրա՝ բոլոր ժամանակներում և բոլոր տեղերում:

Վերհիշեք, թե ինչպես Տիրոջ Առաքյալները նալի մեջ էին՝ ծովի մեջտեղում տարուբերվելով: Հիսուսը մոտեցավ նրանց՝ ջրի վրա քայլելով, բայց չճանաչելով Նրան՝ նրանք վախից աղաղակեցին:

«Հիսուսը խոսեց նորանց հետ և ասեց. Քաջ եղէք, ես եմ՝ մի վախենաք:

Եվ Պետրոսը պատասխան տվավ նորան և ասեց. Տէ՛ր, եթե դու ես, հրամայիր ինձ, որ ջրերի վերայով քեզ մոտ գամ:

«Նա էլ ասեց, Եկ» (Մատթեոս 14.27–29):

Հետո Պետրոսը ջրերի վրայով քայլեց դեպի Հիսուսը: Բայց երբ նա տեսավ քամին սաստիկ է, վախեցավ, սկսեց ընկղմվել և աղաղակեց.

«Բայց երբ նա տեսավ քամին սաստիկ է, վախեցավ», սկսեց ընկղմվել և աղաղակեց. «Տէ՛ր, փրկիր ինձ»:

«Եվ շուտով Հիսուսը իր ձեռքը մեկնեց՝ նորան բռնեց և ասեց նորան. Թերահավատ, ինչո՞ւ երկմտեցիր» (Մատթեոս 14.30–31):

Ես պատկերացնում եմ, թե ինչպես Պետրոսը եռանդունորեն և անմիջապես պատասխանեց Փրկչի հրավերին: Աչքերը Հիսուսին հառած՝ նա իջավ նավից և հրաշքով քայլեց ջրի վրայով: Միայն, երբ նրա հայացքը շեղվեց քամու և ալիքների պատճառով, նա իրոք վախեցավ և սկսեց ընկղմվել:

Մենք կարող ենք օրհնվել՝ զսպելու մեր վախերը և ուժեղացնելու մեր հավատքը, երբ մենք հետևում ենք Տիրոջ հրահանգներին. «Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. Մի կասկածեք, մի վախեցեք» (Վևու 6.36):

Կառուցեք Հիսուս Քրիստոսի վնձի վրա

Հելամանը հորդորեց իր որդիներ Նեփիին և Լեփիին. « Եվ, այժմ, իմ որդիներ՝ ը, հիշեք, հիշեք, որ դա մեր Քավչի վնձի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը. որ, երբ դնն առաջ ուղարկի իր զորեղ քամիները, այո, իր նետերը պտտահողմում, այո, երբ նրա ողջ կարկուտը և զորեղ փոթորիկը հարվածի ձեզ, այն զորություն չի ունենա ձեր վրա՝ քաշելու ձեզ վար՝ դեպի թշվառության ու անվերջ վայի անդունդը, այն վնձի շնորհիվ, որի վրա դուք կառուցված եք, որը հաստատուն հիմք է, հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն ընկնի» (Հելաման 5.12):

Արարողություններն ու ուխտերը այն շինանյութերն են, որոնք մենք



օգտագործում ենք՝ կառուցելու մեր կյանքը Հիսուս Քրիստոսի վնձի և Նրա Քավության վրա: Մենք ապահով կերպով կապվում ենք Փրկչի հետ, երբ արժանիորեն ստանում ենք արարողությունները և մտնում ուխտի մեջ, հավատարմորեն հիշում և մեծարում ենք այդ սուրբ պարտականությունները և անում ենք լավագույնը՝ ապրելու պարտավորություններին համապատասխան, որոնք ընդունել ենք: Իսկ այդ կապը հոգևոր ուժն ու կայունությունն է մեր կյանքի բոլոր ժամանակներում:

Մենք կարող ենք օրհնված լինել՝ զսպելու մեր վախերը, երբ մենք ամուր կերպով ենք հիմնում մեր ցանկություններն ու արարքները Փրկչի ամուր հիմքի վրա՝ մեր արարողությունների և ուխտերի միջոցով: **Առաջ գնացեք Հիսուսի հանդեպ հավատքով**

Նեփին հայտարարել է «Ուստի, դուք պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: Ուստի, եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք» (2 Նեփի 31.20):

Այս հատվածում նկարագրված կարգապահ դիմացկունությունը հոգևոր ըմբռնման և

խորաթափանցության, հաստատականության, համբերության և Աստծո ողորմածության արդյունք է: Հավատքի կիրառումը Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, Նրա կամքին և ժամանակին խոնարհաբար հնազանդվելը մեր կյանքերում, և Նրա ձեռքը բոլոր բաներում խոնարհաբար ճանաչելը տալիս է Աստծո արքայության խաղաղարար բաները, որոնք բերում են ուրախություն և հավերժական կյանք (տես Վևու 42.61): Նույնիսկ երբ մենք հանդիպենք դժվարությունների և բախվենք ապագայի անորոշությունների հետ, մենք կարող ենք մնալ ուրախ և վարել յաղաղ և հանդարտ կեանք, բոլոր աստուածապաշտությունով և սրբությունով (1 Տիմոթեոս 2.2):

Մենք կարող ենք օրհնվել՝ զսպելու մեր վախերը, երբ մենք ձեռք ենք բերում կայունություն, որը գալիս է սովորելուց և ավետարանի սկզբունքներով ապրելուց և վճռականորեն առաջ գնալով ուխտի ճանապարհով:

Տիրոջ Երկյուղը

Վախերը, որ մենք հաճախ զգում ենք, տարբերվում կամ կապված են այն բանի հետ, ինչը սուրբ գրություններում հաճախ նկարագրված է որպես «վախ աստծուց» (Եբրայեցիս 12.28) կամ «Տիրոջ Երկյուղը» (Յոբ 28.28, Առակաց 16.6, Եսայիա 11.2–3): Ի տարբերություն երկրային վախի, որն առաջացնում է տագնապ և անհանգստություն, աստծուց վախը խաղաղության, երաշխիքի և վստահության աղբյուր է:

Բայց ինչպես կարող է վախի հետ զուգորդվող որևէ բան լինել ուսուցողական կամ հոգևոր առումով օգտակար:

Արդար վախը, որ ես փորձում եմ նկարագրել, ընդգրկում է ակնածանքի, հարգանքի և պատկառանքի խորը զգացմունք Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ, (տես Մաղմոս 33.8, 96.4), հնազանդություն Նրա պատվիրաններին, (տես Երկրորդ Օրինաց 5.29, 8.6, 10.12, 13.4, Մաղմոս 112.1), և Նրա կողմից եկող Վերջին Դատաստանի և արդարության ակնկալիքը: Ուստի վախը աստծուց

առաջանում է Տեր Հիսուս Քրիստոսի աստվածային էության և առաքելության ճիշտ ըմբռնումից, մեր կամքը Նրա կամքին հնազանդեցնելու պատրաստակամությունից և իմացությունից, որ ամեն տղամարդու կին Դատաստանի Օրը պատասխանատու կլինեն իրենց սեփական մեղքերի համար (տես Վևու 101.78, Հավատո հանգանակներ 1.2):

Ինչպես սուրբ գրություններն են վկայում, Աստծուց վախը «իմաստութեան սկիզբն է (Առակաց 1.7), «իմաստութեան խրատը» (Առակաց 15.33), «գօրեղ վստահություն» (Առակաց 14.26), և «կենաց աղբիւր» (Առակաց 14.27):

Խնդրում եմ նշեք, որ Աստծուց վախը անխզելիորեն կապված է Վերջին Դատաստանի ըմբռնման և մեր ցանկությունների, մտքերի, խոսքերի և գործողությունների համար մեր անհատական պատասխանատվության հետ (տես Մոսիա 4.30): Տիրոջից վախը հարկադրական պատկերացում չէ այն մասին, թե մենք գալիս ենք դատվելու Նրա ներկայության մեջ: Ես չեմ հավատում, որ մենք ընդհանրապես կվախենանք Նրանից: Ընդհակառակը, դա Նրա ներկայության մեջ մեզ վերաբերող բաների հետ դեմ առ դեմ կանգնելու հեռանկարն է, ինչպես որ դրանք իրականում կան՝ և «կատարյալ գիտելիք» ունենալը (2 Նեփի 9.14, տես Ալմա 11.43) մեր ողջ կատարելագործման,

հավակնությունների և ինքնախաբեության մասին: Վերջի ի վերջո մենք կմնանք առանց պատրվակի:

Ամեն մարդ, ով ապրել է ու դեռ կապրի երկրի վրա «պիտի բերվի՝ կանգնելու Աստծո դատարանի առջև, որ դատվի նրա կողմից, համաձայն իր գործերի՝ լինեն դրանք բարի, թե լինեն դրանք չար» (Մոսիա 16.10): Եթե մեր ցանկությունները լինեն արդարության համար, և մեր գործերը՝ բարի, ապա դատաստանի պատնեջը հաճելի կլինի (տես Հակոբ 6.13, Ենովա 1.27, Մորոնի 10.34): Եվ վերջին օրը մենք «կհատուցվենք արդարությամբ» (Ալմա 41.6):

Ընդհակառակը, եթե մեր ցանկությունները լինեն չարակամ և մեր գործերը՝ չար, ապա դատաստանի պատնեջը կլինի սարսափի պատճառ: «Մենք չենք համարձակվի նայել վեր՝ առ Աստված, և մենք միանգամայն ուրախ կլինեինք, եթե կարողանայինք հրամայել ժայռերին ու լեռներին ընկնել մեզ վրա՝ թաքցնելու մեզ նրա ներկայությունից» (Ալմա 12.14): Եվ վերջին օրը մենք «կունենանք [մեր] հատուցումը չարից» (Ալմա 41.5):

Ինչպես եզրափակված է ժողովողում.

«Աստուածանից վախեցիր և նորա պատվիրանքները պահիր. որովհետև սա է ամեն բան մարդիս համար:

«Որովհետև Աստուած ամեն գործքը բերելու է դատաստան, ամեն ծածուկ բանի հետ՝ թե բարի թե չար»

(Ժողովող 12.13–14):

Միտելի եղբայրներ և քույրեր, աստծուց վախը փարատում է մահացու վախերը: Այն նույնիսկ ճնշում է տանջող մտահոգությունները, որ մենք երբեք չենք կարող հոգևոր առումով բավական լավը լինել և երբեք չենք համապատասխանի Տիրոջ պահանջներին և սպասելիքներին: Իրականում մենք չենք կարող բավական լավը լինել կամ համապատասխանել՝ ապավինելով բացառապես մեր կարողությանն ու գործողությանը: Միայն մեր գործերն ու ցանկությունները չեն փրկի և չեն կարող փրկել մեզ: «Այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել» (2 Նեփի 25.23), մենք կփրկվենք միայն ողորմածության և ներման միջոցով, որը հասանելի է Փրկչի անսահման և հավերժական գոհաբերության միջոցով (տես Ալմա 34.10, 14): Անշուշտ, «մենք հավատում ենք, որ Քրիստոսի Քավության շնորհիվ ողջ մարդկությունը կարող է փրկվել՝ հնազանդվելով Ավետարանի օրենքներին և արարողություններին» (Հավատո Հանգանակներ 1.3):

Աստծուց վախը Նրան սիրելն ու վստահելն է: Երբ մենք վախենում ենք Աստծուց ավելի իրական, մենք սիրում ենք նրան ավելի կատարելապես: Իսկ «կատարյալ սերը հեռացնում է ամեն վախ» (Մորոնի 8.16): Ես խոստանում եմ, որ աստծուց վախի պայծառ լույսը կցրի մահկանացու վախի մութ ստվերները (տես Վևու 50.25), երբ մենք նայում ենք Փրկչին, Նրա վեմի վրա ենք կառուցում մեր հիմքը և առաջ ենք գնում նրա ովստի ճանապարհով՝ նվիրված պարտականությամբ:

Վկայություն և խոստում

Ես սիրում և երկրպագում եմ Տիրոջը: Նրա գործությունն ու խաղաղությունն իրական են: Նա մեր Փրկիչն է, և ես վկայում եմ, որ նա ապրում է: Եվ նրա շնորհիվ մեր սրտերը չպետք է խռովվեն և վախենան (տես Հովհաննես 14.27), և մենք կօրհնվենք, որպեսզի զսպենք մեր վախերը: Ես այսպես վկայում եմ Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ և նվիրական անունով, ամեն: ■





Երեց Դ. Թոդ Զրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորում

ԻՆՉՈ՞Ւ ԱՄՈՒՍՆԱՆԱԿ, ԻՆՉՈ՞Ւ ԸՆՏՈՒՄ ՈՒՆԵՆԱԿ

Տղամարդու և կնոջ ամուսնության վրա հիմնված ընտանիքը լավագույնս պայմաններն է ստեղծում Աստծո ծրագրի իրականացման համար:

Լոնդոնում գտնվող հայտնի Վեսթմինսթեր Աբբայության Արևմտյան Մեծ Դռան վերևում գտնվում են 20-րդ դարի 10 քրիստոնյա նահատակների արձանները: Նրանց մեջ է Դիտրիխ Բոնհոֆերը՝ գերմանացի փայլուն աստվածաբանը՝ ծնված 1906թ.:¹ Բոնհոֆերը դարձավ նացիստական դիկտատուրայի և հրեաների և այլոց հանդեպ վերաբերմունքի մասին բարձրաձայնող քննադատ: Իր ակտիվ ընդդիմության համար նա ձերբակալվել և, ի վերջո, մահապատժի է ենթարկվել համակենտրոնացման ճամբարում: Բոնհոֆերի գրչին են պատկանում բազմաթիվ գործեր, և նրա ամենահայտնի գործերից մի քանիսը նամակներն են, որ համակիր պահակներն օգնել են նրան զաղտնի դուրս հանել բանտից, որոնք ավելի ուշ տպագրվել են *Նամակներ և թղթեր քանտից* վերնագրով:

Այդ նամակներից մեկն ուղղված էր նրա զարմուհուն՝ նախքան նրա ամուսնանալը: Այն ընդգրկում էր հետևյալ կարևոր մտքերը.

«Ամուսնությունն ավելին է, քան ձեր սերը միմյանց հանդեպ: . . . Միքելիս աշխարհում դուք միայն տեսնում եք ձեզ երկուսիդ, սակայն ամուսնության մեջ դուք կապ եք հանդիսանում սերունդների շղթայում, ում Աստված ուղարկում է զալու և մահանալու իր փառքի համար, և կանչում է իր արքայություն: Միքելիս դուք տեսնում եք միայն ձեր իսկ երջանկության հաճելի վիճակը, սակայն ամուսնանալիս դուք պարտավորություն եք ստանձնում աշխարհի և մարդկության հանդեպ: Ձեր սերը ձեր իսկ տիրապետության տակ է, սակայն ամուսնությունն ավելի է, քան ինչ-որ անձնական բան. դա կարգավիճակ է, պաշտոն: Ճիշտ ինչպես թագը, և ոչ թե լոկ թագավորելու ցանկությունն է, որ թագավոր է դարձնում, այնպես էլ ամուսնությունը, և ոչ թե լոկ միմյանց հանդեպ ունեցած սերն է, որ միավորում է ձեզ Աստծո և մարդկանց աչքում: . . . Այսպիսով, սերը զալիս է ձեզանից, իսկ ամուսնությունը՝ վերից, Աստծուց»:²

Ի՞նչ եղանակով է տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը մեծացնում միմյանց հանդեպ ունեցած սերը և նրանց անձնական երջանկությունը, երբ «պարտավորություն են ստանձնում աշխարհի և մարդկության հանդեպ»: Ի՞նչ առումով է այն զալիս «վերից, Աստծուց»: Սա հասկանալու համար մենք պետք է հետ զնանք դեպի սկիզբը:

Մարգարեները հայտնել են, որ մենք նախ գոյություն ենք ունեցել որպես բանականություններ, և որ Աստված մեզ ձև է տվել, կամ հոգևոր մարմին. Այդպես մենք դարձել ենք Նրա հոգևոր զավակները՝ երկնային ծնողների որդիներն ու դուստրերը:³ Հոգիների այս նախաերկրային գոյության ընթացքում եկել է ժամանակ, երբ Նրա ցանկությունն իրականացնելու համար, որ մենք «կարողանայինք արտոնություն ունենալ զարգանալու իր նման»,⁴ մեր երկնային Հայրը պատրաստեց հնարավորություն տվող ծրագիր: Մուրբ գրություններում տարբեր անուններ են տրվում դրան, ինչպես օրինակ «փրկության ծրագիր»,⁵ «երջանկության մեծ ծրագիր»,⁶ «փրկագնման ծրագիր»:⁷ Ծրագրի սկզբունքային երկու նպատակներն այս խոսքերով են մեկնաբանվել Աբրահամին.

«Եվ նրանց մեջ կանգնած էր մեկը, որն Աստծո նման էր, և նա ասաց նրանց, ովքեր իր հետ էին. Մենք կիջնենք ներքև, քանզի մի տարածություն կա այնտեղ, և մենք կվերցնենք այս նյութերից և կստեղծենք մի երկիր, որի վրա [այս հոգիները] կկարողանան բնակվել.

Եվ դրանով մենք նրանց կստուգենք, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց.

Եվ նրանց, ովքեր պահում են իրենց առաջին վիճակը, կտորվի ավելին. և նրանք, ովքեր կպահեն իրենց երկրորդ վիճակը, նրանց գլխին փառք կավելացվի հավիտյանս հավիտենից»:⁸

Երախտապարտ ենք մեր երկնային Հորը, որ մենք արդեն իսկ դարձել էինք հոգևոր էակներ: Այժմ Նա առաջարկում էր մեզ մի ուղի՝

այդ էությունը կատարելագործելու համար: Ֆիզիկական տարրի ավելացումը առանցքային դեր է խաղում գոյության լրիվության և փառքի համար, որն Աստված Ինքը վայելում է: Եթե նախատերկրային հոգևոր աշխարհում Աստծո հետ ապրելիս մենք համաձայնվեինք մասնակցել Նրա ծրագրին, կամ, այլ կերպ ասած, «պահեինք մեր առաջին վիճակը», մեզ «կտրվեր ավելին», այսինքն ֆիզիկական մարմին, ինչպես որ եկանք ապրելու երկրի վրա, որը Նա ստեղծեց մեզ համար:

Եթե հետո, մեր մահկանացու փորձառության ընթացքում, մենք ընտրեինք «անել այն ամենը, ինչ Տերը՝ [մեր] Աստվածը, կպատվիրեր [մեզ], մենք կպահեինք մեր «երկրորդ վիճակը»: Մա նշանակում է, որ մեր ընտրություններով մենք ցույց կտայինք Աստծուն (և ինքներս մեզ) մեր նվիրվածությունը և կարողությունը ապրելու նրա սելեստիալ օրենքով, մինչ կգտնվեինք Նրա ներկայությունից դուրս և ֆիզիկական մարմնում՝ դրա ողջ գոյությամբ, ցանկություններով և կրքերով: Կկարողանայինք մենք սանձել մարմինը, որպեսզի այն դառնար գործիք հոգու համար, այլ ոչ թե դրա տերը: Կարելի՞ էր, որ մեզ վստահվեին, թե ժամանակավորապես և թե հավերժության մեջ, աստվածային գոյությունները, ներառելով կյանք արարելու գոյությունը: Կկարողանայինք մենք ինքներս հաղթել չարին: Ովքեր կանեին դա, «նրանց գլխին փառք կավերացվեր հավիտյանս հավիտենից», այդ փառքի մի շատ կարևոր մասը լինելով հարություն առած, անմահ և փառավորված ֆիզիկական մարմինը:⁹ Կասկած չկա, որ մենք ցնծությամբ ընդունեցինք այս հոյակապ հնարավորությունները և խոստումները:¹⁰

Առնվազն չորս բան էր անհրաժեշտ այս աստվածային ծրագրի հաջողության համար:

Առաջինը աշխարհի Արարումն էր, որը լինելու էր մեր ապրելու վայրը: Ինչպիսին էլ լինեին արարման գործընթացի մանրամասները, մենք գիտենք, որ դա պատահականություն չէր, այլ այն առաջնորդվում էր Հայր Աստծո կողմից և իրականացվում



Հիսուս Քրիստոսի կողմից. «Ամեն ինչ նորանով եղաւ, եւ առանց նորան ոչինչ չեղաւ, ինչ որ եղաւ»:¹¹

Երկրորդը մահկանացության պայմանն էր: Ադամն ու Եվան ներկայացնում էին այն բոլոր մարդկանց, ովքեր ընտրել էին մասնակցելու Հոր երջանկության մեծ ծրագրին:¹² Նրանց Անկումը պայմաններ ստեղծեց, որոնք անհրաժեշտ էին մեր ֆիզիկական ծննդի և մահկանացու փորձառության և սովորելու համար՝ Աստծո ներկայությունից դուրս: Անկման հետ եկավ բարու և չարի իմացությունը և ընտրելու աստվածատուր գոյությունը:¹³ Ի վերջո, Անկումը առաջ բերեց ֆիզիկական մահը, որն անհրաժեշտ էր մեր մահկանացու կյանքը ժամանակավոր դարձնելու համար, որպեսզի մենք հավիտյան չապրեինք մեր մեղքերի մեջ:¹⁴

Երրորդը Անկումից փրկագնումն էր: Մենք տեսնում ենք մահվան դերը մեր Երկնային Հոր ծրագրում, սակայն այդ ծրագիրը կխափանվեր առանց մի միջոցի, որով մահը կհաղթվեր վերջում՝ թե ֆիզիկական և թե հոգևոր: Այսպիսով, Փրկիչը՝ Աստծո Միածին Որդին՝ Հիսուս Քրիստոսը, տառապեց և մահացավ, որպեսզի քավեր Ադամի և Եվայի օրինազանցությունը, դրանով իսկ ապահովվելով հարությունը և բոլոր մարդկանց անմահությունը: Եվ քանի որ մեզանից ոչ մեկը կատարելապես և շարունակաբար չէր հնազանդվելու ավետարանի օրենքին, Նրա Քավությունը նաև փրկում է մեզ մեր իսկ մեղքերից՝ ապաշխարության

պայմանով: Փրկչի փրկագնող շնորհով, որը ներում է ապահովում մեղքերից և հոգու մաքրագործում, մենք կարող ենք կրկին ծնվել հոգևորապես և հաշտվել Աստծո հետ: Մեր հոգևոր մահը՝ մեր բաժանումն Աստծուց, վերջ կունենա:¹⁵

Չորրորդը և վերջինը մեր ֆիզիկական ծննդի և Աստծո թագավորությունում հետագա հոգևոր վերածննդի պայմաններն էին: Որպեսզի Իր աշխատանքն առաջ գնար և մենք կարողանայինք վեհացման հասնել Իր հետ միասին,¹⁶ Աստված կարգեց, որ տղամարդիկ ու կանայք ամուսնանային և զավակներ ծնեին, այդպիսով իսկ Աստծո հետ միասին արարելով ֆիզիկական մարմիններ, որոնք մահկանացու փորձարկման բանալին են և կարևոր են Նրա հետ հավերժական փառքին արժանանալու համար: Նա նաև կարգեց, որ ծնողները պետք է ընտանիքներ կազմեն և մեծացնեն իրենց երեխաներին լույսի և ճշմարտության մեջ՝¹⁷ առաջնորդելով նրանց հուսալ Քրիստոսին: Հայրը պատվիրում է մեզ.

«Այս բաներն ազատ սովորեցրեք ձեր զավակներին՝ ասելով.

Քանի որ դուք աշխարհում ծնվել եք ջրով և արյունով և ոգով, որն արարել էմ ես, և այդպես փոշուց կենդանի հոգի դարձավ, ճիշտ այդպես, դուք պետք է վերստին ծնվեք երկնքի արքայության մեջ՝ ջրով և [Սուրբ] Հոգով, և մաքրվեք արյունով, այսինքն՝ իմ Միածնի արյունով, որպեսզի դուք սրբագործվեք բոլոր մեղքերից և վայելեք հավերժական կյանքի խոսքերն այս աշխարհում և

հավերժական կյանք՝ գալիք աշխարհում, այսինքն՝ անմահության փառքը»:¹⁸

Երբ իմանում ենք, թե ինչու ենք լքել մեր Երկնային Հոր ներկայությունը և թե ինչ է պահանջվում վերադառնալու և Նրա հետ վեհացվելու համար, շատ պարզ է դառնում, որ ոչ մի բան այս կյանքի մեր ժամանակահատվածում չի կարող ավելի կարևոր լինել, քան ֆիզիկական ծնունդը և հոգևոր վերածնունդը՝ հավերժական կյանքի երկու նախապայմանները: Դրանք իրականանում են, Դիտրիխ Բոնհոֆերի խոսքերով ասած, ամուսնության «պաշտոնում», երբ կատարում ենք մեր «պարտավորությունը . . . մարդկության հանդեպ», այս աստվածային հաստատությունում՝ տրված «վերից, Աստուծոց»: Դա «կապն է սերունդների շղթայում», այստեղ և հաջորդ կյանքում, դա երկնքի կարգն է:

Տղամարդու և կնոջ ամուսնության վրա հիմնված ընտանիքը լավագույն պայմաններն է ստեղծում Աստծո ծրագրի իրականացման համար. երեխաների ծննդի համար, ովքեր գալիս են Աստծո մոտից մաքուր ու անմեղ վիճակում, և սովորելու և նախապատրաստվելու միջավայրի համար, որի կարիքը նրանք կունենան հաջողակ մահկանացու կյանքի և գալիք աշխարհում հավերժական կյանքի համար: Նման ամուսնությունների վրա կառուցված մի քանի ընտանիքներն անգամ կենսական նշանակություն կարող են ունենալ հասարակության գոյատևման և ծաղկունքի համար: Այդ իսկ պատճառով համայնքները և ազգերը ընդհանուր առմամբ քաջայերում և պաշտպանում են ամուսնությունը և ընտանիքը՝ որպես արտոնյալ հաստատություններ: Դա երբեք չի վերաբերել միայն չափահասների սիրուն և երջանկությանը:

Հասարակական կարծիքը ամուսնության և ընտանիքների վերաբերյալ ըստ ամուսնացած տղամարդկանց և կանանց համակող է:¹⁹ Ուստի, «մենք զգուշացնում ենք, որ ընտանիքի քայքայումը անհատներին, համայնքներին և ազգերին կպատճառի այն դժբախտությունները,

որոնց մասին կանխագուշակել էին հին ու նոր մարգարեները»:²⁰ Մակայն մեր հայտարարությունները ամուսնության և ընտանիքի դերի մասին չեն հիմնվում հասարակական կարծիքի վրա, այլ հիմնվում են ճշմարտության վրա, որ դրանք Աստծո ստեղծագործություններն են: Դա Նա էր, որ սկզբում ստեղծեց Ադամին ու Եվային Իր պատկերով, արու և էգ, և միացրեց նրանց որպես ամուսին և կին, որ դառնան «մեկ մարմին» և շատանան ու լցնեն երկիրը:²¹ Յուրաքանչյուր անհատ ունի աստվածային տեսք, սակայն ամուսնու և կնոջ ամուսնական միության մեջ է, երբ նրանք մեկ են դառնում, որ մենք թերևս ձեռք ենք բերում Աստծո պատկերով՝ արու և էգ, ստեղծված լինելու ամենալիարժեք իմաստը: Ոչ մենք, ոչ էլ որևէ մահկանացու էակ չի կարող վերափոխել ամուսնության այս աստվածային կարգը: Դա մարդու կողմից հորինված կարգ չէ: Այսպիսի ամուսնությունը իսկապես «վերից, Աստուծոց» է տրված և երջանկության ծրագրի մաս է հանդիսանում, ճիշտ ինչպես Անկումը և Քավությունը:

Նախաերկրային աշխարհում Լյուցիֆերն ապստամբեց Աստծո և Նրա ծրագրի դեմ, և Նրա ընդդիմությունը զնայով ավելի է մեծանում: Նա պայքարում է ամուսնությունների և ընտանիքներ կազմելու դեմ, և որտեղ ամուսնություններն ու ընտանիքներն արդեն գոյություն ունեն, նա անում է ամեն բան դրանք կործանելու համար: Նա հարձակում է գործում ամեն բանի վրա, ինչը սրբազան է և վերաբերում է մարդկային գրավչությանը, դուրս մղելով այն ամուսնության ենթատեքստից անվերջ թվացող անբարո մտքերով և գործողություններով: Նա ձգտում է համոզել տղամարդկանց ու կանանց, որ ամուսնության և ընտանիքի առաջնահերթությունը կարող է անտեսվել կամ կարող են հրաժարվել դրանցից, կամ գոնե դրանք իրենց տեղը զիջեն կարիերային, այլ նվաճումներին, կամ ինքնակայացման և անձնական ազատության փնտրտություններին: Հակառակորդն անշուշտ ուրախանում է,

երբ ծնողները թերանում են ուսուցանել իրենց երեխաներին հավատք ունենալ առ Քրիստոսը և վերածնվել հոգևորապես: Եղբայրներ և քույրեր, կան շատ լավ բաներ, շատ կարևոր բաներ, սակայն մի քանիսն են միանգամայն անհրաժեշտ:

Ամուսնության և ընտանիքի վերաբերյալ հիմնական ճշմարտությունները հայտարարելը չի նշանակում անտեսել կամ թերագնահատել նրանց գոհաբերությունները և հաջողությունները, ում համար կատարելությունը ներկայիս իրականությունը չէ: Ձեզանից ոմանք զրկված են ամուսնության օրհնությունից բազմաթիվ պատճառներով, ինչպիսին են օրինակ կենսունակ հեռանկարների բացակայությունը, նույն սեռի հանդեպ համակրանքը, ֆիզիկական կամ մտավոր խնդիրները, կամ պարզապես ձախողվելու վախը, որը առնվազն մի պահ ստվերում է թողնում հավատը: Կամ միգուցե դուք ամուսնացել եք, սակայն այդ ամուսնությանը վերջ է դրվել, և դուք մենակ եք թողնվել հաղթահարելու այն, ինչը երկուսը միասին հազիվ են կարողանում գլուխ բերել: Ձեզանից ոմանք, ովքեր ամուսնացած են, չեն կարողանում երեխաներ ունենալ՝ անկախ մեծ ցանկությունից ու աղերսանքի աղոթքներից:

Այնուամենայնիվ, յուրաքանչյուրը պարզևներ ունի, յուրաքանչյուրն ունի տաղանդներ, յուրաքանչյուրը կարող է նպաստել աստվածային ծրագրի իրականացմանը յուրաքանչյուր սերնդում: Շատ լավ բաների, շատ խիստ անհրաժեշտ բաների, նույնիսկ երբեմն ամեն բանի, որ անհրաժեշտ է այս պահին, կարելի է հասնել ոչ կատարյալ պայմաններում: Ձեզանից շատերն անում են իրենց լավագույնը: Եվ երբ դուք, ովքեր տանում են մահկանացու կյանքի ամենաձանր բեռները, կանգնում եք պաշտպանելու Աստծո ծրագիրը, որպեսզի Նրա զավակները վեհացման հասնեն, մենք բոլորս պատրաստ ենք վճռական քայլերով առաջ ընթանալու: Մենք վստահաբար վկայում ենք, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը նախատեսված էր և, ի վերջո, կփոխհատուցի բոլոր

նրանց գրկանքներն ու կորուստները, ուժքեր դիմում են Նրան: Ոչ ռքի համար չի նախատեսված, որ պետք է ստանա ավելի քիչ, քան ամենը, որ Հայրն ունի Իր գավակների համար:

Մի երիտասարդ մայր վերջերս կիսվեց ինձ հետ իրեն անհանգստացնող մի հարցով, որ ինքն իրեն անհամապատասխան էր զգում այս ամենաբարձր կոչումներում: Ես զգացի, որ նրան մտահոգող խնդիրները փոքր էին և նա կարիք չունեւր մտահոգվելու: Նա ամեն բան լավ էր անում: Մակայն ես գիտեի, որ նա ցանկանում էր միայն գոհացնել Աստծուն և արժանի լինել Նրա վստահությանը: Ես ասացի հավաստիացնող խոսքեր և իմ սրտում աղերսեցի, որ Աստված՝ նրա Երկնային Հայրը, միխթարեր նրան Իր սիրով և Իր հավանության վկայությամբ, երբ նա կատարեր Իր աշխատանքը:

Դա է իմ աղոթքը մեզ բոլորիս համար այսօր: Թող որ մեզանից յուրաքանչյուրն արժանանա Նրա հավանությանը: Թող որ ամուսնությունները և ընտանիքները բարգավաճեն, և անկախ այն բանից, թե մեր ապագան լի է այս օրհնություններով մահկանացու կյանքում, թե ոչ, թող որ Տիրոջ շնորհը երջանկություն բերի այժմ և հավատք, որ խոստումներն անկասկած կիրականանան: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Kevin Rudd, "Faith in Politics," *The Monthly*, Oct. 2006, themonthly.com.au/monthly-essays-kevin-rudd-faith-politics-300.
2. Dietrich Bonhoeffer, *Letters and Papers from Prison*, ed. Eberhard Bethge (1953), 42-43.
3. Տես, օրինակ, Մաղմու ԶԲ.6, 4որ. ԺԷ.29, Եբրայեցիս ԺԲ.9, Վարդապետություն և Ուխտեր 93.29, 33, Մովսես 6.51, Աբրահամ 3.22: Մարգարե Ջոզեֆ Միխթը տվել է հետևյալ մանրամասները. «Մարդու առաջնային սկզբունքներն ինքնագոյակցությունն է Աստծու հետ: Աստված ինքը, գտնվելով ոգիների [կամ բանականությունների] և փառքի մեջ, քանի որ նա ավելի խելացի էր, պատշաճ համարեց օրենքներ սահմանել, որով մնացածը կկարողանային արտոնություն ունենալ իր նման զարգանալու: . . . Նա գործություն ունի օրենքներ սահմանել, որպեսզի ուսուցանի ավելի թույլ բանականություններին, որպեսզի նրանք իր հետ միասին վեհացում ունենան» (*Եկեղեցու Նախագահների ուսումնական Ջոզեֆ Միխթ* [2007], 223).



4. *Ուսումնական. Ջոզեֆ Միխթ*, 223:
5. Ավմա 24.14:
6. Ավմա 42.8:
7. Ավմա 12.25, տես նաև հատվածներ 26-33:
8. Աբրահամ 3.24-26:
9. Մարգարե Ջոզեֆ Միխթը կատարել է հետևյալ ամփոփիչ հայտարարությունը. «Նախքան աշխարհի հիմնադրումը Աստծո նպատակն է եղել, որ մենք տաղավար [մարմին] ձեռք բերենք, որպեսզի հավատարմության միջոցով հաղթենք և այդպես հարություն ստանանք մեռելներից, և այդ ձևով ձեռք բերենք փառք, պատիվ, գործություն և տիրապետություն»: Մարգարեն նաև հայտարարել է. «Մենք եկել ենք այս երկիր, որպեսզի մարմին ստանանք և այն մաքուր ներկայացնենք Աստծուն սելեստիալ արքայությունում: Երջանկության մեծ սկզբունքը մարմին ունենալն է: Դեռ մարմին չունի, և դրանում է նրա դատապարտությունը: Նրան հաճելի է, երբ կարողանում է տիրապետել մարդկանց տաղավարին, և երբ Փրկիչը նրան դուրս հանեց, նա խնդրեց, որ գնա խոզերի նախրին, ցույց տալով, որ նախընտրում է խոզի մարմին ունենալ, քան մարմին չունենալ: Բոլոր մարդիկ, ուժքեր մարմին ունեն, ավելի շատ գործություն ունեն, քան նրանք, ուժքեր չունեն մարմին» (*Ուսումնական. Ջոզեֆ Միխթ*, 224-225):
10. Հոբ ԼԸ.7:
11. Հովհաննես Ա.3, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 76.23-24:
12. Տես Ա Կորնթոսցիս ԺԵ.21-22, 2 Նեփի 2.25:
13. Տես 2 Նեփի 2.15-18, Ավմա 12.24, Վարդապետություն և Ուխտեր 29.39, Մովսես 4.3: Ջոզեֆ Միխթն ասել է. «Բոլոր մարդիկ կամքի ազատության իրավունք ունեն, քանի որ Աստված այդպես է կարգել այն: Նա մարդկանց տվել է բարոյական ազատություն և նրանց գործություն է տվել ընտրելու բարին կամ չարը. փնտրելու այն, ինչ բարի է, հետևելով սրբության ճանապարհին այս կյանքում, որը բերում է մտքի յաղաղություն և ուրախություն Մուրբ Հոգու հետ այստեղ, և ուրախության և երջանկության լիություն Նրա աջ կողմում՝ ապագայում. կամ էլ հետևել չար ուղուն, շարունակելով մեղքի և ապստամբության մեջ Աստծո դեմ, այդպիսով դատապարտություն բերելով իրենց հոգիներին այս աշխարհում և հավերժական կորուստ գալիք

աշխարհում»: Մարգարեն նաև նշել է. «Աստանան չի կարող գայթակղել մեզ իր հրապարանքներով, մինչև որ մենք մեր սրտում չզիջենք և չենթարկվենք: Մենք այնպես ենք կազմավորված, որ կարող ենք դիմակայել դևին. եթե մենք այդպես չլինեինք կազմավորված, մենք ազատ չէինք լինի ընտրելու» (*Ուսումնական. Ջոզեֆ Միխթ*, 226-227):

14. Տես ՕՆնդոց 9.22-24, Ավմա 42.2-6, Մովսես 4.28-31:
15. Նույնիսկ նրանք, ուժքեր չեն ապաշխարում, փրկվում են հոգևոր մահից Քավության միջոցով այն առումով, որ նրանք կրկին գալիս են Աստծո ներկայության մեջ Վերջին Դատաստանի համար (տես Հեբրեան 14.17, 3 Նեփի 27.14-15):
16. *Ուսումնական. Ջոզեֆ Միխթ*, 223:
17. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.36-40:
18. Մովսես 6.58-59:
19. Մարդիկ կարող են հավատարիմ լինել միայնաց հանդեպ արտամուսնական կապերի ժամանակ, և երեխաներ կարող են ծնվել ու մեծանալ, երբեմն բավականին հաջող կերպով՝ ի տարբերություն ամուսնացած երկու ծնողներով ընտանիքի միջավայրի: Մակայն, ընդհանուր առմամբ և մեծամասամբ զերակշռող են այն փաստերը, որ ամուսնությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում հասարակության համար և երեխաներն ավելի մեծ արդյունքների են հասնում այն ընտանիքներում, որտեղ առկա են ամուսնացած տղամարդ և կին: Մյուս կողմից, սոցիալական և տնտեսական վնասներն այն երևույթի, որը մի մեկնաբան կոչել է «փախուստն ընտանիքից, որը մեծ տարածում է գտել», մեծապես ազդում է հասարակության վրա: Նիկոլաս Էբերստադթը ուսումնասիրություններ է կատարել աշխարհով մեկ ամուսնությունների և ծնելիություն նվազեցման տվյալների, առանց հոր ընտանիքների և ամուսնալուծությունների միտումների հետ կապված և նշել է. «Վնասակար ազդեցությունը, որը բազմաթիվ երեխաներ ունենում են անբարենպաստ պայմանների պատճառով, որ առաջ են գալիս ընտանիքից փախչելու արդյունքում, արդեն իսկ բավականաչափ պարզ է: Նմանապես կործանարար դեր են խաղում ամուսնալուծությունները և արտամուսնական կապերից երեխաներ ունենալը, որոնք ավելի են սրում եկամուտների անհավասարությունը և բարեկեցության բացթողումները, ողջ հասարակության համար, սակայն հատկապես երեխաների համար: Այդ, երեխաները արագ են վերականգնվում, և այն: Մակայն փախուստն ընտանիքից ավելի հաճախ տեղի է ունենում խոցելի երիտասարդների դեպքում: Այդ նույն փախուստը նաև աններելի հետևանքներ է ունենում խոցելի չափազանցների դեպքում»: (Տես "The Global Flight from the Family," *Wall Street Journal*, Feb. 21, 2015, wsj.com/articles/nicholas-eberstadt-the-global-flight-from-the-family-1424476179):
20. «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին», *Լիստինա*, նոյ.2010, 129:
21. Տես ՕՆնդոց Ա.26-28, Բ.7, 18, 21-24, Գ.20, Մովսես 2.26-28, 3.7-8, 18, 20-24, 4.2



Երեց Ուիլֆորդ Վ. Ասդերսոն
Յոթանաստուակյան

Ավետարանի Երաժշտությունը

Ավետարանի երաժշտությունը ուրախալի հոգևոր զգացողություն է, որը գալիս է Մուրֆ Հոգուց: Այն բերում է սրտի փոփոխություն:

Տարիներ առաջ ես ճաղիոյով հարցազրույց էի լսում մի երիտասարդ բժշկի հետ, ով աշխատում էր հիվանդանոցում Նավաջոյի ազգաբնակչության մեջ: Նա պատմեց մի փորձառության մասին, որը տեղի էր ունեցել իր հետ մի գիշեր, երբ երկար հյուսած մազերով մի բնիկ ամերիկացի տղամարդ եկել էր շտապ օգնության սենյակ: Երիտասարդ բժիշկը վերցրեց իր պլանշետը, մոտեցավ տարեց մարդուն և հարցրեց. «Ինչպե՞ս կարող եմ օգնել ձեզ?» Մարդն ուղիղ առաջ նայեց և ոչինչ չասաց: Բժիշկն ինչ որ տեղ անհամբեր զգալով, կրկին փորձեց: «Ես չեմ կարող ձեզ օգնել, եթե դուք ինձ հետ չխոսեք», - ասաց նա: «Ասեք ինձ, թե ինչո՞ւ եք եկել հիվանդանոց»:

Այդ ժամանակ տարեց մարդը նայելով նրան ասաց. «Դուք պարո՞ւմ եք»: Երբ երիտասարդ բժիշկը մտածեց այդ տարօրինակ հարցի մասին, նրա գլխում միտք ծագեց, որ միգուցե իր այցելուն ցեղախմբի բուժակն էր, ով ըստ հնադարյան ցեղական բժշկության ավանդույթների ձգտում էր ավելի շուտ բժշկել հիվանդներին՝ երգի և պարի միջոցով, քան դեղատոմսեր դուրս գրելով:

«Ոչ,- ասաց բժիշկը,- ես չեմ պարում: Իսկ դուք պարո՞ւմ եք»: Տարեց մարդը գլխով հաստատեց, այո: Այնուհետև բժիշկը հարցրեց. «Կարող ե՞ք ինձ սովորեցնել պարել»:

Տարեց մարդու պատասխանը բազում տարիներ ստիպել է ինձ շատ մտածել: «Ես կարող եմ սովորեցնել ձեզ պարել, - ասաց նա,- բայց դուք պետք է լսեք երաժշտությունը»:

Երբեմն մեր տներում, մենք հաջողությամբ ուսուցանում ենք պարային քայլերը, բայց այնքան



էլ հաջողակ չենք ընտանիքի անդամներին օգնելիս լսելու երաժշտությունը: Եվ այն, ինչ տարեց բուժակը լավ գիտեր, դժվար է պարել առանց երաժշտության: Առանց երաժշտության պարելը անշնորհք է և տհաճ, նույնիսկ, անհարմար: Դուք երբևիցե փորձե՞լ եք դա:

Վարդապետություն և Ուլստեր բաժին 8-ում, Տերն ուսուցանեց Ջոզեֆ Մմիթին և Օլիվեր Քատլերիին. «Այո, ահա, ես կասեմ քեզ քո մտքում և քո սրտում, Մուրֆ Հոգու, որը կիջնի քո վրա և որը կմնա քո սրտում» (հատված 2): Մենք սովորում ենք պարային քայլերը մեր մտքում, բայց մենք լսում ենք երաժշտությունը մեր սրտով: Ավետարանի պարային քայլերն այն բաներն են, որոնք մենք անում ենք, ավետարանի երաժշտությունը ուրախալի հոգևոր զգացողություն է, որը գալիս է Մուրֆ Հոգուց: Այն բերում է սրտի փոփոխություն և բոլոր արդար ցանկությունների աղբյուրն է: Պարային քայլերը կատարելը պահանջում է կարգապահություն, բայց պարի ուրախությունը կզգացվի միայն այն ժամանակ, երբ մենք սկսենք լսել երաժշտությունը:

Կան ոմանք, ովքեր ծաղրում են Եկեղեցու անդամներին այն բաների համար, որ մենք անում ենք: Դա հասկանալի է: Նրանք, ովքեր պարում են, հաճախ տարօրինակ կամ անճոռնի են թվում, կամ օգտագործելով մի սուրբգրքյան տերմին «յուրահատուկ» (Ս Պետրոս Բ.9) նրանց համար, ովքեր չեն կարողանում լսել երաժշտությունը: Դուք երբևէ կանգնեցրե՞լ եք ձեր մեքենան լուսակրի մոտ մեկ ուրիշ մեքենայի կողքին, որտեղ վարորդը պարում էր և երգում իր ողջ թոքերի ուժով, բայց դուք չէիք կարողանում լսել ոչ մի ձայն, որովհետև ձեր պատուհանները փակ էին: Միթե՞ նա մի քիչ յուրահատուկ չէր թվում: Եթե մեր երեխաները սովորում են պարային քայլերը, առանց սովորելու լսել և զգալ ավետարանի գեղեցիկ երաժշտությունը, նրանք ժամանակի ընթացքում կսկսեն անհարմար զգալ պարելիս, կամ կդադարեն պարելը կամ գրեթե նույնքան վատ, կշարունակեն պարելը՝ միայն այն պատճառով, որ կզգան ճնշում

ուրիշների կողմից, ովքեր պարում են նրանց շրջապատում:

Մարտահրավերը մեր բոլորիս համար, ովքեր ձգտում ենք ուսուցանել ավետարանը, ծրագիրն ընդարձակելն է՝ ուղղակի պարային քայլերից այն կողմ: Մեր երեխաների երջանկությունը կախված է ավետարանի գեղեցիկ երաժշտությունը լսելու և սիրելու նրանց ունակությունից: Ինչպե՞ս անենք դա:

Առաջինը, մենք պետք է պահենք մեր կյանքը համահունչ հոգևոր ճիշտ հաճախականության հետ: Ետ նայելով հին օրերին՝ նախքան թվայնացման դարը, մենք գտնում էինք մեր սիրելի ռադիոկայանը՝ ուշադրությամբ պատելով ռադիոկայա պտուտակը մինչև այն կատարելապես բռնում էր կայանի հաճախականության հետ: Երբ մոտենում էինք համարին լսվում էր միայն ռադիոյի խշուրտի ձայնը: Բայց, երբ մենք ի վերջո բռնում էինք ճիշտ ալիքը, կարողանում էինք հասկանալ լսել մեր սիրելի երաժշտությունը: Մեր կյանքում մենք պետք է համապատասխանենք ճիշտ հաճախականության հետ, որպեսզի լսենք Հոգու երաժշտությունը:

Երբ մկրտությունից հետո, մենք ստանում ենք Սուրբ Հոգու պարգևը, մենք լցվում ենք երկնային երաժշտությամբ, որն ուղեկցում է դարձին: Մեր սրտերը փոխվում են և մենք «այլևս հակում չենք ունենում չարիք գործելու, այլ անընդհատ բարիք անելու» (Մոսիա 5.2): Բայց Հոգին չի հանդուրժի անբարյացակամություն կամ հպարտություն կամ էլ նախանձություն: Եթե մենք կորցնում ենք այդ նուրբ ազդեցությունը մեր կյանքում, ավետարանի հարուստ մեղեդիները կարող են արագորեն դառնալ աններդաշնակ և կարող են ի վերջո լռեցվել: Այժմ ուղղել է սուր հարց. «Եթե դուք տրամադրված եք եղել երգելու քավիչ սիրո երգը, ես կկամենայի հարցնել, այժմ դուք ունե՞ք այդպիսի զգացում: (Այժմ 5.26):

Ծնողներ, եթե մեր կյանքը համահունչ չէ ավետարանի երաժշտության հետ, մենք պետք է դա համահունչ դարձնենք: Ինչպես Նախագահ Թոմաս Ս. Մոնտոնն է ուսուցանել մեզ անցած տարվա հոկտեմբերին,



մենք պետք է խորհենք մեր ոտքերի արահետի մասին (տես “Ponder the Path of Thy Feet,” *L'Espresso*, նոյ. 2014, 86–88): Մենք գիտենք, թե ինչպես դա անենք: Մենք պետք է քայլենք նույն արահետում, որով մենք քայլել ենք, երբ առաջին անգամ լսեցինք ավետարանի երաժշտության առաջին երկնային մեղեդիները: Մենք հավատք ենք գործադրում Քրիստոսի հանդեպ, ապաշխարում ենք և վերցնում հաղորդությունը, մենք ավելի ուժեղ ենք զգում Սուրբ Հոգու ազդեցությունը և ավետարանի երաժշտությունը կրկին սկսում է հնչել մեր կյանքում:

Երկրորդը, երբ մենք ինքնուրույն կարողանում ենք լսել երաժշտությունը, մենք պետք է փորձենք մեր լավագույնը՝ կատարելու այն մեր տներում: Այն մի բան է, որը չի կարելի ստիպել կամ հարկադրել: «Ոչ մի գործություն կամ ազդեցություն չի կարող և չպետք է պահպանվի քահանայության շնորհիվ», կամ հայր կամ մայր կամ ամենամեծը կամ ամենաբարձրը լինելու շնորհիվ, «միայն համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ, . . . անկեղծ սիրով, [և] բարությանմբ» (ՎևՈՒ 121.41–42):

Ինչո՞ւ են այս հատկանիշները տանում դեպի գործության և ազդեցության աճի տանը: Որովհետև դրանք հատկանիշներ են, որոնք հրավիրում են Սուրբ Հոգու Ոգին: Դրանք հատկանիշներ են, որոնք համահունչ են դարձնում մեր

սրտերը ավետարանի երաժշտության հետ: Երբ դրանք ներկա են, պարային քայլերը կկատարվեն ավելի բնականորեն և ուրախությամբ ընտանիքի բոլոր պարողների կողմից, առանց սպառնալիքների կամ վախի կամ հարկադրանքի անհրաժեշտության:

Երբ մեր երեխաները փոքր են, մենք կարող ենք նրանց համար անկեղծ սիրով օրորոցային երգել, և երբ նրանք համառում են և հրաժարվում են գնալ քնելու գիշերը, մենք պետք է երգենք համբերատարության օրորոցայինը: Երբ նրանք դեռահասներ են, մենք կարող ենք անջատել վիճաբանությունների և սպառնալիքների աղմուկ աղաղակը և կատարենք համոզման գեղեցիկ երաժշտությունը և գուցե երգենք երկայնամտության օրորոցայինի երկրորդ հատվածը: Ծնողները կարող են կատարել հիանալի ներդաշնակությամբ՝ մեղմության և հեզության հատկանիշների տանդեմը: Մենք կարող ենք հրավիրել մեր երեխաներին երգել մեզ հետ միաձայն, երբ մենք գործադրում ենք բարություն մերձավորի հանդեպ, ով կարիքի մեջ է:

Դա միանգամից չի գա: Ինչպես ամեն մի կայացած երաժիշտ գիտի, դա պահանջում է ջանասեր վարժանք՝ գեղեցիկ երաժշտություն կատարելու համար: Եթե երաժշտություն ստեղծելու վաղ ջանքերը թվում են աններդաշնակ և անկապ, հիշեք, որ աններդաշնակությունը չի կարող ուղղվել քննադատության միջոցով:

Աններդաշնակությունը տանը նման է սենյակում խավարին: Քիչ օգուտ կա խավարին կշտամբելուց: Մենք պետք է խավարը *տեղսիսան* անենք՝ ներկայացնելով լույսը:

Այսպիսով, եթե բասը ձեր ըմտանեկան երգչախմբում խիստ բարձր է և գերհոգնեցնող, կամ եթե լարային բաժինը ձեր ընտանեկան նվագախմբում մի քիչ շատ է ճշան կամ մի քիչ սուր, կամ, եթե այդ պոռթկուն փոքր ֆլեյտաները տոնից ընկած են կամ անվերահսկելի, եղեք համբերատար: Եթե դուք չեք լսում ավետարանի երաժշտությունը ձեր տանը, խնդրում եմ հիշեք այս երկու խոսքը. *շարունակեք գործել*: Աստծո օգնությամբ կգա օրը, երբ ավետարանի երաժշտությունը կլցնի ձեր տունն անասելի ուրախությամբ:

Նույնիսկ, երբ կատարումը լավ է, երաժշտությունը չի լուծի բոլոր մեր խնդիրները: Կլինեն դեռ կրեսենդոներ և դեկրեսենդոներ մեր կյանքում, ստակատոներ և լեգատոներ: Այսպիսին է կյանքի բնույթը երկիր մոլորակի վրա:

Բայց, երբ մենք ավելացնենք երաժշտություն պարային քայլերի վրա, երբեմնի ամուսնության և ընտանեկան կյանքի բարդ ռիթմերը միտում կունենան շարժվելու դեպի ներդաշնակ հավասարակշռություն: Նույնիսկ մեր ամենադժվար մարտահրավերները կավելացնեն հարուստ տխրաձայն երանգներ և հուզական մոտիվներ: Քահանայության վարդապետությունները կսկսեն իջնել մեր հոգիների վրա, ինչպես ցողը երկնքից: Սուրբ Հոգին կլինի մեր մշտական ուղեկիցը և մեր գավազանը՝ գործության և ազդեցության հստակ վկայակոչումը, կլինի ճշմարտության և արդարության անփոփոխ գավազան: Եվ մեր տիրապետությունը կլինի հավիտենական տիրապետություն: Եվ առանց հարկադրանքի կհոսի դեպի մեզ հավիտյանս հավիտենից (տես Վևու 121.45-46):

Թող որ այդպես լինի մեզանից յուրաքանչյուրի կյանքում և մեզանից յուրաքանչյուրի տներում՝ իմ աղոթքն է Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Երեց Դեյլ Գ. Ունլանդ
Յոթանասունական

Վերջին Օրերի Սրբերը շարունակում են ճիգ թափել

Երբ մենք փորձում ենք, համառորեն շարունակում և օգնում ուրիշներին էլ անել նույնը, մենք ճշմարիտ Վերջին Օրերի Սրբեր ենք:

Ի մ սիրելի եղբայրներ և քույրեր, 2013 թվականի դեկտեմբերին աշխարհը սգում էր Նելսոն Մանդելայի մահը: Հակաապարտելիցյան պայքարում նրա դերի համար 27 տարվա բանտարկությունից հետո, Մանդելան առաջին դեմոկրատական ուղիով ընտրված նախագահն էր Հարավային Աֆրիկայում: Ուշագրավ էր նրա ներումը նրանց, ովքեր իրեն բանտարկել էին: Նա համատարած բռնության օրինակները և գովասանք ստացավ:¹ Մանդելան հաճախ էր հրաժարվում մրցանակներից՝ ասելով. «Ես սուրբ չեմ, այսինքն, միևնչևիդ չմտածեք, որ սուրբն այն մեղսավորն է, ով շարունակում է ճիգ թափելը»:²

Այս հայտարարությունը, որ. «սուրբն այն մեղսավորն է, ով շարունակում է ճիգ թափելը» - պետք է հավաստիացնի և քաջալերի Եկեղեցու անդամներին: Չնայած մեզ կոչում են «Վերջին Օրերի Սրբեր», մենք երբեմն ցնցվում ենք այդ վկայակոչումից: «Սրբեր» բառը սովորաբար օգտագործվում է նկարագրելու

նրանց, ովքեր հասել են սրբության բարձր մակարդակի կամ նույնիսկ կատարելության: Իսկ մենք բացարձակապես լավ գիտենք, որ մենք կատարյալ չենք:

Չնայած մեր կրոնը, մեզ իսկապես սովորեցնում է, որ մենք կարող ենք կատարելագործվել՝ բազմիցս և անընդհատ «ամբողջապես ապավինելով» Քրիստոսի վարդապետությանը, գործադրելով հավատք Նրա հանդեպ, ապաշխարելով, ճաշակելով հաղորդությունից՝ նորոգելով մկրտության ուխտերն ու օրհնությունները և ետ պահանջելով Սուրբ Հոգին, որպես մշտական ուղեկից ավելի մեծ չափով: Երբ այդպես ենք անում, մենք ավելի ենք նմանվում Քրիստոսին և կարողանում ենք համբերել մինչև վերջ, այն բոլորով հանդերձ, ինչ հանգեցնում է դրան:³ Այլ խոսքով ասած, Աստված ավելի շատ հոգ է տանում այն մասին, թե ով ենք մենք, և թե ով ենք մենք դառնում, քան այն մասին, թե մենք ով էինք մի ժամանակ:⁴ Նա հոգ է տանում, որ մենք շարունակենք ճիգ թափել:

Ինչպես կուզեք, կատակերգությունը, որը գրվել է անգլիացի թատերագիր Վիլյամ Շեքսպիրի կողմից, պատկերում է հերոսի կյանքում մի դրամատիկ փոփոխության մասին: Ավագ եղբայրը փորձում էր իր փոքր եղբորը սպանել տալ: Փոքր եղբայրը, նույնիսկ, այդ իմանալով՝ փրկում է իր ամբարիշտ եղբորն անխուսափելի մահից: Երբ ավագ եղբայրն իմանում է, չնայած իր անարժան լինելուն, այդ կարեկցանքի մասին, նա ամբողջովին և ընդմիջ լուրջվում է և ունենում է այսպես կոչված «դարձ»: Հետագայում մի քանի կանայք մոտենում են ավագ եղբորը և հարցնում. «Այդ դու չեի՞ր, որ այնքան հաճախ խորհում էիր սպանել [քո եղբորը]:»

Ավագ եղբայրը պատասխանում է. «Այդ ես էի, բայց դա ես չեմ: Ես չեմ ամաչում ասել ձեզ, թե ինչ էի ես, քանի որ իմ դարձն այնքան ինձ քաղցր է թվում, լինելով այն, ինչ ես կամ»: ⁵

Մեզ համար Աստծո շնորհի և Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ, այդպիսի փոփոխությունն ուղղակի գեղարվեստական գրականությունն է: Եզեկիելի միջոցով Տերը հայտարարել է.

«Ամբարիշտը իր ամբարշտութիւնովը չի գլորուիլ՝ երբոր իր ամբարշտութիւնից ետ դառնայ: . . .

. . . Եթե նա ետ դառնայ իր մեղքիցը եւ իրաւունք ու արդարութիւն գործէ,

. . . Գրարը ետ դարձնէ, յափշտակածը հատուցանէ, կեանքի կանոններովը գնայ առանց անօրէնութիւն գործելու: Նա անշուշտ պիտի սպարէ: . . .

Այն ամեն մեղքերը, որ նա արել էր, պիտի չյիշուին: Նա իրաւունք ու արդարութիւն գործէ»: ⁶

Իր ողորմածությամբ Աստված խոստանում է ներում, երբ մենք ապաշխարում ենք և ետ դառնում մեր ամբարշտությունից՝ այնքան մեծ, որ մեր մեղքերը նույնիսկ չեն հիշատակվի մեզ: Մեզ համար, Քրիստոսի Քավության և մեր ապաշխարության շնորհիվ, մենք կարող է նայենք մեր անցյալ արարքների վրա և ասենք. «Այդ ես էի, բայց դա ես



չեմ»: Անկախ նրանից, թե որքան ամբարիշտ, մենք կարող ենք ասել. «Դե ես էի: Բայց այդ անցյալ ամբարիշտ ինքնությունն այլևս ես չեմ»: ⁷

Նախագահ Թոմաս Մ. Մոնտոնն ուսուցանել է. «Աստծո մեզ տված մեծագույն պարգևներից մեկը կրկին փորձելու ուրախությունն է, քանի որ ոչ մի ձախողում երբևէ չպետք է լինի վերջնական»։ ⁸ Նույնիսկ, եթե մենք եղել ենք գիտակից, դիտավորյալ մեղսագործ կամ անընդհատ հանդիպել ձախողման և հուսահատության, այն պահին, երբ մենք որոշում ենք փորձել կրկին, Քրիստոսի Քավությունը կարող է օգնել մեզ: Եվ մենք պետք է հիշենք, որ Մուրբ Հոգին չէ, որ ասում է մեզ, որ մենք այնքան հեռու ենք գնացել, որ մենք գուցե և անձնատուր լինենք:

Աստծո ցանկությունը, որ Վերջին Օրերի Մրբերը շարունակեն ճիգ թափելը տարածվում է նաև մեղքը հաղթահարելուց այն կողմ: Անկախ նրանից մենք տառապում ենք խռովված հարաբերություններից, տնտեսական մարտահրավերներից, թե հիվանդություններից կամ ինչ որ մեկ ուրիշի մեղքերի հետևանքներից, Փրկչի անսահման Քավությունը կարող է բժշկել, նույնիսկ, և գուցե հատկապես, նրանց, ովքեր անմեղքրեն տառապել են: Նա հասկանում է կատարելապես, թե ինչ է նշանակում անմեղքրեն տառապել, ուրիշի օրինազանցության հետևանքով: Ինչպես մարգարեացել են, Փրկիչը «վլբժշկի սրտով կոտրուածներին, . . .

[կ]տա . . . փառք մոխրի տեղ, ուրախութեան յուղ՝ սուզի տեղ, [և] գովութեան պատմութեան՝ հանգուած սրտի տեղ»: ⁹ Ինչ էլ որ պատահի, Նրա օգնությամբ, Աստված ակնկալում է, որ Վերջին Օրերի Մրբերը շարունակեն ճիգ թափելը:

Ճիշտ ինչպես Աստված ուրախանում է, երբ մենք համառորեն շարունակում ենք, Նա հիասթափվում է, երբ մենք չենք ընդունում, որ մյուսները ևս ճիգ են թափում: Մեր սիրելի ընկերուհին՝ Տոբան կիսվեց, թե ինչպես նա սովորեց այս դասն իր մորից՝ Ջուլիայից: Ջուլիան և Տոբան առաջին սևամորթ նորադարձներն էին Հարավային Աֆրիկայում: Ապարտեիդի ռեժիմի ավարտից հետո, Եկեղեցու սպիտակամորթ և սևամորթ անդամներին թույլ տրվեց միասին հաճախել եկեղեցի: Շատերի համար ռասաների միջև հավասար փոխազդեցությունը նոր էր և մարտահրավիրող: Մի անգամ, երբ Ջուլիան և Տոբան հաճախում էին եկեղեցի, նրանք զգացին, որ իրենց այնքան էլ բարությամբ չէին վերաբերվում որոշ սպիտակամորթ անդամներ: Երբ նրանք դուրս եկան, Տոբան դառնորեն բողոքեց իր մորը: Ջուլիան հանգիստ լսեց, մինչև Տոբան դուրս թափեց իր սրտնեղությունը: Ապա Ջուլիան ասաց. «Oh, Տոբա, Եկեղեցին նման է մեծ հիվանդանոցի, և մենք բոլորս էլ հիվանդ ենք մեր ուրույն ձևով: Մենք զալիս ենք եկեղեցի օգնություն ստանալու»:

Չուլիայի մեկնաբանությունն արտացոլում է արժեքավոր ներդրում: Մենք պետք է ոչ միայն հանդուրժող լինենք, մինչ մյուսներն աշխատում են իրենց անձնական հիվանդությունների վրա, մենք պետք է նաև բարի, համբերատար, աջակցող լինենք և հասկացող: Քանի որ Աստված խրախուսում է մեզ շարունակել ճիգ թափելը, Նա ակնկալում է մեզանից, որ մենք տանք նաև մյուսներին հնարավորություն՝ անելու նույնը, իրենց իսկ տեմպով: Քավությունը կգա մեր կյանք նույնիսկ ավելի մեծ չափով: Մենք այդ ժամանակ կընդունենք, որ անկախ զգացած տարբերություններից, մենք բոլորս այդ նույն անսահման Քավության կարիքն ունենք:

Մի քանի տարի առաջ մի հոյակապ երիտասարդ՝ Կուրտիս անունով, կանչվեց միսիա ծառայելու: Նա այնպիսի միսիոներ էր, որի համար ամեն միսիայի նախագահ աղոթում է: Նա կենտրոնացած էր և աշխատում էր տքնաջանորեն: Մի անգամ, նրան նշանակեցին մի ընկերակից միսիոների հետ, ով հասուն չէր, շփվող չէր և այնքան էլ խանդավառ չէր աշխատանքն անելիս:

Մի օր, երբ նրանք վարում էին իրենց հեծանիվները, Կուրտիսը ետ նայեց և տեսավ, որ իր ընկերակիցը չգիտես ինչու իջել էր հեծանիվից և քայլում էր: Լռությամբ Կուրտիսն արտահայտեց իր սրտնեղությունն Աստծուն, այդ ինչ գործ էր բեռնված լինել մի ընկերակցով, ում նա ստիպված էր քարշ տալ իր հետ, որպեսզի ինչ որ բանի հասներ: Մի քանի րոպե հետո Կուրտիսը մի խորը տպավորություն զգաց, կարծես Աստված ասում էր նրան. «Գիտե՞ս Կուրտիս, ինձ հետ համեմատած, դուք երկուսդ էլ այդքան տարբեր չեք»: Կուրտիսը սովորեց, որ նա պետք է համբերատար լիներ անկատար ընկերակցի հետ, ով այնուամենայնիվ ճիգ էր թափում իր ուրույն ձևով:

Իմ կոչն է մեզ բոլորիս գնահատել մեր կյանքը, ապաշխարել և շարունակել ճիգ թափել: Եթե մենք ճիգ չենք թափում, ուրեմն մենք ուղղակի վերջին օրերի մեղսավորներ



ենք, եթե մենք համառորեն չենք շարունակում, մենք վերջին օրերի անձնատուր լինողներ ենք, իսկ եթե մենք չենք թողնում ուրիշներին ճիգ թափել, մենք ուղղակի վերջին օրերի կեղծավորներ ենք:¹⁰ Երբ մենք ճիգ ենք թափում, համառորեն շարունակում և օգնում ուրիշներին էլ անել նույնը, մենք ճշմարիտ Վերջին Օրերի Մրբեր ենք: Երբ մենք փոխվենք, մենք կգտնենք, որ Աստված իսկապես հոգ է տանում շատ ավելի նրա մասին, թե ով ենք մենք և ով ենք մենք դառնում, քան այն մասին, թե ով էինք մենք մի ժամանակ:¹¹

Ես խորապես երախտապարտ եմ Փրկչի համար, Նրա անսահման Քավության համար և վերջին օրերի մարգարեների համար, ովքեր խրախուսում են մեզ Վերջին Օրերի Մրբեր լինել, շարունակելով ճիգ թափել:¹² Ես վկայում եմ Փրկչի կենդանի իրողության մասին՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Նելսոն Աիլիիաիա Մանդելա, *Երկար ճանապարհ դեպի ազատություն* (1994); “Biography of Nelson Mandela”, nelsonmandela.org/content/page/biography; and President Barack Obama’s Dec. 10, 2013, eulogy for Nelson Mandela, at whitehouse.gov/the-press-office/2013/12/10/remarks-president-obama-memorial-service-former-south-african-president- Մրցանակների զանազանությունն արտահայտվում է Մանդելայի ստանալով Նոբելյան Խաղաղության Մրցանակ, Միացյալ Նահանգների Ազատության Նախագահական Մեդալ, և Սովետական Լենինի Մրցանակ:
2. Տես Օրինակներ Մանդելայի ելույթը Ռայսի Համալսարանի Բեյքեր Ինստիտուտում 1999թ. Հոկ. 26-ին bakerinstitute.org/events/1221: Նա ամենայն հավանականությամբ, փոխակերպում է հայտնի հայտարարությունը, որը վերագրվում է Ռոբերտ Լյուիս Սթիվենսոնին. «Մրբերն

այն մեղսավորներն են, ովքեր շարունակում են ճիգ թափել»: Տարիների ընթացքում շատերն են արտահայտել նմանատիպ զգացողություններ: Օրինակ Կոնֆուցիուսը հայտնի է այս ասացվածքով. «Մեր մեծագույն փառքը գտնվում է ոչ թե երբեք չընկնելում . . . այլ վեր կենալիս ամեն անգամ, երբ ընկնում ենք»:

3. Տես Օրինակ, 2 Նեփի 31.2–21, 3 Նեփի 11.23–31, 27.13–21, Մորոնի 6.6, Վարդապետություն և Ուխտեր 20.77, 79, 59.8–9, *Handbook 2: Administering the Church* (2010), 2.1.2.
4. Ասելով, որ «Աստված շատ ավելի հոգ է անում այն մասին, թե ով ենք մենք և ով ենք մենք դառնում, քան թե ով էինք մենք մի ժամանակ», չի նշանակում, որ Փրկիչն անտարբեր է մյուսների վրա անձնական մեղքի հետևանքների վերաբերյալ: Փաստորեն Փրկիչը հոգ է անում անսահմանորեն նրանց մասին, ովքեր տանում են վիրավորանք, ցավ և սրտաբեկություն մեկ ուրիշի օրինազանցությունների պատճառով: Փրկիչը «իր վրա վեր կանի [իր ժողովրդի] թուլությունները, որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ, . . . որպեսզի նա կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին՝ ըստ նրանց թուլությունների» (Ամն 7.12):
5. Վիլյամ Շեքսպիր, *Քլյոպետրա*, գործողություն 4, տեսարան 3, տողեր 134–37:
6. Եզեկիել ԼԳ.12, 14–16:
7. Բայերի ներկա ժամանակի օգտագործումը նկատելի է շատ սուրբ գրություններում, որոնք կապված են Վերջին Դատաստանի հետ: Տես Օրինակ՝ 2 Նեփի 9.16, Մորոնի 9.14, Վարդապետություն և Ուխտեր 58.42–43:
8. Thomas S. Monson, “The Will Within,” *Ensign*, May 1987, 68.
9. Եսայիա ԿԱ.1–3, տես նաև Դուկաս Դ.16–21:
10. *Կեղծավոր* ինչպես օգտագործվում է Նոր Կտակարանում կարող է թարգմանվել հունարենից որպես «ձևացնող» հունարեն բառը նշանակում է «դեր կատարող», կամ «մեկը, ով ձևացնում է, ներկայացնում է ողբերգակներն կամ չափազանցում է դերը» (տես Մատթեոս 9.2, ծանոթագրություն *ս*): Եթե մենք չենք տալիս մյուսներին հնարավորություն փոխվելու իրենց իսկ տեմպով, մենք ուղղակի ձևացնում ենք, որ Վերջին Օրերի Մրբեր ենք:
11. Տես հղում 4, վերևում:
12. Այս ուղերձը թե քանի անգամ է հայտնվում Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի քարոզներում, ապշեցուցիչ է: Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆը անդրադարձավ այս հարցին, երբ ասաց. «Դարերի ընթացքում մարգարեների կողմից ուսուցանված բոլոր սկզբունքներից մեկը, որը կրկին և կրկին անգամ նորից է շեշտվել հույսով լեցուն և սրտավնդող ուղերձն է, որ մարդկությունը կարող է ապաշխարել, փոխել ընթացքն ու վերադառնալ աշակերտության ճշմարիտ ուղուն» («Դուք կարող եք անել դա» *Liahona*, նոյ. 2013, 56):



Երեց Մայքլ Ս. Ռիսզվուդ
Յոթանասունական

Իսկապես լավը ու նենգությունից զուրկ

Հիսուս Զրիստոսի ավետարանի բարի լուրն է, որ մեր սրտի ցանկությունները կարող են վերափոխվել և մեր շարժառիթները կարող են զարգանալ և հղկվել:

Ցավոք, իմ կյանքում եղել է ժամանակ, երբ ինձ համար մղիչ ուժ են հանդիսացել պաշտոնն ու հեղինակությունը: Դա, իրոք, աննկատ սկսվեց: Երբ ես պատրաստվում էի ծառայել լիաժամկետ միսիայում, իմ ավագ եղբայրը տարածքի ղեկավար էր նշանակվել իր միսիայում: Ես բազմաթիվ դրական բաներ լսեցի, որ ասվեցին նրա մասին, և ես չէի կարողանում զսպել իմ ցանկությունը, որ այդ բաներն ասվեին իմ մասին: Ես հույս ունեի

և նույնիսկ աղոթում էի նման դիրքի հասնելու համար: Բարեբախտաբար, մինչ ես ծառայում էի իմ միսիային, ես մի գործը դաս տվորեցի: Անցած համաժողովին ինձ հիշեցվեց այդ դասի մասին: Հոկտեմբերին Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆն ասաց. «Իմ կյանքի ընթացքում ես հնարավորություն եմ ունեցել շփվել այս աշխարհի առավել բանիմաց և խելացի տղամարդկանցից ու կանանցից մի քանիսի հետ: Երբ երիտասարդ էի,

ես տպավորված էի նրանցով, ովքեր կիրթ, կայացած, հաջողակ և ճանաչված էին աշխարհում: Մակայն տարիների ընթացքում ես եկա այն համոզման, որ ես շատ ավելի տպավորված եմ այն հրաշալի և երանելի հոգիներով, ովքեր իսկապես *լավն են ու նենգությունից զուրկ*:¹

Մորմունի Գրքի իմ հերոսը հրաշալի ու օրհնված մարդու կատարյալ մի օրինակ է, ով իսկապես լավն է ու նենգությունից զուրկ: Միբլունը Ալմա կրստերի որդիներից մեկն էր: Մենք ավելի ծանոթ ենք նրա եղբայրներին՝ Հելամանին, ով հետևում էր իր հորը որպես հիշատակարաններ պահող և Աստծո մարգարե, և Կորիանթոնին, ով որոշակի ճանաչում է ձեռք բերել որպես միսիոներ, ով ուներ իր հոր խորհրդի կարիքը: Հելամանին Ալման գրել է 77 հատվածներ (տես Ալմա 36–37): Կորիանթոնին Ալման նվիրել է 91 հատվածներ (տես Ալմա 39–42): Միբլունին՝ իր միջնեկ որդուն, Ալման գրել է ընդամենը 15 հատված (տես Ալմա 38): Մակայն նրա խոսքերն այս 15 հատվածներում զորավոր են և ուսուցողական:

«Եվ այժմ, որդիս, ես վստահ եմ, որ մեծ ուրախություն պիտի ունենամ քեզ համար՝ Աստծո հանդեպ քո հաստատունության և քո հավատարմության համար. քանզի ինչպես դու սկսել ես քո երիտասարդության տարիներին նայել առ Տերը՝ քո Աստվածը, ճիշտ նույապես ես հուսով եմ, որ դու կշարունակես պահել նրա պատվիրանները. քանզի օրհնված է նա, ով համբերում է մինչև վերջ:

Ես ասում եմ քեզ, որդիս, որ ես արդեն ունեցել եմ մեծ ուրախություն քեզ համար՝ Չորամացիների մեջ քո հավատարմության ու քո ջանասիրության, և քո համբերատարության ու քո երկայնամտության պատճառով» (Ալմա 38.2–3):

Բացի Միբլունի *հետ* խոսելուց, Ալման նաև խոսել է նրա *մասին* Կորիանթոնի հետ: Ալման ասել է. «Մի՞թե դու չնկատեցիր քո եղբոր կայունությունը, նրա հավատարմությունը, և նրա ջանասիրությունն Աստծո պատվիրանները պահելիս: Ահա, մի՞թե նա լավ օրինակ չի





Վորդերի, Միկնստուա, ԱՄՆ

հանդիսացել քեզ համար»
(Ավմա 39.1):²

Ակնհայտ է, որ Միբլունը որդի էր, ով ցանկանում էր գոհացնել իր հորը և առաջ էր գնում անելով այն, ինչ ճիշտ էր, քանի որ դա էր ճիշտը, և ոչ թե գովասանքի, պաշտոնի, զորության, պատվի կամ իշխանության համար: Հելամանը գիտեր դա և գնահատում էր իր եղբորն այդ ամենի համար, քանի որ նա Միբլունին էր վստահել պահպանությունը սուրբ հիշատակարանների, որոնք նա ստացել էր իր հորից: Իհարկե, Հելամանը վստահում էր Միբլունին, քանի որ «նա արդար մարդ էր, և նա քայլում էր ուղիղ Աստծո առաջ. և նա ձգտում էր շարունակ բարիք անել, պահել Տիրոջ՝ իր Աստծո պատվիրանները» (Ավմա 63.2): Ինչպես իրոք բնորոշ է թվում Միբլունին, շատ բան չկա հիշատակված նրա մասին սկսած այն ժամանակներից, երբ նա իր հովանավորության տակ առավ սուրբ հիշատակարանները, մինչև նա տվեց դրանք Հելամանի որդի Հելամանին (տես Ավմա 63.11):

Միբլունն իսկապես լավ էր և նենգությունից զուրկ: Նա մի անձնավորություն էր, որ գոհաբերում էր իր ժամանակը, տաղանդները և ջանքերը՝ ուրիշներին օգնելու և բարձրացնելու համար, քանի որ նա սիրում էր Աստծուն և իր մերձավորներին (տես Ավմա 48.17-19, 49.30): Նրա ճիշտ նկարգությունն են տալիս Նախագահ Մայենսեր Վ. Քիմբալի խոսքերը. «Հրաշալի կանայք ու տղամարդիկ միշտ ավելի ոգևորված են ծառայելու, քան իշխելու»:³



Աշխարհում, որտեղ գովասանքի, պաշտոնի, զորության, գնահատանքի և իշխանության են ձգտում ամեն հնարավոր եղանակով, ես պատվում եմ այն հրաշալի և օրհնված մարդկանց, ովքեր իսկապես լավ են ու նենգությունից զուրկ, նրանց, ում համար մոլի ուժ է հանդիսանում Աստծո և մերձավորների հանդեպ ունեցած սերը, այն հրաշալի կանանց և տղամարդկանց, ովքեր «ավելի ոգևորված են ծառայելու, քան իշխելու»:

Այսօր կան մարդիկ, ովքեր ստիպում են մեզ հավատալ, որ կայացած լինելու մեր փնտրտուքները կարող են բավարարվել միայն պաշտոն և զորություն ձեռք բերելու միջոցով: Սակայն, բարեբախտաբար, կան շատերը, ովքեր չեն ենթարկվում այս մտածելակերպի ազդեցությանը: Նրանք կայանում են՝ ձգտելով լինել իսկապես լավ և նենգությունից զուրկ: Ես ճանաչում եմ նման մարդկանց տարբեր խավերից և շատ կրոններից: Եվ ես շատ նման մարդկանց եմ ճանաչում Քրիստոսի իսկապես դարձի եկած հետևորդների մեջ:⁴

Ես պատվում եմ նրանց, ովքեր ամեն շաբաթ անձնավորաբար ծառայում են ծխերում և ճյուղերում ողջ աշխարհով մեկ՝ ակնկալվածից

ավելին անելով իրենց կոչումներում: Սակայն ծառայությունները գալիս ու գնում են: Էլ ավելի մեծ տպավորություն են թողնում ինձ վրա այն բազմաթիվ մարդիկ, ովքեր առանց պաշտոնական կոչումների մշտապես ծառայելու և ուրիշներին բարձրացնելու ուղիներ են գտնում: Եղբայրներից մեկը շուտ է գալիս եկեղեցի, որպեսզի դասավորի աթոռները և վերջում մնում է եկեղեցին կարգի բերելու համար: Քույրերից մեկը կանխամտածված կերպով նստում է իր ծխի մի կույր քրոջ կողքին՝ ոչ միայն նրան ողջունելու, այլ նաև որպեսզի նա կարողանա երգել օրհներգերը բավականաչափ բարձր, որպեսզի կույր քույրը կարողանա լսել բառերը և երգել իր հետ: Եթե դուք ուշադրություն դարձնեք, ձեր ծխում կամ ճյուղում կգտնեք նման օրինակներ: Միշտ գտնվում են անդամներ, ովքեր գիտեն, թե ով ունի օգնության կարիք և երբ առաջարկել այն:

Նենգությունից զուրկ իսկապես լավ Մրբերի մասին իմ առաջին դասը ես հավանաբար սովորել եմ, երբ երիտասարդ միսիոներ էի: Ես տեղավորվել էի մի տարածք մի երեցի հետ, ում ես չէի ճանաչում: Ես լսել էի, թե ինչպես էին մյուս միսիոներները խոսում այն մասին, թե ինչպես նա երբեք չի ստացել որևէ ղեկավար հանձնարարություն և թե որքան էր նա դժվարանում սովորելու Կորեայի լեզուն, անկախ այն բանից, որ եղել էր այդ երկրում արդեն երկար ժամանակ: Սակայն, երբ ես սկսեցի ճանաչել այս երեցին, ես հասկացա, որ նա ամենահնազանդ և հավատարիմ միսիոներներից մեկն էր, ում ես գիտեի: Նա ուսումնասիրում էր, երբ ուսումնասիրության ժամն էր, նա աշխատում էր, երբ աշխատելու ժամն էր: Նա ժամանակին էր դուրս գալիս տանից և ժամանակին էլ վերադառնում: Նա ջանասիրաբար ուսումնասիրում էր լեզուն, սակայն դա հատկապես դժվար էր նրա համար:

Երբ ես հասկացա, որ իմ լսած դիտողությունները ճիշտ չէին, ես զգացի, որ սխալմունք էր այս միսիոներին անհաջողակ համարելը: Ես

ցանկանում էի ասել ողջ միսիային, թե ինչ էի բացահայտել այս երեցի մեջ: Իմ միսիայի նախագահի հետ ես կիսվեցի իմ ցանկությամբ՝ ուղղելու այս թյուրիմացությունը: Նա այսպես պատասխանեց ինձ. «Երկնային Հայրը գիտի, որ այս երիտասարդը հաջող միսիոներ է, և ես նույնպես գիտեմ»: Նա ավելացրեց. «Եվ այժմ դու էլ գիտես, ուստի, էլ ո՞վ է իրականում կարևոր, որ իմանա»: Այս իմաստուն միսիայի նախագահն ուսուցանեց ինձ, թե ինչն էր կարևոր ծառայության մեջ, և դա գովասանքը, պաշտոնը, գործությունը, մեծարվելը կամ հեղինակությունը չէ: Մա հրաշալի դաս էր երիտասարդ միսիոների համար, ով չափազանց կենտրոնացած էր պաշտոնների վրա:

Մտքում ունենալով այս դասը՝ ես սկսեցի հետ նայել իմ կյանքին և տեսնել, թե որքան հաճախ եմ ես ներգործվել տղամարդկանց և կանանց կողմից, ովքեր այդ պահին չեն ունեցել մեծ տիտղոս կամ պաշտոն: Միբլոնին նման այդ մարդկանցից մեկն իմ սեմինարիայի ուսուցիչն էր ավագ դպրոցի առաջին տարվա ընթացքում: Այս լավ մարդը սեմինարիայում ուսուցանում էր ընդամենը երկու կամ երեք տարի, սակայն նա այնպես դիպավ իմ սրտին, որ դա օգնեց ինձ վկայություն ձեռք բերել: Դպրոցում նա միգրացե ամենահայտնի ուսուցիչը չէր, սակայն նա միշտ պատրաստ էր և նրա ազդեցությունն ինձ վրա զորեղ էր և երկարատև: Ինձ ուսուցանելուց հետո 40 տարիների ընթացքում մեր եզակի հանդիպումներից մեկը տեղի ունեցավ, երբ նա եկավ ինձ տեսնելու իմ հոր թաղման արարողության ժամանակ: Իսկապես, որ դա մի գործողություն էր, որի համար մղիչ ուժ չէին հանդիսացել պաշտոնը կամ գործությունը:

Ես պատվում եմ այդ նվիրված ուսուցչին և նրա նման շատերին, ովքեր իսկապես լավն են ու նենգությունից զուրկ: Ես պատվում եմ Կիրակնօրյա Դպրոցի ուսուցչին, ով ոչ միայն կիրակնօրյա դասերի ժամանակ է ուսուցանում իր ուսանողներին, այլ նաև ուսուցանում և ազդեցություն է գործում այս

ուսանողների վրա՝ հրավիրելով նրանց նախաճաշին միանալ իր ընտանիքին: Ես պատվում եմ երիտասարդների ղեկավարներին, ովքեր հաճախում են իրենց ծխերի երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց սպորտային և մշակութային միջոցառումներին: Ես պատվում եմ տղամարդկանց, ովքեր խրախուսող երկտող են գրում հարևաններին և կանանց, ովքեր ոչ թե պարզապես ուղարկում են Մուրբ Օննոյան բացիկներ, այլ անձամբ հանձնում են դրանք ընտանիքի անդամներին և ընկերներին, ովքեր ունեն այցելության կարիք: Ես պատվում եմ այն եղբորը, ով Ալցհայմերի հիվանդությամբ տառապող իր հարևանին պարբերաբար մեքենայով տեղից տեղ է տանում նրա դժվարին օրերին, օգնելով թե նրան և թե նրա կնոջը ամեն ինչ ավելի արագ անել, ինչի կարիքը նրանք շատ ունեն:

Այս բաները չեն արվում գովասանքի կամ գնահատանքի համար: Այս տղամարդկանց ու կանանց համար մղիչ ուժ չի հանդիսանում պաշտոններ և իշխանություն ստանալու հնարավորությունը: Նրանք Քրիստոսի աշակերտներն են, ովքեր առաջ են գնում շարունակ բարիք գործելով, և ինչպես Միբլոնը, նրանք փորձում են գոհացնել իրենց Երկնային Հորը:

Ես տխրում եմ, երբ լսում եմ ոմանց մասին, ովքեր դադարել են ծառայել կամ նույնիսկ եկեղեցի հաճախել, քանի որ հետ են կանչվել կոչումից կամ անտեսված են զգում որևէ կոչումում կամ պաշտոնում չկանչվելու պատճառով: Հուսով եմ, որ մի օր նրանք կսովորեն այն նույն դասը, որը ես սովորեցի, երբ երիտասարդ միսիոներ էի, որ ծառայությունը, որն ամենամեծ արժեքն ունի, սովորաբար նկատվում է միայն Աստծո կողմից: Կենտրոնանալով մեր եսի և մեր կամքի վրա, արդյո՞ք մենք մոռանում ենք Նրան ու Նրա կամքը:

Ոմանք կարող են ասել. «Մակայն ես դեռ երկար ճանապարհ ունեմ անցնելու, որպեսզի նմանվեմ նրանց, ում դուք նկարագրեցիք»: Հիսուս Քրիստոսի ավետարանի բարի լույսն է, որ մեր սրտի ցանկությունները կարող են վերափոխվել և մեր շարժառիթները

կարող են զարգանալ և հղկվել: Երբ մենք մկրտվում ենք Աստծո ճշմարիտ եկեղեցում, մենք սկսում ենք նոր արարածներ դառնալու գործընթացը (տես Բ Կորնթացիս Ե.17, Մոսիա 27.26): Ամեն անգամ, երբ հաղորդություն ընդունելով նորոգում ենք մկրտության ուխտը, մենք մի քայլ մոտենում ենք այդ վերջնական նպատակին:⁵ Երբ մենք համբերատար պահում ենք այդ ուխտը, մենք ուժ ենք ստանում սգալու նրանց հետ, ովքեր սգում են և միսիոսարելու նրանց, ովքեր միսիոսարության կարիք ունեն (տես Մոսիա 18.9): Այդ ուխտի միջոցով մենք շնորհ ենք գտնում, որը մեզ հնարավորություն է տալիս ծառայել Աստծուն և պահել Նրա պատվիրանները, այդ թվում նաև սիրել Աստծուն մեր ողջ սրտով և սիրել մեր մերձավորներին մեր անձերի պես:⁶ Այդ ուխտի միջոցով Աստված և Քրիստոսը սատարում են մեզ, որպեսզի մենք էլ կարողանանք սատարել նրանց, ովքեր ունեն մեր սատար կանգնելու կարիքը (տես Մոսիա 4.16, տես նաև հատվածներ 11–15):

Այն ամենը, ինչ ես իսկապես ցանկանում եմ կյանքում, իմ հայրերին գոհացնելն է՝ թե երկրային, և թե երկնային, և ավելի շատ Միբլոնին նմանվելը:⁷

Ես շնորհակալ եմ իմ երկնային Հորը Միբլոնի նման մարդկանց համար, որոնց օրինակներն ինձ և մեզ բոլորիս հույս են ներշնչում: Նրանց կյանքում մենք տեսնում ենք սիրառատ Երկնային Հոր և հոգատար ու գթառատ Փրկչի վկայությունը: Ես իմ վկայությունն եմ ավելացնում նրանց վկայությանը, պարտավորվելով, որ ձգտեմ ավելի նմանվել նրանց, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄԵՐ

1. Դիտեր Ֆ. Ուլտորֆ, «Միթե ե՞ս եմ, Տէր», *Ljubimuu*, նոյ. 2014, 58, նշումներն ավելացված են:
2. Հելամանը չի գնացել գորամացիներին ուսուցանելու, ուստի մենք գիտենք, որ Ալման խոսում է Միբլոնի մասին, երբ նա ասում է «թո եղբայր» (տես Ալմա 31.7, 39.2):
3. Spencer W. Kimball, «The Role of Righteous Women», *Ensign*, Nov. 1979, 104.
4. «Տերն ուսուցանել է մեզ, որ երբ մենք իսկապես դարձի զանք դեպի Բր ավետարանը, մեր սրտերը դարձի կգան եսասիրական մտահոգություններից և

կղաղնան դեպի ծառայությունը՝ բարձրացնելու ուրիշներին, մինչ նրանք առաջ են շարժվում դեպի հավերժական կյանքը: Այդ դարձին հասնելու համար մենք կարող ենք հավատքով աղոթել և աշխատել, դառնալու նոր արարածներ, որը հնարավոր է դարձվել հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ: Մենք կարող ենք սկսել հավատքի աղոթքով, որ ապաշխարենք եսասիրությունից և կարողանանք հոգալ ուրիշների համար ավելի, քան ինքներս մեզ համար: Մենք կարող ենք աղոթել գործության համար, որ մի կողմ դնենք մեր հպարտությունը և նախանձը» (Հենրի Բ. Այրինգ, «Վկայություն և Դարձ», *Հիստորիա*, Փետրվար 2015, 4-5):

5. «Աստված անմահ է և կատարյալ: Մենք մահկանացու ենք և անկատար: Այնուամենայնիվ, մենք փնտրում ենք ուղիներ նույնիսկ մահկանացու կյանքում, որոնց միջոցով մենք կկարողանանք միանալ Նրա հետ հոգևորապես: Այդպես վարվելով մենք որոշակիորեն առնչվում ենք Նրա ողորմության և Նրա գործության մեծության հետ: Այդ հոգևոր պահերը ներառում են . . . մկրտությունը և հաստատումը . . . [և] Տիրոջ ընթրիքի խորհրդանիշերը ճաշակելը» (Ջեֆրի Ա. Հոլլանդ, *Իմ ընկերներին* [2014], 80):

6. «Վերջին Օրերի Մրբերը, ովքեր իրենց բոլոր արարքներում տեսնում են իրենց որպես Աստծո զավակներ, բնական են համարում պարտավորություններ վերցնելը և կատարելը: Փրկության ծրագիրը կազմված է ուստերից: Մենք խոստանում ենք հնազանդվել պատվիրաններին: Ի պատասխան, Աստված խոստանում է օրհնություններ այս կյանքում և հավերժության մեջ: Նա հստակորեն ներկայացնում է Իր պահանջները և կատարելապես պահում է իր խոսքը: Քանի որ Նա սիրում է մեզ և քանի որ ծրագրի նպատակն է դառնալ Նրա նման, Նա հստակություն է պահանջում մեզանից: Եվ խոստումները, որոնք Նա տալիս է մեզ, միշտ ներառում են գործություն՝ մեծացնելու ուստերը պահելու մեր ունակությունը: Նա հնարավոր է դարձնում, որ մենք իմանանք Իր կանոնները: Երբ մենք մեր ողջ սրտով փորձում ենք ապրել Նրա չափանիշներով, Նա տալիս է մեզ Մուրբ Հոգու ընկերակցությունը: Դա էլ իր հերթին մեծացնում է մեր գործությունը՝ կատարելու պարտավորությունները և հասկանալու, թե որն է լավը և ճշմարիտը: Եվ դա է սովորելու գործությունը մեր աշխարհիկ ուսումնասիրություններում և այն գիտելիքների առումով, որոնք մեզ անհրաժեշտ են հավերժության համար» (Հենրի Բ. Այրինգ, «Աստծո զավակ» [Բրիգամ Յանգի Համալսարանի հավաք, հոկ. 21, 1997], 4-5. speeches.byu.edu): Տես նաև Դեյվիդ Ա. Բեդնար, «Իրենց բեռները հեշտությամբ տանելին», *Հիստորիա*, Մայիս 2014, 87-90:

7. Իմ վաղ տարիքի հիշողություններից սկսած՝ ես ցանկացել եմ գոհացնել իմ հորը: Երբ ես մեծացա և վկայություն ձեռք բերեցի, ինձ մոտ նաև ցանկություն առաջացավ գոհացնելու Երկնային Հորը: Հետագայում ես սովորեցի Միքոնի մասին և իմ կյանքի նպատակներին ավելացրեցի ավելի շատ նրան նմանվելը:



Երեց Զվնստին Լ. Քուբ
Տասներկու Առաքյալների Քվորում

Տերն է իմ լույսը

Տիրոջ լույսին ու օրհնակին հետևելը մեզ կբերի ուրախություն, երջանկություն և խաղաղություն:

Չատիկի այս տոնին մենք խորհում և ուրախանում ենք քավության շնորհիվ, որ մեզ է տրվել է մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի կողմից:¹

Անհանգստությունը, որը տարածվում է երկրագնդով մեկ՝ աշխարհիկ ամբարշտության պատճառով, առաջացնում է անպաշտպանվածության զգացում և խանգարում մեր անդորրը: Կապի ժամանակակից միջոցների միջոցով անօրինության, անհավասարության և անարդարության ազդեցությունը շատ մարդկանց ստիպում է զգալ, որ կյանքն, ըստ էության անարդար է: Չնայած որ այս փորձությունները կարող են էական լինել, դրանք չպիտի շեղեն մեզ՝ ուրախանալուց և մեր օգտին Քրիստոսի երկնային բարեխոսումը տոնելուց: Փրկիչը բառացիորեն «հաղթեց մահը»: Ողորմաձությամբ ու կարեկցանքով Նա իր վրա վերցրեց մեր անօրինությունն ու մեղքերը՝ այսպիսով փրկագնելով մեզ և բավարարելով արդարության պահանջները բոլոր նրանց համար, ովքեր կապաշխարեն և կհավատան Իր անունով:²

Նրա փառահեղ քավիչ զոհաբերությունը ունի անզերազանցելի մեծագույն նշանակություն, որը չեն կարող ըմբռնել մահկանացու



մարդիկ: Ողորմաձության այս քայլը ապահովում է խաղաղություն և վեր է մեր հասկացողությունից:³

Այդ դեպքում ինչպե՞ս ենք մենք պայքարում մեզ շրջապատող դաժան իրականության հետ:

Իմ կինը՝ Մերին, միշտ սիրել է արևածաղիկը: Նա հրճվում է, երբ դրանք հայտնվում են ճանապարհի կողքերին՝ բավականին անսպասելի տեղերում: Մի կեղտոտ ճանապարհի կա, որը տանում է դեպի իմ պապիկի տունը: Երբ մենք ճամփա էինք ընկնում, Մերին հաճախ բացականչում էր. «Դու կարծում ես, մենք կտեսնե՞ք այդ զարմանալի արևածաղիկներն այսօր»: Մենք զարմանում էինք՝ տեսնելով, որ արևածաղիկներն



Երիտասարդ վայրի արևածաղկի ուշագրավ բնութագրերից մեկն այն է, երբ երիտասարդ ծաղկի կոկոնը շարժվում է երկնքում՝ արևի շարժմանը համընթաց:

առատորեն աճում էին այն հողի վրա, որով հաճախ անցնում էին գյուղատնտեսական և ձյուն մաքրող մեքենաներ, որտեղ կար նաև այնպիսի նյութերի կուտակում, որոնք իդեալական հող չէին համարվի վայրի պայմաններում ծաղիկի աճման համար:

Երիտասարդ վայրի արևածաղկի ուշագրավ բնութագրերից մեկն այն է, որ անբարենպաստ հողում աճելուց բացի, երիտասարդ ծաղկի կոկոնը շարժվում է երկնքում՝ արևի շարժմանը համընթաց: Այսպիսով նա ստանում է կյանքին անհրաժեշտ էներգիան՝ նախքան չքնաղ դեղին ծաղիկը կհայտնվի դրա միջից:

Երիտասարդ արևածաղկի նման, երբ մենք հետևում ենք աշխարհի Փրկչին՝ Աստծո Որդուն, մենք

ծաղկում ենք և դառնում չքնաղ՝ չնայած այն բազմաթիվ սարսափելի հանգամանքներին, որոնք շրջապատում են մեզ: Նա է իրոք մեր լույսն ու կյանքը:

Ցորենի և որոմների մասին առակում Փրկիչը հայտարարեց իր Առաքյալներին, որ նրանք, ովքեր կխախտեն օրենքը և անարդարություն կգործեն, կհավաքվեն և *դուրս կնետնվեն* Իր թագավորությունից:⁴ Բայց հավատարիմների մասին խոսելով, նա ասաց. «Այն ժամանակ արդարները կծագեն ինչպես արեգակը իրենց Հօր արքայութեան մեջ»:⁵ Որպես անհատներ՝ Քրիստոսի հետևորդները, ապրելով թշնամական աշխարհում, որը բառացիորեն խառնաշփոթի մեջ է, մենք կարող ենք աճել ու զարգանալ, եթե Տիրոջ

հանդեպ մեր սերը կառուցենք՝ Նրա վեմի վրա և խոնարհաբար հետևենք Նրա ուսմունքներին:

Անասան ու հավատարիմ մնալու և Փրկչին հետևելու մեր կարողությունը՝ չնայած կյանքի անկայունությանը, մեծապես ուժեղանում է արդարակյաց ընտանիքների և մեր ծխերի ու ճյուղերի Քրիստոսակենտրոն միաբանության միջոցով:⁶

Ժամը քանի՞սն է իմ տանը

Ընտանիքի դերը Տիրոջ ծրագրում «մեզ երջանկություն բերելն է, օգնելն է մեզ՝ սովորել ճիշտ սկզբունքներ՝ սիրո մթնոլորտում և պատրաստելը մեզ հավերժական կյանքին»:⁷ Կրոնական սկզբունքներին ամուր կապված լինելու հրաշալի ավանդույթը մեր տներում պետք է սերմանվի և խորը արմատներ ձգի մեր զավակների սրտերում:

Իմ հորեղբայր Վոգան Ռոբերտս Քիմբալը լավ ուսանող էր, հաջողության ձգտող գրող և Բրիգամ Յանգ համալսարանի ֆուտբոլային թիմի մարզիչի օգնական: 1941թվականի դեկտեմբերի 8-ին, Փեյր Հարբորի վրա հարձակման հաջորդ օրը նա անդամագրվեց ԱՄՆ-ի Նավատորմին: Մինչ նա հավաքագրման հանձնարարություն էր կատարում Ալբանիում, Նյու-Յորք, մի կարճ հոդված ներկայացրեց *Reader's Digest-ին*: Ամսագիրը 200 դուլար վճարեց նրան և հրատարակեց հոդվածը 1944 թվականի մայիսի թողարկման մեջ «Ժամը քանի՞սն է իմ տանը» վերնագրով:

Նրա ներդրումը *Reader's Digest-ին*, որտեղ նա խոսում է ապագա նավաստու անունից, մասնավորապես պատմում է հետևյալը.

«Ժամը քանի՞սն է իմ տանը
«Մի երեկո Ալբանիում, Նյու Յորք, ես մի նավաստուց հարցրի, թե ժամը քանիսն է: Նա գրպանից դուրս քաշեց մի հսկայական ժամացույց և պատասխանեց. «Յոթն անց է քսան րոպե»: Ես գիտեի, որ ավելի ուշ էր: «Քո ժամացույցը կանգ է առել, այնպես չէ՞»:

«Ոչ,- ասաց նա,- ես դեռ Մաունթինի ժամային գտում եմ: Ես հարավային Յուտայից եմ: Երբ ես



գինվորագրվեցի Նավատորմին, հայրս տվեց ինձ այս ժամացույցը: Նա ասաց, որ այն կօգնի ինձ հիշել տունը:

Երբ իմ ժամացույցով առավոտյան ժամը հինգն է, ես գիտեմ, որ հայրս գնում է կովերը կթելու: Իսկ ամեն երեկո, երբ այն ցույց է տալիս յոթն անց կես, գիտեմ, որ ամբողջ ընտանիքը հավաքված է ուտելիքով լի սեղանի շուրջը, և հայրս շնորհակալություն է հայտնում սեղանին դրված ուտելիքի համար ու խնդրում Նրան, որ հսկի ինձ . . . - նա ասաց, - ես բավական հեշտությամբ կարող եմ պարզել, թե ժամը քանիսն է այստեղ: Ամենը, ինչ ես ուզում եմ իմանալ՝ թե ժամը քանիսն է Յուսայում:⁸

Շուտով, այս հոդվածը ներկայացնելուց հետո, Վոզանին նշանակեցին ծառայելու մի նավի վրա՝ Խաղաղ օվկիանոսում: 1945 թվականի մայիսի 11-ին մինչև նա ծառայում էր USS *Bunker Hill* նավի վրա *Օկինավա կղզու մոտ* նավը ռմբակոծության ենթարկվեց երկու ինքնասպան ինքնաթիռների կողմից:⁹ Չոհվեցին անձնակազմի համարյա բոլոր 400 անդամները:

Երեց Սպենսեր Վ. Քիմբալն իր անկեղծ կարեկցանքը հայտնեց Վոզանի հորը նշելով Վոզանի արժանավորությունը և Տիրոջ

հավաստիացումը, որ «նրանք, ովքեր մահանում են ինձանում, մահ չեն ճաշակի, քանզի այն քաղցր կլինի նրանց համար»:¹⁰ Վոզանի հայրը քնքշորեն ասաց, որ չնայած Վոզանը թաղված է ծովում, Աստված կտանի նրան իր երկնային տունը:¹¹

Քսանութ տարի անց Նախագահ Մպենսեր Վ. Քիմբալը գերագույն համաժողովի ժամանակ խոսելով Վոզանի մասին, մասնավորապես ասաց. «Ես լավ էի ճանաչում նրա ընտանիքին: . . . Ես հզոր աղոթքով ծունկի իջա [նրանց] հետ: . . . Տնային ուսուցումը այդ մեծ ընտանիքի համար ավարտվեց հավերժական օրհնությամբ»: Նախագահ Քիմբալը կոչ արեց յուրաքանչյուր ընտանիքի «ծնկի իջնել . . . աղոթելով իրենց որդիների և դուստրերի համար երկու անգամ օրեկան»:¹²

Եղբայրներ և քույրեր, եթե մենք հավատարմորեն հետևենք կրոնական սկզբունքներին մեր տներում՝ ընտանեկան աղոթք, սուրբ գրությունների ուսումնասիրություն, քահանայական օրհնություններ և ընտանեկան երեկոներ, մեր երեխաները կիմանան, թե ժամը քանիսն է տանը: Նրանք պատրաստ կլինեն երկնային հավերժական տանը՝ անկախ այն բանից, թե ինչ է տեղի ունենում այս դժվարին աշխարհում:

Շատ կարևոր է, որ մեր երեխաներն իմանան, որ իրենք սիրված ու ապահով են տանը:

Ամուսինն ու կինը հավասար զուգընկերներ են:¹³ Նրանք ունեն տարբեր, բայց փոխլրացնող պարտականություններ: Կինը կարող է երեխաներ ծնել, որն օրհնում է ողջ ընտանիքը: Ամուսինը կարող է ստանալ քահանայություն, որը կօրհնի ողջ ընտանիքը: Բայց ընտանեկան խորհրդում կինը և ամուսինը՝ որպես հավասար զուգընկերներ, կայացնում են շատ կարևոր որոշումներ: Նրանք որոշում են, թե երեխաները ինչպես պիտի ուսուցանվեն և կարգապահ դառնան, ինչպես պիտի ծախսվի փողը, որտեղ կապրեն նրանք և ընդունում շատ այլ ընտանեկան որոշումներ: Այս բաներն արվում են միացյալ ուժերով՝ Տիրոջից առաջնորդություն փնտրելով: Նպատակը հավերժական ընտանիքն է:

Քրիստոսի լույսը Աստծո բոլոր զավակների մեջ սերմանում է ընտանիքի հավերժական էության ըմբռնումը: Իմ սիրելի գրողներից մեկը, ոչ մեր Եկեղեցուց, այսպես է ասել. «Կյանքում այնքան անկարևոր բաներ կան, [բայց] . . . ընտանիքը իրական բան է, հիմնական է, հավերժական է. Մի բան է, որին պիտի հսկել, հոգ տանել և որին պիտի հավատարիմ լինել»:¹⁴

Եկեղեցին օգնում է մեզ կենտրոնանալ Փրկչի վրա՝ որպես միացյալ ընտանիք

Բացի ընտանիքից, Եկեղեցու դերը նույնպես կարևոր է: Եկեղեցին ապահովում է կազմակերպվածություն և նախատեսված է Հիսուս Քրիստոսի ավետարանը սովորեցնելու Աստծո բոլոր զավակներին: Այն ապահովում է քահանայական իշխանություն՝ փրկարար արարողությունները սպասարկելու համար և վեհացում բոլոր նրանց, ովքեր արժանավոր են և պատրաստ են ընդունելու դրանք:¹⁵

Աշխարհը լի է հակասություններով, անարդարությամբ և անհավասարությամբ, ինչն ավելի շեշտադրված է փոփոխվող մշակույթներում: Եկեղեցում, բացառությամբ լեզվական խմբերի,

մեր ծխերն ու ճյուղերը խիստ աշխարհագրական են: Մենք չենք բաժանվում ըստ դասակարգի կամ աստիճանի:¹⁶ Մենք ուրախանում ենք այն փաստով, որ բոլոր ռասաներն ու մշակույթները միախառնված են արդար միասնության մեջ: Մեր ծխական ընտանիքը կարևոր է մեր զարգացման, երջանկության և ավելի Քրիստոսանման լինելու մեր ջանքերում:

Մշակույթները հաճախ պառակտում են մարդկանց, իսկ երբեմն էլ հանդիսանում բռնության և խտրականության աղբյուր:¹⁷ Մորմոնի գրքում երբեմն ամենակաշուն բառերն են օգտագործվում ամբարիշտ հայրերի ավանդույթները նկարագրելու համար, որոնք հանգեցնում էին բռնության, պատերազմի, չար գործերի, անարդարության և նույնիսկ ազգերի ու ժողովուրդների ոչնչացման:¹⁸

Սուրբ գրություններում չկա ավելի լավ սկզբնակետ, քան 4 Նեփիում Եկեղեցու մշակույթի նկարագրությունը, որն էական է մեզ բոլորիս համար: Հատված 2-ում մասնավորապես ասվում է. «Եվ եղավ այնպես երեսունևվեցերորդ տարում, ամբողջ ժողովուրդը դարձի էր եկել դեպի Տերը՝ ողջ երկրի երեսին, ինչպես Նեփիացիները, այնպես էլ Լամանացիները, և նրանց մեջ չկային հակառակություններ և վիճաբանություններ, և ամեն մարդ արդար էր վարվում մեկը վյուսի հետ»: Հատված 16-ում կարդում ենք. «Անկասկած, ավելի երջանիկ ժողովուրդ չէր կարող լինել այն բոլոր ժողովուրդների մեջ, որոնք ստեղծվել էին Աստծո ձեռքով»: Փաստը, որ չկար հակառակություն, վերագրվում էր «Աստծո հանդեպ սիրուն, որն իրոք ապրում էր մարդկանց սրտերում»: ¹⁹ Սա այն մշակույթն է, որին մենք ձգտում ենք:

Խորը մշակութային արժեքներն ու հավատալիքները հանդիսանում են մեր եսի հիմնական մասը: Զոհաբերության, երախտագիտության, հավատքի և արդարակեցության ավանդույթները պետք է փայլափայլեն և պահպանվեն: Ընտանիքները պետք է սիրեն և պահպանեն այն

ավանդույթները, որոնք կառուցում են հավատքը:²⁰

Ցանկացած մշակույթի ամենակարևոր առանձնահատկություններից մեկը դրա լեզուն է: 15 տարի ես ծառայել եմ ցցի նախագահությունում՝ Ման Ֆրանցիսկոյում, Կալիֆորնիա տարածքում, որտեղ կային յոթ լեզուներ ունեցող խմբեր: Եկեղեցու ձեռնարկում սրանք կոչվում են օտարալեզու խմբեր: Մեր վարդապետությունը՝ հարգանքով հանդերձ, շարադրված է Վարդապետություն և Ուխտեր բաժին 90-ում, հատված 11-ում. «Քանզի այդ օրը կլինի այնպես, որ ամեն մարդ կլսի ավետարանի լրիվությունն իր լեզվով՝ իր մայրենի լեզվով, նրանց միջոցով, ովքեր կարգված են այդ գործությանը, Մխիթարիչի սպասավորությամբ, որը կթափվի նրանց վրա Հիսուս Քրիստոսի հայտնության համար»:

Երբ Աստծո զավակները աղոթքով դիմում են Նրան իրենց մայրենի լեզվով, դա նրանց սրտի լեզուն է: Պարզ է, որ սրտի լեզուն թանկ է բոլոր մարդկանց համար:

Իմ ավագ եղբայրը՝ Ջոզեֆը, բժիշկ է և երկար տարիներ աշխատել է Ման Ֆրանցիսկոյի ծովածոցի տարածքում: Եկեղեցու մի Մամոացի տարեց անդամ, ով նոր հիվանդ էր, եկավ նրա ընդունարան: Նա դաժան և հյուծող ցավերի մեջ էր: Պարզվեց, որ նրա երիկամում քար կար և համապատասխան բուժում ձեռնարկվեց: Այս հավատարիմ անդամը հայտարարեց, որ իր նախնական



նպատակն է պարզապես հասկանալ, թե ինչ է պատահել իրեն, որպեսզի ինքը կարողանար Մամոերեն աղոթել իր Երկնային Հորը և պատմել իր առողջական խնդրի մասին:

Կարևոր է, որ անդամները հասկանան ավետարանը իրենց սրտի լեզվով, որպեսզի նրանք կարողանան աղոթել և գործել ավետարանին համապատասխան:²¹

Նույնիսկ լեզուների բազմազանությամբ ու գեղեցիկ, վեհացնող մշակութային ավանդույթներով, մենք պետք է միավորենք մեր սրտերը միաբանությամբ և սիրով:²² Տերը վճռականորեն հայտարարել է. «Թող ամեն մարդ գնահատի իր եղբորը, ինչպես ինքն իրեն: Եղեք մեկ. և եթե դուք մեկ չեք, դուք իմը չեք»:²³ Մինչ մենք բարձր ենք գնահատում մշակութային բազմազանությունը, մեր նպատակն է՝ բոլոր առումներով միասնական լինել Հիսուս Քրիստոսի ավետարանի մշակույթի, սովորույթների և ավանդույթների մեջ:

Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Երբևս ավելի ուժեղ չի եղել

Մենք ընդունում ենք, որոշ անդամներ ունեն հարցեր և մտահոգություններ, երբ նրանք ձգտում են ուժեղացնել իրենց հավատքը և վկայությունը: Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի քննադատական և դատապարտող չլինենք նրանց նկատմամբ, ովքեր ունեն մտահոգություններ՝ մեծ, թե փոքր: Միաժամանակ, նրանք, ովքեր մտահոգություններ ունեն, պետք է անեն հնարավոր ամեն ինչ՝ ինքնուրույն կառուցելու իրենց հավատքը և վկայությունը: Համբերատարությամբ և հնազանդությամբ ուսումնասիրելը, խորհելը, աղոթելը, ավետարանի սկզբունքներով ապրելը և համապատասխան ղեկավարների հետ խորհրդակցելը հարցերի և մտահոգությունների լուծման լավագույն ուղիներն են:

Ոմանք պնդում են, որ ավելի շատ անդամներ են հեռանում Եկեղեցուց այսօր և, որ ավելի շատ կասկած ու անհավատություն կա, քան նախկինում: Սա ուղղակի ճիշտ չէ: Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու սրբերը

երբևէ ավելի ուժեղ չեն եղել: Անդամների թիվը, ովքեր հանում են իրենց անունները Եկեղեցու գրանցումներից, միշտ էլ շատ փոքր է եղել և նշանակալիորեն պակասել է վերջին տարիներին, քան անցյալում:²⁴ Որոշ չափորոշիչների վիճակագրական աճը՝ ինչպես օրինակ օժտում ստացած անդամներ գործող տաճարային երաշխավորագրերով, լիարժեք տասանորդ վճարող չափահաս անդամներ, ծառայող միսիոներներ, նշանակալի է: Թույլ տվեք ասել կրկին. Եկեղեցին երբևէ այսքան ուժեղ չի եղել: Բայց. «Հիշե՛ք, հոգիների արժեքը մեծ է Աստծո աչքում»:²⁵ Մենք հասնում ենք բոլորին:

Եթե խիստ դժվարությունները, որոնց դուք դիմակայում եք այսօր, թվում են անհույս ու ծանր և համարյա անտանելի, հիշեք, որ խորապես վշտացնող հոգևոր տանջանքի, որ Քրիստոսը զգաց Գեթսեմանի այգում և Գողգոթայի աներևակայելի խոշտանգման ու ցավի մեջ, Փրկիչն իրականացրեց Քավությունը, որը թեթևացնում է ամենասարսափելի բեռները, որ պատահում են մեր կյանքում: Նա արեց այդ ձեզ համար, և նա արեց այդ ինձ համար: Նա արեց այդ, որովհետև Նա սիրում է մեզ, և որովհետև Նա հնազանդվում

ու սիրում է Իր Հորը: Մենք կփրկվենք մահից՝ նույնիսկ եթե մեր մարմինները կորչեն ծովի խորքերում:

Մեր պաշտպանությունն այս կյանքում և հավերժության մեջ կլինի արդարակեցությունը և Քրիստոսի արարողություններն ու վարդապետությունը: Այն մեր ապաստանն է փոթորկից: Ովքեր միայնակ են, նրանց համար դուք կարող եք անսասանորեն կանգնել արդարակեցության մեջ՝ իմանալով, որ Քավությունը կպաշտպանի և կօրհնի ձեզ՝ անգամ ձեր կարողությունից և հասկացողությունից վեր:

Մենք պետք է հիշենք Փրկչին, պահենք մեր ուխտերը և հետևենք Աստծո Որդուն՝ ինչպես երիտասարդ արևածաղիկն է հետևում արևի լույսին: Նրա լույսին ու օրհնակին հետևելը մեզ կբերի ուրախություն, երջանկություն և խաղաղություն: Ինչպես Մաղմուս 27-ը և սիրված հիմնը հայտարարում են. «Տերն է իմ լույսը և իմ փրկությունը»:²⁶

Չատկի այս տոնին, որպես Փրկչի Առաքյալներից մեկը, ես բերում եմ իմ հանդիսավոր վկայությունը Հիսուս Քրիստոսի Հարության մասին: Ես գիտեմ, որ նա ապրում է: Ես ճանաչում եմ նրա ձայնը: Ես վկայում եմ Նրա աստվածայնության և Քավության

ճշմարտացիության մասին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՇՐՈՒՄՆԵՐ

1. Տես 2 Նեփի 9.20–22:
2. Տես Մոսիա 15.8–9 :
3. Տես Ֆիլիպեցիներ 4.7:
4. Տես Մատթեոս 13.41:
5. Մատթեոս 13.43:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 115.5–6:
7. *Handbook 2: Administering the Church* (2010), 1.1.4.
8. Vaughn R. Kimball, “The Right Time at Home,” *Reader’s Digest*, May 1944, 43.
9. See letter from Captain G. A. Seitz, U.S. Navy, USS *Bunker Hill*, dated May 25, 1945, to Vaughn Kimball’s father, Crozier Kimball, Draper, Utah.
10. See letter from Spencer W. Kimball, dated June 2, 1945, to Crozier Kimball; *Doctrine and Covenants* 42:46.
11. See Crozier Kimball, in Marva Jeanne Kimball Pedersen, *Vaughn Roberts Kimball: A Memorial* (1995), 53.
12. Spencer W. Kimball, “The Family Influence,” *Ensign*, July 1973, 17. Spencer W. Kimball was then President of the Quorum of the Twelve Apostles.
13. Տես «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին, *Liahona*, նոյ. 2010, 129:
14. Carla Carlisle, “Pray, Love, Remember,” *Country Life*, Sept. 29, 2010, 120.
15. *Handbook 2*, 1.1.5.
16. Տես 4 Նեփի 1.26:
17. Մշակույթ բառը շատ է քննարկվում ժամանակակից աշխարհում: 2014 թվականին *մշակույթ* բառը նույնիսկ անվանվել է տարվա բառ Merriam-Webster.com կողմից
18. Տես Ալմա 9, Հելաման 5:
19. 4 Նեփի 1.15:
20. Գերմանացի փիլիսոփա Գյոթեն գրել է հետևյալ հանրահայտ խոսքերը. «Ինչը որ ձեր հայրերից ժառանգություն եք ստացել՝ վաստակեք նորովի, որպեսզի այն իրոք ձեր սեփականությունը դառնա»: (Իոհան Վոլվգանգ Գյոթե, *Summa*, թարգմ. Բեյարդ Թեյլոր [1912], 1.28):
21. Սա պատճառներից մեկն է, որ Եկեղեցին սովորեցնում է ավետարանը 50 լեզուներով և թարգմանում է Մորմոնի Գիրքը 110 լեզուներով: Սակայն մարտահրավերներից մեկը ողջ աշխարհով մեկ այն երկրի լեզուն սովորելն է, որտեղ դուք ապրում եք: Որպես ծնողներ՝ մենք պիտի զոհաբերություն կատարենք, որպեսզի օգնենք անող սերնդին՝ սովորել այն երկրի լեզուն, որտեղ նրանք այժմ ապրում են: Օգնեք նրանց այդ լեզուն դարձնել իրենց սրտի լեզուն: Տես Մոսիա 18.21:
23. Վարդապետություն և Ուխտեր 38.25, 27:
24. Վերջին 25 տարիների ընթացքում Եկեղեցուց հեռացողների իրական թիվը նվազել է և Եկեղեցին համարյա կրկնապատկվել է չափերով: Հեռացողների թվի տոկոսային հարաբերությունը նվազել է:
25. Վարդապետություն և Ուխտեր 18.10:
26. Մաղմուս 27.1, տես նաև «Տերն է իմ լույսը», *Հիմնիդ*, հ. 89:





Երեց Ս. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվիրում

Երիտասարդ ամուրիների ամենահոյակապ սերունդը

Այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք հիմա, երիտասարդ ամուրիների ամենահոյակապ սերունդն է Եկեղեցու պատմության մեջ: Մենք ձեր մաքուր սրտի ու հոգու կարիքն ունենք:

Ամենամեծ բավականությունը, որ ես վայելում եմ, երբ ճամփորդում եմ աշխարհով մեկ, մեր միսիոներներին հանդիպելու և ողջունելու հնարավորությունն է: Այս հրաշալի երեցներն ու քույրերը Քրիստոսի լույսն են ճառագում, և ես միշտ ոգեշնչվում եմ Հիսուս Քրիստոսի հանդեպ նրանց սիրով և Նրան նվիրված նրանց ծառայությանը: Ամեն անգամ, երբ սեղմում եմ նրանց ձեռքերը և զգում նրանց սքանչելի հոգին և հավատքը, ես ասում եմ ինքս ինձ. «Մեր այս հրաշալի որդիներն ու դուստրերը իսկական հրաշք են»:

2002 թվականի գերագույն համաժողովի ժամանակ ես մարտահրավեր նետեցի եպիսկոպոսներին, ծնողներին և ապագա միսիոներներին՝ «բարձրացնել նշանդր» լիաժամկետ միսիոներական ծառայության համար:

Հետո ես ասացի, որ «այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք . . . միսիոներների ամենահոյակապ սերունդն է Եկեղեցու պատմության մեջ: Մենք ունենք արժանավոր, հմուտ, հոգևոր առումով խանդավառ միսիոներների կարիք: . . .

« . . . Մենք ձեր մաքուր սրտի ու հոգու կարիքն ունենք: Մենք ունենք ուժեղ, խելամիտ, եռանդուն միսիոներների կարիք, ովքեր գիտեն ինչպես ունկնդրել և պատասխանել Սուրբ Հոգու հուշումներին»:¹

Շատ իմաստներով աշխարհն այսօր ավելի բարդ է, քան 13 տարի առաջ էր: Մեր երիտասարդ տղամարդիկ ու կանայք ունեն ավելի շատ զվարճություններ, որոնք շեղում են նրանց՝ պատրաստվելու թե իրենց միսիային, թե ապագա երջանիկ կյանքին: Տեխնոլոգիաները զարգացել են, և համարյա բոլորը հնարավորություն ունեն օգտվելու գրպանային սարքերից, որոնք կարողանում են գրավել Աստծո մարդկային ընտանիքի ուշադրությունը թե դեպի մեծ բարիքը, և թե դեպի մեծ չարիքը:

Այս երեկո ես խոսում եմ ներկայումս ծառայող միսիոներների, ապագա միսիոներների և վերադարձած միսիոներների հետ, ինչպես նաև երիտասարդ տղամարդկանց հետ: Ես աղոթում եմ, որ դուք հասկանաք և խորամտորեն մտածեք այն ամենի մասին, ինչը ես պիտի ասեմ ձեզ, մինչ դուք ճամփորդում եք ձեր կյանքի այս հետաքրքիր և դժվար տարիներով:

Եկեղեցու կազմավորման վաղ շրջանում՝ նախքան միսիոներները կմեկնեին միսիայի, նրանց հետ հարցազրույց էին անցկացնում Գերագույն Իշխանավորները: Ներկայումս ձեզ հետ միսիոներական ծառայության հարցազրույցներ են



անցկացնում ձեր եպիսկոպոսներն ու ցցի նախագահները, և ձեր մեծ մասը ամբողջ կյանքում հարցազրույց չեն ունենա որևէ Գերագույն Իշխանավորի հետ: Պարզապես սա է իրականության արտացոլումը 15 միլիոն անդամ ունեցող աշխարհասփյուռ Եկեղեցում: Ես գիտեմ, որ խոսում եմ իմ եղբայրների համար, երբ ասում եմ ձեզ, որ մենք կցանկանայինք, որ հնարավոր լիներ ձեզ բոլորիդ անձամբ ճանաչել և կարողանալ ասել ձեզ, որ մենք սիրում ենք և աջակցում ենք ձեզ:

Բարեբախտաբար Տերը ուղիներ է ապահովել մեզ համար՝ կապ պահպանել ձեզ հետ: Օրինակ՝ Տասներկուսի Քվորումից որևէ անդամ յուրաքանչյուր միսիոներին նշանակում է իր միսիային: Չնայած սա արվում է առանց դեմ առ դեմ ավանդական հարցազրույցի, արդի տեխնոլոգիաները և հայտնությունը միավորվում են՝ ապահովելու մի իրադարձություն, որը զարմանալիորեն անձնական է և անհատական: Թույլ տվեք ինձ՝ պատմել, թե ինչպես է դա տեղի ունենում:

Ձեր լուսանկարը հայտնվում է համակարգչի էկրանին այն հիմնական տեղեկությունների հետ միասին, որոնք ներկայացրել են ձեր եպիսկոպոսը և ցցի նախագահը: Երբ ձեր նկարը հայտնվում է, մենք նայում ենք ձեր աչքերի մեջ և կրկնում միսիոներական երաշխավորագրի հարցերին տված ձեր պատասխանները: Այդ կարճ պահին թվում է, թե

դուք ներկա եք և անմիջականորեն պատասխանում եք մեզ:

Երբ մենք նայում ենք ձեր լուսանկարին, մենք հավատում ենք, որ դուք բոլոր իմաստներով պարզել եք «Բարձրացրած նշանողը», որն այսօր պահանջվում է հավատարիմ, հաջողակ միսիոներ լինելու համար: Հետո, Տիրոջ Հոգու իշխանությամբ և Նախագահ Թոմաս Ս. Մոնտնի դեկավարությամբ, մենք նշանակում ենք ձեզ Եկեղեցու՝ աշխարհով մեկ սփռված 406 միսիաներից մեկը:

Ոչ, դա նույնը չէ, ինչ որ անհատական, դեմ առ դեմ հարցազրույցը: Բայց մոտ է դրան:

Տեսահամաժողովը մեկ այլ եղանակ է, որն օգնում է կապ պահպանել Եկեղեցու Ղեկավարների և անդամների հետ, ովքեր հեռու են ապրում Եկեղեցու Գլխավոր Գրասենյակից:

Անմիջապես անցում կատարելով, ես կկամենայի, որ նրանք, ովքեր պատրաստվում են ծառայել միսիայում, նրանք, ովքեր վերադարձել են և բոլոր երիտասարդ ամուսինները մի քանի րոպե անցկացնեին ինձ հետ՝ կարծես թե մենք անհատական տեսազրույց ենք անցկացնում հենց հիմա:

Ինչ վերաբերում է ինձ, ես կպատկերացնեմ, որ նայում եմ ձեր աչքերի մեջ և ուշադիր լսում եմ ձեր պատասխանները այն մի քանի հարցերին, ու ես հավատում եմ, որ դրանք շատ բան կասեն ինձ ձեր վկայության խորության և Աստծուն

ձեր նվիրվածության մասին: Եթե ես կարողանայի վերապատմել, թե ինչ ասացի ես միսիոներներին 13 տարի առաջ. այն ամենը, ինչի կարիքը մենք այժմ ունենք, երիտասարդ ամուսինների ամենահոյակապ սերունդն է եկեղեցու պատմության մեջ: Մենք ձեր մաքուր սրտի ու հոգու կարիքն ունենք: Մենք ունենք ուժեղ, խելամիտ և եռանդուն միսիոներների կարիք, ովքեր գիտեն՝ ինչպես ունկնդրել և պատասխանել Սուրբ Հոգու հուշումներին, երբ դուք ձեր ճանապարհն եք ստեղծում առօրյա փորձությունների և զայթակղությունների մեջ՝ լինելով երիտասարդ ժամանակակից Վերջին Օրերի Սուրբ:

Այլ կերպ ասած, ժամանակն է բարձրացնել նշանողը ոչ միայն միսիոներների, այլև վերադարձած միսիոներների և ձեր ամբողջ սերունդի համար: Այս նպատակով խնդրում եմ ձեր սրտում մտածեք ձեր պատասխանները հետևյալ հարցերին.

1. Արդյո՞ք դուք կանոնավորապես ուսումնասիրում եք սուրբ գրությունները:
2. Արդյո՞ք դուք ծնկի եք իջնում աղոթքով՝ խոսելու Երկնային Հոր հետ ամեն առավոտ և երեկո:
3. Արդյո՞ք դուք ծով եք պահում և ծովի նվիրատվություն եք կատարում ամեն ամիս, եթե նույնիսկ դուք աղքատ, աշխատող ուսանող եք, ով չի կարող իրեն թույլ տալ շատ նվիրաբերել:
4. Արդյո՞ք դուք խորապես մտածում եք Փրկչի և ձեր համար Նրա կատարած Քավիչ զոհաբերության մասին, երբ ձեզ խնդրում են պատրաստել, օրհնել, բաժանել կամ ճաշակել հաղորդությունը:
5. Արդյո՞ք դուք մասնակցում եք ժողովներին և ձգտում եք կիրակի օրը սուրբ պահել:
6. Արդյո՞ք դուք ազնիվ եք տանը, դպրոցում, եկեղեցում և աշխատանքի մեջ:
7. Արդյո՞ք դուք մաքուր եք մտքով և հոգեպես: Արդյո՞ք դուք խուսափում եք պոռնագրաֆիա դիտելուց կամ վեբկայքեր, ամսագրեր, կինոնկարներ կամ հեռախոսային ծրագրերը նայելուց՝ ներառյալ



Tinder և Snapchat նկարներ, որոնք կշվոթեցնենին ձեզ, եթե ձեր ծնողները, Եկեղեցու առաջնորդները կամ Փրկիչը՝ Ինքը տեսնի:

8. Արդյո՞ք դուք ճիշտ եք օգտագործում ձեր ժամանակը՝ խուսափելով անհամապատասխան տեխնոլոգիաներից և սոցիալական լրատվամիջոցներից, ներառյալ համակարգչային խաղերը, որոնք կարող են բթացնել ձեր հոգևոր զգայնությունը:
9. Կա՞ արդյոք ինչ-որ բան ձեր կյանքում, որը պետք է փոխվի և ուղղվի՝ այս երեկոյից սկսած:

Շնորհակալություն ձեր կարճ անձնական այցելության համար: Ես հուսով եմ, որ դուք ազնվորեն ու խորամտորեն պատասխանեցիք այս հարցերից յուրաքանչյուրին: Եթե դուք համարում եք, որ թերանում եք այս պարզ սկզբունքներից որևէ մեկում, ապա ես պնդում եմ, որ դուք քաջաբար խոստովանեք և ձեր կյանքը ետ բերեք իր հունի մեջ՝ ճշմարիտ հետևողության ավետարանական չափանիշերին համապատասխան:

Այժմ, եղբայրներ, կարո՞ղ եմ առաջարկել մի լրացուցիչ խորհուրդ, որը կօգնի ձեզ՝ ձեռք բերել ավետարանի մասին վկայություն՝ ձեր սրտի և հոգու խորքում:

Ես հիշեցնում եմ ձեզ, վերադարձած միսիոներներ, որ ձեր պատրաստությունը կյանքի և ընտանիքի համար պետք է շարունակական լինի: «ՎԱ»-ն չի նշանակում «Վաստակած հանգստի գնացած Մորմոն»: Որպես վերադարձած միսիոներ, դուք «պետք է անհանգիստ կերպով զբաղված լինեք հիմնավոր գործերով, [ձեր] սեփական ազատ կամքով շատ գործեր անեք և արդարություն իրագործեք»: ²

Խնդրում եմ օգտագործեք միսիայի ընթացքում սովորած հմտությունները՝ օրհնելու ձեզ շրջապատող մարդկանց կյանքն ամեն օր: Ուրիշներին ծառայելու կենտրոնացումը մի տեղափոխեք բացառապես ուսման, աշխատանքի կամ սոցիալական միջոցառումների վրա: Փոխարենը հավասարակշռեք

ձեր կյանքը հոգևոր փորձառություններով, որոնք հիշեցնում և պատրաստում են ձեզ՝ ուրիշներին ծառայելու ամենօրյա շարունակական գործին:

Միսիայի ընթացքում դուք սովորել եք, թե որքան կարևոր է մարդկանց իրենց տներում այցելել: Ես հույս ունեմ, որ դուք, երիտասարդ չափահասներդ, անկախ այն բանից՝ ծառայել եք լիաժամկետ միսիայում, թե ոչ, հասկանում եք միայնակ, հիվանդ ու հուսալքված մարդկանց այցելելու կարևորությունը ոչ միայն որպես հանձնարարություն, այլ նաև Երկնային Հոր և Նրա զավակների հանդեպ ունեցած անկեղծ դրսևորում:

Նրանք, ովքեր ավագ դպրոցում են և պատրաստվում են միսիայի, ես խրախուսում եմ՝ մասնակցել և ավարտել սեմինարիան: Դուք՝ երիտասարդ ամուրիներդ, պետք է անդամագրվեք կրոնի ինստիտուտին: ³ Եթե դուք մասնակցում եք Եկեղեցու դպրոցներից որևէ մեկին, յուրաքանչյուր կիսամյակ հետևողականորեն ներառեք կրոնական կրթության մեկ դաս: Այս կարևոր ժամանակահատվածի ընթացքում, երբ դուք պատրաստվում եք միսիայի, հավերժական ամուսնության և կյանքին՝ որպես չափահաս մարդ, դուք պետք է շարունակեք ուղիներ փնտրել՝ սովորելու, աճելու և ոգեշնչում ու առաջնորդություն ստանալու Մուրբ Հոգու միջոցով: Մեմինարիայում, ինստիտուտում կամ կրոնական կրթության դասերի ընթացքում ավետարանի ուսումնասիրությունը ջանասիրությամբ և աղոթքով կարող է օգնել ձեզ այդ նպատակի իրականացման գործում:

Մասնակցելով Եկեղեցու որևէ դպրոցի դասերին կամ հաճախելով որևէ քուլտ, արդյո՞ք դուք կարծում եք, որ չափազանց զբաղված եք ավետարանն ուսումնասիրելու համար: Մեմինարիայի, ինստիտուտի կամ կրոնական դասերը կհավասարակշռեն ձեր կյանքը և գիտելիք կավելացնեն ձեր աշխարհիկ կրթությանը՝ ևս մեկ հնարավորություն տալով ձեզ՝ ուսումնասիրել սուրբ գրությունները և մարգարեների ու առաքյալների ուսմունքները:

Գոյություն ունեն չորս նոր ակնառու դասընթացներ, որ ես կբաջալերեի, որ յուրաքանչյուր չափահաս ամուրի հետաքրքրվի և մասնակցի: ⁴

Եվ մի մոռացեք, որ դասերն ու միջոցառումները, որոնք առաջարկվում են ձեզ՝ ձեր տեղական ինստիտուտում կամ ձեր ծխի կամ ճյուղի երիտասարդ ամուրիների միջոցով, նույնպես կլինեն մի վայր, որտեղ դուք կլինեք ուրիշ երիտասարդ տղամարդկանց ու երիտասարդ կանանց հետ և կոզկորեք ու կոզեղնեք միմյանց, երբ դուք սովորեք ու աճեք հոգեպես և շփվեք միասին: Եղբայրներ, եթե դուք մի կողմ դնեք ձեր բջջային հեռախոսները և իսկապես մի փոքր նայեք ձեր շուրջը, նույնիսկ կարող եք գտնել ձեր ապագա հավերժական զուգրուկերը ինստիտուտում:

Մեկ այլ փոքրիկ խորհուրդ, որ համոզված եմ, դուք գիտեիք, որ լինելու է հաջորդը: Դուք, երիտասարդ ամուրիներ, պիտի ժամադրվեք և հանդիպեք: Խնդրում եմ դադարեք հետաձգել այն: Ես գիտեմ, ձեզանից ոմանք վախենում են ընտանիք կազմել: Մակայն, եթե դուք ամուսնանաք ճիշտ անձնավորության հետ՝ ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում, դուք չպիտի վախենաք: Իրականում շատ խնդիրներ, որոնց հետ դուք առնչվում եք, կըրջանցվեն, եթե դուք «անհանգիստ կերպով զբաղված» լինեք արդար ժամադրությունով, սիրահետումով և ամուսնությունով: Մի գրեք նրան: Օգտագործեք ձեր սեփական ձայնը՝ ներկայանալու Աստծո արդարակյաց դուստրերին, ովքեր ձեր շուրջն են: Իրականում մարդկային ձայնը լսելը կհուզի նրան և նա հավանաբար կասի՝ այո:

Այժմ եղբայրներ, ես վկայում եմ ձեզ, որ Տեր Հիսուս Քրիստոսը կարող է օգնել մեզ՝ մեր կյանքում ուղղել այն ամենը, ինչն ուղղման կարիք ունի Նրա քավիչ գոհաբերության շնորհիվ:

Այս երեկո, երբ մենք պատրաստվում ենք տոնել Զատիկի կիրակին վաղը, խնդրում եմ դադար առեք ինձ հետ՝ հիշելու Քրիստոսի Քավության պարգևը: Հիշեք, որ մեր Երկնային Հայրը և մեր Փրկիչը՝ Հիսուս

Քրիստոսը ձեզ ամենից լավ է ճանաչում և ամենաշատն է սիրում:

Քավության միջոցով Քավիչն Իր վրա վերցրեց, մեր հոգսերը, ցավերը և մեղքերը: Աշխարհի Փրկիչը եկավ հասկանալու յուրաքանչյուրիս անհատապես՝ զգալով մեր փշրված հույսերը, մարտահրավերները և ողբերգությունները՝ Գեթսեմանում և խաչի վրա Իր տառապանքների միջոցով:⁵ Նա մահացավ՝ որպես մեր հանդեպ սիրո մի վերջնական ապացույց և թաղվեց նոր գերեզմանում այն ճակատագրական գիշերը:

Կիրակի օրն առավոտյան Հիսուսը հարություն առավ մեռելներից՝ նոր կյանք խոստանալով յուրաքանչյուրիս համար: Հարություն առած Տերը լիագորեց իր աշակերտներին՝ սովորեցնել բոլորին՝ հավատք ունենալ առ Քրիստոս, խոստովանել մեղքերը, մկրտվել, ստանալ Սուրբ Հոգու պարգևը և տոկալ մինչև վերջ: Եղբայրներ, մենք գիտենք, որ մեր Հայր Աստվածը և Նրա Միբերիկ Որդին հայտնվեցին Մարգարե Ջոզեֆ Միթին և Նրա միջոցով վերականգնեցին Հիսուս Քրիստոսի հավերժական ավետարանի լրիվությունը:

Ամուր եղեք, եղբայրներ: Պահեք Աստծո պատվիրանները: Տեր Հիսուս Քրիստոսը խոստանում է, որ բոլոր այն բաները, որոնք մենք ցանկանում ենք կատարել արդարությամբ, կլինի մերը: Եկեղեցու առաջնորդները հույսեր են կապում ձեզ հետ: Մեզ հարկավոր է, որ յուրաքանչյուր երիտասարդ ամուրի պատրաստվի ամուսնանալ, ծառայել և ապագայում դառնալ ղեկավար, որի համար ես խոնարհաբար աղոթում եմ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՆՇՈՒՄՆԵՐ

1. M. Russell Ballard, "The Greatest Generation of Missionaries," *Liahona*, Nov. 2002, 47.
2. Վարդապետություն և Ուխտեր 58:27:
3. Տես Առաջին Նախագահության նամակը, ապր. 21, 2011.
4. Տես "New Religion Classes to Be Offered at Church Universities and Institutes of Religion," [lds.org/topics/education/new-religion-classes](https://www.lds.org/topics/education/new-religion-classes).
5. Տես Մոսիա 3.5-13:



Երնց Ուլիսն Սոարնս
Յոթանասունի Նախագահությունից

Այո՛, մենք կարո՛ղ ենք և կհաղթեն՛ք

Մենք պետք է ավելի ամուր պահենք Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին մեր վկայությունը, ապա մենք կհաղթենք մեր առօրյա պատերազմները չարի դեմ:

Սիրելի եղբայրներ, ես խոնարհվում եմ արտոնությամբ այսօր ուղղել խոսքս ձեզ, Աստծո քահանայության կրողներին ամբողջ Եկեղեցում:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը մի անգամ ասել է.

«Աշխարհը կարող է երբեմն սպրեյու համար սարսափելի վայր լինել: Հասարակության բարոյական կերպարը թվում է այլասերվում է ահագնացող արագությամբ: Ոչ ոք՝ լինի երիտասարդ, ծեր, թե միջին տարիքի, պաշտպանված չէ այնպիսի բաներից, որոնք կարող են տապալել և կործանել մեզ:

Մակայն մենք չպետք է հուսահատվենք. . . մենք պատերազմ ենք մղում մեղքի դեմ: . . . Դա պատերազմ է, որը մենք կարող ենք և կհաղթենք: Մեր Երկնային Հայրը մեզ տվել է գործիքներ, որոնք մեզ անհրաժեշտ են հաղթանակ տանելու համար»¹

Մենք բոլորս՝ երիտասարդ և ծեր, ամեն օր հայտնվում ենք նախագահ Մոնսոնի նշած պատերազմում: Թշնամին ու նրա հրեշտակները փորձում են շեղել մեզ: Իրենց նպատակը՝ խրախուսել մեզ

շեղվել Տիրոջ հետ կապված մեր ուխտերից, ստիպելով մեզ կորցնել մեր հավերժական ժառանգության տեսլականը: Նրանք լավ են իմանում մեր Երկնային Հոր Նրա զավակների համար ծրագրի մասին, որովհետև նրանք մեզ հետ ներկա էին այն մեծ Երկնային Խորհրդի ժամանակ, երբ այդ ծրագիրը ներկայացվեց: Իրենք փորձում են շահագործել մեր թույլությունները և տկարությունները, և մոլորեցնել մեզ «խավարի մշուշներով . . . որոնք կուրացնում են աչքերը, և կարծրացնում սրտերը մարդկանց զավակների, և տանում նրանց հեռու՝ դեպի լայն ճանապարհներ, որպեսզի նրանք մահանան ու կորչեն»:²

Չնայած այդ ընդդիմությանը, որի հետ մենք բախվում ենք, ինչպես ուսուցանեց Նախագահ Մոնսոնը, մենք կարող ենք հաղթել և կհաղթենք այդ պատերազմում: Տերը վստահում է մեր ունակությանն ու վճռականությանը իրագործելու այն:

Սուրբ գրությունները պարունակում են անհամար օրինակներ նրանց մասին, ովքեր հաղթող եղան իրենց պատերազմներում, նույնիսկ



Հիտուս քրիստոսի վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները և Բարձրագույն Պաշտոնյաները

ԱՍՏՁԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ



Հենրի Բ. Այրինգ
Առաջին խորհրդակցան



Թունաս Ս. Մոնտո
Նախագահ



Դիտեր Զ. Ուլտրոֆ
Երկրորդ խորհրդակցան

ՏԱՆԵՐԿՈՒ ՍՈՒՑՑԱՆՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ



Բյուր Բ. Օսպեր



Լ. Թոմ Փերի



Ռասմել Մ. Նելսոն



Դավին Հ. Օքս



Մ. Ռասմել Բալլարո



Ռիչարդ Գ. Աքրո



Ռոբերտ Դ. Հելյս



Ջեֆրի Ռ. Հոլլանդ



Դեյվիդ Ա. Բերնար



Քվեթին Լ. Քոք



Դ. Թոմ քրիստոֆերոս



Նիլ Լ. Սնդրսեն

ՋՈՒՆԱՏԱՐՈՒՆ ԵՎ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ



Ռոնալդ Ա. Ռաբբեր



Լ. Ուոլթեր Բեյթս



Դիանո Լ. Շոքոլոս



Ռիչարդ Ջ. Մենլեյ



Քրիստ Ե. Քրիստանեն



Ուոլտեր Սաբին



Էմի Գ. Ուոլթեր

ՓՈՋԱՆԱՍՏՈՒՆԻ ՄՍՏԱՅԻՆ ՔՎԿՐՈՒՄ

(այբբանական կարգով)



Ասրուհ Ա. Արսլանյան



Հուհ Լ. Արստ



Արամ Ա. Արսլանյան



Արթուր Բ. Առնող



Դավիթ Ա. Բաղդասարյան



Հայկ Ս. Բունան



Քրիստինա Ա. Բարդոսյան



Յուս Հաննա Հոյի



Քիչիկ Բ. Քարոյի



Դոն Ռ. Քլարկ



Քառյկ Բ. Քոթ



Լուսինա Շ. Եղիպոզյան



Լուսինա Շ. Եղիպոզյան



Կարապետ Ռ. Վառսեյան



Լեզարան Գ. Քրիստիանյան



Բենյամին Դոն Հոյան



Էդվարդ Դ. Դյուր



Քենդիս Ռ. Դանիելյան



Լարի Ջ. Էքո Նոյ



Սթեֆան Գ. Էլի



Դեյվիդ Ֆ. Էնան



Ելենյան Ռ. Չալաբյան



Դոն Ռ. Քլարկ



Ռոբերտ Ս. Գալ



Կարոյ Ա. Տերոյ



Ջ. Ռեյնոլդսոն



Քրիստին Վարդանյան




Ջեյմս Կ. Վեյլ



Վոլոդիմիր Ֆ. Գրաբսկին



Ս. Արթուր Գրուր



Ջեյմս Ջ. Հաննա



Սլեյմ Դ. Հեյնի



Դեյվիդ Լ. Ջեյմս



Փոլ Կ. Ջեյմս



Պատրիկ Քլարկ




Կոն Գ. Քլեյ



Բրեյն Տրոյսենբերգ



Էրիկ Կ. Կոպլենդ



Սաղա Ն. Ռիզակյան



Օ. Վինսենթ Կանի



Քեյթլին Ա. Հաննա



Լարի Ա. Քեյլեր



Լարի Ռ. Լորեն



Հրաչյա Առնապյան



Սարգիս Բ. Նաշ



Ա. Պաֆլուր Նիկոն



Բրեյն Հ. Նիկոն



Ալան Ֆ. Փաթեր



Քեյթլին Ա. Փրոտեր



Փոլ Բ. Փիլին



Ռաֆայել Բ. Փինոն



Բրոուս Դ. Փրոքթեր



Դեյվ Գ. Ռենկան




Ջիմ Տրոյսենբերգ



Սաղա Ն. Ռիզակյան



Մարյան Օդյա



Փրոյ Գ. Սալ



Հրաչյա Բ. Սարգիսյան



Ջեյմս Բ. Սարգիսյան



Ջեյմս Բ. Սարգիսյան



Ջոզեֆ Կոն



Սթիվեն Գ. Անտոն



Վերոնիկա Արսլանյան




Սաղա Տոն Ռ. Ռեյ



Հուն Ա. Քեյմբրիջ



Խոսան Ա. Ռոսեր



Ֆրանսիսկա Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար

ՆԱԿԱԿՊԱՍՏՈՒԹՅՈՒՆ



Վերոնիկա Արսլանյան



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար




Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար




Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար




Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար



Վալդեմար Վալդեմար

ՓՈՋԱՆԱՍՏՈՒՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՔՎԿՐՈՒՄ

(այբբանական կարգով)



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան




Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան




Վիկտոր Կ. Արսլանյան



Վիկտոր Կ. Արսլանյան





Ժամացույցի սլաքի ուղղությամբ վերևում ձախից լուսանկարված են՝ Եկեղեցու անդամները և միսիոներները՝ ՍակՄինսփիում, Օրեգոն, ԱՄՆ; Սան Մարտին դե Լոս Անջելոս, Լոյքեն, Արգենտինա; Յոհանեսբուրգում, Հարավային Աֆրիկա; Շեյսինսկիում, Ֆիլիպինյա; Լաթալում, Ռիո Գրանդե դը Լորտե, Բրազիլիա; Սիդադ դել Կարմենում, Կամպեչե, Մեքսիկա; Պեպրինյանում, Ֆրանսիա; Մոնրեալում, Կանադա; Լոնդոնում, Անգլիա:



շատ թշնամական իրավիճակներում: Այդ օրինակներից մեկը հրամանատար Մորոնին է Մորոնի գրքում: Այդ նշանավոր երիտասարդը խիզախորեն պաշտպանում էր ճշմարտությունը այն ժամանակ, երբ տարածված էին շատ պատերազմեր ու հակառակություններ, ինչը մեծ վտանգի էր ենթարկում Նեփիացիների ամբողջ ազգը: Թեև նա հանճարեղ էր կատարում իր պարտականությունները, Մորոնին մնաց խոնարհ: Այս և այլ հատկանիշներն այդ ժամանակ դարձրեցին իրեն նշանավոր գործիք Աստծո ձեռքերում: Ալմայի գրքում բացատրվում է, որ եթե բոլոր մարդիկ Մորոնիի նման լինեին, «դժոխքի գորությունները հավիտյան կսասանվեին. այդ դեր երբեք գորություն չէր ունենա մարդկանց զավակների սրտերի վրա»:³ Մորոնիի բոլոր հատկանիշները առաջացել են իր մեծ հավատքից առ Աստված և Տեր Հիսուս Քրիստոս⁴, և իր վճռակալության շնորհիվ՝ հետևելու Աստծո և Նրա մարգարեների ձայնին:⁵

Փոխաբերական իմաստով մենք բոլորս պետք է փոխակերպվենք ժամանակակից հրամանատար Մորոնիների՝ չարի դեմ պատերազմներ հաղթելու համար: Ես ճանաչում եմ մեկ շատ հավատարիմ սարկավագի, ով փոխակերպեց իրեն ժամանակակից հրամանատար Մորոնիին: Քանի որ նա մտադիր էր հետևել իր ծնողների և եկեղեցու ղեկավարների խորհուրդներին, նրա հավատքը և վճռակալությունը փորձվում էին ամեն օր, նույնիսկ նրա երիտասարդ տարիքում: Մի օր նա ասաց ինձ, որ զարմացած էր մի դժվար ու անհարմար իրավիճակով. նրա ընկերները նայում էին պոռոնոգրաֆիկ նկարներ իրենց հեռախոսներով: Այդ իսկ պահին, այդ երիտասարդը պետք էր որոշել, թե ինչն էր ամենակարևոր իր համար՝ ժողովրդականությունը թե արդարակեցությունը: Մի քանի վայրկյան անց, նա լցվեց խիզախությամբ ու ասաց ընկերներին, որ նրանց արածը ճիշտ չէր: Ավելին, նա ասաց նրանց, որ պետք է դադարեն անել այդ, այլապես նրանք կդառնան այդ սովորության ստրուկներ:



Նրա դասարանցիներից շատերը ծաղրեցին այս խորհուրդը՝ ասելով որ դա կյանքի մասն է և ոչ մի սխալ բան դրանում չկար: Այնուամենայնիվ, նրանց միջև կար մեկը, ով լսեց երիտասարդի խորհուրդը և որոշեց դադարեցնել այն, ինչ անում էր:

Այդ սարկավագի օրինակը դրական ազդեցություն ունեցավ նրա դասարանցիներից առնվազն մեկի վրա: Անշուշտ, ինքը և նրա ընկերը արժանացան ծաղրանքի ու հալածանքի այդ որոշման պատճառով: Մյուս կողմից, նրանք հետևեցին Ալմայի իր ժողովրդին ուղղված հորդորանքին, երբ ինքը ասաց. «դուրս եկեք ամբարիշտների միջից և զա՛տ եղեք, և մի՛ դիպչեք նրանց անմաքուր բաներին»:⁶

«Երիտասարդների գորության համար» գրքով կում տրված է Առաջին նախագահության կողմից հաստատված հետևյալ խորհուրդը եկեղեցու երիտասարդության համար. «Դուք պատասխանատվություն եք կրում ձեր կատարած ընտրությունների համար: Աստված մտածում է ձեր մասին և կօգնի ձեզ լավ ընտրություններ կատարել, անգամ եթե ձեր ընտանիքը և ընկերներն իրենց կամքի ազատությունը ոչ ճիշտ եղանակով են օգտագործում:

Ցուցաբերեք բարոյական խիզախություն և հաստատուն եղեք, ենթարկվելով Աստծո կամքին, անգամ եթե մենակ եք այդ հարցում: Այդպես վարվելով՝ դուք օրինակ կժառայեք ուրիշների համար»:⁷

Բարու պատերազմը չարի դեմ կշարունակվի մեր կյանքում, քանի որ հակառակորդի նպատակն է՝ դարձնել բոլոր մարդկանց իրեն նման թշվառ: Սատանան և նրա հրեշտակները կփորձեն ծածկել մեր մտքերը և ղեկավարել մեզ՝ գայթակղելով մեզ գործել մեղքը: Եթե կարողանան, նրանք կփչացնեն ամեն բարի բան: Այնուամենայնիվ, կարևոր է հասկանալ, որ նրանք իշխանություն կունենան մեր վրա միայն եթե մենք դա թույլ տանք:

Սուրբ գրություններում կան մի քանի օրինակներ՝ Նեորի, Կորի-հորի, և Մերեմի նման մարդիկ, ովքեր տվեցին այդ թույլտվությունը հակառակորդին և, հետևաբար, շփոթության և նույնիսկ կործանման մատնվեցին: Մենք պետք է աչալուրջ լինենք այս վտանգի նկատմամբ: Մենք չենք կարող մեզ թույլ տալ շփոթվել հանրաճանաչ ուղեբաներով, որոնք հեշտ են ընդունվում աշխարհում և հակասում են Հիսուս Քրիստոսի ավետարանի վարդապետությանն ու սկզբունքներին: Աշխարհիկ այդ ուղեբաններից շատերը ներկայացնում են ոչինչ ավելի, քան մեր հասարակության մեղքերն արդարացնելու փորձ: Մենք պետք է հիշենք, որ ի վերջո, բոլորը կկանգնեն «Քրիստոսի առջև, դատվելու ըստ իրենց գործերի՝ լինեն դրանք բարի, թե լինեն դրանք չար»:⁸ Այդ աշխարհիկ ուղեբաններին հանդիպելիս, մեծ խիզախություն ու մեր Երկնային Հոր ծրագրի մասին ամուր գիտելիք կպահանջվի մեզանից ճիշտը ընտրելու համար:

Մեզանից յուրաքանչյուրը կարող է ստանալ ճիշտը ընտրելու ուժը, եթե փնտրենք Տիրոջը և լիովին վստահենք ու հավատանք Նրան: Բայց, ինչպես սովորեցնում են սուրբ գրությունները, մենք պետք է ունենանք «մաքուր սիրտ» և «անկեղծ միտում»: Ապա, Իր անսահման ողորմածությամբ, Տերը «կհայտնի [մեզ]



ճշմարտությունը՝ Սուրբ Հոգու գործությամբ: Եվ Սուրբ Հոգու գործությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ:»⁹

Սուրբ Հոգու միջոցով ստացած այդ գիտելիքը հենց մեր վկայությունն է, որը առաջ է տանում մեր հավատքն ու վճռականությունը՝ հետևելու վերականգնված ավետարանի ուսմունքներին այս վերջին օրերում, անկախ նրանից, թե ինչ հանրաճանաչ ուղերձներ ենք մենք լսում աշխարհից: Հակառակորդի կրակոտ նետերից պաշտպանվելու վահանը պետք է մեր վկայությունը լինի: ¹⁰ Դա ապահով կողորդողի մեզ աշխարհում տիրող խավարի և շփոթության միջով: ¹¹

Ես սովորեցի այդ սկզբունքը, երբ ծառայում էի որպես երիտասարդ միսիոներ: Ես ու իմ ընկերակիցը ծառայում էինք շատ փոքր ու հեռավոր ճյուղում: Մենք փորձում էինք

խոսել այդ քաղաքի յուրաքանչյուր անձի հետ: Նրանք լավ ընդունեցին մեզ, բայց սիրում էին բանավիճել սուրբ գրությունների շուրջ և հարցնում էին մեր ուսուցման ճշմարտացիության կոնկրետ ապացույցի մասին:

Ես հիշում եմ, որ ամեն անգամ երբ ես ու իմ ընկերակիցը մտադիր էինք փորձել որևէ բան ապացուցել մարդկանց, Աստծո Հոգին լքում էր մեզ և մենք զգում էինք ամբողջովին կորած ու շփոթված: Մենք զգում էինք, որ պետք է ավելի ուժգնորեն համապատասխանեցնեինք մեր վկայությունները ուսուցանվող ավետարանի ճշմարտություններին: Այդ ժամանակից ի վեր, ես հիշում եմ, որ երբ մենք վկայություն էինք բերում ամբողջ սրտով, Սուրբ Հոգու անձայն հաստատող գործությունը այցելում էր մեզ, և տեղ չկար շփոթության կամ բանավեճի համար:

Ես բացահայտեցի, որ չկա որևէ չար ուժ, որ կարողանա շփոթեցնել, մոլորեցնել, կամ քայքայել Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտի անկեղծ վկայության գործությունը:

Ինչպես սովորեցնում էր Փրկիչը, հակառակորդը փափագում է մաղել մեզ ցորենի պես՝ կորցնելով բարիքի համար աշխարհի վրա ազդելու մեր ունակությունը: ¹²

Իմ սիրելի եղբայրներ, աշխարհում տարածվող շփոթության և կասկածանքների ալիքի պատճառով, մենք պետք է շատ ավելի անսասան լինենք Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին վկայության պահպանման մեջ: Ապա, ճշմարտությունն ու արդարությունը պաշտպանելու մեր ունակությունը մեծապես կաճի: Մենք կհաղթենք չարի դեմ առօրյա պատերազմեր, և, մարտադաշտում կյանք կորցնելու փոխարեն, մենք այլոց կհավաքենք Ուսուցչի դրոշի շուրջ:

Ես հրավիրում եմ բոլորին՝ գտնել ապահովություն սուրբ գրություններում գտնվող ուսմունքներում: Հրամանատար Մորոնի համապատասխանեցրեց իր հավատքը առ Աստված և ճշմարտության մասին վկայությունը սուրբ գրություններում գտնվող գիտելիքին և իմաստությանը: Այսպիսով, նա հավատում էր, որ կստանա Տիրոջ օրհնությունները և ձեռք կբերի շատ հաղթանակներ, ինչն էլ իրականում տեղի ունեցավ:

Ես հրավիրում եմ բոլորին գտնել ապահովություն այս օրերի մարգարեների իմաստուն խոսքերում: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասաց. «Մենք, որ կարգվել ենք Աստծո քահանայությանը, կարող ենք շատ բան փոխել: Երբ պահում ենք մեր անձնական մաքրությունը և պատվում մեր քահանայությունը, մենք դառնում ենք արդար օրինակներ մյուսների համար. . . [և մենք] լույս ենք սփռում մթազնող աշխարհում»: ¹³

Ես հրավիրում եմ բոլորին հավատալ Հիսուս Քրիստոսի քավության արժանիքներին և գործությանը: Նրա քավող զոհաբերության շնորհիվ, մենք կարող ենք խիզախություն ստանալ մեր ժամանակի բոլոր

պատերազմները հաղթելու համար, նույնիսկ դժվարությունների, մարտահրավերների, և գայթակհությունների մեջ: Եկեք հավատանք Նրա սիրուն և փրկարար գործությանը: Քրիստոսը ինքն ասել է.

«Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և Կենսքը: Ոչ ոք չի գայ Հոր մոտ, եթե ոչ ինձանով»:¹⁴

«Ես եմ աշխարհի լույսը. ով իմ յետեվից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կ'ընդունի կենսաց լույսը»:¹⁵

«Այս բաները խօսեցի ձեզ հետ, որ ինձանով խաղաղութիւն ունենաք. աշխարհքումը նեղութիւն կ'ունենաք. բայց քաջացեք, և ես յաղթել եմ աշխարհքին»:¹⁶

Ես բերում եմ վկայությունը այս ճշմարտությունների մասին՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թոմաս Ս. Մոնտն «Նայենք ետ և առաջ շարժվենք» *Հիսուսուս*, մայիս 2008, 90:
2. 1 Նեփի 12.17:
3. Ալմա 48.17:
4. Տես Ալմա 48.13:
5. Տես Ալմա 43.23–24; 48.16:
6. Ալմա 5.57:
7. *Երիտասարդներին գորացնելու համար* (գրքույկ, 2011), 2:
8. Տես 3 Նեփի 27.14:
9. Մորոնի 10.4–5:
10. Տես Եփեսացիներ 6.16; Վարդապետություն և Ովստեր 27.17:
11. Տես Յայտնութիւն 12.11:
12. Տես Դուկաս 22.31–32:
13. Թոմաս Ս. Մոնտն, «Ապահով առաջնորդվենք տուն», *Հիսուսուս*, նոյ. 2014, 68:
14. Յովհաննէս 14.6:
15. Յովհաննէս 8.12:
16. Յովհաննէս 16.33:



Լարի Ս. Գիբսոն

Երիտասարդ Տղամարդկանց գերագույն նախագահության նոր ազատված առաջին խորհրդական

Հայրություն՝ մեր հավերժական ճակատագիրը

Թող որ մեզանից յուրաքանչյուրը վայելի հայրական օրհնությունների առատությունն այս կյանքում և Նրա գործի և Նրա փառքի իրականացումը՝ դառնալով մեր ընտանիքների հայրեր հավերժության մեջ:

Ի մ երիտասարդ տարիներին հայրս մի կարևոր դաս է ուսուցանել ինձ: Նա զգում էր, որ ես շատ էի հետաքրքրվում աշխարհիկ բաներով: Երբ գումար էի ունենում, ես անմիջապես ծախսում էի այն, գրեթե միշտ՝ ինձ վրա: Մի օր նա ինձ տարավ, որպեսզի նոր կոշիկներ գնի ինձ համար:

Այնտեղ նա ինձ հորդորեց իր հետ նայել այդ բաժնի երկրորդ հարկի լուսամուտից դուրս: «Ի՞նչ ես տեսնում», հարցրեց նա: «Շենքեր, երկինք, մարդկանց», եղավ իմ պատասխանը: «Քանի՞ հոգու: «Շատերի»:

Ապա, նա իր գրպանից հանեց այս մանրադրամը: Երբ նա տվեց ինձ այն, նա հարցրեց. «Ի՞նչ է սա»: Ես անմիջապես պատասխանեցի. «Արծաթե դոլար»:

Օգտագործելով քիմիայի մասին իր գիտելիքից՝ նա ասաց. «Եթե դու հալես այդ արծաթե դոլարը և խառնես այն համապատասխան բաղադրիչների հետ, ապա դու կստանաս արծաթի նիտրատ: Եթե մենք այս լուսամուտը ծածկենք արծաթի



«Եթե դու կենտրոնանաս արծաթի վրա, - պատասխանեց հայրս, - միայն կտեսնես քեզ և, վարագույրի նման, այն քեզ հենու կպահի պարզորեն տեսնելու այն հավերժական ճակատագիրը, որը Երկնային Հայրը պատրաստել է հենց քեզ համար»:

նիտրատով, ի՞նչ կտեսնես դու»:

Ես չգիտեի, այնպես որ նա ինձ ուղեկցեց մի լայնածավալ հայելու մոտ և հարցրեց. «Այժմ, ի՞նչ ես տեսնում»:

«Ես ինձ եմ տեսնում»:

«Ոչ, - պատասխանեց նա, - այն ինչ դու տեսնում ես, դա արծաթն է անդրադարձնում քեզ: Եթե դու կենտրոնանաս արծաթի վրա, միայն կտեսնես քեզ և, վարագույրի նման, այն քեզ հեռու կպահի պարզորեն տեսնելու այն հավերժական ճակատագիրը, որը Երկնային Հայրը պատրաստել է հենց քեզ համար»:

«Լարի, - նա շարունակեց, - «մի փնտրեք այս աշխարհի բաները, սակայն. . . առաջ. . . փնտրեք Աստուծոյ արքայությունը եւ *[նորա]* արդարությունը խնդրեցէք. Եւ այդ ամենքը կ'որուի ձեզ» (Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Մատթեոս 6.38 [Մատթեոս 6.33, տողատակի գրառումով]):

Նա հորդորեց ինձ պահել դուլարը և երբեք չկորցնել այն: Ամեն անգամ նայելով դրան, ես պետք է մտածեի այն հավերժական ճակատագրի մասին, որ Երկնային Հայրը նախատեսել է ինձ համար:

Ես սիրում էի հայրիկիս և թե ինչպես էր նա ուսուցանում: Ես ցանկանում էի նմանվել նրան: Նա իմ սրտում սերմանեց լավ հայր

դառնալու ցանկությունը և խորապես հուսով եմ, որ ապրում եմ նրա օրինակին համահունչ:

Մեր սիրելի Մարգարե՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հաճախ ասել է, որ մեր ընտրությունները որոշում են մեր ճակատագիրը և ունեն հավերժական հետևանքներ (տես “Decisions Determine Destiny” [Church Educational System fireside, Nov. 6, 2005], 2, lds.org/broadcasts):

Ապա, չպե՞տք է արդյոք մենք հստակ տեսական զարգացնենք մեր *հավերժական ճակատագրի* վերաբերյալ, մասնավորապես այն բանի, որին Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք հասնենք՝ հավերժական հայրության: Թող որ մեր *հավերժական ճակատագիրը* որոշիչ գործոն հանդիսանա *մեր բոլոր* ընտրությունների համար: Անկախ նրանից, թե որքան դժվար կլինեն այդ ընտրությունները, Հայրը կաջակցի մեզ:

Այդ նպատակի գորությունը հասկացա, երբ միացա իմ 12-ամյա և 13-ամյա որդիներին՝ 50/20 մրցույթի ժամանակ: 50/20 իրենից ներկայացնում է՝ քայլել 50 մղոն (80 կմ), 20 ժամից քիչ ժամանակում: Մենք մեկնարկեցինք Երեկոյան ժամը 9.00 -ին և քայլեցինք այդ ողջ գիշերն ու հաջորդ օրվա մեծ մասը:

Դա մի հոգնեցուցիչ 19 ժամ էր, սակայն մենք հաջողեցինք:

Տուն վերադառնալուս պես, մենք բառացիորեն սողակեցինք տուն, որտեղ հրաշալի կլինը և մայրը հաճելի ընթրիք էր պատրաստել, որին մենք ձեռք չտվեցինք: Իմ կրտսեր որդին ամբողջովին հոգնած, փլուզվեց բազմոցի վրա, մինչդեռ իմ ավագ որդին քարշ գալով իջավ իր ննջասենյակ:

Մի փոքր ցավագին հանգիստ ընդունելով, ես գնացի իմ կրտսեր որդու մոտ, որպեսզի համոզվեի, որ նա դեռ ողջ է:

«Դու կարգի՞ն ես», հարցրեցի ես:

«Հայրիկ, դա ամենադժվար բանն էր, որ ես երբևէ արել էի և ես այլևս չեմ ցանկանում կրկնել դա»:

Ես չէի ցանկանում ասել նրան, որ ես նույնպես չէի ցանկանում կրկին անել դա: Փոխարենը՝ ես ասացի նրան, թե որքան հպարտ էի, որ նա այդպիսի դժվար բան իրականացրեց: Ես գիտեի, որ դա նրան կպատրաստեր այլ դժվար բաների, որոնց նա կհանդիպեր ապագայում: Այդ միտքը զլլումս, ես ասացի. «Որդիս, թույլ տուր հետևյալ խոստումը տալ քեզ: Երբ գնաս միսիայի, դու երբեք ստիպված չես լինի մեկ օրում քայլել 50 մղոն»:

«Լավ, հայրիկ: Այդ դեպքում ես կգնամ»:

Այդ պարզ խոսքերն իմ հոգին լցրեցին երախտագիտությամբ և ուրախությամբ:

Ապա, ես ցած իջա իմ ավագ որդու մոտ: Ես պառկեցի նրա կողքին և դիպա նրան: «Որդիս, դու լա՞վ ես»:

«Հայրիկ, դա ամենադժվար բանն էր, որ ես երբևէ արել էի իմ կյանքում և ես այլևս, երբեք չեմ ցանկանում կրկնել դա»:

Նրա աչքերը փակվեցին, ապա, բացելով, նա ասաց. «Եթե, իհարկե, իմ որդին չցանկանա, որ ես անեմ դա»:

Արցունքները հոսեցին, երբ ես արտահայտեցի, թե որքան երախտապարտ էի ես նրա համար: Ես ասացի նրան, որ նա շատ ավելի լավ հայր կլինի, քան ես եմ: Իմ սիրտը լցվեց, քանի որ իր Երիտասարդ և զգայուն տարիքում նա արդեն հասկանում էր, որ քահանայության



ամենասարքազան պարտականություններից մեկը հայր լինելն էր: Նա այդ դերի և կոչման հանդեպ ոչ մի վախ չունեի, այն նույն կոչումը, որն Մատվաթ ինքն է ցանկանում, որ մենք օգտագործենք Նրա հետ խոսելիս: Ես գիտեի, որ պատասխանատվություն ունեի սնուցելու հայրության անթեղը, որը վառվում էր որդու մեջ: Փրկչի այս խոսքերը, որպես հայր ավելի մեծ իմաստ ստացան ինձ համար:

«Որդին իրանից կարող չէ ոչինչ անել, թե որ չ'տեսնէ Հօրն անելիս. Որովհետև լինչ որ նա անում է, հենց Որդին էլ այն բանը նորա նման է անում» (Հովհաննես 5.19):

«Իմ անձիցը ոչինչ չեմ անում. այլ ինչպես իմ Հայրը սովորեցրեց ինձ» (Հովհաննես 8.28):

Ինձ դուր է գալիս հայր և ամուսին լինել՝ ամուսնացած լինել Երկնային ծնողների ընտրյալ դստեր հետ: Ես սիրում եմ նրան: Դա իմ կյանքի ամենահաճելի մասն է: Այդ երեկո իմ հույսն այն էր, որ իմ հինգ որդիները և իրենց քույրերն իմ մեջ տեսնեին այն ուրախությունը, որը գալիս է հավերժական ամուսնությունից, հայրությունից և ընտանիքից:

Հայրեր, համոզված եմ, որ դուք լսել եք այս ասույթը. «Քարոզիր ավետարանը ամեն ժամանակ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օգտագործիր բառեր» (Վերագրվում է Ֆրանցիսկ Մասիգեցիին): Յուրաքանչյուր օր դուք սովորեցնում եք ձեր զավակներին, թե ինչպես հայր լինել: Դուք հաջորդ սերունդների համար հիմք եք դնում: Ձեր որդիները կսովորեն, թե ինչպես լինեն ամուսիններ ու հայրեր՝ դիտարկելով այն եղանակը, որով դուք կկատարեք այդ դերը: Օրինակ՝

Արդյոք նրանք գիտե՞ն, թե որքան շատ եք դուք սիրում և փառվախում իրենց մորը և որքան շատ է ձեզ դուր գալիս լինելու նրանց հայրը:

Նրանք կսովորեն, թե ինչպես պետք է վարվել իրենց ապագա կնոջ և երեխաների հետ, եթե նրանք տեսնեն, թե ինչպես եք դուք վարվում *նրանցից յուրաքանչյուրի հետ* այնպես, ինչպես Երկնային Հայրը կտեսնի:



Ձեր օրինակի շնորհիվ նրանք կարող են սովորել, թե ինչպես հարգել, պատվել և պաշտպանել կանանց:

Ձեր տանը նրանք կարող են սովորել, թե ինչպես կարող են սիրով և արդարակեցությամբ նախագահել իրենց ընտանիքների վրա: Նրանք կարող են սովորել, թե ինչպես ապահովեն իրենց ընտանիքի նյութական և հոգևոր կարիքները և պաշտպանությունը (տես «Ընտանիք» հայտարարություն աշխարհին» *Հիստորիա*, նոյ. 2010, 129):

Եղբայրներ, իմ հոգու ողջ կորով ես ցանկանում եմ, որ դուք մտածեք այս հարցի շուրջ. Արդյոք ձեր որդիները տեսնում են ձեր ձգտումն անելու այն, ինչ Երկնային Հայրն է ցանկանում, որ *նրանք* անեն:

Ես աղոթում եմ, որ պատասխանն այդ լինի: Եթե պատասխանը ոչ է, ապա դեռ ուշ չէ փոխվելու համար, սակայն դուք պետք է սկսեք այսօրվանից: Եվ ես վկայում եմ, որ Երկնային Հայրը կօգնի ձեզ:

Դուք, երիտասարդ տղաներ, ում ես այդքան սիրում եմ, դուք գիտեք, որ պատրաստվում եք ստանալ Մեքսիկոյից Քահանայություն, ստանալ տաճարային սրբազան արարողություններ, իրագործելու լիաժամկետ միսիայում ծառայելու ձեր *պարտականությունը* և *պարտավորությունը*, իսկ հետո, առանց երկար սպասելու, տաճարում ամուսնանալ Աստծո մի դստեր հետ և կազմել ընտանիք: Այնուհետև, Մուրք Հոգուց առաջնորդվելով, կարող եք ղեկավարել ձեր ընտանիքը հոգևոր բաներում (տես ՎևՈւ 20.44; 46.2; 107.12):

Ողջ աշխարհով մեկ շատ երիտասարդ տղաների եմ հարցրել, թե «Ինչո՞ւ եք դուք այստեղ»:

Մինչև հիմա ոչ ոք չի պատասխանել. «Սովորելու, թե ինչպես հայր լինել, որպեսզի ես պատրաստված և որակավորված լինեմ ստանալու այն ամենն, ինչ Երկնային Հայրն ունի»:

Եկեք ուսումնասիրենք Ահարոնյան Քահանայության *ձեռ* պարտականություններն այնպես, ինչպես նկարագրված է Վարդապետություն և Ուխտերի 20-րդ բաժնում: Ուշադիր եղեք *ձեռ* զգացմունքների հետ, երբ ես կիրառեմ այդ պարտականությունները ձե՛ր ընտանիքում ձե՛ր ծառայության համատեքստում:

«Բոլոր [ձեր ընտանիքին] հրավիրեք գալ Քրիստոսի մոտ» (59-րդ հատված):

«Միշտ հսկեք [նրանց], եղեք նրանց հետ և ավրապնդեք նրանց» (53-րդ հատված):

«Քարոզեք, ուսուցանեք, մեկնաբանեք, հորդորեք և մկրտեք» ձեր ընտանիքի անդամներին (46-րդ հատված):

«Հորդորեք նրանց, որ աղոթեն բարձրաձայն և զաղտնի, և կատարեն ընտանեկան բոլոր պարտականությունները» (47-րդ հատված):

«Հետևեք, որ [ձեր ընտանիքում] չլինի անօրինություն, ոչ կոպտություն միմյանց հանդեպ, ոչ էլ ստախոսություն, ոչ բամբասանք, ոչ էլ չարախոսություն» (54-րդ հատված):

«Տեսեք, որ [ձեր ընտանիքը] հաճախ հավաքվի միասին» (55-րդ հատված):

Աջակցեք ձեր հորը իր հայրապետի պարտականություններում:

Երբ հայրը ներկա չէ, քահանայության գործությամբ աջակցեք ձեր մորը (տես 52, 56 հատվածները):

Երբ ձեզ խնդրեն. «կարգեք այլ քահանաներ, ուսուցիչներ և սարկավազներ» ձեր ընտանիքում (48-րդ հատված):

Արդյոք դա չի՞ հնչում, որպես *հոր աշխատանքը և դերը:*

Երիտասարդ տղաներ, Սհարոնյան քահանայության ձեր պարտականությունների կատարումը նախապատրաստում է ձեզ *հայրությանը: Պարտականությունն Աստծո առաջ* գրքույկը կարող է օգնել ձեզ իմանալ և որոշակի ծրագրեր մշակել ձեր պարտականությունների կատարման վերաբերյալ: Այն կարող է որպես ուղեցույց և օգնական ծառայել ձեզ, մինչ դուք փնտրում եք Երկնային Հոր կամքը և նպատակներ սահմանում դրանք իրականացնելու համար:

Երկնային Հայրը հատուկ գործի և հավերժական նպատակների համար է ձեզ բերել այստեղ՝ այս որոշակի ժամանակաշրջանում: Նա ցանկանում է, որ դուք պարզորոշ տեսնեք և հասկանաք այդ նպատակը: Նա ձեր Հայրն է և դուք մշտապես կարող եք դիմել Նրան առաջնորդության համար:

Ես գիտեմ, որ Երկնային Հայրը մտածում է մեզանից յուրաքանչյուրի մասին և մեր հավերժական ճակատագրին հասնելու համար անհատական ծրագիր ունի նախատեսած: Նա ուղարկել է Իր Միածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որպեսզի Նրա Քավության շնորհիվ մենք հաղթահարենք մեր թերությունները: Նա օրհնեց մեզ Սուրբ Հոգով, որպեսզի նա լինի *մեր հավերժական ճակատագրի* վկան, ընկերը և ուղեկիցը, եթե մենք ապավինենք Նրան: Թող որ մեզանից յուրաքանչյուրը վախելի հայրական օրհնությունների առատությունն այս կյանքում և *Նրա գործի* և *Նրա փառքի* իրականացումը՝ դառնալով մեր ընտանիքների հայրեր հավերժության մեջ (տես Մովսես 1.39): Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Նախագահ Դիտեր Ֆ. Ուլսորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ խորհրդակցան

Անկեղծ լինելու մասին

Իմ աղոթքն է, որ մենք դիմակայենք ուշադրությունն ինքներս մեզ վրա հրավիրելու գայթակղությանը, և դրա փոխարեն, ձգտենք շատ ավելի հեռու գնացող պատվի՝ դառնալու Հիսուս Քրիստոսի խոնարհ, անկեղծ աշակերտները:


18-րդ դարի վերջին Ռուսաստանի Եկատերինա Մեծ թագուհին հայտարարեց, որ պատրաստվում է շրջագայել իր կայսրության հարավային տարածքներով՝ օտարերկրյա մի քանի դեսպանների ուղեկցությամբ: Տարածքի նահանգապետը՝ Գրիգորի Պոտյոմկինը, հուսահատությամբ ցանկանում էր տպավորություն թողնել այցելուների վրա: Եվ

այդպես, նա երկրի ձեռքբերումների ցուցադրական ուշագրավ նախաձեռնություն հանձն առավ:

Ճամփորդության մի մասն անցնելով Դնեպր գետով՝ Եկատերինան հպարտությամբ դեսպաններին ցույց էր տալիս ծաղկող գյուղերն ափի երկայնքով՝ լցված աշխատասեր և երջանիկ գյուղացիներով: Կար միայն մեկ խնդիր. այդ բոլորն արվել էր



ցուցադրման համար: Ասում են, որ Պոտյոմկինը խանութների ու տների ճակատային մասը սովորաբար թից էր հավաքել: Նույնիսկ գյուղացիներն էին հատուկ բերվել, որպեսզի բարձրագույն տնտեսության տպավորություն ստեղծեին: Երբ շքախումբն անհետանում էր՝ շրջվելով գետի թեքության հետ, Պոտյոմկինի մարդիկ հավաքում էին շինծու գյուղը և շտապում էին գետի երկայնքով, որ ևս մեկ գյուղ նախապատրաստեին Եկատերինայի շրջայցի հաջորդ կետի համար:



Չնայած, որ ժամանակակից պատմաբանները կասկածի տակ են դնում այդ իրողությունը, «Պոտյոմկինի գյուղեր» եզրը տեղ է գտել աշխարհի բառապաշարում: Այժմ այն վերաբերում է ցանկացած փորձի՝ հավատացնելու ուրիշներին, որ մենք ավելի լավ ենք, քան իրականությունն է:

Արդյո՞ք մեր սիրտը ճիշտ տնդում է

Մարդկային բնության մասն է՝ ցանկանալը մեր լավագույն տեսքով երևալ: Դա է պատճառը, որ մեզանից շատերը մեծ ջանք են թափում տան արտաքին տեսքի վրա և նաև, թե ինչու են Ահարոնյան Քահանայության մեր երիտասարդ եղբայրները համոզվում, որ ամեն մագ իր տեղում լինի, որ գուցե անսպասելիորեն հանդիպեն այն հատուկ մեկին: Մխալ բան չկա, երբ փայլեցնում ենք մեր կոշիկները, երբ մեզ վրա լավագույն բուրմունքն ենք ցանում, կամ նույնիսկ երբ թաքցնում ենք կեղտոտ ափսեները տնային ուսուցչի այցելությունից առաջ: Սակայն, երբ տպավորություն թողնելու ցանկությունը հասնում է ծայրահեղության, օգտավետն էլ կարող է խաբուսիկ դառնալ:

Տիրոջ մարգարեները միշտ զգուշացնող ձայն են բարձրացրել նրա դեմ, ով փր բերանով է մօտենում և իր շրթունքներովն են [Տիրոջը] պատում, իսկ նորանց սիրտը հեռու է [Իրենից], և նորանց [Իրեն] պատուելը մարդկանց սովորեցրած պատու էր:՝¹

Փրկիչը հասկանում ու կարեկցում էր մեղավորներին, որոնց սրտերը խոնարհ էին ու անկեղծ: Բայց Նրա

արդար բարկությունը բորբոքվում էր կեղծավորների դեմ, ինչպիսիք էին դպիրները, Փարիսեցիներն ու Սադուկեցիները, – նրանք, ովքեր փորձում էին արդար երևալ, որպեսզի նվաճեին գովասանքը, ազդեցությունը ու հարստությունն աշխարհի, այդ ընթացքում ճնշելով ժողովրդին, որին պիտի օրհնեին: Փրկիչը նրանց համեմատում էր «ծեփած գերեզմանների, որ դրսեւանց գեղեցիկ են երեսում, բայց ներսեւանց լիքն են մեռելների ոսկորներով և ամեն պղծութիւնով»:՝²

Մեր օրերում Տերը նմանապես խիստ խոսքեր է ասել քահանայություն կրողների մասին, ովքեր փորձում են «քողարկել [իրենց] մեղքերը կամ գոհացնել [իրենց] հպարտությունը, [կամ իրենց] ունայն փառասիրությունը»: Երբ նրանք այդպես են վարվում, ասել է Նա, «երկինքները ետ են քաշվում. Տիրոջ Հոգին տրտմում է. և երբ այն ետ է քաշվում, Ամեն այդ մարդու քահանայությանը կամ իշխանությանը»:՝³

Ինչո՞ւ է այդպես պատահում: Ինչո՞ւ ենք մենք երբեմն փորձում արտաքուստ երևալ ակտիվ, բարեկեցիկ ու նվիրված, երբ ներսից, ինչպես Հայտնողն է ասել Եփեսացիներին, մենք «[մեր] առաջին սերը թողել [ենք]»:՝⁴

Որոշ դեպքերում մենք, հնարավոր է, պարզապես կորցրել ենք ավետարանի էության մեր կիզակետը՝ «աստվածայնության կերպարանքը» շփոթելով «նրա գործության» հետ:՝⁵ Սա հատկապես վտանգավոր է, երբ մենք մեր աշակերտության

արտաքին դրսևորումն օգտագործում ենք ուրիշներին տպավորելու՝ անձնական շահի կամ ազդեցության համար: Այդ ժամանակ է, որ մենք վտանգվում ենք հայտնվելու փարիսեցու տարածքում, և այդ ժամանակ՝ ծայրահեղ կարիք կա քննելու մեր սիրտը և անհասպաղ ուղղելու մեր ընթացքը:

Պոտյոմկինային ծրագրեր

Ավելի լավը երևալու այդ գայթակղությունը կարելի է հայտնաբերել ոչ միայն մեր անձնական կյանքում, այլ նաև մեր Եկեղեցու առաջադրանքներում:

Օրինակ՝ ես գիտեմ մի ցից, որտեղ դեկավարները որոշ բարետենչ նպատակներ էին սահմանել տարվա համար: Չնայած որ նպատակները բոլորը կարևոր էին, դրանք կենտրոնացած էին կա՛մ վեհ ու տպավորիչ հայտարարությունների կա՛մ թվերի ու տոկոսների վրա:

Այդ նպատակները քննարկելուց ու համաձայնեցնելուց հետո ինչ-որ բան սկսեց անհանգստացնել ցցի նախագահին: Նա սկսեց մտածել իր ցցի մի քանի անդամների մասին, որոնցից մեկը երիտասարդ մայր էր, փոքր երեխաների հետ, որ վերջերս էր այրիացել: Նա մտածեց անդամների մասին, ովքեր մաքառում էին կասկածների կամ մենության մեջ կամ էլ ծանր առողջական վիճակ ունեին՝ առանց ապահովագրության: Նա մտածեց անդամների մասին, ովքեր հայտնվել էին կոտրված ամուսնությունների, վնասակար հակումների, գործազրկության և հոգեկան հիվանդության ճիրաններում: Եվ որքան շատ էր մտածում նրանց մասին, այնքան ավելի շատ էր նա ինքն իրեն խոնարհեցնող հարց տալիս. Արդյոք մեր նոր նպատակները կփոխտե՞ն այդ անդամներից ինչ-որ մեկի կյանքը:

Նա սկսեց մտածել, թե ինչպես իրենց ցցի նպատակները կարող են տարբեր լինել, եթե իրենք նախ հարցնեին. «Ո՞րն է մեր ծառայության նպատակը»:

Այնպես որ, այդ ցցի նախագահը ետ գնաց իր խորհուրդները և միասին նրանք փոխեցին իրենց



ժողովներին հաճախելու և որպես Հիսուս Քրիստոսի նվիրված աշակերտներ ապրելու համար:

Ես այստեղ եմ, որովհետև ցանկանում եմ իմ ողջ սրտով է հետևել



Նաթալ, Ռիո Գրանդին դո Նորտե, Բրազիլիա

ուշադրության կենտրոնը: Նրանք որոշեցին, որ թույլ չեն տա, որ «սովածը. . . կարիքավորը. . . մերկը. . . հիվանդը և չարչարվածն անցնի [իրենց] կողքով», և նրանք ուշք չդարձնեն նրանց:⁶

Նրանք նոր նպատակներ սահմանեցին, գիտակցելով, որ *այդ նոր* նպատակների հաջողությունը միշտ հնարավոր չի լինի չափել, համեմայն դեպս՝ մարդու կողմից, քանզի ինչպես մարդ կչափի անձնական վկայությունը, Աստծո սերը կամ ուրիշների հանդեպ կարեկցանքը:

Բայց նրանք նաև գիտեին, որ «Կան հաշվելի շատ բաներ, որ հաշիվ չեն. և կան անհաշվելի շատ բաներ, որ իրապես հաշիվ են»:⁷

Հնարավոր է արդյոք, որ մեր կազմակերպչական և անձնական նպատակները երբեմն Պոտյոմկինի գյուղերի ժամանակակից համարժեքը լինեն: Արդյո՞ք դրանք տպավորիչ չեն հեռավորության վրա, բայց ուղղված չեն մեր սիրելի մերձավորների իրական կարիքների վրա:

Իմ սիրելի ընկերներ ու քահանայության կրողներ, եթե Հիսուս Քրիստոսը մեզ հետ նստած լիներ և խնդրեր մեր տնտեսության հաշիվը տալ, ես վստահ չեմ, որ Նա շատ կկենտրոնանար ծրագրերի և վիճակագրության վրա: Փրկչի

ցանկությունը կլիներ իմանալ մեր սրտի վիճակը: Նա կցանկանար իմանալ, թե ինչպես ենք մենք սիրում ու ծառայում մեր խնամքի տակ եղած մարդկանց. ինչպես ենք ցույց տալիս մեր սերը մեր ամուսնու և ընտանիքի հանդեպ և ինչպես ենք մենք թեթևացնում իրենց ամենօրյա բեռը: Եվ Փրկչը կցանկանար իմանալ, թե ինչպես ենք մենք և դուք ավելի շատ մոտենում Նրան և մեր Երկնային Հորը:

Ինչո՞ւ ենք այստեղ գտնվում

Մեր սրտերը քննելը կարող է օգտակար լինել: Օրինակ՝ մենք կարող ենք հարցնել ինքներս մեզ, թե ինչո՞ւ ենք ծառայում Հիսուս Քրիստոսի Եկեղեցում:

Կարող ենք անգամ հարց տալ, թե ինչու ենք մենք այստեղ, այսօր:

Ենթադրում եմ, որ եթե պատասխանեի այդ հարցին մակերեսային մակարդակի վրա, ես կարող էի ասել, որ այստեղ եմ, որովհետև Նախագահ Մոնտոնն ինձ հանձնարարել է խոսել:

Այնպես որ, ես, իրականում, ընտրություն չունեի:

Բացի այդ, կհնա, ում շատ սիրում եմ, ակնկալում է, որ ես հաճախեմ: Եվ ինչպե՞ս կարող եմ նրան ոչ ասել:

Մակայն բոլորս գիտենք, որ ավելի լավ պատճառներ կան մեր

իմ Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին: Ես անձկում եմ անել այն ամենը, ինչ նա խնդրում է ինձ անել այս մեծ գործի համար: Ես փափագում եմ շենանալ Սուրբ Հոգով և լսել Աստծո ձայնը, երբ նա խոսում է իր կարգված ծառաների միջոցով: Ես այստեղ եմ ավելի լավ մարդ դառնալու, վեհանալու Քրիստոսով իմ քույրերի ու եղբայրների ոգեշնչող օրինակներից, և սովորելու, թե ինչպես պետք է ավելի արդյունավետ ծառայել կարիքի մեջ գտնվողներին:

Մի խոսքով, ես այստեղ եմ, որովհետև սիրում եմ իմ Երկնային Հորը և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին:

Համոզված եմ, որ դուք ունեք միևնույն պատճառը: Ահա թե ինչու՝ մենք պատրաստ ենք ոչ միայն հայտարարություններ անելու Փրկչին հետևելու մասին, այլ նաև զոհաբերություն անելու Փրկչին հետևելու համար: Դա է պատճառը, որ մենք պատվով կրում ենք Նրա սուրբ քահանայությունը:

Կայծից միջև խարույկ

Անկախ նրանից, թե ձեր վկայությունը ծաղկում է և առողջ, թե Եկեղեցում ակտիվ լինելն ավելի շատ նման է Պոտյոմկինի գյուղին, կա մի լավ նորություն. դուք կարող եք կառուցել ձեր ուժեղ կողմերի վրա:

Այստեղ՝ Հիսուս Քրիստոսի եկեղեցում, դուք կարող եք հոգեվորապես հասունանալ և մոտենալ Փրկչին՝ *կիրառելով օրեցօր*:

Համբերությամբ ու համառությամբ, աշակերտության ամենափոքր քայլը կամ հավատքի ամենափոքր կայծն անգամ կարող է վերածվել նվիրաբերված կյանքի բոցավառվող խարույկի: Ի դեպ, խարույկների մեծ մասը սկսվում է հենց մի պարզ կայծից:

Այնպես որ, եթե դուք փոքր և թույլ եք զգում, խնդրում եմ, պարզապես եկեք Քրիստոսի մոտ, ով թույլ կողմերը դարձնում է ուժեղ:⁸ Մեզանում ամենաթույլը Աստծո շնորհի միջոցով կարող է դառնալ հոգեպես ուժեղ, որովհետև Աստված «աչառ չէ»:⁹ Նա է մեր «հաւատարիմ Աստուածը, որ իրան սիրողների եւ իր պատուիրանքները պահողների համար. . . ողորմութիւն է պահում»:¹⁰

Իմ համոզմունքն է, որ եթե Աստված կարող է հասնել ու պահպանել պատերազմական երկրում համեստ ընտանիքի մի աղքատ գերմանական փայտատկանի, որը եկեղեցու կենտրոնական գրասենյակից կես աշխարհի հեռու էր, ապա Նա կարող է հասնել նաև ձեզ:

Իմ սիրելի եղբայրներ Քրիստոսում, Արարիչ Աստված, ով կյանքի շունչ է տալիս տիեզերքին, անշուշտ զորություն ունի շունչ տալ ձեր կյանքին: Անշուշտ, նա կարող է դարձնել ձեզ անկեղծ՝ հոգևոր լույս և ճշմարտություն ճառագող այն էակը, որ կամենում էք լինել:

Աստծո խոստումներն անխախտ են և որոշակի: Մենք կարող ենք ներվել մեր մեղքերից և մաքրվել ամեն անարդարությունից:¹¹ Եվ եթե մենք շարունակենք ընդունել և ապրել ճշմարիտ սկզբունքներով մեր անձնական հանգամանքներում և մեր ընտանիքում, մենք, ի վերջո, կհասնենք մի կետի, որտեղ «Այլ ես ոչ կ'ստվենք եւ ոչ կ'ծարաիւնք. . . . Որովհետեւ Գառը՝ որ աթոռի մէջ է, կ'հովուէ [մեզ] եւ կ'առաջնորդէ [մեզ] դէպի կենդանի ջրերի աղբիւրները. Եւ Աստուած կ'սրբէ ամեն արտասուքը [մեր] աչքերիցը»:¹²

Եկեղեցին բուժվելու վայր է, ոչ թե թաքնվելու

Բայց դա չի կարող տեղի ունենալ, եթե մենք թաքնվենք անձնական, դավանաբանական կամ կազմակերպչական ճակատի ետևում: Նման արհեստական աշակերտությունը ոչ միայն շարունակ խանգարում է մեզ տեսնել, թե ով ենք մենք իրականում, այլև կանխում է Փրկչի Քավության հրաշքի միջոցով մեր իրական փոփոխությունը:

Եկեղեցին ավտոսրահ չէ՝ որտեղ մեզ ի ցույց ենք դնում, որպեսզի ուրիշները հիանան մեր հոգևորությամբ, կարողություններով կամ բարգավաճմամբ: Այն ավելի շատ նման է սպասարկման կենտրոնի, որտեղ տրանսպորտային միջոցները գալիս են վերանորոգման, պահպանման ու վերականգնման:

Եվ մի՞թե մենք, բողո՛քս, կարիք չունենք վերանորոգման, պահպանման և վերականգնման:

Մենք գալիս ենք եկեղեցի ոչ թե մեր խնդիրները թաքցնելու, այլ բուժելու:

Եվ, որպես քահանայություն կրողներ, մենք ունենք լրացուցիչ պատասխանատվություն՝ «Արածեցրէք Աստուծոյ հօտը որ ձեզ մօտ է, վերակացու լինելով ոչ թե ստիպուած, այլ յօժար կամքով, ոչ թե պիղծ շահասիրութիւնով՝ այլ յօժարութիւնով. Ոչ թե ինչպէս վիճակների վերայ տիրապետելով, այլ հօտին օրինակներ լինելով»:¹³

Հիշեք, եղբայրներ. «Աստուած ամբարտաւաններին հակառակ է կենում, բայց խոնարհներին շնորհք է տալիս»:¹⁴

Ամենամեծ, առավել ընդունակ, ամենակայացած մարդը, ով երբևէ քայլել է այս երկրի վրա, նաև ամենից խոնարհն էր: Իր առավել տպավորիչ ծառայություններից շատերը նա կատարել է առանձին՝ միայն մի քանի ակնատեսների ներկայությամբ, ում խնդրել է «ոչ ոքի չասել» Իր արածը:¹⁵ Երբ մեկը նրան «բարի» էր կոչում, Նա շատ արագ շեղում էր հաճոյախոսությունը, պնդելով, որ միայն Աստված է իսկապես բարի:¹⁶ Ակնհայտ է, որ աշխարհի գովասանքը նշանակություն չունի նրա

համար. Նրա միակ նպատակն էր ծառայել Իր Հորը, և «միշտ նորան հաճելի բաներն անել»:¹⁷ Մենք լավ կանենք, որ հետևենք մեր Վարդապետի օրինակին:

Թող որ մենք սիրենք, ինչպես Նա է սիրում

Եղբայրներ, սա մեր բարձր և սուրբ կոչումն է՝ լինել Հիսուս Քրիստոսի գործակալները, սիրել, ինչպես Նա էր սիրում, ծառայել, ինչպես Նա էր ծառայում՝ «սատարել թույլերին, բարձրացնել ընկած ձեռքերը և ամրացնել տկար ծնկները»¹⁸, «հոգ տանել աղքատների ու կարիքավորների համար»¹⁹, և այցելել այրիներին ու հայրագուրկներին:²⁰

Իմ աղոթքն է, եղբայրներ, որ մինչ մենք ծառայում ենք մեր ընտանիքում, քվորումում, ծխում, ցցում, համայնքում և երկրում, մենք դիմակայենք ուշադրություն ինքներս մեզ վրա հրավիրելու գայթակղությանը, և դրա փոխարեն, ձգտենք շատ ավելի հեռու գնացող պատվի՝ դառնալու մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի խոնարհ, անկեղծ աշակերտները: Երբ այդպես վարվենք, մենք մեզ կգտնենք այն ճանապարհով քայլելիս, որը տանում է մեր անձը դեպի լավագույնը, առավել անկեղծը և ազնիվը: Այդ մասին ես վկայում եմ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՍՆԵՐ

1. Եսայիա 29:13:
2. Մատթեոս 23:27:
3. Վարդապետություն և Ուլստեր 121.37:
4. Հայտնություն 2.4:
5. Տես Ջոզեֆ Միթ-Պատմություն 1.19, տես նաև Վարդապետություն և Ուլստեր 84.20:
6. Մորմոն 8.39:
7. Վերագրվում է Ալբերտ Էյնշտեյնին:
8. Տես Եթեր 12.27:
9. Գործք 10.34:
10. Բ Օրինաց 7.9:
11. Տես Ա Հովհաննես 1.9:
12. Հայտնություն 7.16–17:
13. Ա Պետրոս Ե.2–3:
14. Հակոբոս 4.6:
15. Տես Ղուկաս 8.56:
16. Տես Մարկոս 10.17–18:
17. Հովհաննես 8.29:
18. Վարդապետություն և Ուլստեր 81.5:
19. Վարդապետություն և Ուլստեր 38.35:
20. Տես Վարդապետություն և Ուլստեր 83.6:



Նախագահ Հենրի Բ. Այրիսզ
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

Քահանայությունը և անձնական աղոթքը

Աստված մեզ կարող է քահանայության ուժ պարզևիլ հնչալիս հանգամանքներում էլ որ լինենք: Մեզակից պահանջվում է պարզապես, որ մենք խոնարհությամբ խնդրենք:

Երախտապարտ եմ վստահության համար՝ խոսելու ողջ երկրագնդի Աստծո քահանայություն կրողների հետ: Ես զգում եմ այդ հնարավորության պատասխանատվությունը, քանի որ մի քիչ գիտեմ այն վստահության մասին, որ Տերը հանձնել է ձեզ: Ընդունելով քահանայությունը՝ դուք ընդունել եք Աստծո անունով խոսելու և գործելու իրավունքը:

Իրավունքը իրապես կգործի միայն, երբ դուք ոգեշնչում ստանաք Աստծուց: Միայն այդ ժամանակ դուք կկարողանաք խոսել Նրա անունով: Եվ միայն այդ ժամանակ դուք կկարողանաք գործել Նրա անունով: Դուք, հնարավոր է, սխալվեք, մտածելով «Օ՛, դա ամենևին դժվար չէ: Ես կարող եմ ոգեշնչում ստանալ, երբ էլ որ ինձ խնդրեն ելույթ ունենալ կամ երբ խնդրեն քահանայության օրհնություն տալ»: Կամ երիտասարդ սարկավազը կամ ուսուցիչը կարող է իրեն մխիթարել նման մտքով. «Երբ մեծանամ կամ երբ կանչվեմ որպես միսիոներ, այն ժամանակ կիմանամ, թե Աստված ինչ կասի կամ Աստված ինչ կանի»:

Բայց մտածեք այն օրվա մասին, երբ պիտի իմանաք, թե Աստված ինչ է ասում և ինչ է անում: Մեր բոլորիս համար այդ օրը եկել է՝ քահանայության ինչ կոչում էլ որ ունենանք: Ես մեծացել եմ, երբ հայրս միսիայում էր՝ Միացյալ Նահանգների արևելքում՝ Երկրորդ Աշխարհամարտի ժամանակ: Եկեղեցու անդամները շատ ցրված էին ապրում, իսկ մեքենայի վառելիքը խիստ նորմալորված էր: Ես ճյուղի միակ սարկավազն էի: Անդամներն իրենց ծովի նվիրատվությունները տալիս էին ճյուղի նախագահին, երբ գալիս էին մեր տուն՝ ծովի ու վկայության ժողովի հավաքի:

Երբ 13 տարեկան էի, մենք տեղափոխվեցինք Յուտա, որ ապրեինք մեծ ծխում: Ես հիշում եմ իմ առաջին հանձնարարությունը՝ քայլել տներով և հավաքել ծովի նվիրատվությունները: Ես նայեցի ծրարներից մեկին, որ ինձ տվել էին, ու նկատեցի, որ ազգանունը նույնն էր, ինչ Մորմոնի Գրքի Երեք Վկաներից մեկինը: Այնպես որ ես վստահությամբ թակեցի դուռը: Մի տղամարդ բացեց դուռը, նայեց ինձ, մռայլվեց և ապա

բղավեց ինձ վրա, ասելով, որ հեռանամ: Ես գլուխս կախ հեռացա:

Դա եղել է մոտ 70 տարի առաջ, բայց ես դեռ հիշում եմ այդ օրը դռան շեմին ունեցած զգացումը, որ ես ինչ-որ բան պետք է ասեի կամ անեի: Եթե միայն ես աղոթեի, երբ հեռացա այդ օրը, ես հնարավոր է ոգեշնչվեի կանգնելու մի պահ ավելի երկար այդ շեմին, ժպտալու և ասելու նման մի բան. «Ուրախ էի ձեզ հանդիպել: Շնորհակալություն ձեզ այն ամենի համար, ինչ դուք և ձեր ընտանիքը արել եք անցյալում: Ես անհամբեր կսպասեմ տեսնելու ձեզ հաջորդ ամիս»:

Եթե ես ասեի և անեի դա, նա կարող է ավելի շատ բորբոքվեր և նույնիսկ վիրավորվեր: Բայց այժմ ես գիտեմ, թե ինչպես ես կզգայի: Տխրության կամ ձախողվելու զգացումով հեռանալու փոխարեն, ես հնարավոր է մեղմ գովասանք զգայի իմ մտքում և սրտում. «Կեցցե՛ս»:

Բոլորս էլ պետք է խոսենք և գործենք Աստծո անունով այն պահերին, երբ մեր ինքնուրույն դատողությունը բավարար չէ ոգեշնչում ստանալու համար: Այդ պահերը կարող են գալ մեզ վրա, երբ պատրաստվելու ժամանակ չկա: Ինձ հետ հաճախ է այդպես պատահել: Շատ տարիներ առաջ մի հիվանդանոցում, որտեղ մի հայր ասաց ինձ և իմ գործընկերին, որ բժիշկներն ասել են, թե իր ծանր վիրավորված երեք տարեկան աղջիկը թոպեներ անց մահանալու է: Երբ ես ձեռքերս դրեցի աղջկա գլխի այն մասում, որն ազատ էր փաթաթաններից, որպես Աստծո ծառայի, ինձ հարկավոր էր իմանալ, թե ինչ կաներ ու ինչ կասեր Նա:

Խոսքեր եկան իմ միտքն ու իմ շուրթերին, որ նա ապրելու է: Բժիշկը, որ կանգնած էր իմ կողքին, փնչացրեց ու խնդրեց ինձ հեռանալ իր ճանապարհից: Ես դուրս եկա այդ հիվանդանոցից խաղաղության և սիրո զգացումով: Փոքրիկ աղջիկն ապրեց և քայլում էր մեր հաղորդության ժողովի միջանցքով այդ քաղաքում անցկացրած իմ վերջին օրը: Ես դեռ հիշում եմ ուրախության ու բավարարվածության զգացումն



այն բանի արդյունքում, ինչ ես ասել և արել էի Տիրոջ ծառայության մեջ այդ փոքրիկ աղջկա և իր ընտանիքի համար:

Տարբերությունը հիվանդանոցի իմ զգացմունքների և տխրության միջև, որ զգացել էի որպես սարկավազ այն դռնից հեռանալիս, եկել է նրանից, ինչ սովորել եմ աղոթքի և քահանայության իշխանության կապի վերաբերյալ: Որպես սարկավազ՝ ես դեռ չէի հասկացել, որ Աստծո անունով խոսելու և գործելու իշխանությունը հայտնություն է պահանջում, և որ անհրաժեշտության ժամանակ այն ունենալը պահանջում է աղոթք և հավատքի գործողություն՝ Սուրբ Հոգու ընկերակցությունը ձեռք բերելու համար:

Ծոմի նվիրատվության համար այդ դուռը թակելու նախորդող երեկոյան ես ասել էի իմ աղոթքը մահճակալի մոտ: Մակայն հիվանդանոցից եկած այդ հեռախոսագանգից առաջ, շաբաթների ու ամիսների ընթացքում, ես հետևել էի աղոթքի օրինակին և ջանք էի թափել, որն, ըստ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Մմիթի, թույլ կտա, որ Աստված մեզ անհրաժեշտ ոգեշնչում տա, քահանայության ուժը գործածելու համար: Նա ասել է պարզ խոսքերով.

«Կարիք չկա, որ շատ խոսքերով աղաղակենք առ նա: Կարիք չկա, որ հոգնեցնենք նրան երկար աղոթքներով: Այն, ինչի կարիքը կա մեզ համար, որպես Վերջին Օրերի Սրբեր, մեր իսկ բարիքի համար, հաճախ նրա առաջ կանգնելն է և նրան վկայելը, որ մենք հիշում ենք նրան և պատրաստակամ ենք մեր վրա վերցնել անունը նրա, պահել նրա պատվիրանները և արդարություն գործել. և որ մեր ցանկությունն է, որ նրա Հոգին մեզ օգնական լինի»:¹

Դրանից հետո Նախագահ Մմիթն ասել է, թե ինչի մասին պիտի աղոթենք, որպես իր ծառաներ, ովքեր ուխտ ունեն խոսելու և գործելու Աստծո անունից: Նա ասել է. «Ինչի՞՞ համար եք դուք աղոթում: Աղոթեք, որ Աստված ճանաչի ձեզ, որպեսզի լսի ձեր աղոթքները, որ նա կարողանա օրհնել ձեզ իր Հոգով»:²

Հարցը նրանում չէ այդքան, թե ինչ բաներ ենք գործածում, այլ որ որոշակի համբերություն է պահանջվում: Դա մոտեցումն է ձեր Երկնային Հորը՝ մտադրությամբ, որ անձամբ կճանաչվենք նրա կողմից: Նա Աստված է՝ բոլորից առավել, Հայրը բոլորի, և դեռ պատրաստ է իր ողջ ուշադրությունը ուղղել Իր զավակներից մեկին: Գուցե դա էր պատճառը,

թե ինչու էր Փրկիչն ասում «Հայր մեր, որ երկնքում ես. Սուրբ լինի քո անունը»:³

Պատշաճ ակնածանքի զգացում ունենալն ավելի հեշտ է, երբ ծնկի ես իջնում կամ կախում գլուխդ, սակայն Երկնային Հորը մոտ լինելը հնարավոր է զգալ նաև ավելի քիչ պաշտոնական և նույնիսկ լուռ աղոթքում, ինչի կարիքը կարող եք հաճախ ունենալ: Ձեր արթուն օրվա մեծ մասը լցված կլինի աղմուկով ու մարդկանցով: Աստված լսում է ձեր լուռ աղոթքները, բայց ձեզ պետք կլինի սովորել փակել խանգարիչ տարրերը, քանի որ Աստծո հետ կապ ունենալու պահանջը կարող է լինել նաև անհանգիստ ժամանակ:

Նախագահ Մմիթն առաջարկել է, որ դուք կարիք ունեք աղոթելու, որ Աստված ընդունի Նրան ծառայելու ձեր կոչումը: Նա արդեն գիտի ձեր կոչման մանրամասները լիովին: Նա է ձեզ կանչել և երբ աղոթեք նրան ձեր կոչման մասին, նա ավելի շատ գիտելիքներ կբացահայտի ձեզ համար:⁴

Ես կտամ ձեզ մի օրինակ, թե ինչ կարող է անել տնային ուսուցիչը աղոթելիս: Դուք, հնարավոր է, արդեն գիտեք, որ ձեր պարտականությունն է.

«Այցելել յուրաքանչյուր անդամի տուն և հորդորել նրանց, որ աղոթեն բարձրաձայն և գաղտնի, և կատարեն ընտանեկան բոլոր պարտականությունները. . . .

. . . . Միշտ հսկել եկեղեցու վրա, լինել նրա հետ և ամրապնդել այն.

Եվ հետևել, որ եկեղեցում չլինի անօրինություն, ոչ կոպտություն միմյանց հանդեպ, ոչ էլ ստախտություն, ոչ բամբասանք, ոչ էլ չարախոսություն.

Եվ հետևել, որ եկեղեցին հաճախ հավաքվի միասին, և նաև հետևել, որ բոլոր անդամները կատարեն իրենց պարտականությունը»:⁵

Նույնիսկ փորձառու տնային ուսուցիչի և նրա կրտսեր ուղեկցի համար այս ամենն անհնար է առանց Սուրբ Հոգու օգնության: Մտածեք ընտանիքների կամ նույնիսկ անհատների մասին, ում կոչված եք ծառայելու: Մարդկային դատողությունն

ու լավ մտադրությունները բավարար չեն լինի:

Այնպես որ դուք պետք է աղոթեք, որպեսզի իմանաք նրանց սիրտը, որ իմանաք, թե ինչ բացթողումներ կան մարդկանց կյանքում և նրանց սրտում, ում լավ չեք ճանաչում և ովքեր ցանկություն էլ չունեն, որ դուք իրենց ճանաչեք: Դուք պետք է իմանաք, թե ինչ է Աստված ուզում, որ դուք անեք, որպեսզի օգնեք նրանց և որ անեք ամեն բան՝ հնարավորինս զգալով Աստծո սերը նրանց հանդեպ:

Քահանայության այդ կարևոր և դժվար կոչումն ունենալու պատճառով է Նախագահ Սմիթը հուշում, որ երբ աղոթում եք, միշտ խնդրեք Աստծուն, որ Նա օրհնի ձեզ Իր Հոգով: Սուրբ Հոգին ձեզ պետք է ոչ թե մեկ, այլ այնքան անգամ, որքան Աստված կշնորհի այն ձեզ որպես մշտական ուղեկից: Դա է պատճառը, որ մենք պետք է միշտ աղոթենք, որ Աստված առաջնորդի մեզ Իր գավակների մեր ծառայության մեջ:

Քանի որ չեք կարող բարձրանալ ձեր քահանայության ներուժին առանց Հոգին ձեզ հետ ունենալու,

մենք կարող ենք անհատական թիրախ դառնալ երջանկության ամենայն թշնամու համար: Եթե նա կարողանա զայթակղել ձեզ մեղք գործելու, նա կարող է նվազեցնել Հոգով առաջնորդվելու ձեր ուժը և նվազեցնել քահանայության ձեր իշխանությունը: Դա է պատճառը, ըստ Նախագահ Սմիթի, որ դուք պետք է միշտ աղոթեք, որ Աստված զգուշացնի և պաշտպանի ձեզ չարից:⁶

Նա մեզ նախազգուշացնում է բազմաթիվ եղանակներով: Նախազգուշացումը փրկության ծրագրի մասն է: Մարգարեները, առաքյալները, ցցի նախագահները, եպիսկոպոսները և միսիոներները, – բոլորը նախազգուշացնող ձայն են բարձրացնում՝ հեռու մնալ փորձանքներից՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի, ապաշխարության և սրբազան ուխտեր կապելու ու պահելու միջոցով:

Որպես քահանայություն կրող՝ դուք պետք է լինեք Տիրոջ նախազգուշացնող ձայնի մի մասը: Բայց դուք պետք է ինքներդ ուշադրություն դարձնեք նախազգուշացմանը: Դուք չեք զոյատևի հոգևորապես, եթե

չունենաք Սուրբ Հոգու պաշտպանությունն ու ընկերակցությունը ձեր ամենօրյա կյանքում:

Դուք պետք է աղոթեք և ջանք թափեք այն ունենալու համար: Միայն այդ ուղեկցությամբ կարող եք չարի մեզի մեջ գտնել նեղ և անձուկ արահետով անցնելու ձեր ուղին: Սուրբ Հոգին կլինի ձեր ուղեկիցը, բացահայտելով ճշմարտությունը, երբ ուսումնասիրեք մարգարեների խոսքերը:

Այդ ուղղորդումը ստանալու համար ավելին կպահանջվի, քան պատահական լսելն ու կարդալը: Ձեզ անհրաժեշտ կլինի աղոթել և աշխատել հավատքով, որպեսզի ճշմարտության խոսքերը հասնեն ձեր սիրտը: Դուք պետք է աղոթեք, որ Աստված օրհնի ձեզ Իր Հոգով, որ Նա առաջնորդի ձեզ դեպի ամեն ճշմարտություն և ձեզ ցույց տա ճիշտ ճանապարհը: Դա այն ձևն է, որով նա կնախազգուշացնի և կառաջնորդի ձեզ ճիշտ ուղու վրա ձեր կյանքում և քահանայության ձեր ծառայության մեջ:

Գերագույն համաժողովը մեծ հնարավորություն է տալիս, որ Տերը ամրացնի Աստծո քահանայության մեջ ծառայելու ձեր ուժը: Դուք կարող եք նախապատրաստվել աղոթքով, ինչպես համոզված եմ արել եք այս համաժողովի համար: Դուք կարող եք միացնել ձեր հավատքը նրանց, ովքեր պետք է աղոթեն համաժողովի ժամանակ: Նրանք կհնչեն բազմաթիվ մարդկանց օրհնության համար:

Աղոթքներ կհղվեն, որ Հոգին լինի մարգարեի հետ՝ որպես Տիրոջ խոսափող: Աղոթքներ կհղվեն Առաքյալների և Աստծո կողմից կանչված բոլոր ծառաների համար: Դա ներառում է ձեզ՝ սկսած նորագույն սարկավազից, մինչև կոփված քահանայապետը՝ ինչպես երիտասարդները, այնպես էլ մեծերը, ովքեր կարող է շուտով գնան հոգիների աշխարհ, որտեղ նրանք կլսեն. «Կեցցե՛ս, բարի ու հավատարիմ ծառայ:»⁷

Այդ խոսքերը կապի ոմանց, ովքեր կզարմանան: Նրանք, հնարավոր է, երբեք բարձր պաշտոն կրած չլինեն Աստծո արքայությունում



երկրի վրա: Ոմանք հնարավոր է զգացած լինեն, որ մեծ արդյունքի չեն հասնում իրենց գործերում կամ որ ծառայելու որոշ հնարավորություններ երբեք չեն ունեցել: Մյուսները կարող է զգան, որ ծառայության իրենց ժամանակը կարճ է եղել այս կյանքում, քան իրենք հույս են ունեցել:

Զբաղեցրած պաշտոնն ու ծառայելու ժամանակը չէ, որ հավասարակշռություն են համարվում Տիրոջ համար: Մենք գիտենք այդ մասին այգու աշխատավորներ վարձելու Տիրոջ առակից, որտեղ վարձատրությունը նույնն էր, անկախ նրանից, թե որքան և որտեղ էին նրանք ծառայում: Նրանք կպարզաստրվեն նրա համար, թե ինչպես են իրենք ծառայել:⁸

Ես գիտեմ մի մարդու, հարազատ ընկերոջ, որի այգում ծառայելու մահկանացու ժամանակը լրացավ երեկ երեկոյան՝ ժամը 11.00-ին: Տարիներ շարունակ նա բուծվում էր քաղցկեղից: Բուծման այդ տարիների ընթացքում, ծանր ցավերի ու դժվարությունների մեջ, նա ընդունել է կոչում՝ հանդիպումներ անցկացնել ու պատասխանատու լինել իր ծխում այն անդամների համար, որոնց զավակները գնացել էին իրենց տներից: Այդ անդամներից ոմանք այրի էին: Նրա կոչումն օգնել էր նրանց մխիթարություն գտնել շփվելու և ավետարանը սովորելու միջոցով:

Երբ նա ստացավ վերջնական սթափեցնող կանխատեսումը, որ նրան ապրելու կարճ ժամանակ էր մնացել, նրա եպիսկոպոսը հեռավոր գործուղման մեջ էր: Երկու օր անց, նա հաղորդագրություն ուղարկեց իր եպիսկոպոսին իր քահանայապետերի խմբի ղեկավարի միջոցով: Նա ասաց հետևյալն իր հանձնարարության մասին. «Ես հասկանում եմ, որ եպիսկոպոսը քաղաքից դուրս է, այնպես որ գործը ես կանեմ: Ես մտածում եմ մեր խմբի հաջորդ երկուշաբթի օրերի հանդիպման մասին: Երկու անդամ կարող են մեզ շրջագայության տանել Համաժողովների կենտրոն: Մի քանի անդամ կարող են մեզ մեքենայով



տեղավորել, իսկ սկաուտները կարող են վարել անվասայլակները: Եթե ցուցակագրվածների թիվը մեծ լինի, մենք տարեցներով կարող ենք ինքներս մեզ սպասավորել, բայց լավ կլինի իմանալ, որ պահեստային ուժ կա, եթե անհրաժեշտ լինի: Օգնողների համար դա կարող է նաև լավ ընտանեկան երեկո լինել, այնպես որ կարող են ընտանիքներով գալ: Ինչևէ, ինձ տեղյակ պահեք, որ կարողանամ փակցնել ծրագիրը: . . . Շնորհակալություն»:

Իսկ հետո նա զարմացրեց եպիսկոպոսին հեռախոսագանգով: Առանց իր սեփական վիճակն ակնարկելու ու իր ծառայության անվեհեր նախաձեռնությունը բացահայտելու, նա հարցրեց. «Եպիսկոպոս, կա՞ ինչ-որ բան, որ կարող եմ անել քեզ համար»: Միայն Սուրբ Հոգին կարող էր թույլ տալ նրան զգալ եպիսկոպոսի բեռը, երբ ինքն անձամբ այդքան ջախջախիչ բեռի տակ էր: Եվ միայն Հոգին կարող էր հնարավոր դարձնել, որ նա իր եղբայրներին ու քույրերին ծառայելու ծրագիր կազմեր նույն ճշգրտությամբ, ինչպես անում էր, երբ Սկաուտական միջոցառումներ էր ծրագրում երիտասարդ տարիքում:

Հավատքի աղոթքի միջոցով Աստված մեզ կարող է քահանայության ուժ պարզել ինչպիսի հանգամանքներում էլ որ լինենք: Մեզանից

պահանջվում է պարզապես, որ մենք խոնարհությամբ լսնորենք, որ Հոգին մեզ ցույց տա, թե ինչ կցանականա Աստված, որ մենք ասենք ու անենք, անենք այդ և շարունակենք արժանի ապրել այդ պարզին:

Ես բերում եմ ձեզ իմ վկայությունը, որ Հայր Աստված ապրում է, սիրում է մեզ և լսում է մեր յուրաքանչյուր աղոթքը: Ես վկայում եմ, որ Հիսուսը կենդանի Քրիստոսն է, որի Քավությունը հնարավոր է դարձնում, որ մենք մաքրվենք և, այդպիսով, արժանի լինենք Սուրբ Հոգու ընկերակցությանը: Ես վկայում եմ, որ հավատքով ու ջանասիրությամբ մենք կարող ենք մի օր լսել խոսքերը, որոնք ուրախություն կպարզեն մեզ. «Կեցցե՛ս, բարի ու հավատարիմ ծառայ»: ⁹ Իմ աղոթքն է, որ մեր ծառայության վերջն այդպես հրաշալի գնահատվի Տիրոջ կողմից, ում ծառայում ենք: Հիսուս Քրիստոսի անունով. ամեն: ■

ՇՂՈՒՄՆԵՐ

1. *Եկեղեցու Նախագահների ուսումնականը. Ջոզեֆ Ֆ. Սմիթ* (1998), 23–24:
2. *Teachings: Joseph F. Smith*, 26.
3. Նույնս 11.2:
4. *Stu Joseph F. Smith, Gospel Doctrine*, 5th ed. (1939), 215–21:
5. Վարդապետություն և Ուխտեր 20.51, 53–55:
6. *Stu Teachings: Joseph F. Smith*, 26:
7. Մատթեոս 25.21:
8. *Stu Մատթեոս 20.1–16*:
9. Մատթեոս 25.21:



Նախագահ Թոմաս Ս. Մոսոսն

Քահանայություն՝ սրբազան պարզև

Մեզանից յուրաքանչյուրին վստահվել է մարդկությանը երբևէ շնորհված ամենաթանկարժեք պարզևներից մեկը:

Որպես նոր կարգված սարկավագ՝ քահանայության ժողովներին հաճախելու ամենահիշարժան հիշողություններից մեկը «Եկե՛ք Աստծո որդիներ, որ ստացել եք քահանայություն»¹ բացման օրհներգը երգելն էր: Այս երեկո համաժողովների կենտրոնում և, իհարկե, ողջ աշխարհում հավաքվածներին ես կրկնում եմ այդ հատուկ օրհներգի ոգին և ասում ձեզ *«Եկե՛ք Աստծո որդիներ, որ ստացել եք քահանայություն»*: Եկեք մտածենք մեր կոչումների շուրջ, եկեք մտածենք մեր պատասխանատվությունների մասին, եկեք պարզենք մեր պարտականությունը և եկեք հետևենք Հիսուս Քրիստոսին՝ մեր Տիրոջը: Թեև մենք կարող ենք տարբերվել հասակով, սովորությամբ կամ ազգությամբ, մենք միավորված ենք քահանայության մեկ կոչումով:

Հովհաննես Մկրտչի կողմից Օլիվեր Քառտերիին և Ջոզեֆ Սմիթին Սհարոնյան քահանայության վերականգնումն ամենահատկանշականն է մեզանից յուրաքանչյուրի համար: Նմանապես՝ Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի կողմից Ջոզեֆին և Օլիվերին Մելքիսեդեկյան

քահանայության վերականգնումը նվիրական իրադարձություն է:

Եկեք ավելի լուրջ վերաբերենք այն կոչումներին, պատասխանատվություններին և պարտականություններին, որոնք ստանում ենք այն քահանայության հետ, որը կրում ենք:


Ես մեծ պատասխանատվություն եմ զգացել, երբ կանչվեցի որպես սարկավագների քվորումի քարտուղար: Ես բարեխնայամբ էի պատրաստում ինձ վստահված գրանցումները, քանի որ ես ցանկանում էի հնարավորինս լավագույնս կատարել այդ կոչումը: Ես շատ էի հպարտանում իմ արած գործով: Հնարավորինս լավագույն ձևով անելն այն ամենն, ինչ կարող եմ, եղել է իմ նպատակը ցանկացած կոչման ժամանակ, որը երբևէ ունեցել եմ:

Հուսով եմ, որ յուրաքանչյուր երիտասարդ տղամարդ, ով կարգվել է Սհարոնյան քահանայության, տեղյակ է իրեն ձեռնադրված կոչման սրբությանը, ինչպես նաև այդ կոչումը մեծարելու հնարավորությանը: Ես՝ որպես սարկավագ, այդպիսի հնարավորություն եմ ունեցել, երբ

Եպիսկոպոսությունը խնդրեց ինձ հաղորդությունը տանել մի անկողնային հիվանդի, ով սպրում էր մեր հավաքատնից մեկ մղոն հեռավորության վրա: Այդ առանձնահատուկ կիրակի առավոտյան, երբ ես թակեցի Եղբայր Ռայթի դռը և լսեցի նրա տկար ձայնը. «Ներս եկ», ես ներս մտա ոչ միայն նրա համեստ հյուղակը, այլ նաև մի սենյակ, որը լի էր Տիրոջ Հոգով: Ես մոտեցա Եղբայր Ռայթի անկողնուն և զգուշությամբ հացի մի կտոր դրեցի նրա շուրթերին: Այնուհետև, ես պահեցի ջուրը, որ նա կարողանար խմել: Հեռանալիս ես տեսա արցունքներ նրա աչքերին, երբ նա ասաց. «Աստված օրհնի քեզ տղաս»: Եվ իրոք Աստված օրհնեց՝ ինձ հաղորդության սուրբ խորհրդանիշների և այն քահանայության արժեվորումով, որը ես կրում էի:

Մեր ծխի ոչ մի սարկավագ, ուսուցիչ կամ քահանա երբեք չի մոռանա այն հիշարժան այցելությունները, որոնք մենք կատարում էինք դեպի Յուտա նահանգի Կլարկսոն քաղաքը՝ Մորմոնի Գրքի երեք վկաներից մեկի գերեզմանը: Երբ մենք շրջապատում էինք այդ բարձր գրանիտ սյունը, որը նշանավորում էր նրա գերեզմանը, և երբ քվորումի ղեկավարներից մեկը կարդում էր մեզ համար «Երեք վկաների վկայությունը» բաժնի խոսքերը, որը գտնվում է Մորմոնի Գրքի սկզբում, մենք զարգացնում էինք սեր այդ սրբազան հիշատակարանի և այն ճշմարտությունների վերաբերյալ, որոնք գրված էին այնտեղ:

Այդ տարիների ընթացքում մեր նպատակը Մոսիայի որդիներին նմանվելն էր: Նրանց մասին ասված է.



«Նրանք դարձել էին ուժեղ ճշմարտության իմացության մեջ. քանզի նրանք առողջ դատողությամբ մարդիկ էին, և նրանք ջանասիրաբար քննել էին սուրբ գրքերը, որ կարողանային իմանալ Աստծո խոսքը:

Բայց դա բոլորը չէ. նրանք նվիրվել էին շատ աղոթքի ու ծովի. այդ պատճառով նրանք ունեին մարգարեության ոգին ու հայտնության ոգին, և երբ նրանք ուսուցանում էին, նրանք ուսուցանում էին Աստծո զորությամբ ու իշխանությամբ»:²

Երիտասարդ տղայի համար, ես չեմ կարող մտածել որևէ այլ արժանի նպատակ, քան խիզախ և արդար Միսոիայի որդիների նման բնութագիր ունենալը:

Երբ ես բոլորեցի իմ 18-ամյակը և պատրաստվում էի անցնել պարտադիր զինվորական ծառայության, որը Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ պարտադիր էր երիտասարդ տղաների համար, ինձ խորհուրդ տրվեց ստանալ Մելքիսեդեկյան քահանայություն, սակայն սկզբում հարցազրույցի համար ես պետք է զանգահարեի իմ ցցի նախագահին՝ Փոլ Ս. Չայլդին: Նա մեկն էր նրանցից, ով սիրում ու հասկանում էր սուրբ գրությունները և նրա նպատակն էր, որ բոլորը պետք է նմանապես սիրեին և հասկանային դրանք: Իմ ընկերներից մեկից լսելով նրա բավականին մանրամասն և մանրակրկիտ հարցազրույցների մասին, ես ցանկանում էի, որ նա քիչ հարց տար սուրբ գրությունների վերաբերյալ: Այդ պատճառով, երբ ես նրան զանգահարեի ես առաջարկեցի հանդիպել հաջորդ կիրակի օրը, որն իմ իմանալով նրա հաղորդության ժողովից ընդամենը մեկ ժամ առաջ էր:

Նա պատասխանեց. «Օ՛, եղբայր Մոնսոն, դա մեզ բավարար ժամանակ չի տա սուրբ գրություններն ուշադիր կարդալու համար»: Ապա նա առաջարկեց հանդիպել իր հաղորդության ժողովից երեք ժամ առաջ և հրահանգեց, որ ես ինձ հետ վերցնեմ անձամբ նշած և հղումներ արված սուրբ գրությունները:

Երբ կիրակի օրը ժամանեցի նրա տուն, նա ինձ ջերմորեն դիմավորեց



և ապա հարցազրույցը սկսվեց: Նախագահ Չայլդն ասաց. «Եղբայր Մոնսոն, դու կրում ես Ահարոնյան քահանայություն: Արդյո՞ք երբևէ հրեշտակները սպասավորել են քեզ»: Ես պատասխանեցի՝ ո՛չ: Երբ նա հարցրեց, թե արդյոք ես գիտեի, որ դրա իրավունքն ունեի, ես կրկին պատասխանեցի, որ չգիտեի:

Նա հանձնարարեց. «Եղբայր Մոնսոն, անզիր արտասանիր Վարդապետություն և Ուխտերի 13-րդ բաժինը»:

Ես սկսեցի. «Իմ ընկերակի՛ց ծառաներ, Մեսիայի անունով ես շնորհում եմ ձեզ Ահարոնի Քահանայությունը, որը կրում է հրեշտակների սպասավորության . . .»:

«Կանգ ա՛ռ», ասաց Նախագահ Չայլդը: Ապա հանդարտ, սիրալիր տոնով նա խորհուրդ տվեց. «Եղբայր Մոնսոն, երբեք չմոռանաս, որ որպես Ահարոնյան քահանայության կրող, դու իրավունք ունես հրեշտակների սպասավորության»:

Կարծես թե այդ օրը հրեշտակ կար այդ սենյակում: Ես երբեք չեմ մոռանա այդ հարցազրույցը: Ես դեռևս զգում եմ այդ հանդիսավոր

իրադարձության հոգին, երբ մենք միասին կարդում ենք Ահարոնյան քահանայության և Մելքիսեդեկյան քահանայության պատասխանատվության, պարտականությունների և օրհնությունների մասին՝ օրհնություններ, որոնք ոչ միայն մենք ենք ստանում, այլ մեր ընտանիքներն ու այլ մարդիկ, որոնց մենք հնարավորություն ենք ունենում ծառայել:

Ես կարգվեցի երեցի կոչման և նավատորմում ակտիվ ծառայության մեկնելու օրը, իմ ծխի եպիսկոպոսության մի անդամ երկաթուղային կայարանում միացավ իմ ընտանիքին և ընկերներին, որպեսզի հրաժեշտ տա ինձ: Նախքան կնստեի գնացքը, նա ձեռքիս մեջ դրեց մի փոքրիկ գրքույկ, վերնագրված՝ *Միսիոնյան ծեղկեր*: Ես ծիծաղեցի և ասացի, որ միսիայի չեմ գնում:

Նա պատասխանեց. «Ամեն դեպքում վերցրու: Միգուցե այն օգտակար լինի»:

Ես վերցրեցի այն: Ինձ մի կոշտ, ուղղանկյունաձև իր էր անհրաժեշտ, որպեսզի տեղադրեի իմ ուսապարկի իրերի տակ, որպեսզի իմ հագուստն անշարժ մնար և քիչ ճմրթվեր:



Միայնության *ձեռնարկը* հենց այն էր, ինչի կարիքն ունեի և այն 12 շաբաթ լավ ծառայեց իմ ուսապարկի մեջ:

Սուրբ Ծննդյան տոների արձակուրդին նախորդող գիշերը, մենք մտածում էինք տան մասին: Չորանոցում լռություն էր տիրում, ապա լռությունը խախտվեց անկողնուս հարևանությամբ գտնվող ընկերոջս՝ մի երիտասարդ մորմոն տղայի, Լեյանդ Մերիլի կողմից, ով սկսեց ցավից հառաչել: Ես հարցրեցի պատճառը և նա ասաց, որ լուրջ հիվանդացել էր: Նա չէր ցանկանում գնալ բուժկետ, քանի որ նա գիտեր, որ դրա պատճառով հաջորդ օրը նրան չէին թողնելի, որ տուն գնա:

Ժամեր անց նա ավելի վատ էր զգում: Ի վերջո, իմանալով, որ ես երեց եմ, նա քահանայության օրհնություն խնդրեց ինձանից:

Նախկինում ես երբևէ քահանայության օրհնություն չէի տվել,

ինձ երբևէ օրհնություն չէր տրվել, ես երբեք չէի տեսել, թե ինչպես են օրհնություն տալիս: Երբ լուռ աղոթեցի օգնության համար, ես հիշեցի *Միայնության ձեռնարկը* իմ ուսապարկի հատակին: Արագ կերպով ես դատարկեցի ուսապարկը և գիրքը մեկնեցի դեպի գիշերային լույսը: Այնտեղ ես կարդացի, թե ինչպես է հիվանդներին օրհնություն տրվում: Բազմաթիվ հետաքրքրասեր նավաստիների հայացքների ներքո ես օրհնություն տվեցի: Նախքան ամեն ինչ կհավաքեի կրկին ուսապարկիս մեջ, Լեյանդ Մերիլը երեխայի պես քնած էր: Հաջորդ առավոտյան նա արթնացավ լավ ինքնազգացողությամբ: Մեծ էր երախտագիտությունը, որը մեզանից յուրաքանչյուրն զգում էր քահանայության զորության հանդեպ:

Տարիներն ինձ ընձեռել են կարիքավորներին օրհնություն տալու բազմաթիվ հնարավորություններ, որոնք

ես չեմ կարող հաշվել: Յուրաքանչյուր հնարավորության ժամանակ ես խորապես երախտապարտ եմ եղել, որ Աստված վստահել է ինձ այդ սրբազան պարզեր: Ես պատվում եմ քահանայությունը: Դրա զորության մեջ ես բազմաթիվ անգամ համոզվել եմ: Ես տեսել եմ դրա ուժը: Դրա գործած հրաշքներից ես հիացել եմ:

Եղբայրներ, մեզանից յուրաքանչյուրին վստահվել է մարդկությանը երբևէ շնորհված ամենաթանկարժեք պարզներից մեկը: Եթե մենք պատվենք մեր քահանայությունը և ապրենք մեր կյանքն այնպես, որ մշտապես արժանավոր լինենք, օրհնությունները կհոսեն մեր միջով: Ես սիրում եմ այն խոսքերը, որոնք գտնվում են Վարդապետություն և Ուխտերի 121-րդ բաժնի, 45-րդ հատվածում, որը մեզ ասում է, թե ինչ է պետք անել արժանավոր լինելու համար. «... թող քո որովայնը զթությամբ լցված լինի բուրբ մարդկանց հանդեպ և հավատքի ընտանիքի հանդեպ, և թող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար. այն ժամանակ քո վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ. և քահանայության վարդապետությունը կիջնի քո հոգու վրա, ինչպես ցողը երկնքից»:

Որպես Աստծո քահանայության կրողներ, մենք ներգրավված ենք Տեր Հիսուս Քրիստոսի աշխատանքի մեջ: Մենք արձագանքել ենք Նրա կանչին, մենք Նրա հանձնակատարն ենք: Եկեք սովորենք Նրանից: Եկեք հետևենք Նրա հետքերին: Եկեք ապրենք Նրա ցուցումներին համապատասխան: Այդպես վարվելով մենք պատրաստված կլինենք ցանկացած ծառայության, որին Նա կկանչի մեզ: Սա Նրա՝ աշխատանքն է: Սա Նրա՝ Եկեղեցին է: Իսկապես, Նա մեր հրամանատարն է, Փառաց Թագավորը, իսկ և իսկ՝ Աստծո Որդին: Ես վկայում եմ, որ Նա ապրում է և այդ մասին վկայում եմ Նրա սուրբ անունով, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՆՇՈՒՄՆԵՐ

1. "Come, All Ye Sons of God," *Hymns*, no. 322.
2. Ավմա 17.2-3:



Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Տաճարային օրհնություններ

Տաճար այցելելով մենք հայտնվում ենք հոգևոր մթնոլորտում և զգում խաղաղություն:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, որքան երախտապարտ եմ ես, որ ձեզ հետ եմ Ձատկի այս գեղեցիկ առավոտյան, երբ մեր մտքերն ուղղված են դեպի աշխարհի Փրկիչը: Իմ սերն ու ողջույններն եմ հղում ձեզ բոլորիդ և աղոթում, որ մեր Երկնային Հայրը ոգեշնչի իմ խոսքերը:

Այս համաժողովին լրանում է որպես Եկեղեցու Նախագահի հաստատվելու իմ յոթ տարին: Դրանք զբաղված տարիներ էին, լի ոչ միայն որոշ դժվարություններով, այլև անթիվ օրհնություններով: Առավել հաճելի և սուրբ օրհնություններից էր իմ կողմից տաճարներ նվիրագործելու և վերանվիրագործելու հնարավորությունը:

Անցյալ նոյեմբերին արտոնություն ունեցա նվիրագործելու նոր Ֆենիքս Արիզոնա տաճարը: Ինձ էին միացել Նախագահ Դիտեր Ֆ. Ույսթրֆը, Երեց Դավիդ Հ. Օուսթը, Երեց Ռիչարդ Ջ. Մեյնզը, Երեց Լին Գ. Ռոբինսոնը և Երեց Քենթ Ֆ. Ռիչարդսը: Նվիրագործմանը նախորդող երեկոյան մի հիասքանչ մշակութային տոնակատարություն տեղի ունեցավ, որի ընթացքում հրաշալի ելույթ ունեցան այդ տաճարի շրջանից ավելի քան

4000 երիտասարդներ: Հաջորդ օրը տաճարը նվիրագործվեց երեք սուրբ և ոգեշնչող նիստերի ընթացքում:

Տաճարների կառուցումը Եկեղեցու աճի հստակ ցուցիչ է: Ներկայումս ամբողջ աշխարհում ունենք գործող 144 տաճար, որոնցից 5-ը վերանորոգման, իսկ 13-ը կառուցման փուլում են: Ինչպես նաև նախկինում հայտարարված 13 տաճարներ գտնվում են նախապատրաստական տարբեր փուլերում: Այս տարի մենք

ծրագրում ենք վերանվիրագործել ևս 2 տաճար և նվիրագործել 5 նոր տաճար, որոնց շինարարությունն ավարտին է մոտենում:

Վերջին երկու տարիներին մեր ջանքերը կենտրոնացնելով նախկինում հայտարարված տաճարների ավարտման վրա, մենք անորոշ ժամանակով դադարեցրել էինք լրացուցիչ տաճարների կառուցման ծրագրերը: Սակայն այս առավոտյան, ես մեծ ուրախությամբ հայտարարում եմ երեք նոր տաճարների մասին, որոնք կկառուցվեն հետևյալ վայրերում. Աբիջան, Փոդոսկրի ափ, Պորտոպրենս, Հաիթի և Բանկոկ, Թայլանդ: Ինչպիսի հրաշալի օրհնություններ են սպասվում մեր հավատարիմ անդամներին, որ ապրում են այդ և աշխարհի մյուս բոլոր տաճարների տարածքներում:

Լրացուցիչ տաճարների համար ընթացքի մեջ է կարիքները պարզելու և հողատարածքներ գտնելու գործընթացը, քանի որ մենք ցանկանում ենք հնարավորինս շատ անդամներ առանց ժամանակի և միջոցների մեծ զոհաբերությունների տաճար հաճախելու հնարավորություն ունենան: Ինչպես արել ենք նախկինում, այդ հարցում որոշումներ կայացնելուն պես մենք ձեզ տեղյակ կպահենք:

Երբ մտածում եմ տաճարների մասին, միտքս են գալիս այն բազմաթիվ օրհնությունները, որ ստանում ենք այնտեղ: Տաճարի դռներից ներս մտնելով մեր ետևում ենք



թողնում աշխարհի շեղող ազդեցություններն ու խառնաշփոթը: Այդ սրբավայրի ներսում մենք գտնում ենք զեղեցկություն և կարգուկանոն: Այնտեղ մեր հոգիները հանգստանում են և կարճատև դադար առնում մեր կյանքի հոգսերից:

Տաճար այցելելով մենք հայտնվում ենք հոգևոր մթնոլորտում, զգում խաղաղություն, որը վեր է բոլոր այլ զգացողություններից, որ կարող է զգալ մարդկային սիրտը: Մենք պետք է գիտակցենք Փրկչի խոսքերի իրական իմաստը, երբ Նա ասաց. «Խաղաղություն եմ թողում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. . . . ձեր սիրտը չխռովի և չվախենա»:¹

Այդպիսի խաղաղություն կարող է ներթափանցել ցանկացած սիրտ, սիրտ, որը տազնապաճ է, վշտից կեղեքված, մտահոգ, օգնություն աղերսող:

Վերջերս իմացա մի երիտասարդի մասին, ով տաճար էր այցելել օգնություն աղերսող սրտով: Ամիսներ առաջ նա Հարավային Ամերիկայում միսիա ծառայելու կանչ էր ստացել: Մակայն նրա մուտքի արտոնագիրը հետաձգվեց այնքան երկար ժամանակով, որ նրա միսիայի վայրը փոխվեց Միացյալ Նահանգներ: Հուսահատված, որ չէր կարող ծառայել սկզբում նշանակված տարածքում, այնուամենայնիվ նա տքնաջան աշխատում էր իր նոր նշանակման վայրում, վճռական ծառայելու իր լավագույն կարողությամբ: Նա վիատվել էր, որ շփվում էր միսիոներների հետ, ովքեր իր կարծիքով ավելի շատ հետաքրքրված էին ոչ թե ավետարանը քարոզելով, այլ լավ ժամանակ անցկացնելով:

Մի քանի ամիս անց այդ երիտասարդը շատ լուրջ առողջական խնդիր ունեցավ, որի պատճառով նա մասամբ կաթվածահար էր եղել, այդպիսով նրան տուն ուղարկեցին հիվանդության պատճառով:

Մի քանի ամիս անց նա լիովին բժշկվել էր և կաթվածն անհետացել էր: Նրան տեղեկացրեցին, որ կրկին կարող էր ծառայել որպես միսիոներ, և դա մի օրհնություն էր, որի համար նա ամեն օր աղոթում էր: Միակ հիասթափեցնող նորությունն այն



էր, որ նա պետք է վերադառնար իր նախկին միսիա, որտեղ որոշ միսիոներներ ոչ պատշաճ վարք և վերաբերմունք էին դրսևորում:

Նա եկել էր տաճար սփոփանք և հաստատում փնտրելու, որ կարող էր լավ փորձառություն ունենալ որպես միսիոներ: Նրա ծնողները ևս աղոթում էին, որ այդ տաճարային այցը տար այն օգնությունը, որի կարիքն իրենց որդին ուներ:

Այդ երիտասարդը նիստից հետո մտնելով սելեստիալ սենյակ նստեց աթոռին և սկսեց աղոթել առաջնորդություն խնդրելով իր Երկնային Հորից:

Մի փոքր անց սելեստիալ սենյակ մտավ մեկ այլ երիտասարդ, որի անունը Լանդոն էր: Մտնելով այդ սենյակ նրա ուշադրությունն անմիջապես գրավեց այն երիտասարդը, որ նստած աթոռին աչքերը փակ աղոթում էր: Լանդոնը հստակ հուշում ստացավ, որ պետք է խոսեր այդ երիտասարդի հետ: Չցանկանալով ընդհատել, նա որոշեց սպասել: Մի քանի րոպե անցավ, երիտասարդը դեռևս աղոթում էր, իսկ Լանդոնը զգաց, որ այլևս չի կարող հետաձգել հուշումը: Նա մտտեցավ այդ երիտասարդին և թեթևակի հպվեց նրա ուսին: Երիտասարդը բացեց աչքերը և ապշած հայացքով նայեց իրեն անհանգստացնողին: Լանդոնը հանգիստ ասաց. «Ես հուշում ստացա, որ պետք է խոսեմ քեզ հետ, թեպետ չզիտեմ թե ինչու»:

Երբ սկսեցին զրուցել, երիտասարդն իր պատմությունը պատմեց Լանդոնին, բացատրելով իր հանգամանքները և ասելով, որ ցանկանում էր սփոփանք և քաջալերում ստանալ իր միսիայի վերաբերյալ: Լանդոնը, ով հաջող միսիա ծառայելով մոտ մեկ տարի առաջ էր վերադարձել, կիսվեց իր միսիայի փորձառություններով, դժվարություններով և մտահոգություններով, որոնց դիմակայել էր, պատմեց, ինչպես էր Տիրոջ օգնությունը խնդրել և ինչպիսի օրհնություններ էր ստացել: Նրա խոսքերը մխիթարող և հուսադրող էին, և իր միսիայի հանդեպ նրա խանդավառությունը վարակիչ էր: Ի վերջո, երբ այդ երիտասարդի վախը փարատվեց, նրա սիրտը խաղաղությամբ լցվեց: Նա խորը երախտագիտություն զգաց, երբ հասկացավ, որ իր աղոթքը պատասխանվեց:

Երկու երիտասարդները միասին աղոթեցին և ապա Լանդոնը պատրաստվեց հեռանալ, ուրախ, որ լսեց իր ստացած ոգեշնչմանը: Երբ ցանկացավ հեռանալ, երիտասարդը հարցրեց նրան. «Որտե՞ղ ես միսիա ծառայել»: Մինչ այդ նրանք չէին հիշատակել իրենց միսիայի անունը: Երբ Լանդոնը նշեց իր միսիայի անունը, երիտասարդի աչքերն արցունքով լցվեցին: Լանդոնը ծառայել էր այն նույն միսիայում, որտեղ այդ երիտասարդը պետք է վերադառնար:

Ինձ ուղարկած իր նամակում Լանդոնը գրել էր այդ երիտասարդի հրաժեշտի խոսքը. «Ես հավատում էի, որ Երկնային Հայրը կօրհներ ինձ, բայց երբեք չէի պատկերացնում, որ ինձ օգնելու համար կուղարկեր ինչ-որ մեկին, ով ծառայել էր իմ միսիայում: Այժմ գիտեմ, որ ամեն ինչ լավ կլինի»:² Անկեղծ սրտով ասված խոնարհ աղոթքը լավեց և պատասխանվեց:

Իմ եղբայրներ և քույրեր, մեր կյանքում կլինեն գայթակղություններ, կունենանք փորձություններ և մարտահրավերներ: Գնալով տաճար, հիշելով այնտեղ կապած մեր ուխտերը, մենք ավելի լավ կկարողանանք հաղթահարել այդ գայթակղությունները և կրել մեր փորձությունները: Տաճարում մենք խաղաղություն կգտնենք:

Տաճարային օրհնություններն անգին են: Այն մեկի համար, որ ես երախտասպարտ եմ իմ կյանքի ամեն օրը, իմ սիրելի կնոջ Ֆրենսիսի հետ ստացած օրհնությունն է, երբ մենք ծնկի իջած սուրբ խորանի առաջ հավերժ միասին լինելու ուխտեր կապելով: Չկա առավել թանկ օրհնություն ինձ համար, քան խաղաղությունն ու սփոփանքը, որ ստանում եմ այն գիտելիքից, որ մենք երկուսով կրկին միասին ենք լինելու:

Թող որ մեր Երկնային Հայրն օրհնի մեզ, որ մենք ունենանք տաճարային երկրպագության ոգին, հնազանդ լինենք Նրա պատվիրաններին և ուշադիր հետևենք մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի քայլերին: Ես վկայում եմ, որ Նա է մեր Քավիչը: Նա է Աստծո Որդին: Այդ առաջին Չատկի առավոտյան Նա դուրս եկավ գերեզմանից, Իր հետ բերելով հավիտենական կյանքի պարզևր Աստծո բոլոր զավակներին: Այս գեղեցիկ օրը, տոնելով այդ նշանավոր իրադարձությունը, թող որ երախտագիտության աղոթք հղենք Նրա մեծ ու հրաշալի պարգևների համար: Այդ ամենի համար ես խոնարհ աղոթում եմ Նրա սուրբ անունով, ամեն: ■

ՀՐՈՒՄՆԵՐ

1. Հովհաննես 14.27
2. Թոմաս Ս. Մոնսոնի նամակներից:



Ռոզմարի Մ. Վիքսոն
Երեխաների միության գերագույն նախագահ

Վերադարձ հավատքին

Մեզանից յուրաքանչյուրը կարող է ամրացնել իր հավատքն առ Հիսուս Քրիստոս մեր անձնական կյանքում և ուրախություն գտնել:

Լախագահ Մոնսոն, այս Չատկի առավոտյան մենք անչափ երախտասպարտ ենք մեր կենդանի մարգարեի ձայնը լսելու համար: Մենք բարձր ենք գնահատում ձեր խոսքերը, նաև ձեր խորհուրդը. «Ուրախություն գտեք ճանապարհին»¹ և «Ապագան պայծառ է ձեր հավատքի պես»:²


Այս տարի Երեխաները կհավում են առ Հիսուս Քրիստոս իրենց հավատքի ուրախությամբ և պայծառությամբ, երբ երգում են «Գիտեմ սիրում է Փրկիչն ինձ» երգը: Նրանք երգում են ճշմարտությունը. «Ես գիտեմ, որ Նա սպրում է: . . . Իմ սիրտը նվիրում եմ Նրան»:³ Երեխաների պես մեզանից յուրաքանչյուրը կարող է ամրացնել իր հավատքն առ Հիսուս Քրիստոս մեր անձնական կյանքում և ուրախություն գտնել:

Վերջերս Միտիոդ Միության կիրակնօրյա ժողովին ես լսեցի մի երիտասարդ մոր, ով ներկայացրեց իր դարձի ուղին: Նա մեծացել էր Եկեղեցում ծնողների հետ, ովքեր ուսուցանել էին ավետարանը: Հաճախել էր Երեխաների Խումբ, Երիտասարդ կանանց դասարան և սեմինարիա: Նա սիրով էր սովորում և հայտնագործում ճշմարտություններ: Նա մշտապես *փնտրում էր* մեջ էր: Երեց Ռասսել Մ. Նելսոնն ասել

է. «Տերը կարող է ուսուցանել միայն պրպտող միտքը»:⁴ Իսկ այդ երիտասարդ աղջիկն ընկալունակ էր:

Ավագ դպրոցից հետո նա ընդունվել էր համալսարան, կնքվել տաճարում վերադարձած միսիոներին հետ և օրհնվել հրաշալի երեխաներով:

Պրպտող ոգով այս մայրը շարունակում էր հարցեր տալ: Բայց հարցերը բարդանալու հետ պատասխաններն էլ էին բարդանում: Իսկ երբեմն էլ պատասխաններ չէին լինում, կամ պատասխանները խաղաղություն չէին պարզվում: Ի վերջո,





պատասխաններ փնտրելիս ավելի ու ավելի շատ հարցեր էին ծագում, և նա սկսեց հարցականի տակ դնել իր հավատքի որոշ հիմնադրություններ:

Այդ շփոթեցնող ժամանակահատվածում նրա շրջապատից ոմանք ասում էին. «Ուղղակի հավատա ինձ»: Իսկ նա մտածում էր. «Ես չեմ կարող, դուք չեք հասկանում, դուք չեք մաքառում այդ խնդիրների հետ»: Նա բացատրեց. «Ես պատրաստ էի քաղաքավարի լինել նրանց հետ, ովքեր առանց կասկածի էին ապրում, բայց նրանք նույնպես պետք է նման ձևով վերաբերեին ինձ»: Շատերն այդպես էլ վարվում էին:

Նա ասաց. «Օնոդներս գիտեին իմ սիրտը և ինձ չէին անհանգստացնում: Նրանք սիրով էին շրջապատել ինձ, մինչ քան փորձում էի ինքս կողմնորոշվել»: Նաև, այդ երիտասարդ կնոջ եպիսկոպոսը հաճախ էր հանդիպում նրան և ասում, որ վստահում էր իրեն:

Օլիսի անդամները ևս անվարան սեր էին ցուցաբերում, և նա իրեն ընդգրկված էր զգում: Նրա ծովսր չէր փորձում կատարյալ երևալ, այլ դա հոգատար վերաբերմունք դրսևորելու վայր էր:

Նա հիշում է. «Հետաքրքիր է, որ այդ ընթացքում ես իրական կապ զգացի իմ մահացած տատիկների և պապիկների հետ: Նրանք աջակցում և խրախուսում էին ինձ, որ շարունակեի փորձել: Նրանք կարծես ասում էին. «Կենտրոնացիր քո գիտելիքի վրա»:

Չնայած այդքան մեծ աջակցությանը, նա դարձավ ոչ ակտիվ: Նա ասաց. «Ես ինձ չէի առանձնացնում Եկեղեցուց վատ վարքի, հոգևորի հանդեպ անտարբերության, պատվիրաններով չապրելու համար արդարացում կամ հեշտ ուղի փնտրելու պատճառով: Զգում էի, որ ինձ հարկավոր էր «Ինչի՞ն էմ ես իրականում հավատում» հարցի պատասխանը:

Այդ ժամանակ էր, որ ես կարդացի Մայր Թերեզայի գրվածքները, ով նմանատիպ զգացմունքներով էր կիսվել: 1953թ. նամակում Մայր Թերեզան գրել էր. «Խնդրում եմ աղոթեք հատկապես ինձ համար, որ ես չխափանեմ, Նրա աշխատանքը և որ Մեր Տերը ցույց տա Իրեն, քանզի այնպիսի սոսկալի խավար է տիրում իմ մեջ, ասես ամեն ինչ մահացած է: Ես նման վիճակում եմ գտնվում «աշխատանքը» սկսելու պահից ի վեր: Խնդրեք Մեր Տիրոջը, որ ինձ քաջություն պարգևի»:

Արքեպիսկոպոս Պեդրին պատասխանել էր. «Աստված առաջնորդում է քեզ, սիրելի Մայր. դու այդքան թանձր խավարի մեջ չես, որքան կարծում ես: Ճանապարհը, որով քայլում ես, միշտ չէ որ անմիջապես հստակ երևում է: Աղոթիր լույսի համար, արագ որոշումներ մի կայացրո՛ւ, լսիր մյուսների կարծիքները, քննիր նրանց դրդապատճառները: Դու միշտ կգտնես մի բան, ինչը քեզ համար օգտակար կլինի: . . . Առաջնորդվիր հավատքով, աղոթքով,

առողջ դատողությամբ և անկեղծ միտումով, որը դու բավականաչափ ունես»:⁵

Այդ երիտասարդ կինը մտածեց, որ եթե Մայր Թերեզան կարող էր ապրել իր կրոնով առանց բոլոր պատասխաններն ունենալու և առանց ամեն ինչ հստակ զգալու, գուցե ինքը ևս կկարողանար: Նա կարողացավ առ հավատք մի հասարակ քայլ կատարել, և ապա մեկ ուրիշը: Նա կարողանում էր կենտրոնանալ ճշմարտությունների վրա, որոնց նա հավատում էր, և թույլ տվեց, որ այդ ճշմարտությունները լցնեին իր միտքն ու սիրտը:

Ետ նայելով նա ասում է. «Իմ վկայությունը դարձել էր, կարծես, մի մոխրակույտ: Այն ամբողջովին այրվել էր: Մնացել էր միայն Հիսուս Բրիստոսը»: Նա շարունակում է. «Բայց Նա չի լքում քեզ, եթե դու հարցեր ունես: Երբ ինչ-որ մեկը փորձում է պահել պատվիրանները, դուր լայն բացվում է: Աղոթքը և սուրբ գրություններն ուսումնասիրելը դարձան անչափ կարևոր»:

Իր հավատքը վերակառուցելու համար նախ նա սկսեց ավետարանի հիմնական ճշմարտություններից: Նա վերցրեց Մանկական երգարանը և սկսեց կարդալ երգերի խոսքերը: Դրանք գանձեր էին նրա համար: Նա աղոթեց, որ հավատք ունենար բարձրացնելու ծանրությունը, որ զգում էր:

Նա սովորեց, որ երբ կարդում էր մի միտք, որն իր մեջ կասկածի տեղիք էր տալիս, նա «կանգ էր առնում, նայում համայնապատկերին և ավետարանի այդ կետը դիտարկում անձնական տեսակետից»: Նա ասաց. «Ես հարցնում էի՝ արդյո՞ք սա ճիշտ ուղի է իմ և իմ ընտանիքի համար»: Երբեմն հարցնում էի ինքս ինձ. «Ի՞նչ եմ ուզում իմ երեխաների համար»: Ես հասկացա, որ ուզում էի նրանք տաճարում ամուսնանալին: Այդ ժամանակ էր, որ հավատքը կրկին լցրեց իմ սիրտը»:

Երեց Զեֆրի Ռ. Հոլլանդն ասել է. «Խոնարհությունը, հավատքը և Սուրբ Հոգու ազդեցությունը միշտ կլինեն ճշմարտության *փնտրանքի* տարրերը»:⁶

Թեպետ նա հարցեր ուներ Մորմոնի Գրքի ի հայտ գալու վերաբերյալ, նա չէր կարող մերժել Մորմոնի Գրքի ճշմարտությունները: Փրկչին ավելի լավ հասկանալու նպատակով նա կենտրոնացավ Նոր կտակարանն ուսումնասիրելու վրա: Նա ասաց. «Բայց ի վերջո ես վերադարձա Մորմոնի Գրքին, որովհետև Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության մասին ընթերցելիս հրաշալի զգացողություններ էին պարուրել ինձ»:

Նա ավարտեց այսպես. «Պետք է ունենաս այդ գրքի ճշմարտությունների հետ կապված քո անձնական հոգևոր փորձառությունները»: Իսկ նա ուներ այդ փորձառությունները: Նա բացատրեց. «Ես կարդում եմ Մոսիան և այն ուղղորդում է, ինձ. «Հավատացե՛ք Աստծուն. հավատացե՛ք, որ նա կա, և որ նա ստեղծել է բոլոր բաները. . . . հավատացե՛ք, որ նա ունի բոլոր իմաստությունը, և բոլոր զորությունը՝ և՛ երկնքում, և՛ երկրի վրա. հավատացե՛ք, որ մարդ չի ըմբռնում այն բոլոր բաները, որոնք Տերը կարող է ըմբռնել»:⁷

Այդ ժամանակ էր, որ նրան կանչեցին ծառայելու Երեխաների խմբում որպես դաշնակահար: «Դա ապահով էր,- ասաց նա,- ես ցանկանում էի, որ իմ երեխաները հաճախեին Երեխաների խումբ, և այժմ ես կարող էի նրանց հետ լինել: Իսկ ես դեռ պատրաստ չէի ուսուցանելու»: Ծառայելու ընթացքում նա մշտապես զգում էր իր շրջապատի վերաբերմունքը. «Արի, մենք կրնդունենք քեզ ինչպիսի հոգևոր աստիճանում էլ որ գտնվես, և մենք կաշխատենք քեզ հետ: Տուր մեզ ինչ որ կարող ես»:

Նվազելով մանկական երգերը, նա հաճախ մտածում էր. «Միայն իմ սիրելի ճշմարտությունները: Ես դեռևս կարող եմ վկայություն բերել: Պարզապես կասեմ այն, ինչ գիտեմ և ինչին վստահում եմ: Գուցե դա չլինի գիտելիքի կատարյալ մատուցում, բայց դա կլինի իմը: Ինչի վրա որ կենտրոնանում եմ, իմ ներքում աճում է: Հրաշալի է, երբ վերադառնում ես ավետարանի բուն էությանը և հստակություն զգում»:

Կիրակի առավոտյան լսելով այդ երիտասարդ քրոջ պատմությունը,



հիշեցի, որ մենք պետք է մեր հիմքը կառուցենք մեր Քավչի վեմի վրա:⁸ Ես նաև հիշեցի Երեց Զեֆրի Ռ. Հոլլանդի խորհուրդը. «Ամուր կառչեք ձեր ունեցած գիտելիքից և անխախտ եղեք, մինչև կգա լրացուցիչ գիտելիքը»:⁹

Նրա դասի ընթացքում ես առավել վառ կերպով հասկացա, որ մեր անկեղծ հարցերի պատասխանները գալիս են, երբ մենք համառորեն փնտրում ենք և ապրում ենք պատվիրաններով: Ես հիշեցի, որ մեր հավատքը կարող է անցնել մեր դատողության սահմաններից այն կողմ:

Եվ, որքա՛ն եմ ուզում լինել նրանց պես, ովքեր սիրով և ուշադրությամբ էին շրջապատել այդ երիտասարդ մորը: Ինչպես Նախագահ Ուլդորֆն է ասել. «Քայլելով աշակերտության արահետով, մենք բոլորս էլ Աստծո լույսը փնտրող ուխտագնացներ ենք: Մենք մարդկանց չենք դատապարտում լույսի այն չափի համար, որ նրանք ունեն կամ չունեն. այլ մենք սնուցում և քաջալերում ենք ամեն լույս, մինչև այն դառնում է ավելի պարզ, պայծառ և ճշմարիտ»:¹⁰

Երեխաների խմբի «Մանկան աղոթքը» երգում երեխաները հարցնում են. «Երկնային Հայր, դու իրոք այստե՞ղ ես: Դու ամեն Երեխայի աղոթքը լսո՞ւմ ես»:¹¹

Մենք ևս գուցե հարցնենք.

«Երկնային Հայրն իրո՞ք այստեղ է» և ցնծանք իմ ընկերոջ պես, երբ պատասխանները գան հանգիստ, պարզ հավաստիացումներով: Ես վկայում եմ, որ այդ պարզ հավաստիացումները գալիս են, երբ Նրա կամքը դառնում է մերը: Ես վկայում եմ, որ ճշմարտությունն այսօր երկրի վրա է և Նրա ավետարանը գտնվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՍԵՐ

1. Thomas S. Monson, "Finding Joy in the Journey," *Liahona*, Nov. 2008, 85.
2. Thomas S. Monson, "Be of Good Cheer," *Liahona*, May 2009, 92.
3. "I Know That My Savior Loves Me," in *I Know My Savior Lives: 2015 Outline for Sharing Time* (2014), 29.
4. Russell M. Nelson, in M. Russell Ballard, "What Came from Kirtland" (Brigham Young University fireside, Nov. 6, 1994); speeches.byu.edu.
5. In *Mother Teresa: Come Be My Light; The Private Writings of the Saint of Calcutta*, ed. Brian Kolodiejchuk (2007), 149–50; punctuation standardized.
6. Jeffrey R. Holland, "Be Not Afraid, Only Believe" (evening with Elder Jeffrey R. Holland, Feb. 6, 2015); lds.org/broadcasts.
7. Մոսիա 4:9
8. Տու Հեկաման 5:12:
9. Jeffrey R. Holland, "Lord, I Believe," *Liahona*, May 2013, 94.
10. Dieter F. Uchtdorf, "Receiving a Testimony of Light and Truth," *Liahona*, Nov. 2014, 22.
11. "A Child's Prayer," *Children's Songbook*, 12.



Երեց Խոսն Ա. Տեքսնյա
Յոթանասունական

Փնտրելով Տիրոջը

Փրկչի մասին մեր հասկացողությունը խորացնելով կմեծանա ուրախ ապրելու մեր ցանկությունը և վստահությունը, որ ուրախությունը հնարավոր է:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մեծ ուրախությամբ եմ կանգնած այստեղ ձեր առջև, երբ միասին մասնակցում ենք այս գերագույն համաժողովին: Տարիների ընթացքում գերագույն համաժողովներին իմաստության, խորհրդի, սիտիանքի և նախագուշացման խոսքեր լսելը հսկայական օրհնություն է եղել Քույր Տեքսնյայի, մեր ընտանիքի և ինձ համար:

Տարվա այս հատուկ Չատկի կիրակի ես ցանկանում եմ անդրադառնալ իմ կյանքում Փրկչի ուսմունքների, Նրա բարյացակամության և սիրտ օրինակի կարևորությանը:

Հիսուս Քրիստոսին ավելի խորը հասկանալը մեզ կպարզի ավելի մեծ հույս ապագայի հանդեպ և, անկախ մեր անկատարություններից, ավելի շատ վստահություն մեր արդար նպատակներին հասնելու համար: Դա նաև մեզ ավելի մեծ ցանկություն կտա ծառայելու մեր մերձավորներին:

Տերն ասել է. «Փնտրեք» ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք»: ¹ Տիրոջը փնտրելը և Նրա ներկայությունը զգալն ամենօրյա խնդիր է, արժանահավատ ջանք:

Եղբայրներ և քույրեր, այսօր առավել քան երբևէ մենք մեր տրամադրության տակ ունենք բացառիկ հնարավորություններ և ռեսուրսներ՝ խորացնելու մեր հասկացողությունը Հիսուս Քրիստոսի ուսմունքների և Նրա Քավության վերաբերյալ: Պատշաճ կերպով օգտագործելով այդ միջոցները կարող ենք ուրախությամբ լի բեղմնավոր կյանք ապրել:

Որթատնկի և ճյուղերի փոխաբերության միջոցով Փրկիչն ասել է. «Կացեք ինձանում» և ես ձեզանում. ինչպես որ ճյուղն իր անձիցը կարող չէ պտուղ բերել, եթե որթումը չմնա, այսպես ոչ էլ դուք՝ եթե ինձանում չմնաք»: ²

Որքան շատ հասկանանք Քրիստոսի անզուգական դերը մեր կյանքում, այնքան ավելի կզիտակցենք այստեղ մահկանացու կյանքում մեր նպատակը, որն է՝ ունենալ ուրախություն: Ինչպես այդ ուրախությունը մեզ չի արգելում փորձություններ և դժվարություններ ունենալ, որոնցից մի քանիսն այնքան մեծ և բարդ են, որ գուցե մտածենք, թե նման պայմաններում հնարավոր չէ երջանիկ լինել:

Իմ փորձից գիտեմ, որ արդար ապրելու և Քրիստոսում մնալու ուրախությունը կարող է շարունակվել անկախ մահկանացու կյանքին

բնորոշ դժբախտություններից: Ի վերջո, այդ փորձությունները հաճախ հարստացնում, մարքագործում և ուղղորդում են մեզ դեպի այստեղ մահկանացու կյանքում մեր գոյության և Հիսուս Քրիստոսի Քավության ավելի խորը հասկացողություն: Իրոք, ուրախության լիակատարությունը կարող է միայն ձեռք բերվել Հիսուս Քրիստոսի օգնությամբ: ³

Նա ասաց. «Ես որթն եմ՝ դուք ճյուղերը. նա որ ինձանում մնում է, և ես նորանում, նա շատ պտուղ է բերում. որովհետև առանց ինձ չեք կարող ոչինչ անել»: ⁴

Ես հավատում եմ, որ Փրկչի մասին մեր հասկացողությունը խորացնելով կմեծանա ուրախ ապրելու մեր ցանկությունը և վստահությունը, որ ուրախությունը հնարավոր է: Հետևաբար, մենք կկարողանանք ամեն օր կյանքի հանդեպ ավելի մեծ խանդավառությամբ լցվել և Աստծո պատվիրանները պահել, անգամ դժվարին հանգամանքներում:

Եկեք վաղվան չորդենք այն, ինչ կարող ենք անել այսօր: Այսօր մենք պետք է գանք դեպի Քրիստոսը, որովհետև «եթե [մենք] հավատում ենք [Նրան], [մենք] կաշխատենք, քանի դեռ կոչվում է այսօր»: ⁵

Ամեն օր մեր շփումներում պետք է հաճախակի կիրառենք Քրիստոսի ուսմունքները: Մեր ամենօրյա փոքր ու պարզ քայլերը և գործերը՝

1. Մեր կյանքում կխորացնեն Տիրոջ կարևորության մեր հասկացողությունը, և
2. Կօզնեն մեզ կհավելի այդ հասկացողությամբ աճող սերնդի հետ, ովքեր անկասկած կզգան Երկնային Հոր և Նրա Որդու Հիսուս Քրիստոսի սերը, երբ տեսնեն ավետարանով անկեղծ ապրելու մեր օրինակը:

Ուրեմն, որո՞նք են մեր օրերի այն պարզ վարքագծերը, որոնք բալասան կդառնան մեր հոգիների համար՝ ամրացնելով Քրիստոսի և Նրա առաքելության մասին մեր վկայությունը:

2014թ. National Geographic լուսանկարների մրցույթը ստացավ ավելի

քան 9200 հայց պրոֆեսիոնալ և սիրողական լուսանկարիչների կողմից ավելի քան 150 երկրից: Հաղթող լուսանկարում պատկերված է մի կին, որը գտնվում է ուղևորներով լի գնացքի մեջ: Նրա բջջային հեռախոսից արձակվող լույսը լուսավորում է նրա դեմքը: Նա հստակ ուղերձ է հղում մյուս ուղևորներին՝ անկախ նրանից, որ նա ֆիզիկապես ներկա է, նա իրականում այնտեղ չէ:⁶

Բջջային հեռախոսները, սմարթֆոնները և սոցիալական կայքերը հիմնովին փոխել են աշխարհում մեր կենսակերպը և մյուսների հետ մեր փոխհարաբերությունները:



Գերագույն համաժողովի հեռարձակումը օդանավի թռիչքի ժամանակ: Չախում. 2014թ. National Geographic լուսանկարչական մրցույթի հաղթողը պատկերել է մի կնոջ, ով հստակ ուղերձ է հղում մյուս ուղևորներին՝ անկախ նրանից, որ նա ֆիզիկապես ներկա է, նա իրականում այնտեղ չէ:

գործունեությանը: Այդ սովորույթները կօգնեն ամեն օր մտորել, թե ինչն է մեզ համար կարևոր մեր Երկնային Հոր և Նրա Որդու Հիսուս Քրիստոսի ուսմունքներին էլ ավելի մոտենալու համար:

Սովորություն համար 1. Այցելել Եկեղեցու պաշտոնական վեբկայքեր նյութեր գտնելու համար:

Շաբաթվա ընթացքում այդ կայքերը այցելություններ կատարելով մենք մշտապես ուշադիր կլինենք ավետարանի ուսմունքների հանդեպ և կխրախուսենք մեր ընտանիքին և ընկերներին հիմնականում մտածել և խորհրդածել, թե ինչն է առավել կարևոր:

Սովորություն համար 2. Գրանցվել Եկեղեցու պաշտոնական սոցիալական ցանցերում:

Այդ ընտրության շնորհիվ դուք ձեր էկրանին կտեսնեք այն նյութերը, որոնք կարևոր են ձեր որոնումը և Տիրոջ ու Նրա ուսմունքների փնտրումը խորացնելու համար, և որոնք կամրացնեն ավետարանը հասկանալու ձեր ցանկությունը: Իսկ ամենակարևորն այն է, որ դա կօգնի ձեզ հիշել, թե ինչ է Քրիստոսն ակնկալում յուրաքանչյուրիցս:

Այս թվային դարաշրջանում մենք կարող ենք այնքան արագ տեղափոխվել տարբեր վայրեր և ներգրավվել տարբեր գործունեությունների մեջ, որ կարող ենք արագ հեռանալ կյանքի համար կարևոր բաներից, որոնք լի են հարատև ուրախությամբ:

Չվերահսկվելու դեպքում, այս համացանցային դարում հնարավոր է նախապատվությունը տանք ոչ թե մեր ընտանիքի անդամների, այլ այն մարդկանց հետ հարաբերություններին, ում մենք չենք ճանաչում կամ երբեք չենք հանդիպել:

Մյուս կողմից մենք բոլորս գիտենք, որ օրհնված ենք ունենալով համացանցային հրաշալի ռեսուրսներ, այդ թվում՝ Եկեղեցու կողմից ստեղծված կայքեր, օրինակ սուրբ գրությունների և համաժողովի տեքստային և աուդիո

տարբերակները, Հիսուս Քրիստոսի կյանքի և ուսմունքների մասին տեսանյութերը, մեր ընտանիքի պատմությունը գրանցելու ծրագրերը և ոգեշնչող երաժշտություն լսելու հնարավորությունները:

Վճռորոշ դեր են խաղում այն ընտրություններն ու առաջնահերթությունները, որ մենք կատարում ենք համացանցում գտնվելու ընթացքում: Դրանցով է պայմանավորված ավետարանում մեր հոգևոր առաջընթացը, հասունությունը և ցանկությունը, որպեսզի մեր ներդրումն ունենանք ավելի լավ աշխարհ ստեղծելու և առավել բեղմնավոր կյանք ապրելու գործում:

Այդ պատճառով, այսօր ես կցանկանայի նշել երեք պարզ սովորություններ, որոնք կնպաստեն համացանցային առողջ

Ճիշտ ինչպես «չկա լավ հող առանց լավ հողագործի»,⁷ նմանապես էլ լավ արդյունք չենք ստանա համացանցից, եթե ի սկզբանե առաջնահերթություններ չդնենք մեզ համար մատչելի նյութերի մեջ:

Սովորություն համար 3. Որոշ ժամանակով մի կողմ դրեք բջջային սարքերը:

Էլեկտրոնային սարքերը որոշ ժամանակով մի կողմ դնելը թարմացնում է, եթե փոխարենը բացեք ձեր սուրբ գրությունները կամ ժամանակ հատկացրեք գրուցելու ընտանիքի և ընկերների հետ: Հատկապես Տիրոջ օրը, զգացեք հաղորդության ժողովին մասնակցելու խաղաղությունը՝ առանց մշտապես ստուգելու նոր հաղորդագրությունները կամ նոր գրառումները:

Ձեր թվային սարքերը որոշ ժամանակով մի կողմ դնելու սովորությունը կհարստացնի և կընդլայնի ձեր տեսադաշտը, քանի որ կյանքը չի ասիմանափակվում 10սմ էկրանով:

Տեր Հիսուս Քրիստոսն ասել է. «Ինչպես իմ Հայրն ինձ սիրեց, ես էլ ձեզ սիրեցի. Կացեք իմ սերի մեջ»:⁸ Աստված ուզում է, որ մենք ունենանք ուրախություն և զգանք Նրա սերը: Քրիստոսը նման ուրախությունը հնարավոր է դարձնում մեզանից յուրաքանչյուրի համար: Մենք միջոցներ ունենք Նրան ավելի լավ ճանաչելու և Նրա ավետարանով ապրելու համար:

Ես իմ վկայությունն եմ բերում այն ուրախության մասին, որը գալիս է, երբ մենք պահում ենք պատվիրանները և այն խաղաղության ու ապահովության մասին, որ զգում ենք, երբ մնում ենք Երկնային Հոր և Նրա Որդու, մեր Փրկչի սիրտ մեջ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ովստեր 6.36
2. Հովհաննես 15.4
3. Տես Հովհաննես 15.11:
4. Հովհաննես 15.5
5. Վարդապետություն և Ովստեր 64.25
6. Տես “Photo Contest 2014,” *National Geographic*, photography. nationalgeographic.com/photography/photo-contest/2014/:
7. Սնհայտ հեղինակ
8. Հովհաննես 15.9



Եպիսկոպոս Ջերալդ Խոսն

Նախագահող Եպիսկոպոսության առաջին խորհրդական

Դեռևս հրաշալի՞ է դա ձեր համար:

Սվետարակի հրաշքներով հիանալը՝ հավատքի նշան է: Այն դրդում է մեզ ճանաչել Տիրոջ ձեռքը մեր կյանքում ու ամեն ինչում մեր շուրջ:

Ես ու կինս մեծ ուրախությամբ մեծացնում էին հինգ երեխա շքեղ Փարիզ քաղաքում: Այդ տարիների ընթացքում, մենք ուզում էինք առաջարկել նրանց հարուստ հնարավորություններ՝ բացահայտելու այս աշխարհի հրաշալի բաները: Ամեն ամառ, ընտանիքս երկար ուղևորություններով այցելում էր Եվրոպայի ամենանշանավոր, պատմական վայրեր և բնական հրաշքներ: Վերջապես, Փարիզի տարածքում

22 տարի ապրելուց հետո, մենք պատրաստ էինք տեղափոխվել: Ես մինչ այժմ հիշում եմ, երբ երեխաներս մոտեցան ինձ ու ասացին. «Հայրիկ, դա բոլորովին ամոթալի՛ է: Մենք ապրեցինք այստեղ ամբողջ կյանքը և երբեք չենք եղել Էյֆելյան աշտարակում»:

Աշխարհում այնքան շատ հրաշքներ կան: Մակայն, երբ դրանք միշտ մեր աչքերի առաջ են, մենք ակամա անտեսում ենք դրանք: Մենք նայում



ենք, բայց իսկապես չենք տեսնում, մենք լսում ենք, բայց իսկապես չենք ընկալում:

Իր երկրային ծառայության ժամանակ Հիսուսը ասաց իր աշակերտներին.

«Երանի այն աչքերին՝ որ տեսնում են այն որ դուք էք տեսնում:

Որովհետեւ ասում եմ ձեզ, թե շատ մարգարեներ եւ թագաւորներ կամեցան տեսնել այն որ դուք էք տեսնում, եւ չ'տեսան. Եւ լսել այն որ դուք էք լսում, եւ չ'լսեցին»¹:

Ես հաճախ եմ խորհում, թե ինչպես կլինէր կյանքը, եթե ապրէինք Փրկչի ժամանակներում: Կարո՞ղ եք պատկերացնել ձեզ Նրա ուրքերի մոտ նստած, Նրա գրկախառնումը զգալիս ու նրա ծառայությանն ակնատես լինելիս: Մակայն չափից շատ մարդիկ, ովքեր հանդէլ են Նրան, չեն ընդունել՝ չեն «տեսել», որ Աստծո Որդին ապրում էր նրանց մեջ:

Մենք նույնպես արտոնված ենք ապրել բացառիկ ժամանակներում: Հին մարգարեները տեսել են Վերականգնումը որպէս «գարմանալի գործ . . . , այո՛, գարմանալիք և գարմանք»:² Ոչ մի նախկին ժամանակաշրջանում այնքան շատ միսիոներներ կանչված չեն եղել, այնքան շատ ազգեր ավետարանի ուղերձի համար չեն բացվել, և այնքան շատ տաճարներ աշխարհով մեկ չեն կառուցվել:

Մեզ՝ վերջին օրերի սրբերիս համար, հրաշքներ պատահում են նաև մեր անհատական կյանքում: Դրանք ներառում են մեր անձի դարձի գալը, մեր աղոթքների պատասխանները և օրհնությունները, որոնք Աստվածը պարգևում է մեզ ամեն օր:

Ավետարանի հրաշքներով հիանալը՝ հավատքի նշան է: Այն դրդում է մեզ ճանաչել Տիրոջ ձեռքը մեր կյանքում ու ամեն ինչում մեր շուրջ: Մեր գարմանքը նաև առաջացնում է հոգևոր ուժ: Դա տալիս է մեզ եռանդ, որպեսզի հաստատուն մնանք մեր հավատքում և ընդգրկվենք փրկության աշխատանքի մեջ:

Բայց, եկեք զգուշանանք: Հիանալու մեր ունակությունը նուրբ է: Երկար ժամանակի ընթացքում,



այնպիսի բաներ, ինչպիսիք պատվիրանները պատահական պահելը, անտարբերությունը, և նույնիսկ հոգնածությունը կարող են առաջանալ մեր մեջ և դարձնել մեզ անզգա ավետարանի ամենա ուշագրավ նշանների ու հրաշքների հանդէպ:

Մորմոնի գիրքը նկարագրում է մեր ժամանակներին շատ նման մի ժամանակաշրջան, որը նախորդեց Մեսիայի գալուստը Ամերիկյան մայրցամաք: Նրա ծնունդի նշանները հանկարծ երևացին երկնքում: Մարդիկ այնքան սրտահույզ ապշած էին, որ խոնարհվեցին և գրեթե բոլորը դարձի եկան: Մակայն, ընդամենը 4 կարճ տարուց հետո՝ «մարդիկ սկսեցին մոռանալ այն նշաններն ու հրաշքները, որոնք նրանք լսել էին, և սկսեցին ավելի ու ավելի քիչ ապշել երկնքից նշանի կամ հրաշքի վրա, . . . և սկսեցին չհավատալ այն ամենին, ինչ լսել էին ու տեսել»:³

Իմ եղբայրներ և քույրեր, ավետարանը դեռևս հրաշալի՞ է ձեր համար: Դեռևս կարո՞ղ եք տեսնել, լսել, զգալ և հիանալ: Թե՞ ձեր հոգևոր զգայակները սպասման ռեժիմում են: Ինչպիսի անձնական իրավիճակի մեջ է որ լինեք, ես հրավիրում եմ ձեզ անել երեք բան:

Առաջինը՝ երբեք մի հոգնեք հայտնագործել կամ վերահայտնագործել

ավետարանի ճշմարտությունները:

Գրող Մարսել Փրուստն ասել է. «Հայտնագործության իսկական ճանապարհը այն է, որ պետք չէ նոր բնատեսարաններ փնտրել, այլ պետք է նոր աչքեր ունենալ»:⁴ Հիշու՞մ եք երբ առաջին անգամ սուրբ գրությունների հատվածը կարդալիս զգացել եք իբրև Տերը խոսում էր ձեր անձի հետ: Կարո՞ղ եք հիշել երբ առաջին անգամ դուք զգացել եք Սուրբ Հոգու անուշ ազդեցությունը ձեր վրա, միզուց նույնիսկ առանց այդ պահին գիտակցելու, որ դա Սուրբ Հոգին էր: Յուրահատուկ չէի՞ն այդ պահերը ձեր համար:

Մենք պետք է ամեն օր հոգևոր գիտելիքի քաղց ու փափագ զգանք: Այս անձնական սովորությունը հիմնված է ուսումնասիրության, խորհրդածության և աղոթքի վրա: Երբեմն, մենք կարող ենք գայթակղվել մտածելով. «Ես այսօր կարիք չունեմ ուսումնասիրել սուրբ գրությունները, ես արդեն կարդացել եմ դրանք սկզբից մինչև վերջ» կամ «Ես կարիք չունեմ այսօր գնալ եկեղեցի, այնտեղ որևէ նոր բան չկա»:

Մակայն, ավետարանը անսպառ գիտելիքի աղբյուրն է: Միշտ որևէ նոր բան կա սովորելու և զգալու ամեն կիրակի, ամեն ժողովին և սուրբ գրությունների յուրաքանչյուր



հատվածում: Հավատքով մենք կատարում ենք խոստումը, որ եթե «փնտրենք. . . [մենք] կգտնենք»:⁵

Երկրորդը՝ կապեք ձեր հավատքը ավետարանի պարզ ու հասարակ ճշմարտությունների հետ: Մեր զարմանքը պետք է արմատավորվի մեր հավատքի հիմնական սկզբունքներում, մեր ուխտերի և արարողությունների մաքրության և պաշտամունքի գործերի մեջ:

Մի քույր միսիոներ պատմել է երեք մարդու մասին, որոնց հետ նա ծանոթացել է շրջանի համաժողովի ժամանակ Աֆրիկայում: Նրանք եկան մի հեռավոր ու մեկուսացված գյուղից, որտեղ Եկեղեցին դեռևս չէր հիմնվել, սակայն այնտեղ արդեն կային 15 հավատարիմ անդամ և գրեթե 20 հետաքրքրվող: Ավելի քան 2 շաբաթվա ընթացքում, այս եղբայրները քայլել էին ավելի քան 480 կիլոմետր՝ անձրևտեղանակին՝ ցելխոտ ճանապարհներով, որ կարողանային հաճախել համաժողովն ու բերել իրենց խմբի անդամների տասանորդները: Նրանք պլանավորում էին մնալ ամբողջ շաբաթվա ընթացքում, որպեսզի կարողանային վայելել հաջորդ կիրակի օրվա հաղորդության ընդունելու արտոնությունը, հուսալով դրանից հետո՝ կրելով Մորմոնի Գրքով լցված արկղեր իրենց գլխների վրա, վերադառնալ գյուղ և բաժանել դրանք համագյուղացիներին:

Միսիոները վկայել էր, թե որքան նա զգացված էր այդ եղբայրների դրսևորած պատկառանքով և նրանց անկեղծ զոհաբերություններով՝ ձեռք բերել այն բաները, որոնք իր համար միշտ մատչելի էին եղել:

Նա մտածում էր. «Եթե մի կիրակի օր Արիզոնայում ես վեր կենայի ու բացահայտեի, որ մեքենաս չէր աշխատում, արդյո՞ք ես ուղքով կզնայի իմ տնից մի քանի թաղամաս հեռու գտնվող եկեղեցի: Թե՞ կմնայի տանը մեծ հեռավորության կամ անձրևի պատրվակով»:⁶ Այս հարցերը լավն են և արժե, որ մենք բոլորս խորհենք դրանց մասին:

Ի վերջո, ես հրավիրում եմ ձեզ փնտրել ու փայտախել Սուրբ Հոգու ընկերակցությունը: Ավետարանի բոլոր հրաշքները չեն կարող ընկալվել մեր բնական զգայարաններով: Դրանք են այն բաները «Քննեք այդ չ'տեսա եւ ականջ չ'սեց եւ մարդի սիրտ չ'ընկա, այն պատրաստեց Աստուած իրան սիրողների համար»:⁷

Երբ մենք Հոգին ունենում մեզ հետ, մեր հոգևոր զգայարանները սրված են և մեր հիշողությունը հրահրած է այնպես, որ մենք չենք կարող մոռանալ հրաշքներն ու նշանները, որոնց մասին մենք վկայություն են ստացել: Հենց այդ պատճառով, Նրա Նեփիազի աշակերտները՝ իմանալով որ Նա շուտով լքելու էր նրանց, ջերմեռանդորեն աղոթում էին. «Նրա համար, ինչն

իրենք ամենաշատն էին փափագում. և նրանք փափագում էին, որ Սուրբ Հոգին շնորհվեր իրենց»:⁸

Թեև նրանք տեսել էին Փրկչին իրենց սեփական աչքերով և դիպչել էին Նրա վերքերին սեփական ձեռքերով, նրանք գիտեին, որ իրենց վկայությունները կարող էին նվազել, եթե մշտապես չնորացվեն Սուրբ Հոգու զորությամբ: Իմ եղբայրներ ու քույրեր, երբեք մի արեք որևէ բան, ինչը վտանգի է ենթարկում կորցնելու թանկարժեք և հրաշալի պարզվող Սուրբ Հոգու ընկերակցությունը: Փնտրեք դա ջերմեռանդ աղոթքով ու արդարակյաց կյանքով:

Ես վկայում եմ, որ աշխատանքը որի մեջ մենք ընդգրկված ենք՝ «գարմանալիք և զարմանք» է: Քանի որ մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսին, Աստված վկայում է մեզ «նշաններով եւ հրաշքներով, եւ կերպ կերպ գործիքներով, եւ Սուրբ Հոգու պարգևներովն ինչպես ինքը կամեցա»:⁹ Այս յուրահատուկ օրը, ես վկայում եմ, որ ավետարանի զարմանքներն ու հրաշքները հիմնված են Աստծո ամենամեծ պարզակի՝ Փրկչի Քավության վրա: Դա սիրո ամենակատարյալ պարզվել է, որը միևնույն նպատակը ունեցող Հայրն ու Որդին շնորհել են բոլորիս համար: Ձեզ հետ միասին՝ «Հիսուսի մեծ սիրուց ես մնում եմ զարմացած . . . հրաշալի է, հոյակալ է, հոյակալ»:¹⁰

Իմ աղոթքն, որ մենք միշտ ունենանք տեսնող աչքեր, լսող ականջներ, և այս հիանալի ավետարանի հրաշքները ընկալող սրտեր, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄԵՐ

1. Դուկաս 10.23–24:
2. 2 Նեփի 27.26:
3. 3 Նեփի 2.1:
4. “Marcel Proust,” *Guardian*, July 22, 2008, theguardian.com/books/2008/jun/11/marcelproust.
5. Մատթեոս 7.7:
6. Adapted from Lorraine Bird Jameson, “The Giants of Kinkondja” (article on Africa Southeast Area website, 2009); web.archive.org/web/20101210013757/http://www.lds.co.za/index.php/news-a-events/news/aseanews/91-the-giants-of-kinkondja.
7. Ս Կորնթացիներին 2.9:
8. 3 Նեփի 19.9:
9. Եբրայեցիս 2.4:
10. «Ես մնում եմ զարմացած», *Օրհներգեր և մանկական երգեր*, No. 193.



Երեց Բրնսթ Չ. Նիլսոն
Յոթամասունակյան

Սպասելով մոլորվածին

Թող որ դուք և ես հայտնություն ստանանք հասկանալու համար, թե ինչպես կարող ենք մեր կյանքում ճիշտ վերաբերվել մոլորվածներին:

Փրկիչ Հիսուս Քրիստոսն Իր երկրային ծառայությունն անցկացրեց ուսուցանելով Իր բժշկող և փրկագնող զորության մասին: Մի առիթով Նոր Կտակարանի Ղուկաս 15 գլխում Նրան քննադատեցին մեղսավորների հետ ուտելու և ժամանակ անցկացնելու համար (տես Ղուկաս 15.2): Փրկիչն այդ քննադատությունն օգտագործեց ուսուցանելու մեզ, թե ինչպես պետք է վերաբերվենք նրանց, ովքեր կորցրել են իրենց ուղին:

Նա Իր քննադատներին պատասխանեց՝ տալով նրանց երկու կարևոր հարց.

«Ձեզանից ո՞վ է այն մարդը, որ հարյուր ոչխար ունենա, և նորանցից մեկը կորցնե. չի՞ թողիլ ինսունևինը անասպատումը, և այն կորածի ետևից գնալ, մինչև որ գտնե նորան» (Ղուկաս 15.4):

«Ո՞վ է այն կինը, որը տասը դրամ ունենա և եթե մեկ դրամ կորցնե, ճրագ չի վառիլ և տունն ավելել և սաստիկ որոնե, մինչև որ գտնե» (Ղուկաս 15.8):

Այնուհետև Փրկիչն ուսուցանեց անառակ որդու մասին առակը: Այդ առակը 100 ոչխարի կամ 10 կտոր արծաթի մասին չէ, այն մի թանկագին որդու մասին է, որ մոլորվել էր: Այդ առակով Փրկիչն ուսուցանում է

մեզ, թե ինչպես պետք է վերաբերվենք ընտանիքի այն անդամին, ով կորցրել է իր ուղին:

Անառակ որդին տեղեկացնում է հորը, որ ցանկանում է ստանալ իր հասանելիք ժառանգությունը: Նա ցանկանում է թողնել ապահով հայրական տունը և աշխարհիկ կյանքով ապրել (տես Ղուկաս 15.12-13): Ուշադրություն դարձրեք, որ Փրկիչ առակում հայրը սիրով է արձագանքում որդուն՝ տալով նրան իր ժառանգությունը: Իհարկե, հայրն ամեն կերպ պետք է որ համոզած լինեիր իր որդուն, որ նա մնար: Ինչևէ, եթե չափահաս որդին կատարել է իր

ընտրությունը, իմաստուն հայրը թույլ է տալիս, որ նա հեռանա: Այդպիսով հայրն անկեղծ սեր ցուցաբերելով հետևում և սպասում է (տես Ղուկաս 15.20):

Իմ ընտանիքը նմանատիպ փորձառություն է ունեցել: Իմ երկու հավատարիմ եղբայրները, հրաշալի քույրը և ես մեծացել ենք օրինակելի ծնողների կողմից: Մենք մեծացել ենք տանն ուսուցանվելով ավետարանը, և չորսս էլ մեր կողակիցների հետ կնքվել ենք տաճարում: Մակայն 1994թ. մեր քույր Սյուզանը հիասթափվեց Եկեղեցուց և Եկեղեցու որոշ ուսմունքներից: Նրան այդպես էին տրամադրել Եկեղեցու նախկին ղեկավարներին ծաղրողներն ու քննադատողները: Նա թույլ էր տվել, որ խամրի իր հավատքն առ կենդանի մարգարեններն ու առաքյալները: Ժամանակի ընթացքում, նրա հավատքը տեղի տվեց կասկածներին, և նա որոշեց հեռանալ Եկեղեցուց: Սյուզանը ինձ թույլատրեց ներկայացնել իր պատմությունը, հույսով, որ այն կօգնի շատերին:

Եղբայրներս, ես և մեր այրիացած մայրը խորապես տխրել էինք: Մենք չէինք կարողանում պատկերացնել, թե ինչը կարող էր պատճառ լինել, որ նա հեռանար իր հավատքից: Քրոջս ընտրություններն ասես կտորել էին մեր մոր սիրտը:

Եղբայրներս և ես ծառայել էինք որպես եպիսկոպոսներ և քվորումի նախագահներ, և ծխի և քվորումի անդամների հետ ապրել էինք





հաջողության ուրախությունը, երբ թողեցինք ինստունինին և գնացինք մեկի ետևից: Ինչևէ, մեր քրոջը փրկելուն և նրան ետ բերելուն ուղղված մեր համառ ջանքերը նրան միայն ավելի ու ավելի էին հեռացնում:

Երբ երկնային առաջնորդությունն էինք փնտրում, որպեսզի իմանայինք ինչպես վերաբերվել նրան, ակնհայտ դարձավ, որ մենք պետք է հետևեինք անսառակ որդու մասին առաջում տրված հոր օրինակին:

Մյուզանը կատարել էր իր ընտրությունը, և մենք պետք է, փոխաբերական իմաստով, հանգիստ թողնեինք նրան, միևնույն ժամանակ ցույց տալով մեր անկեղծ սերը նրա հանդեպ: Եվ այսպես, նորոգված սիրով և բարյացակամորեն մենք հետևում և սպասում էինք:

Մայրս երբեք չէր դադարում սեր և հոգատարություն ցուցաբերել Մյուզանի հանդեպ: Ամեն անգամ մայրս տաճար այցելելիս Մյուզանի անունը դնում էր աղոթքի ցուցակում, և երբեք հույսը չէր կորցրնում: Կալիֆորնիայում Մյուզանին ամենամոտ ապրող ավագ եղբայրս և նրա կինը նրան հրավիրում էին ընտանեկան բոլոր միջոցառումներին: Նրանք ամեն տարի Մյուզանի ծննդյան օրն իրենց տանը ընթրիք էին պատրաստում: Միշտ նրա հետ կապ էին պահում և հավաստիանում, որ նա զգում էր իր հանդեպ նրանց անկեղծ սերը:

Կրտսեր եղբայրս և նրա կինը միշտ շփվում էին Մյուզանի երեխաների հետ Յուտայում, սեր և հոգատարություն ցուցաբերում

նրանց հանդեպ: Նրանք երբեք չէին մոռանում Մյուզանի երեխաներին հրավիրել իրենց ընտանեկան հավաքույթներին, իսկ երբ եկավ Մյուզանի թոռնիկի մկրտվելու օրը, եղբայրս կատարեց այդ արարողությունը: Մյուզանը նաև ուներ սիրալիր տնային ուսուցիչներ և այցելող ուսուցիչներ, ովքեր երբեք անձնատուր չեղան:

Ամեն անգամ երբ մեր երեխաները միսիա էին մեկնում կամ ամուսնանում, Մյուզանին հրավիրում էինք և նա ներկա էր գտնվում բոլոր ընտանեկան միջոցառումներին: Մենք միշտ փորձում էինք ընտանեկան հավաքներ կազմակերպել, որպեսզի Մյուզանը և նրա երեխաները մեզ հետ լինեին և իմանային, որ մենք սիրում էինք նրանց, և նրանք մեր ընտանիքի մասն էին: Երբ Մյուզանը

գիտական աստիճան ստացավ Կալիֆորնիայի համալսարանից, մենք բոլորս նրա կողքին էինք և ներկա էինք ավարտական հանդիսավորությունը: Թեպետ չէինք կարողանում ընդունել նրա բոլոր ընտրությունները, մենք անկասկած ընդունում էինք նրան: Մենք սիրում, հետևում և սպասում էինք:

2006 թվին արդեն 12 տարի էր, ինչ Մյուզանը լքել էր Եկեղեցին, երբ մեր դուստր Քեթին իր ամուսնու հետ տեղափոխվեց Կալիֆորնիա, իրավագիտական կրթություն ստանալու: Նրանք ապրում էին Մյուզանի քաղաքում: Այդ երիտասարդ զույգը խնդրել էր հորաքույր Մյուզանին օգնել իրենց, և նրանք սիրում էին նրան: Մյուզանն օգնել էր խնամել մեր երկու տարեկան թոռնիկին, Լյուսիին, և նրանք միասին ասում



էին երեկոյան աղոթքները: Մի օր Քեթին զանգահարեց ինձ և հարցրեց, ինչ եմ կարծում, արդյոք Մյուզանը երբևէ կվերադառնա Եկեղեցի: Ես նրան ասացի, որ զգում եմ, որ նա կգա, և մենք պետք է շարունակենք համբերատար լինել: Եվս երեք տարի անցավ, սիրով լի մենք հետևում և սպասում էինք:

Վեց տարի առաջ այս կիրակի օրը ես և կինս, Մարսիան, նստած էինք այս Համաժողովների Կենտրոնի առաջին շարքում: Այդ օրն ինձ պետք է հաստատեին որպէս նոր Բարձրագույն Իշխանավոր: Մարսիան, որը միշտ գտնվում է Հոգու ներգործության ներքո, մի գրություն գրեց ինձ ասելով. «Կարծում եմ, Մյուզանի վերադառնալու ժամանակն է»: Դուստրս՝ Քեթին ինձ առաջարկեց մի պահ դուրս գալ, զանգահարել Մյուզանին և առաջարկել նրան դիտել այդ օրվա գերագույն համաժողովը:

Հուշում ստանալով այդ երկու հրաշալի կանանց կողմից, ես դուրս եկա նախասրահ և զանգահարեցի քրոջս: Հեռախոսը չպատասխանեց և ես մի հաղորդագրություն թողեցի, առաջարկելով դիտել գերագույն համաժողովի այդ նիստը: Նա ստացել էր իմ հաղորդագրությունը և, ի ուրախություն մեզ, հուշում էր ստացել դիտելու համաժողովի բոլոր նիստերը: Նա լսել էր մարգարեներին և առաքյալներին, որոնց սիրում էր նախկինում: Լսել էր նոր անուններ, որ չէր լսել նախկինում, այդ թվում՝ Նախագահ Ուլսոֆի և Երեցներ Բեդնարի, Քուրի, Քրիստոֆերսոնի և Մնդերսենի անունները: Այս և երկնքից ուղարկված այլ անգուգական տպավորությունների ներքո քույրս, առակի անառակ որդու պէս, ինքն իրեն վերագտավ (տես Դուկաս 15.17): Մարգարեների և առաքյալների խոսքերը և իր ընտանիքի սերը նրան դրդեց շրջվել և քայլերն ուղղել դեպի տուն: 15 տարի անց քույրս, ով կորած էր, գտնվեց: Հետևելու և սպասելու ժամանակն ավարտված էր:

Մյուզանի խոսքերով այդ փորձառությունը նման էր Մորմոնի Գրքում Լեքիի նկարագրությանը: Նա բաց էր թողել երկաթե ձողը և հայտնվել յավարի մեզում (տես 1 Նեփի 8.23):



Նա ասում է, որ չէր գիտակցում, որ մոլորվել էր, մինչև որ Քրիստոսի Լույսն իր մեջ արթնացրեց հավատքը, որը վառ կերպով տեսանելի դարձրեց գատող հակադրությունն աշխարհում ունեցած իր փորձի և նրա միջև, ինչ Տերն ու իր ընտանիքն էին առաջակում:

Անցած վեց տարվա ընթացքում հրաշք տեղի ունեցավ: Մյուզանը նորովի վկայություն ստացավ Մորմոնի Գրքի վերաբերյալ: Նա ստացավ իր տաճարային երաշխավորագիրը: Նա ծառայեց որպէս արարողության աշխատող տաճարում և այժմ իր ծխում ուսուցանում է ավետարանի վարդապետությունը: Երկնքի պատուհանները բացվեցին նրա զավակների և թոռների համար, և թեպետ եղել են բարդ հետևանքներ, ասես, նա երբեք էլ չէր հեռացել:

Ձեզանից ոմանք Նիլսոն ընտանիքի պէս ունեն ընտանիքի անդամներ, ովքեր ժամանակավորապէս կորցրել են իրենց ուղին: Փրկչի հրահանգն է բոլորին, ովքեր 100 ոչխար ունեն, թողնել ինսունինին և գնալ փրկելու մեկին: Նրա հրահանգն է նրանց, ովքեր 10 կտոր արծաթ ունեն և կորցնում են մեկը, փնտրել մինչև կգտնեն այն: Երբ մոլորվածը ձեռք էր դրել կամ դուստրն է, ձեռք էր բայր կամ քույրը, և նա ընտրել է հեռանալ, մենք մեր ընտանիքի փորձից սովորեցինք, որ բացի այն ամեն,

ինչ կարող ենք անել, մենք պետք է սիրենք այդ անձնավորությանը մեր ողջ սրտով և հետևենք, աղոթենք և սպասենք, որ Տիրոջ ձեռքը հայտնվի:

Թերևս ամենակարևոր դասը, որ Տերն ուսուցանեց ինձ այդ ընթացքում, երբ քույրս հեռացել էր Եկեղեցուց, տեղի ունեցավ մեր ընտանեկան սուրբ գրությունների ուսումնասիրության ժամանակ: Մեր որդին՝ Դեյվիդը կարդում էր, երբ մենք միասին ուսումնասիրում էինք Դուկաս գովաբանը: Երբ նա կարդաց անառակ որդու առակը, այդ օրը ես այլ կերպ ընկալեցի այն: Ինչ-որ կերպ ես միշտ ինձ համարում էի այն որդին, որ տանն էր մնացել: Երբ Դեյվիդը կարդաց այդ առակը, ես հասկացա, որ ինչ-որ առումով *ես* անառակ որդին էի: Մենք բոլորս գրկված ենք Հոր փառքից (տես Հռովմայեցիս 3.23): Մենք բոլորս մեզ բժշկող Փրկչի Քավության կարիքն ունենք: Մենք բոլորս մոլորված ենք և մեզ գտնելու կարիքն ունենք: Այդ օրն այդ հայտնությունն օգնեց ինձ հասկանալ, որ ես և քույրս, երկուսս էլ Փրկչի սիրո և Նրա Քավության կարիքն ունենինք: Ես և Մյուզանն իրականում գտնվում էինք տունդարձի նույն ճանապարհին:

Ազդեցիկ են Փրկչի խոսքերն այս առակում, որտեղ նա նկարագրում է ինչպէս է իր անառակ որդուն դիմավորում հայրը, և, կարծում եմ, դրանք գուցե նկարագրում են այն փորձառությունը, որ դուք և ես կունենանք Հոր հետ, երբ մեր երկնային տուն վերադառնանք: Դրանք ուսուցանում են մեզ հոր մասին, ով սիրում, սպասում և հետևում է: Մրանք են Փրկչի խոսքերը. «Եվ դեռ որ նա հեռու էր, հայրը տեսավ նորան և գուրջ շարժեց. և վազեց՝ նորա վզովն ընկավ, և համբուրեց նորան» (Դուկաս 15.20):

Թող որ դուք և ես հայտնություն ստանանք իմանալու համար, թե ինչպէս կարող ենք մեր կյանքում ճիշտ վերաբերվել մոլորվածներին, և անհրաժեշտության դեպքում ունենալ մեր երկնային Հոր և Նրա Որդու Հիսուս Քրիստոսի համբերատարությունն ու սերը, երբ սիրում, հետևում և սպասում ենք նրանց: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Երեց Ջեֆրի Ռ.Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Որտեղ հանդիպում են արդարադատությունը, սերն ու ողորմածությունը

Հիսուս Քրիստոսը տառապեց, մահացավ և բարձրացավ մահից, որպեսզի Նա կարողանար, բարձրացնել մեզ դեպի հավերժական կյանք:

Առանց անվտանգության ճոպանների, ամրագոտիների կամ որևէ տեսակի մազլցելու սարքավորումների, երկու եղբայրներ՝ Ջիմմին 14 տարեկան, և Ջոնը 19 տարեկան (չնայած դրանք ոչ իսկական անուններն են), փորձում էին բարձրանալ կիրճի ուղղահայաց պատը Մնոուի անվան Կանյոնի նահանգային զբոսայգում՝ իմ հայրենի հարավային Յուտայում: Իրենց տքնաջան վերելքից հետո՝ զագաթի մոտ, նրանք հայտնաբերեցին, որ մի դուրս ցցված խութ խանգարում էր իրենց վերջնական մի քանի ոտնաչափ վերելքին: Նրանք չէին կարող անցնել դրա վրայով, բայց ոչ էլ այժմ կարող էին ետ նահանջել: Նրանք թակարդված էին: Ուշադիր զննելուց հետո, Ջոնը բավականաչափ հենակետ գտավ բարձրացնելու իր փոքր եղբորը դեպի մի ապահով տեղ



խութի գագաթին: Բայց իր համար բարձրանալու հնարավորություն չկար: Որքան նա ավելի էր լարվում գտնելու մատների կամ ոտքի լծակներ այնքան նրա մկաններն ավելի էին կծկվում: Տագնապը սկսեց պարտրել նրան և նա սկսեց վախենալ իր կյանքի համար:

Չկարողանալով այլևս բռնած մնալ, Ջոնը որոշեց, որ իր համար միակ ելքը ուղղաձիգ վեր ցատկելն էր՝ ջանալով բռնել վերում կախված խութի ծայրից: Եթե հաջողվեր նա կկարողանար իր թևի բավակա-նաչափ ուժով, իրեն քաշել անվտանգ տեղ:

Իր սեփական խոսքերով նա ասել է.

«Նախքան իմ ցատկելը, ես ասացի Ջիմմիին, որ նա գնար ծառի մի ճյուղ որոնելու, որը բավականաչափ ուժեղ կլիներ, որ ինձ պարզեր ներքև, չնայած ես գիտեի, որ այնտեղ ոչ մի նման բան չէր կարող լինել այդ ժայռոտ գագաթում: Դա ուղղակի մի անհույս հնարք էր: Եթե ցատկս ձախողվեր, նվազագույնը, որ ես կարող էի անել՝ հավաստիանալն էր, որ փոքր եղբայրս չտեսներ իմ մահացու անկումը:

Նրան բավականաչափ ժամանակ տալով, որ նրա տեսադաշտից դուրս լինեի, ես ասացի իմ վերջին աղոթքը, որ ես ուզում էի, որ ընտանիքս իմանար, որ ես սիրում էի նրանց և որ Ջիմմին ինքնուրույն ապահով տուն հասներ, ապա ես ցատկեցի: Իմ ցատկի մեջ բավականաչափ ադրենալին կար և ցատկը հասցրեց իմ թևերը խութից վեր գրեթե մինչև իմ արմունկները: Բայց, երբ ձեռքերս հարվածեցի մակերևույթին, ես ոչինչ չզգացի, բացի հարթ քարի վրայից թափվող ավազից: Ես դեռ հիշում եմ կոշտ ավազի զգացողությունը՝ այնտեղից կախված, երբ կառչելու ոչ մի բան չկար, ոչ եզր, ոչ ժայռաբեկոր, ոչ մի բռնելու կամ կառչելու բան: Ես զգացի, թե ինչպես էին մատներս սկսում դանդաղ վար սողալ ավազոտ մակերեսին: Ես գիտեի, որ կյանքս ավարտվում էր:

Բայց այդ պահին կարծես ամառային փոթորիկի ժամանակ ինչպես կայծակն է ճայթում, երկու ձեռքեր



հայտնվեցին խութի եզրից, ինչ որ տեղից, բռնելով իմ դաստակներն այնպիսի ուժով և վճռականությամբ, որը հակասում էր նրանց չափսերին: Իմ հավատարիմ եղբայրը չէր գնացել գտնելու ինչ որ երևակայական ծառի ճյուղ: Գուշակելով ճշգրտորեն, թե ինչ էի ծրագրում անել, նա ոչ մի մատնաչափ իսկ չէր հեռացել: Նա ուղղակի սպասել էր, լուռ, գրեթե շունչը պահած, լավ իմանալով լիովին, որ ես բավականաչափ հիմար կգտնվեի, այդ ցատկը կատարելու: Երբ ես արեցի դա, նա բռնեց ինձ, պահեց և չթողեց, որ ընկնեմ: Այդ ուժեղ եղբայրական ձեռքերը փրկեցին իմ կյանքն այդ օրը, երբ ես անօգնական կախված էի վերևում և անկասկած անխուսափելի մահվան էի մատնված:¹

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, այսօր Չատկի Կիրակի է: Չնայած մենք պետք է *միշտ* հիշենք (մենք խոստանում ենք մեր ամենաբաթյա հաղորդության աղոթքներում, որ կհիշենք), այնուամենայնիվ սա ամենասրբազան օրն է տարվա հատուկ հիշատակման՝ եղբայրական ձեռքերի և վճռական բազուկների մասին, որոնք հասան մահվան անդունդին՝ փրկելու մեզ մեր անկումներից և մեր ձախողումներից, մեր վշտերից ու մեղքերից: Այս պատմության ֆոնի վրա, որը պատմել էին Ջոնի և Ջիմմիի ընտանիքը, ես հայտնում եմ իմ երախտագիտությունը Տեր Հիսուս Քրիստոսի Քավության և Հարության համար և ընդունում եմ իրադարձությունները Աստծո երկնային ծրագրում, որոնք

առաջնորդում են և տալիս իմաստ «այն սիրուն, որ Հիսուսն է առաջարկում [մեզ]:»²

Մեր ծայրահեղ աշխարհիկ դարձող հասարակությունում, ինչպես անսովոր է, այնպես էլ ոչ մոդայիկ խոսել Ադամի ու Եվայի կամ Եդեմի Պարտեզի մասին կամ նրանց «բախտավոր անկման» մասին մահկանացու կյանք: Այնուամենայնիվ պարզ ճշմարտությունն այն է, որ մենք *չենք կարող* լիովին հասկանալ Քրիստոսի Քավությունն ու Հարությունը և մենք պատշաճորեն *չենք* գնահատի նրա ծննդյան կամ մահվան անգուգական նպատակը՝ այլ խոսքով ասած, չկա ուրի իսկապես տոնելու Սուրբ Ծնունդը *կամ* Չատիկը – առանց հասկանալու, որ կար իրական Ադամ և Եվա, ովքեր ընկան իրական Եդեմից՝ բոլոր հետևանքներով հանդերձ, որոնք անկումը կրում էր իր հետ:

Ես չգիտեմ մանրամասները, թե ինչ էր պատահել այս մոլորակի վրա մինչև այդ, բայց ես գիտեմ, որ այս երկուսը ստեղծվել էին Աստծո աստվածային ձեռքի տակ, որ նրանք որոշ ժամանակ միայնակ ապրել են դրախտային միջավայրում, որտեղ ոչ մարդկային մահ կար ոչ էլ ապագա ընտանիք և որ հաջորդական ընտրությունների միջոցով, նրանք օրինազանցեցին Աստծո պատվիրաններից մեկը, որը պահանջեց, որ նրանք թողնեն իրենց պարտեզի միջավայրը, բայց, որը նրանց թույլ տվեց երեխաներ ունենալ նախքան ֆիզիկական մահին դիմակայելը:³ Բացի ավերացնելուց

վիշտ և բարդություններ իրենց վիճակին, նրանց օրինազանցությունը ունեցավ նաև հոգևոր հետևանքներ, հավերժ կտրելով նրանց Աստծո ներկայությունից: Քանի որ մենք ծնվել ենք այդ անկում ապրած աշխարհում և քանի որ մենք ևս օրինազանցելու էինք Աստծո օրենքները, մենք ևս դատապարտվում էինք նույն տույժերով, որոնց Ադամն ու Եվան դիմակայեցին:

Ինչպիսի դժբախտություն: Ողջ մարդկային ցեղը ազատ անկման մեջ՝ յուրաքանչյուր տղամարդ, յուրաքանչյուր կին և երեխա ֆիզիկապես ընկնելով դեպի մշտական մահ, հոգևորով սուզվելով դեպի հավերժական տառապանք: Միթե՞ դա է կյանքը, ինչ այն նախատեսված է լինելու: Միթե՞ սա է մարդկային փորձառության մեծաշուք վախճանը: Միթե՞ մենք բոլորս ուղղակի կախված ենք ցուրտ անդունդում անտարբեր տիեզերքի ինչ որ մի վայրում, մեզանից յուրաքանչյուրը որոնելով հենման մի կետ, մեզանից յուրաքանչյուրը որոնելով կառչելու մի բան՝ ոչինչ չզգալով բացի մեր մատների տակ հոսող ավազից, մեզ փրկող ոչինչ, ոչ մի բան բռնվելու, ոչ մի բան, որ մեզ պահի: Միթե՞ մեր միակ նպատակը կյանքում դատարկ գոյության փորձառություն է, պարզապես հասնելու որքան հնարավոր է բարձր, մնալ երեք անգամ երկու տասնյակ և տասը տարի, ապա ձախողվել և ընկնել և շարունակել հավերժ ընկնել:

Այդ հարցերի պատասխանն է միանշանակ և հավերժական «ոչ»:

Հնադարյան և ժամանակակից մարգարեների հետ ես վկայում եմ, որ «բոլոր բաներն արվել են նրա իմաստությամբ, ով գիտի բոլոր բաները»⁴: Այսպիսով, այն պահից ի վեր, ինչ այդ առաջին ծնողները դուրս եկան Եդեմական պարտեզից, Աստված՝ և մեր բոլորիս Հայրը, ակնկալելով որոշում Ադամի և Եվայի կողմից, առաքեց հենց երկնքի հրեշտակներին՝ հայտարարելու նրանց, և ընդհուպ մինչև մեր ժամանակը, որ այս ամբողջ հերթականությունը նախատեսված էր մեր հավերժական երջանկության համար: Այդ Նրա աստվածային ծրագիրն էր, որն ապահովեց Փրկիչ, հենց Իր՝ Աստծո Որդին մեկ ուրիշ «Ադամ» ինչպես անվանել է «Նրան» Պողոս Առաքյալը,⁵ ով գալու է ժամանակի գազաթնակետին՝ քավելու առաջին Ադամի օրինազանցությունը: Այդ Քավությունը ձեռք էր բերելու լիակատար հաղթանակ ֆիզիկական մահի վրա, անպայմանականորեն շնորհելով հարություն ամեն մարդու, ով ծնվել է կամ երբևէ կծնվի այս աշխարհում: Ողորմածությամբ այն նաև կապահովի ներում բոլորի անձնական մեղքերի համար Ադամից մինչև աշխարհի վերջը, որը պայմանավորված է ապաշխարությամբ և աստվածային պատվիրաններից հնազանդությամբ:

Որպես Նրա կարգված վկաներից մեկը, ես հայտարարում եմ այս Չատկի առավոտյան, որ Նագովրեցի Հիսուսն էր և է աշխարհի այդ Փրկիչը, այն «երկրորդ Ադամը»,⁶ մեր հավատքի Հեղինակը և Ամբողջականացնողը, հավերժական կյանքի Ալֆան և Օմեգան: «Որովհետեւ ինչպես որ Ադամով բոլորը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով բոլորը կենդանանում են»⁷ հայտարարել է Պողոսը: Եվ նույնպես մարգարե, հայրապետ Լեքից. «Ադամն ընկավ, որպեսզի մարդիկ լինեն: . . . Եվ Մեսիան գալիս է ժամանակի լրիվության մեջ, որպեսզի մարդկանց զավակներին փրկագնի անկումից»:⁸ Բոլորից ամենախորը Մորմոնի Գրքի մարգարե Հակոբն է ուսուցանել որպես երկօրյա քարոզի մաս՝ Հիսուս Քրիստոսի Քավության մասին, որ



«հարությունը պետք է . . . գա . . . անկման պատճառով»:⁹

Այսպիսով այսօր մենք տոնում ենք ամեն անկման վրա, որ երբևէ ունեցել ենք, ամեն վշտի, որ երբևէ իմացել ենք, ամեն հուսահատության, որ երբևէ կրել ենք, ամեն վախի, որ երբևէ դիմակայել ենք, էլ չենք ասում մահից մեր հարության և մեր մեղքերից մեր ներման հաղթանակի պարգևը: Այդ հաղթանակը մատչելի է մեզ համար, շնորհիվ այն իրադարձությունների, որոնք տեղի ունեցան ճիշտ սրա նման մի շաբաթավերջին, մոտավորապես երկու հազար տարի առաջ Երուսաղեմում:

Մկսելով Իր հոգևոր տառապանքը Գեթսեմանիի այգում, շարժվելով դեպի Գողգոթայում խաչի վրա Խաչելությանը և ավարտելով մի գեղեցիկ կիրակի առավոտյան նվիրաբերված գերեզմանում, մի անմեղ, անբիծ և սուրբ մարդ, Նա՝ հենց Աստծո Որդին, արեց այն, ինչը ոչ մի ուրիշ մահացած մարդ երբևէ չի արել, ոչ էլ երբևէ կկարողանար անել: Իր սեփական զորությամբ Նա բաժրացավ մահից, որպեսզի երբեք Նրա մարմինը Իր հոգուց կրկին չբաժանվեր: Իր իսկ կամքով Նա թափեց թաղման շորերը, որոնցով նրան փաթաթել էին, խնամքով դնելով թաղման վարջամակը, որը դրված էր եղել Նրա դեմքին՝ մի առանձին տեղում զատ ծալած,¹⁰ ինչպես ասում է սուրբ գրությունը:

Այդ երեք օրվա միմյանց հաջորդող Քավությունն ու Հարությունը, հանդիսանում է ամենահետևանքային պահը, ամենալիառատ

պարգևը, ամենատանջալի ցավը և ամենավեհափառ դրսևորումը մարդու սիրո, որը երբևէ ցույց է տրվել այս աշխարհի պատմության մեջ: Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Միածին Որդին տառապեց, մահացավ և բարձրացավ մահից, որպեսզի Նա կարողանա, ամառային փոթորիկի կայծակի նման բռնել մեզ, երբ ընկնենք, պահել մեզ Իր զորությամբ, և Նրա պատվիրանների հանդեպ մեր հնազանդության միջոցով բարձրացնել մեզ՝ դեպի հավերժական կյանք:

Այս Չատկին ես շնորհակալություն եմ հայտնում Նրան և Հորը, ով տվեց Նրան մեզ, որպեսզի Հիսուսը դեռ կանգնի հաղթական մահվան վրա, չնայած Նա կանգնած է վիրավոր ոտքերի վրա: Այս Չատկի ես շնորհակալություն եմ հայտնում Նրան և Հորը, ով տվեց Նրան մեզ, որ Նա դեռ տարածում է անվերջ շնորհ, չնայած Նա տարածում է այն ծակված ափերով և սպիապատ դաստակներով: Այս Չատկի ես շնորհակալություն եմ հայտնում Նրան և Հորը, ով տվեց մեզ Նրան, որ մենք կարողանանք երգել՝ քրտինքով ներկված պարտեզի, զամեր խփված խաչի և փառահեղորեն դատարկ գերեզմանի առջև:

Որքան մեծ, որքան փառահեղ, որքան կատարյալ է, Փրկագնանան սքանչելի ծրագիրը, Որտեղ հանդիպում են արդարադատությունը, սերն ու ողորմածությունը
Ներդաշնակությամբ աստվածային:¹¹

Հարյալ Տեր Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Correspondence in the possession of Jeffrey R. Holland.
2. «Ես մնում եմ զարմացած», *Հիմներ և մանկական երգեր*, էջ 22:
3. Տես 2 Նեփի 2.19–29, հատկապես հատվածներ 20–23, Մովսես 5.10–11:
4. 2 Նեփի 2.24:
5. Տես Ա Կորնթացիս ԺԵ.45:
6. Ա Կորնթացիս ԺԵ.45:
7. Ա Կորնթացիս ԺԵ.22:
8. 2 Նեփի 2.25–26:
9. 2 Նեփի 9.6:
10. Հովհաննես Բ.7:
11. «Ինչ մեծ է իմաստությունն ու սերը», *Հիմներ և մանկական երգեր*, էջ 19:



Հնդահնկի, Ֆիլանդիա

շնորհի մասին, եթե մտադիր ենք ժառանգել այն, ինչը պատրաստված է մեզ համար Նրա հավերժական արքայությունում:

Այդ պատճառով ես կցանկանայի խոսել շնորհի մասին: Մասնավորապես, առաջինը՝ թե ինչպես է շնորհը բացում երկնքի դարպասները, և երկրորդ՝ թե ինչպես է այն բացում երկնքի պատուհանները:

Առաջին՝ շնորհը բացում է երկնքի դարպասները

Քանի որ բոլորը «մեղանչեցին, և Աստծո փառքիցը պակասված են»¹⁰ և քանի որ «ոչ մի անմաքուր բան չի կարող մտնել Աստծո արքայությունը»¹¹, մեզանից յուրաքանչյուրն արժանի չէ վերադառնալ Աստծո ներկայություն:

Նույնիսկ եթե մենք ծառայենք Աստծուն մեր ողջ հոգով, բավարար չէ, քանի որ մենք կշարունակենք լինել «անալիտան ծառաներ»: ¹² Մենք չենք կարող վաստակել մեր ճանապարհը դեպի երկինք, արդարադատության պահանջները կանգնած են որպես խոչընդոտ, որը մենք անգոր ենք հաղթահարել ինքներս:

Մակայն ամեն ինչ կորած չէ:

Աստծո շնորհը մեր մեծ և անսահման հույսն է:

Հիսուս Քրիստոսի զոհաբերության շնորհիվ, ողորմության ծրագիրը բավարարում է արդարադատության պահանջները,¹³ և «առաջ բերում միջոցներ մարդկանց համար, որ նրանք կարողանան ունենալ հավատք ի ապաշխարություն»:¹⁴



Որքան էլ որ մեր մեղքերը որդան կարմիրի պես լինեն, ձյան պես սպիտակ կարող են դառնալ:¹⁵ Քանի որ մեր սիրելի Փրկիչը «իր անձր ամենի համար փրկանք տվավ»,¹⁶ Նրա ավիտենական արքայության մուտքը բաց կլինի մեզ համար:¹⁷

Դարպասը բաց է:

Բայց Աստծո շնորհը չի վերադարձնում մեզ պարզապես մեր նախորդ անմեղ վիճակին: Եթե փրկությունը նշանակում է միայն մեր սխալների և մեղքերի ջնջում, ապա այն, որքան էլ որ հրաշալի է, չի իրականացնում Հոր ձգտումները մեր վերաբերյալ: Նրա նպատակը շատ ավելի վեհ է: Նա ցանկանում է, որ Իր որդիներն ու դուստրերը դառնան Իրեն նման:

Աստծո շնորհի պարզև աշակերտության ճանապարհը չի

տանում դեպի հետ, այն տանում է դեպի վերև:

Այն տանում է դեպի բարձունքներ, որոնք մենք դժվար ենք հասկանում: Այն տանում է դեպի վեհացում մեր Երկնային Հոր սելեստիալ արքայությունում, որտեղ մենք, շրջապատված մեր սիրելիներով, ստանում ենք «նրա լիությունից և նրա փառքից»:¹⁸ Բոլոր բաները մերն են և մենք Քրիստոսինը:¹⁹ Իսկապես, այն ամենն, ինչ Հայրն ունի, կտրվի մեզ:²⁰

Այս փառքը ժառանգելու համար մենք բաց դարպասի կարիքն ունենք, մենք պետք է մտնենք այս դարպասով սրտի փոխվելու ցանկությամբ, փոփոխությունն այնպես ողբերգական է, որ սուրբ գրությունները նկարագրում են դա ինչպես «վերստին ծնվեն. Այո, Աստծուց ծնվեն, իրենց մարմնական ու ընկած վիճակից փոխված դեպի արդարության մի վիճակի, փրկագնվելով Աստծո կողմից, դառնալով նրա որդիներն ու դուստրերը»:²¹

Երկրորդ՝ շնորհը բացում է երկնքի պատուհանները

Աստծո շնորհի մեկ այլ հատկանիշն է երկնքի պատուհանները բացելը, որոնց միջոցով Աստված ուժի և զորության օրհնություններ է թափում, հնարավորություն տալով մեզ հասնել բաների, որոնք այլ կերպ վեր կլինեին մեր ուժերից: Աստծո զարմանալի շնորհով է, որ Նրա զավակները կարող են հաղթահարել խաբեբայի թաքնված հոսանքներն ու հոտող հողերը, վեր բարձրանալ մեղքի հարթությունից և «կատարյալ լինել Քրիստոսում»:²²

Թեև բոլորս ունենք թույություններ, մենք կարող ենք դրանք հաղթահարել: Իրոք, դա Աստծո շնորհով է, որ եթե մենք խոնարհեցնենք մեզ և հավատք ունենանք, թույլ կողմերը կդառնան ուժեղ:²³

Մեր ողջ կյանքի ընթացքում Աստծո շնորհը աշխարհիկ օրհնություններ և հոգևոր պարգևներ է շնորհում մեզ, որոնք մեծացնում են մեր կարողությունները և հարստացնում մեր կյանքը: Նրա շնորհը մաքրում է մեզ: Նրա շնորհը օգնում է մեզ հասնել մեր մարդկային լավագույն չափանիշին:

Ո՞վ կարող է արժանանալ:

Աստվածաշնչում մենք կարդում ենք Քրիստոսի այցի մասին Միմոն Փարիսեցու տուն:

Արտաքուստ, Միմոնը, կարծես, լավ ու շիտակ մարդ էր: Նա կանոնավորապես կատարում էր իր անելիքների ցանկը՝ այսինքն, կրոնական պարտավորությունները. նա պահում էր օրենքը, վճարում էր տասանորդը, Կիրակին սուրբ էր պահում, աղոթում էր ամեն օր և զնում էր ժողովարան:

Բայց երբ Հիսուսը Միմոնի հետ էր, մի կին մոտեցավ, լվաց Փրկչի ոտքերն իր արցունքներով և օծեց անուշահոտ յուղով:

Միմոնը դժգոհ էր պաշտամունքի այսպիսի դրսևորումով, քանի որ գիտեր, որ այս կինը մեղավոր էր: Միմոնը մտածեց, որ եթե Հիսուսը չգիտի դրա մասին, ապա նա մարգարե չի, հակառակ դեպքում, թույլ չէր տա, որ այդ կինն իրեն դիպչեր:

Իմանալով նրա մտքերը Հիսուսը դարձավ Միմոնին և հարց տվեց: «Մի փոխ տվող երկու պարտական ունեք: . . . Մեկը հինգ հարյուր դահեկան էր պարտական, մյուսը՝ հիսուն:

Եվ երբոր նորանք [երկուսն էլ] բան չունեին վճարելու, երկուսին էլ շնորհեց. արդ նորանցից ո՞րն ավելի կսիրե նորան, ասիր»:

Միմոնը պատասխանեց, որ դա նա է, ում ավելի շատ ներվեց:

Ապա Հիսուսը մի խորիմաստ դաս ուսուցանեց. «Տեսնո՞ւմ ես այս կինը . . . Սորա շատ մեղքերն իրան թողված կլինին, *որովհետև շատ սիրեց*. Բայց որին որ քիչ կթողվի՝ նա քիչ կսիրե»: ²⁴

Այս երկու մարդկանցից ո՞ր մեկին ենք մենք ավելի շատ նման:

Արդյո՞ք նման ենք մենք Միմոնին: Արդյո՞ք վստահ ենք և բավարարված մեր բարի գործերով, ապավինում ենք մեր արդարությանը: Թե՞, թերևս, մի փոքր անհամբեր ենք նրանց հանդեպ, ովքեր չեն ապրում մեր չափանիշներով: Արդյո՞ք մենք ինքնաբեր ռեժիմում անցնում ենք անցուղարձի միջով, հաճախում մեր ժողովներին, հորանջում ավետարանի վարդապետության դասերին և հաղորդության ժողովի ընթացքում,

թերևս, ուշադրությունը կենտրոնացնում մեր բջջային հեռախոսի վրա:

Կամ, նմա՞ն ենք արդյոք այս կնոջը, ով կարծում էր, որ ամբողջությամբ և անհույս կորած է՝ մեղքի պատճառով:

Արդյո՞ք *շատ ենք սիրում*:

Արդյո՞ք հասկանում ենք, որ պարտական ենք Երկնային Հորը և խնդրում ենք մեր ամբողջ հոգով Աստծո շնորհի համար:

Երբ մենք ծնկի ենք իջնում աղոթելու, արդյո՞ք անում ենք դա՝ հնչեցնելու համար մեր արդար գործերի լավագույն «հիթերը», թե՞ անում ենք՝ խոստովանելու համար մեր սխալները, խնդրելու համար Աստծո ողորմությունը և թափելու համար երախտագիտության արցունքները փրկագնման զարմանահրաշ ծրագրի համար: ²⁵

Փրկությունը չի կարող գնվել ապաշխարության փողով, այն գնվել է Աստծո Որդու արյունով: ²⁶ Մտածել, որ մենք կարող ենք առևտուր անել մեր բարի գործերով՝ փրկություն ստանալու համար, նման է ինքնաթիռի տոմս գնելուն, և ապա ենթադրելուն, որ ավիաընկերությունը մերն է: Կամ մտածել, որ մեր տան վարձը վճարելուց հետո, մենք արդեն տիրում ենք ամբողջ երկիր մոլորակին:

Ապա ինչո՞ւ հազանդվել:

Եթե շնորհը Աստծո պարգևն է, ապա ինչո՞ւ է այդքան կարևոր հնազանդությունն Աստծո

պատվիրաններին: Այդ դեպքում, ինչո՞ւ անհանգստանալ Աստծո պատվիրաններով, կամ ապաշխարությամբ: Ինչո՞ւ պարզապես չընդունել, որ մենք մեղավոր ենք և թո՞ղ Աստված փրկի մեզ:

Կամ հարցադրումն անել Պողոսի խոսքերով. «Մնա՞նք մեղքի մեջ, որ շնորհքը շատանայ»: Պողոսի պատասխանը հասարակ ու պարզ է. «Քավ լիցի»: ²⁷

Եղբայրներ և քույրեր, մենք հնազանդվում ենք Աստծո պատվիրաններին՝ Նրա հանդեպ մեր սիրո շնորհիվ:

Փորձելով հասկանալ Աստծո շնորհի պարզվող մեր ողջ սրտով և մտքով, ավելի շատ պատճառներ ենք ունենում մեր Երկնային Հորը սիրելու և հնազանդվելու, հեզությամբ և երախտագիտությամբ: Երբ քայլում ենք աշակերտության ճանապարհով, դա մաքրագործում է մեզ, բարելավում է մեզ, օգնում է մեզ դառնալ Նրան ավելի նման, և տանում է մեզ հետ՝ դեպի Նրա ներկայությունը: «[Մեր Աստծո] Տիրոջ Հոգին» առաջացնում է «գորեղ փոփոխություն [մեր մեջ] . . . որ մենք այլևս հակված չենք գործելու չարիք, այլ շարունակ գործելու բարիք»: ²⁸

Հետևաբար Աստծո պատվիրաններին մեր հնազանդությունն առաջանում է որպես բնական արդյունք Աստծո բարության հանդեպ մեր անսահման սիրո և երախտագիտության: Անկեղծ սիրո այս ձևը և երախտագիտությունը հրաշքով կմիացնեն մեր գործերը Աստծո շնորհի հետ: Առաքիլությունը կզարդարի մեր մտքերն անդադար, և մեր վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ: ²⁹

Միրելի եղբայրներ և քույրեր, ըստ ավետարանի հավատարմորեն ապրելը բեռ չէ: Դա մի ուրախ փորձ է, նախապատրաստություն՝ ժամանակելու հավերժությունների մեծ փառքը: Մենք ձգտում ենք հնազանդվել մեր Երկնային Հորը, քանի որ մեր հոգիները կդառնան ավելի ներդաշնակ հոգևոր բաներին: Տեսարանը կբացվի, և մենք կհասկանանք բաներ, որ երբեք չենք իմացել: Լուսավորությունն ու հասկացողությունը



կտրվեն մեզ, երբ մենք անենք Հոր կամքը.³⁰

Շնորհը Աստծո պարզև է, և Աստծո յուրաքանչյուր պատվիրանին հնազանդ լինելու մեր ցանկությունը, դա մեր մահկանացու ձեռքը պարզելն է՝ մեր Երկնային Հորից այս սուրբ պարզևը ստանալու համար:

Այս, ինչ մենք կարող ենք անել:

Մարգարե Նեփին կարևոր ներդրում է արել Աստծո շնորհի մեր հասկացողությանը, ասելով. «Մենք աշխատում ենք ջանասիրաբար . . . համոզելու մեր զավակներին, և նաև մեր եղբայրներին, հավատալու Քրիստոսին և հաշտվելու Աստծո հետ. քանզի մենք գիտենք, որ *շնորհի միջոցով է, որ մենք փրկվում ենք՝ այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել.*»³¹

Սակայն, մտածում եմ, որ երբեմն սխալ կարող ենք հասկանալ «այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել» արտահայտությունը: Մենք պետք է հասկանանք, որ «հետո»-ն չի նշանակում «պատճառով»:

Մենք չենք կարող փրկվել այն ամենի «պատճառով», ինչ կարող ենք անել: Մեզանից ովքե՞ր են արել այն *ամենն*, ինչ կարող են: Արդյո՞ք Աստված սպասում է, որ մենք սպառենք բոլոր ջանքերը, հետո նոր Նա միջամտի մեր կյանքին Իր փրկող շնորհով:

Շատ մարդիկ իրենց հուսալքված են զգում, քանի որ հաճախ են թերանում: Նրանք բուն աղբյուրից գիտեն, որ «հոգին հոժար է, բայց մարմինը տկար»:³² Նրանք իրենց ձայնն են բարձրացնում Նեփիի հետ, բացականչելով. «Հոգիս մորմոքվում [է] իմ անօրինությունների պատճառով»:³³

Վստահ եմ Նեփին գիտեր, որ Փրկչի շնորհը *թույլ է տալիս և հնարավոր դարձնում*, որ հաղթահարենք մեղքը:³⁴ Ահա, թե ինչու էր Նեփին ջանասիրաբար աշխատում համոզելու իր զավակներին և եղբայրներին «հավատալու Քրիստոսին և հաշտվելու Աստծո հետ»:³⁵

Ի վերջո, *դու՛կ* այն, ինչ կարող ենք անել: Եվ *դու՛կ* մեր մահկանացիության աշխատանքը:



Շնորհը բոլորին է հասանելի

Երբ ես մտածում եմ, թե Փրկչին ինչ է արել մեզ համար, այդ առաջին Չատկի Կիրակիից առաջ, ուզում եմ բարձրացնել իմ ձայնը և գովերգեր հնչեցնել Բարձրյալ Աստծուն և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին:

Երկնքի դարպասները բացված են: Երկնքի պատուհանները բացված են:

Այսօր և ընդմիշտ Աստծո շնորհը հասանելի է բոլոր նրանց, ում սիրտը կտրված է և հոգին փշրված:³⁶ Հիսուս Քրիստոսը մաքրեց ճանապարհը մեզ համար, որ բարձունքներ բարձրանանք, որոնք անհասկանալի են մահկանացու մտքերի համար:³⁷

Ես աղոթում եմ, որ մենք նոր աչքերով ու նոր սրտով տեսնենք Փրկչի քավող գոհաբերության հավերժական կարևորությունը: Ես աղոթում եմ, որ մենք ցույց տանք մեր սերը Աստծո հանդեպ և մեր երախտագիտությունը Աստծո անսահման շնորհի պարզևի համար, պահենք Նրա պատվիրանները և ուրախ՝ «կյանքի նորոգության մեջ ման գանք»:³⁸ Մեր Տեր և Քավիչ՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ա Կորնթացիս ԺԵ.55; Մոսիա 16.8:
2. Ա Պետրոս Ա.3; շեղատառերն ավելացված են:
3. Ա Թեսաղոնիկեցիս Դ.18; տես նաև հատվածներ 13–17:

4. Հակոբ 4.12:
5. 2 Նեփի 25.26:
6. Ալմա 34.10, 15:
7. Եփեսացիս 4.18–19:
8. Վարդապետություն և Ուլստեր 93.28:
9. Իսկապես մենք «փոքր երեխաներ [ենք], և դեռ [չենք] հասկացել, թե որքան մեծ օրհնություններ ունի Հայրն իր ձեռքում և [մեզ] համար պատրաստած» (Վարդապետություն և Ուլստեր 78.17):
10. Հռովմայեցիս 9.23:
11. 1 Նեփի 15.34; տես նաև 1 Նեփի 10.21; Մովսես 6.57:
12. Մոսիա 2.21:
13. Տես Ալմա 42.15:
14. Ալմա 34.15:
15. Տես Եսայիա Ա.18:
16. Ա Տիմոթեոս Բ.6:
17. Տես Բ Պետրոս Ա.11:
18. Վարդապետություն և Ուլստեր 76.56:
19. Տես Վարդապետություն և Ուլստեր 76.59:
20. Տես Վարդապետություն և Ուլստեր 84.38:
21. Մոսիա 27.25:
22. Մորոնի 10.32:
23. Տես Եթեր 12.27:
24. Տես Ղուկաս 7.36–50; շեղատառերն ավելացված են:
25. Փարիսեցու և մաքսավորի մասին Քրիստոսի առակը հստակ ներկայացնում է այս հատվածը (տես Ղուկաս ԺԸ.9–14):
26. Տես Գործք Ի.28:
27. Հռովմայեցիս Զ.1–2:
28. Մոսիա 5.2:
29. Տես Վարդապետություն և Ուլստեր 121.45:
30. Տես Հովհաննես Է.17:
31. 2 Նեփի 25.23; շեղատառերն ավելացված են:
32. Մատթեոս ԻԶ.41; տես նաև Հռովմայեցիս Է.19:
33. 2 Նեփի 4.17:
34. Տես 2 Նեփի 4.19–35; Ալմա 34.31:
35. 2 Նեփի 25.23:
36. Տես 3 Նեփի 9.19–20:
37. Տես Ա Կորնթացիս Բ.9:
38. Հռովմայեցիս Զ.4:



Երեց Ռոբերտ Դ. Շնյա
Տասներկու Առաքյալների Քվորումից

Պահպանել կամքի ազատությունը, պաշտպանել կրոնական ազատությունը

Մեր կամքի ազատության բարեխիղճ օգտագործումը կախված է մեր կրոնական ազատությունից:

Այսօր Ջատիկի կիրակի է՝ ողջ մարդկության համար մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի Քավության և Հարության հիշատակի և հարգանքի տուրք մատուցելու օրը: Մենք երկրպագում ենք Նրան, երախտապարտ ենք կրոնական ազատության, հավաքվելու ազատության, խոսքի ազատության և կամքի ազատության մեր աստվածատուր իրավունքի համար:

Ինչպես մարգարեներն են կանխագուշակել այս վերջին օրերի վերաբերյալ, որում մենք ապրում ենք, շատերը շփոթված են, թե ովքեր ենք մենք և ինչի ենք մենք հավատում: Ոմանք «բանասարկու . . . [և] անբարեսեր» են:¹ Մյուսները «չարին ասում են բարի, եւ բարիին՝ չար. [և] խաարը շինում են լոյս, եւ լոյսը՝ խաար»:²

Երբ մեզ շրջապատող մարդիկ որոշումներ են կայացնում, թե ինչպես արձագանքեն մեր հավատքին, մենք չպետք է մոռանանք, որ բարոյական կամքի ազատությունը Իր բոլոր զավակների համար Աստծո ծրագրի կարևորագույն մասն է կազմում: Այդ հավերժական ծրագիրը, որը մեզ ներկայացվեց նախամահականացու Խորհրդի ժամանակ Երկնքում, իր մեջ ընդգրկում էր կամքի ազատության պարզը:³

Մեծ խորհրդի ժամանակ Լյուցիֆերը, որը հայտնի է որպես Մատանա, իր ազատ կամքն օգտագործեց Աստծո ծրագրին դեմ գնալու համար: Աստված ասաց. « . . . , քանի որ Մատանան ապստամբեց իմ դեմ, և փնտրեց կործանել մարդու կամքի ազատությունը, որ ես Տեր Աստվածս,

տվել էի նրան, . . . ես այնպես արեցի, որ նա ցած գցվեր»:⁴

Նա շարունակեց. «և նաև երկնքի գործերի մեկ երրորդին նա շրջեց ինձանից՝ նրանց կամքի ազատության պատճառով»:⁵

Դրա արդյունքում Երկնային Հոր այն հոգևոր զավակները, ովքեր ընտրեցին մերժել Նրա ծրագիրը և հետևել Լյուցիֆերին, կորցրեցին իրենց աստվածային ճակատագիրը:

Հիսուս Քրիստոսն օգտվելով իր ազատ կամքից ասաց.

«Միա ես, ինձ ուղարկիր»:⁶

«Հայր, քո կամքը կատարվի, և փառքը քոնը լինի հավիտյան»:⁷

Հիսուսը, ով իր կամքի ազատությունից օգտվելով աջակցեց Երկնային Հոր ծրագրին, ճանաչվեց և նշանակվեց Հոր կողմից որպես մեր Փրկիչ՝ նախակարգվով քավիչ գոհաբերություն կատարել բոլորիս համար: Նմանապես, պատվիրանները պահելու մեր կամքի ազատության կիրառումը թույլ կտա խորապես հասկանալ, թե ովքեր ենք մենք և կստանանք այն բոլոր օրհնությունները, որոնք Երկնային Հայրն ունի, այդ թվում՝ մարմին ունենալու, աճելու, ուրախություն ունենալու, ընտանիք կազմելու և հավերժական կյանք ժառանգելու հնարավորություն:

Պատվիրանները պահելու համար մենք պետք է իմանանք Եկեղեցու պաշտոնական վարդապետությունը, որպեսզի մարդկանց անընդհատ փոփոխվող քմահաճույքների պատճառով մենք չչեղվենք Քրիստոսի ամաջնորդությունից:

Այն օրհնությունները, որոնք մենք այսօր վայելում ենք, այս կյանքից առաջ Փրկչին հետևելու մեր ընտրությունների արդյունքն է: Բոլոր նրանք ովքեր լսում և կարդում են այս խոսքերը, ով էլ, որ լինեք և ինչպիսին էլ որ ձեր անցյալը լինի, հիշեք սա՝ ուշ չէ այդ նույն ընտրությունը կրկին կատարելու և Նրան հետևելու համար:

Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատքի միջոցով, Իր Քավությանը հավատալով, մեր մեղքերից ապաշխարելով և մկրտվելով, այդ ժամանակ նոր ստանում ենք Սուրբ Հոգու երկնային պարգևը: Այդ պարգևը տալիս է գիտելիք



և հասկացողություն, սովորելու և վկայություն ձեռք բերելու առաջնորդություն և ուժ, մեղքը հաղթահարելու գործություն և մաքրագործում և մխիթարություն ու քաջալերանք՝ ձայնորդությունները հավատարմորեն դիմանալու համար: Հոգու այդ անզուգական օրհնություններն ավելացնում են մեր ազատությունը և գործությունն անելու այն, ինչ ճիշտ է, քանի որ «Որտեղ որ Տիրոջ Հոգին է՝ այնտեղ է ազատություն»:⁸

Երբ այս վերջին օրերում մենք քայլենք հոգևոր ազատության ուղով, մենք պետք է հասկանանք, որ մեր կամքի ազատության բարեխիղճ օգտագործումը կախված է մեր կրոնական ազատությունից: Մենք արդեն տեղյակ ենք, որ Մատանան չի ցանկանում, որ այդ ազատությունը լինի մերը: Երկնքում նա փորձեց կործանել բարոյական կամքի ազատությունը, իսկ այժմ երկրի վրա նա կատաղորեն խափանում է, հակառակվում է և շփոթում է տարածում կրոնական ազատության վերաբերյալ, թե ինչ է դա և թե ինչու է այն կարևոր մեր հոգևոր կյանքի և մեր փրկության համար:

Կան կրոնական ազատության չորս անկյունաքարեր, որոնց մենք, որպես Վերջին Օրերի Սրբեր, պետք է ապավինենք և պաշտպանենք:

Առաջինը՝ հավատարու ազատությունն է: Ոչ ոք չպետք է քննադատվի, հետապնդվի կամ հարձակման ենթարկվի անհատների կամ կառավարության կողմից այն բանի համար, թե ինչ հավատք նա ունի Աստծո մասին: Դա շատ անձնական է և շատ կարևոր: Կրոնական ազատության վերաբերյալ մեր համոզմունքի վաղ հռչակագրում նշված է.

«Ոչ մի կառավարություն չի կարող խաղաղ գոյատևել, եթե չկազմվեն այնպիսի օրենքներ ու պահվեն այնպիսի, որոնք ամեն անհատի կապահովեն խղճի գործադրման ազատությունը . . . :

. . . Դատական պաշտոնյաները պետք է սանձեն ռճիրը, բայց երբեք չիշխեն խղճի վրա. . . [կամ] չճնշեն հոգու ազատությունը»:⁹

Հավատքի այդ հիմնարար ազատությունն այդ ժամանակից ի վեր ընդունվել է Միացյալ Ազգերի կողմից, իր՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և մարդու իրավունքների այլ միջազգային փաստաթղթերի մեջ:¹⁰

Կրոնական ազատության երկրորդ անկյունաքարը՝ ուրիշների հետ մեր հավատքով կիսվելու ազատությունն է: Տերը մեզ պատվիրում է՝ «Եվ ձեր տղայոցը սովորեցնեք

[ավետարանը] . . . նստած ժամանակը»:¹¹ Նա նաև իր առաքյալներին ասաց. «Գնացե՛ք բոլոր աշխարհք, ամենաբնակավայրերում և ամենաքաղաքներում և ամենախուռիկներում և ամենախուռիկներում՝ մենք ապավինում ենք կրոնական ազատությանը, որպեսզի Տիրոջ վարդապետությունն ուսուցանենք մեր ընտանիքներին և ողջ աշխարհին:

Կրոնական ազատության երրորդ անկյունաքարը՝ կրոնական կազմակերպություն, եկեղեցի, հիմնելը և ուրիշների հետ խաղաղությամբ երկրպագություն անելն է: Հավատո տասնմեկերորդ հանգանակը հռչակում է. «Մենք պահանջում ենք մեր իսկ խղճի թելադրանքով Ամենագոր Աստծուն երկրպագելու արտոնությունը, և նույն արտոնությունը վերապահում ենք բոլոր մարդկանց, թող նրանք երկրպագեն ինչպես, որտեղ կամ ինչ որ կամենում են»: Մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերը և այլ ազգերի սահմանադրությունները հաստատում են այդ սկզբունքը:

Կրոնական ազատության չորրորդ անկյունաքարը մեր հավատքով ազատ ապրելու իրավունքն է՝ հավատքի ազատ օգտագործումը ոչ միայն տներում և ժողովատներում, այլ նաև հասարակական վայրերում: Տերը պատվիրում է մեզ ոչ միայն առանձին աղոթել,¹³ այլ նաև առաջ գնալ և «Այսպես լուսատուրե [մեր] լույսը մարդկանց առաջին, որ [մեր] բարի գործերը տեսնեն, եւ փառատուն [մեր] Հօրը որ երկնքումն է»:¹⁴

Ոմանք վիրավորվում են, երբ մեր հավատքը հասարակայնացնում ենք, սակայն այդ նույն մարդիկ, ովքեր պնդում են, որ իրենց տեսակետներն ու գործողությունները հասարակության մեջ հանդուրժվել են, հաճախ դանդաղում են նույն հանդուրժողականությունը ցուցաբերել հավատացյալների հանդեպ, ովքեր նույնպես ցանկանում են, որ իրենց տեսակետներն եւ գործողությունները հանդուրժվեն: Կրոնական տեսակետների հանդեպ հարգանքի համընդհանուր պակասն արագ կերպով փոխվում է հասարակական և

քաղաքական անհանդուրժողականության՝ հավատացյալ մարդկանց և հաստատությունների հանդեպ:

Երբ ենթարկվենք աշխարհիկ չափանիշներին խոնարհվելու մեծ ճնշումներին, մեր կրոնական ազատությունների հաշվեհարդարին, հիշեք, թե Մորմոնի Գիրքն ինչ է ուսուցանում մեր պատասխանատվության վերաբերյալ: Այնպիսի գրքի մեջ մենք կարդում ենք Ամդիկի մասին, «Վի շատ խորամանկ» և «ամբարիշտ մարդու», ով ձգտում էր թագավոր կարգվել մարդկանց մեջ և «կզրկեր նրանց իրենց իրավունքներից», որը «տազնապալի էր եկեղեցու ժողովրդի համար»:¹⁵ Թագավոր Մոսիայի կողմից նրանք ուսուցանվեցին բարձրացնել իրենց ձայներն այն բաների համար, որոնք ճիշտ էին:¹⁶ Հետևաբար նրանք «հավաքվեցին բոլոր երկրով մեկ, *սակն մարդ ըստ իր մտքի*՝ լինել Ամդիկիին կողմ, թե դեմ, առանձին խմբերով, ունենալով մեծ վիճաբանություններ . . . մեկը մյուսի հետ»:¹⁷

Այդ քննարկումների ժամանակ եկեղեցու անդամները և ուրիշները հնարավորություն ունեցան հավաքվել միասին, զգալ միասնության ոգին և ներգործվել Մուրբ Հոգու կողմից: «Եվ եղավ այնպես, որ ժողովրդի ձայնը եկավ Ամդիկիի դեմ, այնպես որ նա չդարձավ թագավոր ժողովրդի վրա»:¹⁸

Որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ, մենք պատասխանատվություն ենք կրում գործել միանման մտքի տեր հավատացյալների հետ միասին, որպեսզի բարձրացնենք մեր ձայնն այն բաների համար, որոնք ճիշտ են: Թեև անդամները երբեք չպետք է պնդեն կամ նույնիսկ ենթադրեն, որ նրանք խոսում են եկեղեցու անունից, մենք բոլորս էլ՝ որպես քաղաքացիներ, մեր կարողությունների սահմաններում պետք է համոզումով և սիրով կիսվենք մեր անձնական վկայություններով՝ «ամեն մարդ [և կին] ըստ իր մտքի»:¹⁹

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է.

«Ես համարձակություն ունեմ հայտարարել երկնքի առջև, որ ես պատրաստ եմ իմ կյանքը տալ, պաշտպանելով ցանկացած

երիցականի կամ մկրտականի կամ որևէ այլ դավանանքի լավ մարդու համար, [ճիշտ ինչպես ցանակացած մորմոնականի համար], քանի որ նույն սկզբունքը, որը ոտնակոխ կարող է անել Վերջին Օրերի Մրբերի իրավունքները, ոտնակոխ կանի նաև Հռոմեական Կաթոլիկների իրավունքները կամ որևէ այլ դավանանքի, որը կարող է ժողովրդականություն չվայելել և խիստ թույլ լինել իրեն պաշտպանելու համար:

Ազատության սերն է, որ ոգեշնչում է հոգիս՝ քաղաքացիական և կրոնական ազատությունը ողջ մարդկային ցեղի համար»:²⁰

Եղբայրներ և քույրեր, մենք պարտավոր ենք պահպանել այդ սրբազան ազատությունն ու իրավունքները մեր և մեր սերունդների համար: Ի՞նչ կարող ենք դուք և ես անել:

Մտաջինը, մենք կարող ենք տեղեկացված լինել: Տեղյակ եղեք ձեր համայնքի խնդիրներին, որոնք կարող են ազդեցություն ունենալ կրոնական ազատության վրա:

Երկրորդ, ձեր կարողության սահմաններում միացեք նրանց, ովքեր կիսում են կրոնական ազատությամբ նկատմամբ մեր նվիրվածությունը: Կրոնական ազատությունը պաշտպանելու համար գործեք իրար հետ:

Երրորդ, ձեր ապրած կյանքով եղեք ձեր հավատքի վառ օրինակ՝ խոսքի և գործի մեջ: Այն, թե ինչպես ենք մենք ապրում մեր կրոնով ավելի կարևոր է, քան այն, թե ինչ կարող ենք մենք ասել մեր կրոնի մասին:

Մեր Փրկչի Երկրորդ գալուստը մոտենում է: Եկեք չուշանանք այդ մեծ իրադարձությունից: Հիշենք Մորմոնի հրամանատարին, ով բարձրացրեց ազատության դրոշը, որի վրա գրված էր՝ «Ի հիշեցումն մեր Աստծո, մեր կրոնի և ազատության, և մեր խաղաղության, մեր կանանց և մեր երեխաների»:²¹ Եկեք հիշենք մարդկանց արձագանքը. Օգովելով իրենց կամքի ազատությունից, նրանք «եկան, վազելով միասին»՝ երդվելով գործել:²²

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մի՛ քայլեք: Վազե՛ք: Վազե՛ք, որ, ստանաք ազատ կամքի օրհնությունը՝ հետևելով Մուրբ

Հոգուն և կիրառելով Աստծո կամքը կատարելու համար Նրա տված ազատությունը:

Այս հատուկ Զատիկի օրը, ես իմ հատուկ վկայությունն եմ բերում, որ Հիսուս Քրիստոսն իր ազատ կամքը գործադրեց, որպեսզի կատարի Հոր կամքը:

Մեր Փրկչի մասին մենք երգում ենք. «Կյանքն իր տվեց Նա կամավոր, Եվ արյունն իր անգին»:²³ Եվ քանի որ Նա արեց դա, մենք անգնահատելի հնարավորություն ունենք «ընտրելու ազատություն և հավերժական կյանք» Նրա քավության զորության և օրհնությունների միջոցով:²⁴ Թող որ մենք կամավոր կերպով հետևենք Նրան այժմ և հավիտյան. դա իմ աղոթքն է Նրա սուրբ՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Բ Տիմոթեոս 3.3:
2. Եսայիա 5.20:
3. Տես Մովսես 6.56:
4. Մովսես 4.3:
5. Վարդապետություն և Ուխտեր 29.36:
6. Աբրահամ 3.27:
7. Մովսես 4.2:
8. Բ Կորնթացիս 3.17:
9. Վարդապետություն և Ուխտեր 134.2, 4:
10. Տես Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որն ընդունվել է Միացյալ Ազգերի Գլխավոր Ասամբլեայի կողմից՝ 1948թ. դեկ. 10-ին, un.org/en/documents/udhr: Հոդված 18-ում գրված է. «Յուրաքանչյուր որ մտքի, խղճի ու դավանանքի ազատության իրավունք ունի. այդ իրավունքը ներառում է իր դավանանքը կամ համոզմունքները փոխելու ազատություն և իր դավանանքը կամ համոզմունքները մենակ կամ ուրիշների հետ մեկտեղ, հրապարակալ կամ գաղտնի քարոզելու, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի և ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատություն»: Տես նաև՝ Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին, վավերացված՝ 1953թ. սեպ. 3-ին: conventions.coe.int
11. Բ Օրինաց 11.19:
12. Մարկոս 16.15:
13. Տես Մատթեոս 6.6:
14. Մատթեոս 5.16:
15. Տես Ավմա 2.1-4:
16. Տես Մոսիա 29.25-26:
17. Ավմա 2.5; շեշտադրումն ավելացված է:
18. Ավմա 2.7:
19. Ավմա 2.5:
20. *Եկեղեցու նախագահների ուսումնասիրող Ջոզեֆ Սմիթ* (2007), 367:
21. Ավմա 46.12:
22. Ավմա 46.21:
23. «Ինչ մեծ է իմաստությունն ու սերը՝ Օրհնելուց, էջ 19:
24. 2 Նեփի 2.27:



Երեց Քենվին Ու. Փիրսոն
Յոթանաստունական

Մնալ կենաց ծառի մոտ

Կենաց ծառի Լեքիի տեսիլքը մի ազդեցիկ այլաբանություն է մինչև վերջ համբերելու մասին

Լ ախագահ Հեբեր Ջ. Գրանտի մահից կարճ ժամանակ առաջ Եղբայրներից մեկն այցելեց նրա տուն: Նախքան հեռանալը Նախագահ Գրանտը աղոթեց. «Օ՛, Աստված, օրհնիր ինձ, որ ես չկորցնեմ իմ վկայությունը և հավատարիմ մնամ մինչև վերջ»:¹ Համարյա քսանյոթ տարի եկեղեցու նախագահ լինելուց հետո, սա նրա ջերմեռանդ աղոթքն էր: Նրա օրինակը մի զորեղ հիշեցում է, որ ոչ ոք, որևէ տարիքում պաշտպանված չէ սատանայի ազդեցությունից: Մատանայի ամենազորեղ զործիքներից երկուսն են՝ ուշադրությունը շեղելը և խաբելը:

Մինչև վերջ համբերելը բնորոշ է իրական հետևողներին և էական է հավերժական կյանքի համար: Բայց երբ ենթարկվում ենք փորձությունների և մարտահրավերների, մեզ հաճախ ասում են, որ պարզապես տոկանք: Թույլ տվեք պարզ խոսել. «տոկալը» ավետարանի սկզբունքը չէ: Համբերել մինչև վերջ նշանակում է շարունակաբար Քրիստոսին մոտենալ և լինել կատարյալ նրանում:

Եթե մինչև վերջ համբերելը էական է հավերժական կյանքի համար, ինչու ենք մենք դժվարանում հավատարիմ լինել: Մենք դժվարանում ենք, երբ ստիպված ենք ընտրություն կատարել առաջնահերթությունների

մրցակցության մեջ: Անկանոն հնազանդությունը և զաղջ նվիրվածությունը թուլացնում է հավատքը: Մինչև վերջ համբերելը պահանջում է Փրկչին և մեր կապած ուխտերին ամբողջական նվիրում:

Կենաց ծառի Լեքիի տեսիլքը մի ազդեցիկ այլաբանություն է մինչև վերջ համբերելու մասին: Խնդրում եմ աղոթքով ուսումնասիրեք և վերլուծեք Լեքիի երազը, այնուհետև

նմանեցրեք այն ձեզ: Երբ դուք դասներ, ուշադիր նկատի առեք վեց կարևոր սկզբունքներ, որոնք օգնում են մեզ համբերել մինչև վերջ:

1. Մի մոռացե՛ք աղոթել

Մենք կսկսենք Լեքիի «մութ ու մռայլ անապատում» մնալուց:² Մեզանից յուրաքանչյուրը մթության և միայնակության շրջաններ է ապրում: «Երբ կյանքը մութ ու մռայլ է դառնում, մի մոռացե՛ք աղոթել»:³ Հետևե՛ք նախագահ Հեբեր Ջ. Գրանտի օրինակին: Աղոթեք, որ ուժ ստանաք և համբերեք մինչև վերջ: Խնդրեք Երկնային Հորը «Ուրիշ ի՞նչ կկամենաս ես անեմ»:

2. Եկե՛ք Քրիստոսի մոտ և կատարելագործվե՛ք Նրանում:

Կյանքի ծառը կենտրոնական կիզակետ է Լեքիի երազում: Ամեն ինչ մատնանշում է կյանքի ծառին: Կյանքը ներկայացնում է Քրիստոսին, ով աստվածային սիրո պարզ դրսևորումն է: Պտուղը Նրա անսահման քաղկությունն է և աստվածային սիրո մեծ վկայությունը: Մեր հարագատների հետ հավերժական կյանք վայելելն ավելի քաղցր և բաղձալի է, քան որևէ այլ բան: Գիտակցելու համար այս պարզը, մենք պետք է «զանք Քրիստոսի մոտ և



կատարելագործվենք նրանում»:⁴ Նա է «ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը»:⁵ Մենք կարող ենք լցնել մերկյանքը հաջողություններով ու բարեկեցությամբ, բայց ի վերջո, եթե մենք չենք կապում սուրբ ուխտեր Քրիստոսին հետևելու նպատակով և հավատարմորեն չենք պահում դրանք, մենք ամբողջապես և բացարձակապես կորցրած կլինենք նպատակը:

3. Առաջ մղվեք հավատքով

Դեպի կյանքի ծառը՝ դեպի Քրիստոսը առաջնորդող մի արահետ կա: Այն նեղ է և անձուկ, խիստ և ստույգ: Աստծո պատվիրանները խիստ են, բայց ոչ սահմանափակող: Նրանք մեզ պաշտպանում են հոգևոր և ֆիզիկական վտանգներից և թույլ չեն տալիս, որ մոլորվենք:

Հնազանդությունը ձևավորում է հավատք առ Քրիստոս: Հավատքը գործողության և ուժի սկզբունք է: Փրկչի օրինակին հետևողականորեն հետևելը առաջացնում է հոգևոր ուժ ու կարողություն: Առանց քաղկեդոնական գործունեության ու կարողություն սովոր ուժի, անհնար է մնալ արահետին և համբերել մինչև վերջ:

«Առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատակամությամբ»:⁶

4. Մորմնի գիրքը բանալի է հոգևոր փրկության համար

Կյանքի ճանապարհը մարտահրավեր է: Հեշտ է շեղվել, արահետից դուրս գալ ու մոլորվել: Նեղությունը մեր հավերժական առաջընթացի անխուսափելի և անհրաժեշտ մասն է: Երբ ձայնորդություն է վրա հասնում, մի թույլ տվեք, որ այն, ինչ դուք լիարժեք չեք հասկանում, քանդի ամեն ինչ, որ դուք գիտեք: Եղեք համբերատար, ամուր կառչեք ճշմարտությունից և կհասկանաք: Փորձությունները նման են խավարի մշուշների, որ կարող են շփոթության մեջ զգեցնել մեզ և կարծրացնել մեր սրտերը: Եթե մենք «ամուր չկառչենք»⁷ Աստծո խոսքից և չսպրեկենք Աստծո խոսքի համաձայն, ապա ավելի շուտ կրնանք հոգևոր շփոթության մեջ, քան հավերժական կյանք կունենանք: Քննեք Մորմնի



գիրքը և կենդանի մարգարեների խոսքերը յուրաքանչյուր օր, յուրաքանչյուր օր, յուրաքանչյուր օր: Դա հոգևոր կենդանության և խաբեությունից խուսափելու բանալին է: Առանց դրա, մենք հոգևորապես մոլորված ենք:

5. Մի շեղվեք և մի խաբվեք

Ուշք դարձնելը նշանակում է զգոնությամբ ուշադրություն հատկացնել: Քրիստոսին չհավատացողներին ուշք դարձնելը չի օգնի մեզ զոհել նրան: Ընդարձակ շենքում գիտելիք փնտրելը չի ուղղորդի մեզ դեպի ճշմարտություն: Այն փակցված չէ այդ շենքում: Միայն Փրկիչն ունի «յափտենական կեանքի խոսքեր»⁸ Մյուս բոլոր խոսքերը նշանակություն չունեն: Մեծ և ընդարձակ շենքը խորհրդանշում է աշխարհի «սին երևակայություններն ու հպարտությունը»⁹, այլ կերպ ասած, շեղումը և խաբեությունը: Այն լցված է

պճնագեղ հազնաված մարդկանցով, ովքեր թվում է, թե ամեն ինչ ունեն: Բայց նրանք ծաղրում են Փրկչին ու Նրան հետևողներին: Նրանք «ամեն ժամանակ սովորում են, և երբեք դեպի ճշմարտության գիտությունը չեն կարողանում գալ»:¹⁰ Նրանք կարող է ճիշտ լինեն աշխարհիկ տեսակետից, բայց հոգևոր առումով մոլորված են:

6. Մնացեք ծառի մոտ

Լեքի ուղերձն է մնալ ծառի մոտ: Մենք մնում ենք, որովհետև լիովին դարձել ենք դեպի Տերը: Ալման ուսուցանել է. «Տեսեք, նա փոխեց նրանց սրտերը, այո, նա արթնացրեց նրանց խորը քնից և նրանք ճանաչեցին Աստծուն»:¹¹ Երբ մենք ենթարկում ենք մեր սրտերը Աստծուն, Մուրբ Հոգին փոխում է մեր էությունը, մենք դառնում ենք խորապես դարձի եկած առ Աստված և մենք այլևս չենք որոնում աշխարհիկ բաները: Եթե մենք դադարենք անել այդ բաները, որոնք խորը դարձի են բերում, մենք հոգևոր նահանջ կապրենք: Ուրացությունը դարձի գալու հակադիրն է:

Անցյալի և ներկայիս բոլոր միջոցներն ենք: Երեցնե՛ր և քույրե՛ր, դուք պարզապես չեք կարող վերադառնալ ձեր միսիայից, կարապի ցատկով խորասուզվել Բաբիլոնի լիճը և վատնել անծայրածիր ժամեր անիմաստ վիղեռ խաղերի շահած միավորները հաշվելու վրա, առանց խորը հոգևոր քնի մեջ ընկնելու: Ոչ էլ կարող եք անձնատուր լինել համակարգչային առցանց պոռնոգրաֆիային և անտեսել առաքիլությունը և մաքրաբարոյությունը առանց յուրեք հոգևոր հետևանքների: Եթե դուք կորցնեք Ոգին, դուք կորած եք: Մի շեղվեք, ոչ էլ խաբվեք:

Իրական հետևողները շարունակում են յուրաքանչյուր օր ձգտել առ Աստված՝ իրենց անձնական իմաստալի աղոթքներով, սուրբ գրքերի յուրեք ուսումնասիրությամբ, անձնական հնազանդությամբ և անձնագոծ ծառայությամբ: Մնացեք ծառի մոտ և մնացեք արթուն:

Մի քանի տարի առաջ, Քույր Փիրսոնը և ես կանչվեցինք



նախագահելու Վաշինգտոնի Տակոմա միսիայում: Այդ կոչումն ամբողջապես անակնկալ էր: Որոշ տաճանապով ես հանդիպեցի իմ կազմակերպության ղեկավարի ու գլխավոր տնօրենի հետ և տեղեկացրի իմ միսիայի կոչման մասին: Նրանք ակնհայտորեն հիասթափված էին կազմակերպությունից հեռանալու իմ որոշումից: «Ե՞րբ եք դուք այդ որոշումը կայացրել, և ինչո՞ւ ավելի վաղ մեզ հետ չեք քննարկել այն», բացատրություն պահանջեցին նրանք:

Հստակամտության պահի, մի հիմնավոր պատասխան ծագեց իմ մտքում: Ես ասացի. «Ես այդ որոշումը կայացրել եմ որպես 19 տարեկան տղա, երբ Աստծո հետ սուրբ ուխտեր կապեցի տաճարում

Փրկչին հետևելու նպատակով: Իմ ամբողջ կյանքը ես կառուցել եմ այդ ուխտերի համաձայն և ես նպատակ ունեմ լիարժեք պահել դրանք այժմ»:

Երբ մի անգամ Աստծո հետ ուխտ ենք կապում, նահանջել չկա: Տեղի տալը, հրաժարվելը և ուժերը սպառվելը տարբերակ չեն: Աստուծո արքայությունում, գերազանցության չափօրինակ կա վեհացման համար: Այն պահանջում է քաջարի աշակերտություն: Միջին կամ ինքնահաճ հետևորդների տեղ չկա: Միջինը գերազանցի թշնամին է և միջին նվիրվածությունը ձեզ կխոչընդոտի համբերել մինչև վերջ:

Եթե դուք մաքառում եք, շփոթված եք կամ հոգևորապես մոլորված եք, ես ձեզ հորդորում եմ

անել այն բանը, որ ես գիտեմ ձեզ կօգնի վերադառնալ: Սկսեք նորից աղոթքով ուսումնասիրել Մորմոնի գիրքը և ապրեք նրա ուսմունքներով՝ ամեն օր, ամեն օր, ամեն օր: Ես վկայում եմ Մորմոնի գրքում եղած շատ մեծ ուժի մասին, որը կփոխի ձեր կյանքը և կուժեղացնի ձեր ցանկությունը հետևել Քրիստոսին: Սուրբ Հոգին կփոխի ձեր սիրտը և կօգնի ձեզ տեսնել «փրերն այնպես, ինչպես նրանք իրականում կան»:¹² Նա ցույց կտա ձեզ, թե դուք ինչ պետք է անեք հաջորդիվ: Մա Նեփիի խոստումն է ձեզ.

«Եվ ես ասացի նրանց. . . . նրանք, ովքեր ականջ կդնեն Աստծո խոսքին, ամուր կրոնեն դրանից, երբեք չեն կորչի, ոչ էլ գայթակղությունները և հակառակորդի կրակոտ նետերը կարող են հաղթել նրանց՝ կուրացնելով, տանելով նրանց դեպի կործանում:

Ուստի, ես հորդորեցի նրանց ուշք դարձնել Տիրոջ խոսքին և հիշել միշտ պահել նրա պատվիրանները բոլոր բաներում»:¹³

Եղբայրներ և քույրեր, մինչև վերջ համբերելը աշակերտության մեծ ստուգարք է: Մեր ամենօրյա աշակերտությունը կորոշի մեր հավերժական ճակատագիրը: Գնացեք առ Աստված, կառչեք ճշմարտությունից, պահեք ձեր սուրբ տաճարային ուխտերը և մնացեք ծառի մոտ:

Ես վկայում եմ հարություն առած կենդանի Քրիստոսի մասին: Ես գիտեմ, որ նա ապրում է: Իմ մեծագույն ցանկությունն է, որ ես լինեմ անդավաճան և հավատարիմ մինչև վերջ նրա վեհաշուք օրինակին հետևելիս: Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վկայակոչվել է Ջոն Լոնգբենին կողմից, «Համաժողովի զեկույց», հոկտ, 1958, 70:
2. 1 Նեփի 8.7:
3. «Աղոթեցի՞ր դու այսօր» *Օրհնելիքեր*, էջ 41:
4. Մորոնի 10.32:
5. Հովհաննես 14.6:
6. 2 Նեփի 31.20:
7. 1 Նեփի 8.30:
8. Հովհաննես 6.68:
9. 1 Նեփի 12.18:
10. Բ Տիմոթեոս 3.7:
11. Ավմա 5.7:
12. Հակոբ 4.13:
13. 1 Նեփի 15.24–25:



Ռաֆայել Ի. Փիսո
Յոթանաստունական

Ավետարանի հավերժական հեռանկարը

Հավերժությանը վերաբերող որոշումներ կայացնելու համար կարևոր է ունենալ ավետարանի հեռանկարը

Մովսեսին տրված հայտնությամբ մեզ ասվում է մեր Երկնային Հոր հայտնած մտադրությունը. «Քանզի ահա, սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:¹ Համաձայն այս խոսքերի Հոր ցանկությունն է յուրաքանչյուրին հնարավորություն տալ ստանալու լիարժեք ուրախությունը: Վերջին օրերի հայտնությունները ցույց են տալիս, որ մեր Երկնային Հայրը երջանկության մի վեհ ծրագիր է ստեղծել Իր բոլոր զավակների համար, մի հատուկ ծրագիր, որի շնորհիվ մենք կարող ենք վերադառնալ ապրելու Իր հետ:

Երջանկության այս ծրագրի գիտելիքը պարզվում է մեզ հավերժական հեռանկար և օգնում է իսկապես գնահատել պատվիրանները, արարողությունները, ուխտերը, ինչպես նաև փորձություններն ու նեղությունները:

Հիմնական մի սկզբունք ստանում ենք Ալմայից. «Հետևաբար, Աստված տվեց նրանց պատվիրաններ

փրկագնման ծրագիրը նրանց հայտնի դարձնելուց հետո»:²

Հետաքրքիր է նկատել ուսուցանման գործընթացի հաջորդականությունը: Մեր Երկնային Հայրը առաջին անգամ փրկագնման ծրագիրն ուսուցանեց Ադամին ու Եվային, և հետո Նա նրանց պատվիրաններ տվեց:

Սա մեծ ճշմարտություն է: Ծրագիրը հասկանալը կօգնի մարդկանց պահել պատվիրանները, կայացնել ավելի լավ որոշումներ, և ճիշտ դրդապատճառներ ունենալ:

Եկեղեցում ծառայելու ժամանակ, ես ականատես եղա եկեղեցու անդամների նվիրվածությանն ու հավատարմությանը տարբեր երկրներում, որոնցից մի քանիստ կային քաղաքական, սոցիալական, կամ տնտեսական հակամարտություններ: Մի ընդհանուր գործոն, որը ես հաճախ եմ տեսել այդ հավատարիմ անդամների մոտ, դա նրանց ունեցած հավերժության հեռանկարն է: Ավետարանի հավերժական հեռանկարի շնորհիվ մենք հասկանում

ենք մեր տեղը, որը զբաղեցնում ենք Աստծո ծրագրում, ընդունում ենք դժվարությունները և աճում դրանց միջոցով, կայացնում որոշումներ, և մեր կյանքը կենտրոնացնում աստվածային ներուժի վրա:

Հեռանկարն այն միջոցն է, որի շնորհիվ մենք տեսնում ենք բաներ, երբ նայում ենք դրանց որոշակի հեռավորությունից, և դա թույլ է տալիս մեզ գնահատել դրանց իրական արժեքը:

Դա նման է անտառում գտնվելուն, երբ առջևում մի ծառ է կանգնած: Մինչև մենք մի փոքր հեռու չքայլենք, չենք կարողանա հասկանալ, թե ինչ է անտառն իրականում: Մի անգամ ես այցելել եմ Ամազոնյան ջունգլիները Լեոիցիայում, Կոլումբիա, Բրազիլիայի պերուական սահմանների մոտ: Ես չէի կարողանում գնահատել նրա չափերը, մինչև չթռչեցի նրա վրայով և չունեցա հեռապատկերը:

Երբ մեր երեխաները փոքր էին, նրանք դիտում էին մանկական հեռուստաալիքով ցուցադրվող մի ծրագիր, որը կոչվում էր *Ի՞նչ էք տեսնում*: Եկրանին շատ մոտիկից, մեծ չափերով ցուցադրվում էր մի բան, և երեխաները պետք է կռահեին, թե դա ինչ է, երբ պատկերն աստիճանաբար փոքրանում էր: Հենց որ առարկան ամբողջությամբ տեսանելի էր դառնում, կարելի էր հեշտությամբ ասել, որ դա կատու է, մի բույս, որևէ միրգ, և այլն:

Հիշում եմ, որ մի առիթով նրանք դիտում էին այդ ծրագիրը, և ինչ-որ մի բան շատ մոտիկից էր ցուցադրվում և շատ տգեղ տեսք ուներ նրանց կարծիքով, նույնիսկ, զգվելի, բայց երբ պատկերն փոքրացավ, նրանք հասկացան, որ դա մի ախորժեղի պիցցա է: Այնուհետև նրանք ինձ ասացին. «Հայրիկ, կզնե՞ս մեզ համար դրանից»: Երբ նրանք հասկացան, թե դա ինչ էր, մի բան, որը սկզբից տհաճ էր թվացել, վերջում դարձավ շատ գրավիչ:

Թույլ տվեք կիսվել մեկ այլ փորձով: Մեր տանը, մեր երեխաները սիրում էին հավաքել փազլներ: Մենք երևի բոլորս հնարավորություն ենք ունեցել փազլ հավաքելու: Որոշ փազլներ կազմված էին բազմաթիվ



փոքր կտորներից: Ես հիշում եմ, որ մեր երեխաներից մեկը (նրա անունը չեմ հայտնի ինքնությունը պաշտպանելու նպատակով), սովորաբար կենտրոնանում էր առանձին կտորների վրա, և երբ դրանցից մեկը չէր համապատասխանում այն տեղին, որտեղ նրա կարծիքով պետք է դա լիներ, նա զայրանում էր, մտածում էր, որ դա լավը չէ, և ցանկանում էր դեն նետել: Վերջապես նա սովորեց փազլ հավաքել, երբ հասկացավ, որ յուրաքանչյուր փոքր կտոր իր տեղն ունի վերջնական նկարի վրա, նույնիսկ, եթե նա չզիտի, թե տվյալ պահին այն որտեղ պետք է դրվի:

Սա Տիրոջ ծրագրի շուրջ խորհելու մի եղանակ է: Մենք չպետք է մտահոգվենք նրա յուրաքանչյուր մասի համար առանձին, փոխարենը փորձենք ամբողջ նկարը բերել մեր տեսադաշտ, մտովի հիշելով, թե վերջնական արդյունքն ինչպիսին կլինի: Տերը գիտի, թե յուրաքանչյուր կտորը որ տեղն է զբաղեցնում ծրագրում: Բոլոր պատվիրանները հավերժական նշանակություն ունեն՝ երջանկության մեծ ծրագրի շրջանակներում:

Չափազանց կարևոր է, որ մենք չկայացնենք հավերժական արժեքներ ունեցող որոշումներ մահկանացիության տեսանկյունից:

Հավերժությանը վերաբերող որոշումների համար կարևոր է ունենալ ավետարանի հեռանկարը:

Երեց Նիլ Ա. Մաքսվելն ուսուցանել է. «Թեև մենք կարող ենք կենտրոնանալ այն բաների վրա, որոնց համար ամենաշատը հույս ունենք հավերժությունում, որոշ բաներ, որոնց համար մենք հույս ունենք այս կյանքում, տարբերվում են: Մենք կարող ենք հուսալ աշխատավարձի բարձրացման համար, մի հատուկ տոնի համար, ընտրություններում հաղթանակ ունենալու, կամ մեծ տան համար, բաներ, որոնք կարող են կամ իրականանալ, կամ՝ ոչ: Հավատքը Հոր ծրագրի հանդեպ տոկունություն է տալիս մեզ, նույնիսկ երբ այս կարճաժամկետ հույսերը չեն իրականանում: Հույսը մեզ «ջերմեռանդ ներգրավված» է պահում բարի գործերի մեջ, նույնիսկ երբ թվում է, թե ջանքերն ապարդյուն են (տես Վևու 58.27):»³

Հավերժական հեռանկար չունենալը, կամ այն կորցնելը կարող է տանել մեզ նրան, որ մենք ունենանք աշխարհիկ հեռանկար, ինչպիսին մեր անձնական չափանիշն է, և որոշումներ կայացնենք, որոնք ներդաշնակ չեն Աստծո կամքի հետ:

Մորմոնի Գրքում նշվում է Նեփիի դրսևորած վերաբերմունքը,

և Լամանի ու Լեմուելի վերաբերմունքը: Նրանք բոլորը կրել էին բազմաթիվ չարչարանքներ և շատ դժվարություններ, սակայն, նրանց վերաբերմունքը դրանց նկատմամբ շատ տարբեր էր: Նեփին ասել է. «Եվ այնքան մեծ էին Տիրոջ օրհնությունները մեզ վրա, որ մինչ մենք անապատում ապրում էինք հում մսով, մեր կանայք առատ կուրծք էին տալիս իրենց երեխաներին և ուժեղ էին, այո, ճիշտ տղամարդկանց պես. և նրանք սկսեցին տանել իրենց ճամփորդություններն առանց տրտուջների»:⁴

Լամանն ու Լեմուելը, մյուս կողմից, դառնորեն բողոքում էին. «Եվ այսպես Լամանը և Լեմուելը, լինելով ավագները, տրտուջում էին իրենց հոր դեմ: Եվ նրանք տրտուջում էին, որովհետև չզիտեին գործերն այն Աստծո, որը ստեղծել էր իրենց»:⁵ «Գործերն . . . Աստծո» չիմանալը, կամ անտեսելը հավերժական հեռանկարը կորցնելու գործոններից մեկն է, և տրտուջալն ընդամենը դրա այստանիշներից մեկն է: Չնայած նրան, որ Լամանը և Լեմուելը Նեփիի հետ միասին ականատես եղան բազմաթիվ հրաշքների, նրանք բացականչեցին, ասելով. «Եվ մենք թափառում ենք անապատում այսքան երկար տարիներ. և մեր կանայք տքնել են՝ երեխայով լինելով. և նրանք երեխաներ են ծնել անապատում և տարել են ամեն ինչ, բացի մահից. և ավելի լավ կլիներ, որ նրանք մահացած լինեին Երուսաղեմից դուրս գալուց առաջ, քան կրեին այս չարչարանքները»:⁶

Մրանք երկու տարբեր վերաբերմունքներ էին, չնայած որ նրանց կրած դժվարություններն ու չարչարանքները նման էին: Ակնհայտ է, որ նրանց հեռանկարները տարբեր էին:

Նախագահ Մփենսեր Վ. Քիմբալը գրել է հետևյալը. «Եթե նայենք մահկանացիությանը որպես գոյության արդյունքի, ապա ցավը, վիշտը, ճախողումը, և կարճատև կյանքը կլինեն աղետ: Սակայն, եթե նայենք կյանքին որպես հավերժական երևույթի, որը գալիս է հեռվից՝ նախաերկրային անցյալից և շարունակվում է դեպի հավիտենական հետմահու ապագան, ապա բոլոր

իրադարձությունները կարող են դիտվել պատշաճ հեռանկարով:⁷

Երեց Դեյվիդ Բ. Հայթը մի պատմություն է պատմել քանդակագործ Միքելանջելոյի մասին, ամեն ինչ ճիշտ հեռանկարով տեսնելու կարևորությունը պատկերելու համար. «Երբ քանդակագործն աշխատում էր մարմարի մի կտորի վրա, մի տղա էր գալիս ամեն օր և ծածուկ դիտում էր: Երբ Դավթի արձանը նշմարվեց և հայտնվեց այդ քարից, պատրաստ, որ ամբողջ աշխարհը հիանա, տղան հարցրեց Միքելանջելոյին. «Որտեղի՞ց գիտեիք, որ նա այնտեղ էր»:⁸

Հեռանկարը, որով քանդակագործն էր տեսնում այդ մարմարի կտորը այլ էր, քան տղայինը, որը հետևում էր նրա աշխատանքին: Քարի մեջ պարփակված հնարավորությունների վարպետի տեսլականը թույլ տվեց նրան ստեղծել արվեստի գործը:

Տերը գիտի, թե ինչ է ցանկանում նվաճել մեզանից յուրաքանչյուրի հետ: Նա գիտի, թե ինչ տեսակ բարեփոխումներ է ցանկանում, որ լինեն մեր կյանքում, և մենք իրավունք չունենք խորհուրդ տալու Նրան: Նրա մտքերն ավելի բարձր են, քան մերը:⁹

Ես վկայում եմ, որ մենք ունենք սիրող, արդար և ողորմած Երկնային Հայր, ով պատրաստել է ծրագիր մեր հավերժական երջանկության համար: Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը Նրա Որդին է և աշխարհի փրկիչը: Ես գիտեմ, որ Նախագահ Թոմաս Ս. Մոնտոնը Աստծո մարգարեն է: Ես ասում եմ այս բաները Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՐՈՒՄՆԵՐ

1. Մովսես 1.39.
2. Ալմա 12.32.
3. Նիլ Ա. Մաքսվել, "Brightness of Hope," *Ensign*, Nov. 1994, 35–36.
4. 1 Նեփի 17.2.
5. 1 Նեփի 2.12.
6. 1 Նեփի 17.20.
7. *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* (2006), 15.
8. Դեյվիդ Բ. Հայթ, "Your Purpose and Responsibility" (Brigham Young University fireside, Sept. 4, 1977), 2–3; speeches.byu.edu.
9. Տես Եսայիա ԾԵ.8–9:



Երեց Նիլ Լ. Անդերսոն
Տասներկու Առաքյալների Քվորում

Գայ քո արքայութիւնը

Նրա գալու միտքը արթնացնում է իմ հոգին: Դա հափշտակիչ պահ է լինելու: Այդ տեսարանը և դրա վեհությունը, մեծությունը և փառահեղությունը կգերազանցեն ամեն բանի, ինչ մահկանացու աչքերը տեսնի կամ զգացնի են:

Մինչ մենք երգում էինք, ինձ խորապես հուզեց այն միտքը, որ հենց այս պահին հարյուր հազարավոր, միգրցե, միլիոնավոր հավատացյալ Սրբեր ավելի քան 150 երկրներում 75 զարմանահրաշ լեզուներով¹ բարձրացնում են իրենց ձայներն առ Աստված՝ երգելով.

*Եկ, Թագավորների Թագավոր:
Մենք երկար ենք սպասել քեզ:
Բժշկություն քո թևերին,
Ազատելու քո ժողովրդին:²*


«Եկ, Թագավորների Թագավոր»:³ Մենք ողջ աշխարհով մեկ տարածված հավատացյալների մի շատ մեծ

ընտանիք ենք, Տեր Հիսուս Քրիստոսի աշակերտներն ենք:

Մենք մեզ վրա ենք վերցրել նրա անունը, և ամեն շաբաթ, մինչ ճաշակում ենք հաղորդությունը, մենք աղերսում ենք, որ հիշենք Նրան և պահենք Նրա պատվիրանները: Մենք հեռու ենք կատարյալ լինելուց, սակայն մենք անլրջորեն չենք մոտենում մեր հավատքին: Մենք հավատում ենք Նրան: Մենք երկրպագում ենք Նրան: Մենք հետևում ենք Նրան: Մենք շատ ենք սիրում Նրան: Նրա գործը աշխարհի ամենամեծ գործն է:

Մենք ապրում ենք, եղբայրներ և քույրեր, Տիրոջ Երկրորդ Գալստին նախորդող օրերում՝ մի ժամանակ, որին դարեր շարունակ երկար սպասել են հավատացյալները: Մենք ապրում ենք պատերազմների և պատերազմների համբավների օրերում, բնական աղետների օրերում, օրերում, երբ աշխարհն ընկղմված է խառնաշփոթի մեջ:

Սակայն, մենք նաև ապրում ենք Վերականգնման փառահեղ ժամանակներում, երբ ավետարանը տարվում է ողջ աշխարհին, երբ Տերը խոստացել է, որ Նա «մաքուր մի ժողովուրդ կբարձրացնի»⁴ և կզինի



նրանց «արդարությամբ և Աստծո զորության մեծ փառքով»:⁵

Մենք ուրախասնում ենք այս օրերում և աղոթում, որ կարողանանք խիզախաբար տանել մեր դժվարությունները և անորոշությունները: Ոմանց դժվարություններն ավելի մտահոգիչ են, քան մյուսներինը, սակայն ոչ ոք ձերբազատված չէ դրանցից: Երեց Նիլ Ա. Մաքսվելը մի անգամ ինձ ասել է. «Եթե ամեն բան կատարյալ ձևով է ընթանում քեզ մոտ այս պահին, պարզապես սպասիր»:

Չնայած, որ Տերը կրկին ու կրկին վստահեցնում է մեզ, որ մենք «վախենալու կարիք չունենք»⁶, պարզ հեռանկար ունենալը և այս աշխարհից այն կողմ տեսնելը երբեմն հեշտ չէ, երբ մենք փորձությունների մեջ ենք:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ինձ մի կարևոր դաս է սովորեցրել հավերժական հեռանկար ունենալու մասին:

Տասնութ տարի առաջ, մինչ գնացքով ճամփորդում էինք Շվեյցարիայում Նախագահ Մոնսոնի հետ, ես հարցրեցի նրան իր ծանր պարտականությունների մասին: Նրա պատասխանն ամրացրեց իմ հավատքը. «Առաջին Նախագահությունում, - ասաց նա, - մենք անում ենք հնարավոր ամեն բան՝ այս գործն առաջ տանելու համար: Սակայն սա Տիրոջ գործն է և Նա է առաջնորդում այն: Նա է գտնվում ղեկանիվի մոտ: Մենք հիանում ենք, մինչ հետևում ենք, թե ինչպես է Նա բացում դռներ, որոնք մենք չենք կարող բացել, և կատարում հրաշքներ, որոնք մենք չենք կարող նույնիսկ պատկերացնել»:⁷

Եղբայրներ և քույրեր, Տիրոջ հրաշքները տեսնելը և դրանց հավատալը, երբ հաստատում ենք Նրա թագավորությունը երկրի վրա, կարող է օգնել մեզ տեսնել և հավատալ, որ Տիրոջ ձեռքը գործում է նաև մեր իսկ կյանքում:

Տերը հայտարարել է. «Ես ի վիճակի եմ անելու իմ սեփական գործը»:⁸ Մեզանից յուրաքանչյուրը փորձում է անել իր մասը, սակայն Նա է գլխավոր ճարտարապետը: Իր Հոր ղեկավարության ներքո Նա ստեղծեց այս աշխարհը: «Ամեն ինչ

նորանով եղաւ, եւ առանց նորան ոչինչ չեղաւ, ինչ որ եղաւ»:⁹ Երբ մենք հոգևոր առումով արթուն ենք և զգոն, մենք տեսնում ենք Նրա ձեռքը ողջ երկրի վրա և մենք տեսնում ենք Նրա ձեռքը մեր իսկ անձնական կյանքում:

Թույլ տվեք կիսվել օրինակով: 1831թ., երբ Եկեղեցում կային ընդամենը 600 անդամներ, Տերը հայտարարեց. «Աստծո արքայության բանալիները վստահված են մարդուն երկրի վրա, և այնտեղից ավետարանը կգործի մինչև աշխարհի ծայրերը, ինչպես քարը, որը կտրվել է սարից՝ առանց ձեռքի, կգործի մինչև որ լցնի ողջ երկիրը»:¹⁰

Նեփի մարգարեն կանխատեսել էր, որ մեր օրերում լինելու էին Եկեղեցու «թվով փոքր» անդամներ, եթե համենատենք աշխարհի բնակչության հետ, սակայն նրանք լինելու էին «ողջ երկրի երեսի վրա»:¹¹

Իր թագավորությունը հաստատելու գործում Տիրոջ ձեռքի երեք գեղեցիկ օրինակներ են տաճարները, որոնք հայտարարվեցին այսօր Նախագահ Մոնսոնի կողմից: Ընդամենը մի քանի տասնյակ տարի առաջ ո՞վ կարող էր տաճարներ պատկերացնել Հաիթիում, Թայլանդում և Փոլսկրի Ափում:

Տաճարի տեղը չի որոշվում աշխարհագրական հարմարավետությունից ելնելով: Տերը հայտնությամբ տալիս է այն Իր մարգարեին, հայտարարելով, որ մեծ աշխատանք պետք է կատարվի, և հաստատելով Սրբերի արդարակեցությունը, ովքեր կփայլալայեն և հոգ կտանեն Իր տան համար սերնդե-սերունդ:¹²

Իմ կինը՝ Քեյթին, և ես այցելեցինք Հաիթի ընդամենը երկու տարի առաջ: Բարձր լեռան վրա, որտեղից նայում էինք Պորտ-աու-Պրինցիս, մենք միացանք Հաիթիի Սրբերին, նշելով Երեց Թոմաս Ս. Մոնսոնի կողմից ընդամենը 30 տարի առաջ երկրի նվիրագործման օրը:

Մեզանից ոչ ոք չի մոռանա 2010թ. Հաիթիի ավերիչ երկրաշարժը: Հավատարիմ անդամների և միսիոներների խիզախ խմբի հետ միասին, որը կազմված էր հիմնականում հաիթցիներից, Եկեղեցին այս կզգում շարունակեց աճել և ամրանալ: Այն թույլ է տալիս, որ հավատքիս շնորհիվ պատկերացնեմ Աստծո այս արդար Սրբերին սպիտակ հանդերձներով, որոնք ունեն սուրբ քահանայության զորությունը՝ ղեկավարելու և իրականացնելու սուրբ արարողություններ Տիրոջ տանը:

Ո՞վ կարող էր պատկերացնել Տիրոջ տունը Բանգկոկ գեղեցիկ քաղաքում: Քրիստոնյաները ընդամենը 1 տոկոս են կազմում սկզբունքորեն բողոքական համարվող Թայլանդում: Ինչպես Հաիթիում, այնպես էլ Բանգկոկում մենք տեսնում ենք, որ Տերը հավաքել է երկրի ընտրյալներին: Մինչ մենք այնտեղ էինք մի քանի ամիս առաջ, մենք հանդիպեցինք Մաթիթ և Ջութամաս Կաիվաիվաթաններին և նրանց հավատարիմ երեխաներին: Մաթիթը միացել էր



Եկեղեցուն, երբ 17 տարեկան էր, և միսիա էր ծառայել իր հայրենիքում: Ավելի ուշ նա հանդիպել էր Զուբա-մասին ինստիտուտում, և նրանք կնքվել էին Մանիլա, Ֆիլիպիններ Տաճարում: 1933թ. Կախվախվաթա-նաներին հարվածել էր մի մեքենա, որի վարորդը քնել էր, և Սաթիթը կաթվածահար էր եղել իր կրծքա-վանդակից ներքև: Նրանց հավատքը երբեք չէր տատանվել: Սաթիթը հարգված ուսուցիչ է Բանգկոկի Միջազգային Դպրոցում: Նա ծա-ռայում է որպես Թայլանդ Բանգկոկ Հյուսիսային Ցցի նախագահ: Մենք տեսնում ենք Աստծո հրաշքներն Իր հիանալի գործում և մեր իսկ անձնա-կան կյանքում:

Փղոսկրի Ափի Եկեղեցու հրաշքը հնարավոր չէ պատմել առանց երկու զույգերի անունները տալու՝ Ֆիլիպ և Աննելիս Սասարդներ և Լյուսին և Ազատա Աֆֆոուներ: Նրանք միացել են Եկեղեցուն, երբ երիտասարդ ամուսնացած զույգեր էին, մեկը Գեր-մանիայում, մյուսը՝ Ֆրանսիայում: 1980-ականներին Ֆիլիպն ու Լյուսինը զգացել էին, որ պետք է վերադառնա-յին իրենց հայրենի երկիրը՝ Աֆրիկա, կառուցելու Աստծո արքայությունը: Քույր Սասարդից, ով գերմանացի էր,



կայացած մեխանիկ ինժեներ, ար-տասովոր հավատք պահանջվեց: Երկու զույգերը առաջին անգամ հանդիպեցին Փղոսկրի Ափում և սկսեցին Կիրակնօրյա Դպրոցը: Դա 30 տարի առաջ էր: Աֆրիկյան այդ գեղեցիկ երկրում այժմ կա ութ ցից և 27000 անդամ: Աֆֆոունները շա-րունակեցին վեհանձնորեն ծառայել, ինչպես անում են նաև Սասարդները, ովքեր վերջերս են ավարտել իրենց միսիան Աքքրա Չանա Տաճարում:

Նա հաշվում է իր ժողովրդին, և նրա գթասրտությունը ողջ երկրի վրա է:¹⁵ Երբեմն մենք կարողանում ենք տեսնել Տիրոջ ձեռքը ուրիշների կյանքում, սակայն խորհում ենք. «Ինչպե՞ս ես կարող եմ ավելի պարզ տեսնել Նրա ձեռքը իմ իսկ կյանքում»:

Փրկիչն ասել է. «Չերկմտիք»:¹⁶ «Մի վախենար»:¹⁷ «Ոչ մի [ճնճողուկ] չի ընկնիլ գետինն առանց ձեր Հոր [իմացության]: . . . Ուրեմն մի վախենար. [քանի որ] դուք շատ ճնճողուկներից ատելի լաւ էք»:¹⁸

Հիշեք պատանուն, ով աղա-ղակեց Եղիսե մարգարեին, երբ նրանք շրջապատված էին թշնամիներով. «Լա՛յ, ի՞նչ անենք»:¹⁹

Եղիսեն պատասխանեց. «Մի վախենար. որովհետեւ մեզ հետ եղողները շատ են քան թէ նորանց հետ եղողները: [Ապա] Եղիսեն աղօթք արաւ, . . . Տէր, բաց նորա աչքերը որ տեսնէ. եւ Տէրը բացաւ ծառայի աչքերը եւ նա տեսաւ[որ] սարը լիքն էր հրեղէն ձիե-րով եւ կառքերով»:²⁰

Երբ դուք պահեք պատվիրան-ները և հավատքով աղօթեք, ձեր կյանքում Տիրոջ ձեռքը տեսնելու համար, ես խոստանում եմ ձեզ, որ Նա էլ ավելի լայն կբացի ձեր հոգու աչքերը և դուք ավելի պարզ կտես-նեք, որ դուք մենակ չեք:



Կարո՞ղ եք տեսնել Աստծո ձեռքը, որ առաջ է տանում Իր գործը: Կարո՞ղ եք տեսնել Աստծո ձեռքը Հաիթիի միսիոներների կամ Կախվախվաթանաների կյանքում: Կարո՞ղ եք տեսնել Աստծո ձեռքը Սասարդների և Աֆֆոու-ների կյանքում: Կարո՞ղ եք տեսնել Աստծո ձեռքը ձեր իսկ կյանքում:

«Եվ ոչնչով մարդ չի վիրավորում Աստծուն . . . բացի նրանցից, ովքեր չեն խոստովանում նրա ձեռքը բոլոր բաներում»:¹³

Աստծո հրաշքները տեղի են ունենում ոչ միայն Հաիթիում, Թայ-լանդում կամ Փղոսկրի Ափում: Նայեք ձեր շուրջը:¹⁴ «Աստված հիշում է ամեն ժողովրդի, . . . այո,

Վերին ձախում. Նախագահ Թոմաս Ս Մոնտոնը Հաիթիում 1983թ. երկրի նախագործմանը: Վերևում. Փղոսկրի ափի պիոներները՝ Ֆիլիպ և Աննելիս Սասարդներ (ձախում) և Լյուսյեն և Ազատ Աֆֆոուներ: Չախում. Ցցի նախագահ Սաթիթ Կախվա-վաթանան և Նրա կինը՝ Զուբամասը Բանգկոկում, Թայլանդ:

իր ընտանիքը թողնելու և Եղբայր Սասարդին թույլ տալու համար, որ թողներ իր աշխատանքը որպես



Սուրբ գրություններն ուսուցանում են, որ մենք պետք է «անսասան կանգնենք նրա հավատքում, որը պիտի գա»:²¹ Իսկ ի՞նչ է գալու: Փրկիչն աղոթել է.

«Մեր Հայր, որ երկնքումն ես. սուրբ լինի քո անունը.

Գայ քո արքայությունը, լինի քո կամքը, ինչպես երկնքումն՝ այնպես էլ երկրի վերայ»:²²

Մենք բոլորս նոր երգեցինք՝ «Եկ, Թագավորների Թագավոր»:

Մեր հավատքը մեծանում է, մինչ մենք սպասում ենք Փրկչի երկիր վերադառնալու փառահեղ օրվան: Նրա գալու միտքը արթնացնում է իմ հոգին: Դա հափշտակիչ պահ է լինելու: Այդ տեսարանը և դրա վեհությունը, մեծությունը և փառահեղությունը կգերազանցեն ամեն բանի, ինչ մահկանացու աչքերը տեսել կամ զգացել են:

Այդ օրը Նա չի գա Վասնձարուներով պատած, մտորի մեջ դրած»²³, այլ Նա կհայտնվի «երկնքի ամպերի մեջ՝ գործություն ու մեծ փառք հագած. բոլոր սուրբ հրեշտակների հետ»:²⁴ Մենք կլսենք «հրեշտակապետի . . . եւ Աստծո փողի» ձայնը:²⁵ Արևը և լուսինը կլսավարեն, և «աստղերը կնետվեն իրենց տեղերից»:²⁶ Դուք և ես, կամ նրանք, ովքեր հետևում են մեզ, «սրբերը . . . աշխարհի լյուրաքանչյուր ծայրից»²⁷ «կկենդանացվեն և կհափշտակվեն վեր, որ դիմավորեն նրան»,²⁸ և նրանք, ովքեր մահացել են արդարակեցության

մեջ, նրանք նույնպես «կհափշտակվեն վեր, որ դիմավորեն նրան երկնքի . . . մեջ»:²⁹

Ապա, տեղի կունենա մի փորձառություն, որը գրեթե անհնար է պատկերացնել. «Ամեն մարմին, -ասում է Տերը,- միասին կտեսնի ինձ»:³⁰ Ինչպե՞ս դա տեղի կունենա: Մենք չգիտենք: Սակայն ես վկայում եմ, որ դա տեղի կունենա. ճիշտ այնպես, ինչպես մարգրեացվել է: Մենք ակնածանքով ծնկի կիջնենք, «և Տերը պիտի արձակի իր ձայնը, և աշխարհի բոլոր ծայրերը պիտի լսեն այն»:³¹ «Այն կլինի շատ ջրերի ձայնի պես, և ուժեղ ամպրոպի ձայնի պես»:³² «Ապա Տերը . . . Փրկիչը, կկանգնի իր ժողովրդի մեջ»:³³

Այնտեղ կլինի երկնքի հրեշտակների խմբերի և երկրի վրա գտնվող Սրբերի անմոռանալի միավորում:³⁴ Սակայն, ամենակարևորը, ինչպես Եսայիան է հայտարարել. «Երկրի բոլոր ծայրերը պիտի տեսնեն մեր Աստուծոյ փրկությունը»³⁵ և Նա «կթագավորի ամեն մարմնի վրա»:³⁶

Այդ օրը թերահավատները կլռեն, «քանզի ամեն ականջ պիտի լսի . . . , և ամեն ծունկ պիտի ծավլի, և ամեն լեզու պիտի խոստովանի»,³⁷ որ Հիսուսը Քրիստոսն է, Աստծո Որդին, աշխարհի Փրկիչը և Քավիչը:

Այսօր Ջատիկ է: Ողջ աշխարհի քրիստոնյաների հետ միասին մենք ուրախանում ենք Նրա փառահեղ Հարության համար և մեզ իսկ խոստացված հարության համար:

Թող որ մենք պատրաստվենք Նրա գալստին, վերհիշելով այս փառահեղ իրադարձությունները կրկին ու կրկին մեր իսկ մտքում և նրանց հետ, ում սիրում ենք, և թող Նրա աղոթքը լինի մեր աղոթքը. «Գայ քո արքայությունը, լինի քո կամքը, ինչպես երկնքումն՝ այնպես էլ երկրի վերայ»:³⁸ Ես վկայում եմ, որ Նա ապրում է: «Եկ, Թագավորների Թագավոր»: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թեև ընդհանուր առմամբ գերագույն համաժողովը թարգմանվում է 94 լեզուներով, ոչ բոլոր լեզուները կամ ոչ բոլոր նիստերն են միաժամանակ հեռարձակվում: Այս գերագույն համաժողովի կիրակի առավոտյան նիստի ժամանակ հեռարձակումը տեղի է ունեցել 75 լեզուներով:
2. «Եկ, Թագավորների Թագավոր», *Hymns*, no. 59:
3. Երեքշաբթի օրը՝ 2015թ. մարտի 31-ին, Առաջին Նախագահության գրասենյակից ինձ նամակ ուղարկեցին, բացատրելով, որ ես պետք է խոսեի կիրակի օրը ցերեկ՝ ապրիլի 5-ին, անմիջապես հետևելով «Եկ, Թագավորների Թագավոր» օրհներգին: Փարիի Պ. Գրատի կողմից գրված «Վերականգնման այս հրաշալի օրհներգի բառերը խոնարհ աղերսանք է ուղղված Փրկչին, որ վերադառնա երկիր: Այնտեղ գետեղված է համաժողովի իմ ելույթի ուղերձը, հավանաբար, ավելի զորեղ կերպով, քան որևէ այլ օրհներգում, որ մենք երգում ենք: Ես խորապես հուզվեցի, երբ ամենուր գտնվող հավատացյալ Սրբերը միավորված Ջատիկի կիրակի օրը, բարձրացրեցին ձայներն առ Աստված և միասին երգեցին «Եկ, Թագավորների Թագավոր»: Մենք երկար ենք սպասել քեզ: Գիտակցելով, որ ես անձամբ ոչ մի ներդրում չեմ ունենում կապված գերագույն համաժողովի երաժշտության հետ, ես մտածեցի, որ նրանք, ովքեր պատասխանատու են երաժշտության համար, կարողացել էին համաժողովի իմ ելույթը, որ վերնագրված էր «Գայ քո արքայությունը» և ապա ընտրել այս օրհներգը, որը Փրկչի Երկրորդ Գալուստի մասին է: Ավելի ուշ ես իմացա, որ Թաբերնակի Երգչախմբի ղեկավարությունը առաջարկել էր օրհներգը Առաջին Նախագահությանը մարտի սկզբին, շաբաթներ առաջ, մինչ ես կուղարկեի իմ ելույթը Առաջին Նախագահությանը՝ թարգմանության համար: Վերջին անգամ «Եկ, Թագավորների Թագավոր» օրհներգը գերագույն համաժողովի ժամանակ երգել են 2002թ. հոկտեմբերին: Մեզանից յուրաքանչյուրը փորձում է կատարել իր մասը, սակայն Նա է մեծ ճարտարապետը:
4. Վարդապետություն և Ուխտեր 100.16:
5. 1 Նեփի 14.14:
6. Վարդապետություն և Ուխտեր 10.55:
7. Մեծնական փորձառություն, մայիս 1997թ.:
8. 2 Նեփի 27.20:
9. Հովհաննես Ա.3:

- 10. Վարդապետություն և Ուխտեր 65.2:
- 11. 1 Նեփի 14.12:
- 12. 2001թ. աշնանը, մինչ ապրում էի Բրազիլիայում, ես ոգևորությամբ կիսվում էի Մռաջին նախագահությունից Նախագահ Զեյմս Ի. Ֆաուստի հետ բազմաթիվ տպավորիչ փաստերով, որոնք վերաբերում էին Մրբերին, ովքեր ապրում էին Քուրթիթա քաղաքում, հույս ունենալով, որ նա այդ տեղեկությունները կփոխանցեր Նախագահ Գորդոն Բ. Հինքլին: Նախագահ Ֆաուստը ընդհատեց իմ խոսքը. «Նեյլ, - սասց նա, - մենք չենք փորձում ազդել Նախագահի վրա՝ ի շահ որոշակի հարցի: Որոշումը, թե որտեղ պետք է կառուցվի տաճար, կայացվում է Տիրոջ և Նրա մարգարեի միջև»: Քուրթիթա Բրազիլիա Տաճարը նվիրագործվեց 2008թ.:
- 13. Վարդապետություն և Ուխտեր 59.21:
- 14. Տիրոջ ձեռքով կատարված մեծ հրաշքներից մեկն Իր թագավորության տարածումն է Միացյալ Նահանգների յուրաքանչյուր նահանգի քաղաքներում և գյուղերում: Միայն մեկ օրինակ: 2006թ. ինձ հանձնարարեցին ներկա գտնվելու ցցի համաժողովին Դենթոնում, Տեխաս: Ես մտա ցցի նախագահի՝ Նախագահ Վաուգն Ա Անդրուսի տանը: Քույր Անդրուսը պատմեց ինձ Դենթոնի վաղ շրջանի Եկեղեցու մասին, որի հիմքերը դրել էին նրա ծնողները՝ Զոն և Մարգարեթ Փորթերները: Այնտեղ սկզբում կար միայն Կիրակնօրյա Դպրոց: Մակայն Փորթերները ավետարանով կիսվեցին Ռազադայների հետ, որքեր իրենց հերթին կիսվեցին Նոբլների և Մարտինոների հետ: Միսիոներները, իհարկե, ավելացրեցին իրենց կարևորագույն ներդրումը: Շատ ընտանիքներ միացան Եկեղեցուն: Ուրիշներն էլ արևմուտքից տեղափոխվեցին Դենթոն: Այսօր այնտեղ, ուր կար մի փոքրիկ ճյուղ, այժմ կա չորս ցից, և Մարտինոների որդիներից մեկը՝ Երեց Բ. Մարտինոն, ով միացել էր Եկեղեցուն, երբ 17 տարեկան էր, ծառայում է որպես Եկեղեցու Բարձրագույն Իշխանավոր:
- 15. Ալմա 26.37:
- 16. Մատթեոս ԻԱ.21:
- 17. Մարկոս Ե.36:
- 18. Մատթեոս Ժ.29, 31:
- 19. Դ թագավորաց Զ.15:
- 20. Դ թագավորաց Զ.16-17:
- 21. Մոսիա 4.11:
- 22. Մատթեոս Զ.9-10, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 65.6:
- 23. Ղուկաս Բ.12:
- 24. Վարդապետություն և Ուխտեր 45.44:
- 25. Ա թեսաղոնիկեցիս Դ.16:
- 26. Վարդապետություն և Ուխտեր 133.49:
- 27. Վարդապետություն և Ուխտեր 45.46:
- 28. Վարդապետություն և Ուխտեր 88.96:
- 29. Վարդապետություն և Ուխտեր 88.97:
- 30. Վարդապետություն և Ուխտեր 101.23:
- 31. Վարդապետություն և Ուխտեր 45.49:
- 32. Վարդապետություն և Ուխտեր 133.22:
- 33. Վարդապետություն և Ուխտեր 133.25:
- 34. Տես Մոսիա 7.63:
- 35. Եսայիա ԾԲ.10:
- 36. Վարդապետություն և Ուխտեր 133.25:
- 37. Վարդապետություն և Ուխտեր 88.104:
- 38. Մատթեոս Զ.10:



Երնց Խորխն Ֆ. Ջնբալլու
Յոթանասունական

Եթե լինեք պատասխանատու

Եկեք հաստատուն առաջ գնանք՝ սովորելով մեր պարտականությունը, կայացնելով ճիշտ որոշումներ, գործելով այդ որոշումների համաձայն, և ընդունելով մեր Հոր կամքը:

Ես ընդամենը 12 տարեկան էի, երբ միսիոներները առաջին անգամ եկան քարոզելու Չիլիի հյուսիսային մի քաղաքում, որտեղ ես եմ ծնվել: Մի կիրակի, փոքր ճյուղ 6 ամսվա ընթացքում հաճախելուց հետո, միսիոները ինձ հաց մատուցեց հաղորդության ժողովի ժամանակ: Ես նայեցի նրան և

մեղմ սասացի. «Ես չեմ կարող: «Ինչու՞ ոչ», հարցրեց նա Ես սասացի նրան. «Որովհետև ես եկեղեցու անդամ չեմ»:¹ Միսիոները չէր կարող հավատալ դրան: Նրա աչքերը շողում էին: Ես ենթադրեցի, որ նա մտածում էր հետևյալը. «Բայց այս երիտասարդը ներկա է յուրաքանչյուր ժողովին: Ինչու՞ նա չի կարող լինել եկեղեցու անդամ»:

Հաջորդ օրը, միսիոներները եկան իմ տուն ամեն ջանք գործադրեցին, որպեսզի ուսուցանեն իմ ամբողջ ընտանիքը: Բայց, քանի որ ընտանիքս հետաքրքրված չէր, միայն իմ ավելի քան վեց ամսվա շաբաթական եկեղեցի հաճախումները բավական վստահություն ներշնչեցին միսիոներներին՝ շարունակել ուսուցումը: Վերջապես, այն կարևոր պահը, որը ես սպասում էի՝ եկել էր, երբ նրանք հրավիրեցին ինձ դառնալ Հիսուս Քրիստոսի եկեղեցու անդամ: Միսիոներները բացատրեցին ինձ, որ իմ անչափահաս լինելու պատճառով, անհրաժեշտ էր իմ ծնողների թույլտվությունը: Միսիոներների հետ ես գնացի հորս մոտ՝ ենթադրելով որ





նրա սիրալիք պատասխանը կլինեք. «Որդիս, երբ չափահաս կդառնաս, կկարողանաս քո սեփական որոշումներ կայացնել»:

Մինչ միսիոներները խոսում էին նրա հետ, ես ջերմեռանդ աղոթում էի, որ նրա սիրտը փափկանա, որ պետքի նա իմ ուզած թույլությունը տար: Նա միսիոներներին տվեց հետևյալ պատասխանը. «Երեցներ, վերջին 6 ամսվա ընթացքում, ես տեսա ինչպես իմ որդի Խորլիսեն ամեն կիրակի վաղ առավոտյան վեր է կենում, հագնում իր լավագույն հագուստը և քայլում եկեղեցի: Ես տեսա եկեղեցուց միայն լավ ազդեցություն նրա կյանքում»: Հետո, դիմելով ինձ, նա զարմացրեց ինձ՝ ասելով. «Որդիս, եթե պատասխանատու ես լինելու այս որոշման համար, ապա դու ունես իմ թույլությունը մկրտվելու»: Ես գրկեցի հորս, համբուրեցի նրան և շնորհակալություն հայտնեցի նրա արածի համար: Հաջորդ օրը ես մկրտվեցի: Անցյալ շաբաթ լրացավ իմ կյանքի կարևոր իրադարձության 47-րդ տարեդարձը:

Ի՞նչ պատասխանատվություն մենք ունենք որպես Հիսուս Քրիստոսի եկեղեցու անդամներ: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Մմիթը արտահայտել է դա հետևյալ կերպ՝ «Մենք ունենք այս երկու մեծ պատասխանատվությունները: . . . Առաջինը՝ փնտրել մեր անձնական փրկությունը, և երկրորդը՝ մեր պարտականությունը մերձավորների նկատմամբ»:²

Այսպիսով, դրանք Հոր կողմից մեզ համար տրված հիմնական պարտականություններն են՝ մեր և մեր մերձավորների փրկության որոնումը, հասկանալով այն, որ այս նախադասությամբ *փրկությունը* նշանակում է փառքի բարձրագույն աստիճանի հասնումը, որը Հայրը պատրաստել է Իր հնազանդ գավակների համար:³ Այս պարտականությունները, որոնք վստահված են մեզ և որոնք մենք ազատ ընդունել ենք, պետք է ձևավորեն մեր առաջնահերթությունները, մեր ցանկությունները, մեր որոշումները և մեր առօրյա վարքը:

Մեկն ու մեկի համար, ով հասկացել, որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ վեհացումը իսկապես հնարավոր է դարձել, այն ձեռքբերման ձևաորումը հավասարազոր է նզովքին: Այսպիսով, փրկության հակադրությունը՝ նզովքն է՝ այնպես, ինչպես հաջողության հակադրությունը՝ ձախողումն է: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը ուսուցանել է մեզ, որ «մարդիկ իսկապես չեն կարող երկար ժամանակ բավարարված մնալ միջակությամբ՝ գերազանցության ձեռքբերման հնարավորությունը տեսնելուց հետո»:⁴ Միայն ինչպե՞ս ենք մենք կարող բավարարված լինել վեհացմանը չհասնող որևէ բանով, եթե իմանում ենք, որ վեհացումը հնարավոր է:

Թույլ տվեք կիսվել չորս սկզբունքներով, որոնք կօգնեն մեզ իրականացնել մեր ցանկությունը

լինել պատասխանատու մեր Երկնային Հոր առջև, ինչպես նաև արձագանքել Նրա ակնկալիքին, որ մենք դառնանք Նրա նման:

1. Սովորել մեր պարտականությունը

Եթե մենք պետք է կատարենք Աստծո կամքը, եթե մենք պետք է լինենք պատասխանատու Նրա առջև, մենք պարտավոր ենք սկսել սովորելով, հասկանալով, ընդունելով, և ապրելով մեր հանդեպ Նրա կամքի համաձայն: Տերը ասել է՝ «Ուստի, այժմ թող ամեն տղամարդ սովորի իր պարտականությունը և ողջ ջանասիրությամբ գործի այն պաշտոնում, որում նշանակված է»:⁵ Ճիշտն անելու ցանկությունը բավական չէ, եթե մենք չենք հավաստիանում, որ հասկացել ենք, թե ինչ է մեր Հայրը սպասում մեզանից և ուզում, որ մենք անենք:

«Ալիսը հրաշքների աշխարհում» պատմվածքում, Ալիսը չի իմանում, թե որ ուղով գնա, հետևաբար նա հարցնում է չեշիքյան կատվին. «Բարի եղեք, ասացեք, ո՞րն է այստեղից դուրս գալու ճանապարհը»:

Կատուն պատասխանում է. «Դա կախված է այն բանից, թե ուր ես ուզում գնալ»:

Ալիսը ասում է. «Ինձ համար միևնույն է»:

«Ուրեմն նշանակություն չունի, թե ուր կգնաս», ասում է կատուն:⁶

Մակայն, մենք գիտենք, որ այն ուղին որը տանում է «ծառին, որի պտուղը բաղձալի է՝ մարդուն երջանիկ դարձնելու համար»⁷, այն «ճանապարհը որը տանում է դեպի կյանք»՝ նեղ է: Այդ ուղով ճամփորդելու համար ջանքեր է պահանջում և «քչերն է, որ գտնում են այն»:⁸

Նեփին ուսուցանում է մեզ, որ «Քրիստոսի խոսքերը կասեն ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք»:⁹ Այնուհետև, նա ավելացնում է, որ «Մուրբ Հոգին . . . ձեզ ցույց կտա բոլոր բաները, որ դուք պետք է անեք»:¹⁰ Այսպիսով, աղբյուրները, որոնք մեզ հնարավորություն են տալիս սովորել մեր պարտականությունը՝ Քրիստոսի խոսքերն են, որոնք մենք ստանում ենք հին և ժամանակակից մարգարեներից

ու անձնական հայտնությունն է՝ Մուրք Հոգու միջոցով:

2. Որոշման կայացումը

Արդյոք մեր ստացած գիտելիքը ավետարանի Վերականգման մասին է, որոշակի պատվիրանի, կոչման հետ կապված ծառայության պարտականությունների, թե տաճարում կապած ուխտերի մասին, ընտրությունը մերն է՝ գործե՞լ այդ նոր գիտելիքի համաձայն, թե ոչ: Ամեն մարդ իրեն համար ազատ ընտրում է սուրբ ուխտի մեջ մտնել, այնպիսի, ինչպիսին է մկրտությունը կամ տաճարային արարողությունները: Քանի որ հնում երդումները եղել են մարդկանց կրոնական կյանքի սովորական մաս, հին օրենքը ասում էր՝ «Իմ անունով սուտ երդում մի՛ տվեք»:¹¹ Մակայն, ժամանակների զագաթնակետում, Փրկիչը ուսուցանեց պարտավորությունները կատարելու ավելի բարձր ուղի, երբ Նա ասաց. *այոն* լինի այդ, և *ոչը* լինի ոչ:¹² Մարդու խոսքը պետք է լինի բավարար՝ հաստատելու նրա ճշմարտացիությունը և պարտավորությունը ինչ-որ մեկի նկատմամբ, և նույնիսկ ավելին, երբ այդ ինչ-որ մեկը՝ մեր երկնային Հայր է: Պարտավորություն պատվելը դառնում է մեր խոսքի ճշմարտացիության և ազնվության արտահայտումը:

3. Գործել համապատասխանաբար

Մեր պարտավորությունը սովորելուց և այդ ուսումնառության և ըմբռնման հետ առնչված որոշումների կայացնելուց հետո, մենք պետք է գործենք համապատասխանաբար:

Իր Հոր հանդեպ պարտավորություն կատարելու հաստատուն վճռականության գորեղ օրինակ է Փրկչի փորձառությունը, երբ Նրա մոտ բուժելու համար բերեցին մի անդամալույծ մարդու: «Տեսնելով նրանց հավատը՝ Հիսուսը ասաց անդամալույծին. Քո մեղքերը քեզ ներված են»:¹³ Մենք գիտենք, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը էական է մեր մեղքերի ներման համար, բայց այդ անդամալույծի բուժվելու պահին, այդ մեծ իրադարձությունը դեռ տեղի չէր ունեցել: Փրկչի



տառապանքները Գեթսեմանիում ու խաչի վրա դեռևս տեղի չէին ունեցել: Մակայն, Հիսուսը ոչ միայն օրհնեց անդամալույծ մարդուն կանգնելու և քայլելու կարողությամբ, այլ նաև շնորհեց նրան մեղքերի ներում, այսպիսով պարզ ազդանշելով, որ Նա չի թերանա, որ Նա կկատարի պարտավորությունը Իր Հոր հանդեպ, և որ Գեթսեմանիում ու խաչի վրա Նա կկատարի Իր խոստումը:

Այն ուղին, որը մենք ընտրել ենք՝ նեղ է: Ճանապարհի ընթացքում կան դժվարություններ, որոնք կպահանջեն մեր հավատը առ Հիսուս Քրիստոս և լավագույն ջանքեր՝ շարունակել ուղին և հաստատուն առաջ գնալ: Մենք պետք է ապաշխարենք և լինենք հնազանդ ու համբերատար, նույնիսկ եթե մենք չենք հասկանում մեզ շրջապատող բոլոր հանգամանքները: Մենք պետք է ներենք ուրիշներին և ապրենք մեր սովորածի և կատարած ընտրությունների համապատասխան:

4. Պատրաստակամորեն ընդունել Հոր կամքը

Աշակերտությունը պահանջում է մեզանից ոչ միայն սովորել մեր պարտականությունը, կայացնել ճիշտ որոշումներ և գործել դրանց համաձայն, բայց նաև մեզ համար էական է զարգացնել պատրաստակամություն ու ունակություն Աստծո կամքը ընդունելու համար, նույնիսկ

եթե դա չի համապատասխանում մեր արդար ցանկություններին ու նախընտրություններին:

Ես տպավորված և հիացած եմ Տիրոջը մոտեցած բորոտի վերաբերմունքով՝ նա «ծնկի եկած աղաչում էր և ասում. Տե՛ր, եթե կամենաս, կարո՞ղ ես ինձ մաքրել»:¹⁴ Բորոտը ոչ մի բան չպահանջեց, թեև նրա ցանկությունները կարող էին արդար լինել, նա պարզապես պատրաստ էր ընդունել Տիրոջ կամքը:

Մի քանի տարի առաջ, իմ ընկերները՝ սիրելի, հավատարիմ մի զույգ, օրհնվեց երկար փափագած նորածին տղայով, ում համար նրանք աղոթում էին երկար ժամանակ: Նրանց տունը լի էր ուրախությամբ, մինչ մեր ընկերներն ու նրանց դուստրը՝ այդ ժամանակ միակ երեխան ընտանիքում, վայելում էին նորածին տղայի ընկերակցությունը: Մակայն մի օր անսպասելի բան պատահեց՝ ընդամենը 3-տարեկան փոքրիկ տղան հանկարծ ընկավ կոմայի մեջ: Հենց որ ես իմացա իրավիճակի մասին, զանգեցի ընկերոջս այդ դժվար պահին աջակցություն ցուցաբերելու համար: Բայց նրա պատասխանը դաս էր ինձ համար: Նա ասաց. «Եթե Հոր կամքը՝ վերցնելն է նրան Իր մոտ, ապա ես ընդունում եմ այն»: Իմ ընկերոջ խոսքերը չէին արտահայտում նվազագույն բողոք, ըմբոստություն, ոչ էլ դժգոհություն: Միանգամայն հակառակը՝

նրա խոսքերում ես զգում էի միայն երախտագիտություն Աստծո հանդեպ՝ այդ կարճ ժամանակաընթացքում փոքրիկ որդով ուրախանալու հնարավորության համար, ինչպես նաև լիակատար պատրաստակամություն ընդունելու Հոր կամքը իրենց հանդեպ: Մի քանի օր անց փոքրիկը վերցվեց իր սելեստիալ դոլակը:

Եկեք հաստատուն առաջ գնանք՝ սովորելով մեր պարտականությունը, կայացնելով ճիշտ որոշումներ, գործելով այդ որոշումների համաձայն, և ընդունելով մեր Հոր կամքը:

Որքան երախտապարտ ու երջանիկ եմ ես այն որոշման համար, որը հայրս ինձ թույլ տվեց կայացնել 47 տարի առաջ: Ժամանակի ընթացքում, ես հասկացա, որ նրա պայմանը ինձ համար՝ լինել պատասխանատու այդ որոշման հանդեպ, նշանակում էր լինել պատասխանատու Երկնային Հոր առջև և իմ անձնական ու իմ մերձավորների փրկությանը հետամուտ լինել, այսպիսով ավելի շատ դառնալով այնպիսին, ինչպիսին իմ Հայրն է ակնկալում ու ցանկանում, որ ես դառնամ: Այս յուրահատուկ օրը, ես վկայում եմ, որ Հայր Աստվածը և Նրա Սիրելի Որդին ապրում են: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄԵՐ

1. Ուշադրություն դարձրեք, «թեև հաղորդությունը Եկեղեցու անդամների համար է, եպիսկոպոսությունը չպետք է հայտարարի որ այն մատուցվելու է միայն անդամներին, և ոչինչ չպետք է արվի, որպեսզի ոչ անդամները չճաշակեն այն» (Չեռնարկ 2. Սպասավորել Եկեղեցում [2010], 20.4.1)
2. Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Ֆլորինգ Սմիթ (2013), 294.
3. Տես Վարդապետություն և Ուխտեր 132.21–23:
4. Thomas S. Monson, “To the Rescue,” *Liahona*, July 2001, 58:
5. Վարդապետություն և Ուխտեր 107.99:
6. Լուիս Քերոլ, «Ալիսը հյուսնների աշխարհում» (1920), 89.
7. 1 Նեփի 8.10.
8. Մատթեոս 7.14.
9. 2 Նեփի 32.3.
10. 2 Նեփի 32.5.
11. Ղևտական 19.12.
12. Տես Մատթեոս 5.37.
13. Մարկոս 2.5.
14. Մարկոս 1.40.



Երևց Ջոզեֆ Վ. Սիստաի
Յոթանասունական

Աճեցեք, բազմացեք և տիրեցեք երկիրը

Երկնային Հայրը պատվիրել է օրհնել է մեզ պտղաբեր լինել, բազմանալ և տիրել երկրին, որ դառնանք ինչպես նա է:

Հնորհակալություն Թաբերնաքլի երգչախմբին աշխարհի Փրկչի այդ քաղցր փառաբանության համար:

Այն օրը, երբ Հայր Աստվածը պատվիրեց իր Միածին Որդուն արարել մարդուն իր պատկերով և նմանությամբ, նա օրհնեց իր գավակներին ասելով. «Աճեցեք և բազմացեք, լցրեք երկիրը և տիրեք նրան և իշխեք. . . երկրի վրա շարժվող ամեն կենդանու վրա»:¹ Այսպիսով՝ մեր մահկանացու ճանապարհը սկսվեց երկուստեք՝ աստվածային պատվիրանով և օրհնությամբ: Միող հայրը մեզ տվեց պատվիրան և օրհնություն՝ պտղաբեր լինել, բազմանալ և գերիշխանություն ունենալ, որ կարողանանք կատարելագործվել և դառնալ ճիշտ ինչպես նա է:

Եղբայրներ և քույրեր, այսօր ես դիմում եմ ձեր հավատքին և աղոթքներին կիսվելով որոշ մտքերով ձեզ հետ մեր աստվածային բնության երեք էական հատկանիշների վերաբերյալ: Ես հուսով եմ, որ մենք բոլորս ավելի լիարժեք կընդունենք և կիրագործենք մեր սուրբ պատասխանատվությունը՝ մեր Հոր պատվիրանը՝ զարգացնել

մեր աստվածային բնությունը այնպես, որ ավելի հաջող կարողանանք ղեկավարել մեր ճանապարհը և հասնենք մեր աստվածային ճակատագրին:

Առաջին՝ Աստված պատվիրեց մեզ պտղաբեր լինել

Պտղաբեր լինելու կարևոր մասը, որը երբեմն անտեսվում է, Աստծո թագավորությունը երկրի վրա հաստատելն է: Փրկիչը ուսուցանեց.

«Ես որթն եմ՝ դուք ճյուղերը: Նա որ ինձանում մնում է, և ես նրանում, նա շատ պտուղ է բերում որովհետև առանց ինձ չեք կարող ոչինչ անել: . . .

«Եթե կենաց ինձանում՝ և իմ խոսքերը ձեզանում կենան, ինչ-որ էլ կամենաք, կ'խնդրեք և կ'լինի ձեզ»:

«Սորանով փառատրուեցաւ իմ Հայրը, որ շատ պտուղ բերեք. եւ իմ աշակերտները լինիք»:²

Մենք պտուղ ենք բերում, երբ մնում ենք Քրիստոսի հետ, և երբ «մեզ» վրա ենք վերցնում [նրա] անունը [և] . . . ծառայում Նրան մինչև վերջ»³՝ օգնելով ուրիշներին գալ դեպի Նա:

Այսօր կենդանի մարգարեները և առաքյալները շարունակում են

իրենց ձայնը բարձրացնել մեզանից յուրաքանչյուրին հրավիրելու ներգրավվել փրկության աշխատանքում համաձայն մեր ունակությունների ու հնարավորությունների:

Նրանց արձագանքելու՝ շատ պտուղ բերելու սկիզբը «սրտով խոնարհ ու հեզ լինելն է»:⁴ Մենք, այնուհետև, ավելի լիարժեք կարող ենք գալ դեպի Քրիստոսը, երբ ենթարկվենք Սուրբ Հոգու հորդորներին ու պահենք բոլոր ուխտերը, որ կապել ենք:⁵ Մենք կարող ենք ջանալ և ստանալ գթության պարգևը և ուժ ունենալ հրավիրել մեր ընտանիքներին, մեր նախահայրերին և մեր անդամ ու ոչ անդամ հարևաններին և ընկերներին՝ ընդունել Հիսուս Քրիստոսի ավետարանը:

Գթության ոգով աշխատելը պարտականություն չէ, այլ ցնծություն: Մարտահրավերները դառնում են առիթներ հավատքի ամրապնդման համար: Մենք դառնում ենք «Աստծո [բարության] վկաները բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ [մենք] կարող ենք լինել, նույնիսկ մինչև մահ»:⁶

Մենք բոլորս կարող ենք և պետք է ամբողջովին ներգրավվենք փրկության աշխատանքում: Փրկիչը մեզ տվել է հետևյալ պատասխանատվությունը՝ խոստանալով. «Ոչ թե դուք ինձ ընտրեցիք, այլ ես ընտրեցի ձեզ, եւ ձեզ դրի, որ դուք գնաք եւ պտուղ բերեք. եւ ձեր պտուղը մնայ. որպեսզի ինչ որ իմ Հօրիցը խնդրեք իմ անունովը, տայ ձեզ»:⁷

Երկրորդ՝ Աստված պատվիրեց մեզ բազմաճյուղ

Մեր ֆիզիկական մարմինն Աստծո կողմից օրհնություն է: Մենք այն ստացել ենք Երկնային Հոր աշխատանքը կատարելու նպատակով. «Քանզի ահա, սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:⁸ Մարմինը ճանապարհ է, որի միջոցով մենք կարող ենք ձեռք բերել Աստծոն նմանվելու ունակություն:

Մարմինը հնարավորություն է տալիս Երկնային Հոր խոնարհ



հոգեղեն զավակներին փորձառություն ձեռք բերել երկրի վրա:⁹ Երեխաներ ծնելը Աստծո մյուս հոգեղեն զավակներին տալիս է հնարավորություն նույնպես վայելել կյանքը երկրի վրա: Բոլորը, ովքեր ծնվում են մահկանացու կյանքում՝ հնարավորություն ունեն առաջադիմել ու վեհացում ձեռք բերել, եթե նրանք հնազանդվում են Աստվածային պատվիրաններին:

Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը այն հաստատությունն է, որը Աստված կարգել է որպեսզի իրագործվի բազմաճյուղ պատվիրանը: Միևնույն սեռի միջև հարաբերությամբ բազմացում չի տեղի ունենում:

Օրինական և իրավական ամուսնությունը, որը կնիք է ստանում

տաճարում և հարգանքով պահում է կնքման ուխտը, ծնողներին և նրանց երեխաներին տալիս է սիրո և պտղաբեր կյանքի նախապատրաստության լավագույն փորձառության հնարավորություն: Այն առաջարկում է նրանց այն կատարյալ միջավայր, որտեղ նրանք կարող են ապրել Աստծո հետ կապած իրենց ուխտերով:

Շնորհիվ իր սիրո մեր հանդեպ, Երկնային Հայրը նախատեսել է, որ իր բոլոր հավատարիմ զավակները, ովքեր չեն կարողանում կամ ի վիճակի չեն վայելել ամուսնական ուխտը և երեխաների օրհնությունները կամ այդ օրհնությունների լրիվությունը ոչ իրենց մեղքով, Տիրոջ նշանակած ժամանակին, կվայելեն այդ օրհնությունները:¹⁰



Ապրող մարգարենները և առաքյալները խորհուրդ են տալիս բոլոր նրանց, ովքեր հնարավորություն ունեն մտնել հավերժական ամուսնության ուխտի մեջ, իմաստությամբ և հավատքով վարվել: Մենք չպետք է հետաձգենք այդ ամուսնության ժամանակը աշխարհիկին հետամուտ լինելու պատճառով կամ կառչենք համապատասխան գույգ գտնելու մեր ակնկալիքներից այն աստիճան, որ որակագրկվենք յուրաքանչյուր հնարավոր թեկնածուից:

Հավերժական ամուսնության ուխտով բոլոր կնքվածներին, ովքեր պտղաբեր են, իրենց ուխտերը պահելով, տրված խոստում կա, որ հակառակորդը երբեք գործություն չի ունենա քայքայել նրանց հավերժական միության հիմքերը:

Երրորդ՝ Աստված պատվիրեց մեզ տիրել նրկրին

Երկիրը տիրելն ու յուրաքանչյուր կենդանի արարածի վրա իշխանություն ունենալը՝ վերահսկելն է, որ ամեն բան իրագործի Աստծո կամքը¹¹ մինչ ծառայում է Իր զավակների նպատակներին: Տիրելն իր մեջ ներառում է մեր սեփական մարմինը տիրապետելը:¹² Այն չի ենթադրում լինել այդ բաների անօգնական զոհը և կամ օգտագործել դրանք Աստծո կամքին հակառակ:¹³

Երկրայինին տիրելու կարողությունը զարգացնելը սկսվում է խոնարհությամբ, մարդկային թուլությունն ու այն ուժը գիտակցելուց,

որ հասու է մեզ շնորհիվ Քրիստոսի և նրա քավության: Քանի որ Քրիստոսն ասել է. «Եթե դուք հավատք ունենաք առ ինձ, ապա գործություն կունենաք անելու ինչ-որ նպատակահարմար է ինձ»:¹⁴ Այդ ուժը մեզ հասանելի է դառնում, երբ մենք ընտրում ենք նրա պատվիրաններին հնազանդվելը: Մենք ավելացնում ենք մեր կարողությունը՝ որոնելով Հոգու պարզկները և զարգացնելով մեր տաղանդները:

Ես ծնվել և մեծացել եմ համեստ պայմաններում, որ բնորոշ է Աֆրիկայի շատ ընտանիքների: Այդ պայմաններից վեր բարձրանալու կարողությունը ես գտա լավ կրթության նկրտումների ու ձեռքբերումների միջոցով, որը հնարավոր դարձավ իմ ծնողների հոգատար օգնությամբ: Իմ կանխատեսությունը զարգացնելը թե ինչ կարող էի ես դառնալ, էական էր իմ առաջընթացի համար: Ավելի ուշ, որպես երիտասարդ գույգ, կինս՝ Գլադիսը և ես գտանք վերականգնված ավետարանը, որը շարունակում է հոգևոր օրհնություններ տալ մեր կյանքին: Յուրաքանչյուր ընտանիքի նման մենք ունենում ենք մեր փորձությունները և մարտահրավերները: Բայց երբ մենք դիմում ենք Տիրոջ օգնությանը, ստանում ենք խաղաղություն և հանգստություն բերող պատասխաններ և չենք ճնշվում այդ բաներից:

Մարտահրավերները, որ ծառայել են այսօր մարդկային

հասարակություն առաջ, որոնց թվում են՝ բարոյագրությունը, պոռնոգրաֆիան, զինված հակամարտությունները, շրջակա միջավայրի աղտոտվածությունը, թմրադեղերի կամ ալկոհոլի չարաշահումը և աղքատությունը, լայն տարածում են գտնում, քանի որ աշխարհում շատերն են իրենց գրկել ընտրության հնարավորությունից՝ «ենթարկվելով դևի ու մարմնի կամքին»¹⁵, ավելի քան Աստծո կամքին: «Նրանք Տիրոջը չեն փնտրում նրա արդարությունը հաստատելու, այլ ամեն մարդ քայլում է իր իսկ ճանապարհով, և իր իսկ աստծո պատկերի հետևից, որի պատկերն աշխարհի նմանությամբ է»:¹⁶

Մակայն Աստված հրավիրում է բոլոր Իր զավակներին, ստանալ իր օգնությունը և հաղթահարել ու դիմակայել կյանքի մարտահրավերներին այս խոսքերով.

«Ես եմ Աստուածը. Ես արարեցի աշխարհը և մարդկանց, նախքան նրանց մարմնում լինելը:

. . . Եթե դառնաս դեպի ինձ և ականջ դնես իմ ձայնին և հավատաս և ապաշխարես քո բոլոր օրինազանցություններից և մկրտվես, այսինքն՝ ջրով, իմ Միածին Որդու անունով, որը լի է շնորհով ու ճշմարտությամբ, որը Հիսուս Քրիստոսն է, միակ անունը, որը պիտի տրվի երկնքի տակ, որով փրկություն կգա մարդկանց զավակներին, . . . դու կստանաս Սուրբ Հոգու պարզկը՝ խնդրելով բոլոր բաները նրա անունով, և ինչ էլ, որ խնդրես, այն կտրվի քեզ»:¹⁷

Վերջին Օրերի հավատարիմ սրբերը, ովքեր հասկանում են իրենց աստվածային ներուժը և սրտանց ապավինում են այն ուժին, որը հասանելի է Տեր Հիսուս Քրիստոսի քավության միջոցով, ուժ են ստանում իրենց բնական թուլության մեջ և «կարող են անել բոլոր բաները»:¹⁸ Նրանց գործություն է տրվում հաղթահարել չարի հրապուրանքները, ով շատերին է վար բերել հակառակորդի գերության տակ: Պողոսն ուսուցանել է, որ.

«Աստված հավատարիմ է, որ չի թողնի ձեզ ձեր կարողությունիցը վեր փորձուելու, այլ փորձութան

հետ ելքն էլ կ'պատրաստե, որ կարողանաք համբերել»:¹⁹


«Որովհետև ինքը, որ չարչարունեցավ եւ փորձուեցաւ, կարող է օգնութիւն տալ փորձառուներին»:²⁰

Երկնային Հայրը մեզ պատվիրել է օրհնել է լինել պտղաբեր, բազմանալ, և տիրել աշխարհը իրեն նմանվելու համար: Նա օգնություն է ցուցաբերել, որպէսզի մեզանից յուրաքանչյուրը, մեր անհատական ընտրությամբ, աճի Իր նման դառնալու համար: Ես աղոթում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը իր կյանքը ապրի այնպէս, որ մենք առաջնորդվենք մեր աստվածային բնության տեսիլքով, հայցենք մեր բոլոր աստվածային արտոնությունները, և իրականություն դարձնենք մեր աստվածային ճակատագիրը:

Ես վկայում եմ, Հայր Աստծո և Նրա Միբերի Որդի՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի կենդանության, Նրա փառահեղ երջանկության ծրագրի իրական լինելու և այն բանալիների մասին, որ նա պարզել է այսօր երկրի վրա ապրող կենդանի մարգարեին՝ Թոմաս Ա. Մոնտնին, ում մենք սիրում և ենթարկվում ենք: Ես աղոթում եմ, որ կարողանանք ունենալ ուժ վայելելու Աստծո օրհնությունների լրիվությունը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մովսես 2.28; նաև տես Մովսես 2.26–27; Ծննդոց 1.26–28:
2. Հովաննես 15.5, 7–8:
3. Վարդապետություն եվ Ուխտեր 20.37:
4. Մորոնի 7.44:
5. Տես Մոսիա 3.19:
6. Մոսիա 18.9:
7. Հովհաննես 15.16:
8. Մովսես 1.39:
9. Տես Մովսես 5.10–11:
10. Տես *Handbook 2: Administering the Church* (2010), 1.3.3; Ezra Taft Benson, "To the Single Adult Sisters of the Church," *Ensign*, Nov. 1988, 96–97:
11. Տես Հակոբ 2.18–19:
12. Տես Ա Կորնթացիս 6.19–20; Գաղատացիս 5.16–25; Ա Թեսաղոնիկեցիս 4.3–7; Բ Տիմոթէոս 2.22:
13. Տես Հակոբ 2.12–16, 20–21:
14. Մորոնի 7.33:
15. 2 Նեփի 10.24:
16. Վարդապետություն եվ Ուխտեր 1.16:
17. Մովսես 6.51–52:
18. Ալմա 26.12:
19. Ա Կորնթացիս 10.13:
20. Եբրանեցիս 2.18:



Երնց Ռասսել Մ. Նելսոն
Տասներկու Առաքյալների Քվորում

Կիրակին բերկրանք է

Ինչպե՞ս կարող եք համոզվել, որ Հանգստության օրվա ձեր վարքն ուրախություն և ցնծություն կբերի:

Սիրելի քույրեր և եղբայրներ, համաժողովի այս երկու օրերը հիանալի էին: Ոգեշնչող երաժշտության և արտահայտիչ աղոթքների միջոցով մենք վեհացում ապրեցինք: Լույսի և ճշմարտության ուղերձներից մեր հոգիները շինություն ստացան: Չատիկի այս Կիրակի օրը, մենք միասնաբար և անկեղծորեն կրկին անգամ շնորհակալություն ենք հայտնում Աստծուն՝ Մարգարեի համար:

Յուրաքանչյուրիս համար հնչող հարցը հետևյալն է. Այս համաժողովի ընթացքում իմ լսածից և զգացածից, ինչպե՞ս կփոխվեմ ես: Ինչպիսին էլ որ ձեր պատասխանը հնչի, ես հրավիրում եմ ձեզ քննել ձեր զգացմունքները և ձեր վարքագիծը Հանգստության օրվա վերաբերյալ:

Ես հիացած եմ Եսայիայի խոսքերից, ով Շաբաթը բերկրանք անվանեց:¹ Մակայն ես հարց եմ տալիս, թե Հանգստության օրը իսկապե՞ս բերկրանք է ինձ և ձեզ համար:

Առաջին անգամ Հանգստության օրվա մեջ բերկրանք գտա շատ տարիներ առաջ, երբ որպես զբաղված վիրաբույժ Հանգստության օրը դարձավ իմ անձնական առողջությամբ զբաղվելու օր: Ամեն շաբաթվա վերջում իմ ձեռքերը ցավում էին օճառով,

ջրով և կոշտ խոզանակով անընդհատ մաքրելուց: Դժվար աշխատանքից հետո ես նույնպես կարիք ունեի հանգստյան: Կիրակին տալիս էր այդքան սպասված հանգիստը:

Ի՞նչ նկատի ունեի Փրկիչը, երբ Նա ասաց, որ «Շաբաթը մարդի համար եղաւ, եւ ոչ թէ մարդը շաբաթի համար»:² Ես հավատում եմ, որ Նա ցանկանում էր, որ մենք հասկանանք, որ Շաբաթը Նրա պարզևն էր մեզ համար, որը տրամադրում էր հանգիստ ամենօրյա կյանքի դժվարություններից և հնարավորություն՝ հոգևոր և ֆիզիկական նորոգման: Աստված մեզ այդ հատուկ օրը տվել է ոչ թե զվարճանքի կամ ամենօրյա աշխատանքի համար, այլ աշխատանքից հանգստանալու՝ ֆիզիկականի և հոգևորի միջոցով:

Եբրայերենից թարգմանած *Շաբաթ* բառը նշանակում է հանգիստ: Շաբաթի նպատակը ետ է գնում մինչև աշխարհի Մտեղծումը, երբ վեց օր աշխատելուց հետո, Տերը հանգիստ առավ ստեղծման աշխատանքից:³ Երբ ավելի ուշ Նա Տալը պատվիրանները տվեց Մովսեսին, Աստված պատվիրեց, որ մենք «Հիշենք հանգստության օրը՝ սուրբ պահելով այն»:⁴ Ավելի ուշ Շաբաթը պահվել է, որպես Եգիպտոսի գերությունից Բարայելից

ազատագրվելու հիշատակի օր:⁵ Հավանաբար, առավել կարևորն այն է, որ Հանգստության օրը տրվել է որպես հավիտենական ուխտ, մշտական հիշեցում, որ Տերը կսրբագործի Իր ժողովրդին:⁶

Ի լրումն, այժմ Հանգստության օրը մենք հաղորդություն ենք ընդունում՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի Քավության:⁷ Բացի այդ, մենք ուխտ ենք կապում, որ մենք հոժար ենք մեզ վրա վերցնել Նրա սուրբ անունը:⁸

Տերն իրեն ճանաչում է, որպես Շաբաթի Տեր:⁹ Դա Նրա օրն է: Նա բազմիցս անգամ խնդրել է մեզ *պահել* Շաբաթը¹⁰ կամ *սուրբ պահում* Հանգստության օրը:¹¹ Մենք ուխտել ենք այդպես վարվել:

Ինչպե՞ս ենք մենք *սուրբ պահում* Հանգստության օրը: Իմ ավելի երիտասարդ տարիքին ես ուսումնասիրել եմ այն մարդկանց աշխատությունները, ովքեր ցուցակ են կազմել այն բաների համար, որոնք պետք է անել և այն բաների համար, որոնք *չպետք է* անել Հանգստության օրը: Ավելի ուշ ես սուրբ գրություններից իմացա, որ իմ վարքն ու վերաբերմունքը Հանգստության օրվա հանդեպ կազմավորում են մի *նշան* իմ և Երկնային Հոր միջև:¹² Դա իմանալով, ես այլևս կարիք չունեի այդ ցուցակի: Երբ պետք է որոշում կայացնեի, թե արդյոք միջոցառումը համապատասխանում էր Հանգստության օրվան, թե ոչ, ես պարզապես ինքս ինձ հարց էի տալիս. «Ի՞նչ *նշան* եմ ցանկանում փոխանցել Աստծուն»: Այդ հարցը Հանգստության օրվա վերաբերյալ իմ որոշումները պարզից էլ պարզ էր դարձնում:

Չնայած Հանգստության օրվա վերաբերյալ վարդապետությունը հնագույն ծագում ունի, այս վերջին օրերում որպես նոր ուխտի մի մաս նորոգվել է խոստումով: Ականջ դրեք այդ աստվածային հրամանի զորությանը.

«Եվ որ դու կարողանաս էլ ավելի անբիծ պահել թեզ աշխարհից, դու պետք է գնաս աղոթքի տուն և քո հաղորդությունները մատուցես իմ սուրբ օրը.

Քանզի, ճշմարիտ, դա է թեզ նշանակված օրը, որ քո

աշխատանքներից հանգստանաս և քո տուրքը մատուցես Բարձրյալին. . . .

Եվ այդ օրը . . . թող քո ուտելիքը պատրաստվի սրտի պարզությամբ, որ քո ծոմապահությունը լինի կատարյալ, . . . որ քո ուրախությունը լինի լիակատար: . . .

Եվ որքան որ դուք անեք այս բաները գոհաբանությամբ, ուրախ սրտերով ու դեմքերով, . . . Երկրի լիությունը ձերը կլինի»:¹³

Պատկերացրեք այդ հայտարարության հորիզոնը: Երկրի լիությունն է խոստացված նրանց, ովքեր Հանգստության օրը սուրբ են պահում:¹⁴ Չարմանալի չէ, որ Եսայիան այդ օրը բերկրանք է անվանում:

Ինչպե՞ս կարող եք համոզվել, որ Հանգստության օրվա ձեր վարքն ուրախություն և ցնծություն կբերի: Եկեղեցի գնալուց, հաղորդություն ճաշակելուց և ձեր կոչման մեջ ջանասեր լինելուց բացի, ի՞նչ այլ միջոցառումներ կօգնեն ձեզ, որպեսզի Հանգստության օրը բերկրանք լինի ձեր համար: Ի՞նչ նշան դուք կփոխանցեք Տիրոջը, որպեսզի ցույց տաք ձեր սերը Նրա հանդեպ:

Հանգստության օրը լավ հնարավորություն է ընձեռում ամրապնդելու ընտանեկան կապերը: Ի վերջո, Աստված ցանկանում է, որ Նրա զավակներից յուրաքանչյուրը՝ որպես օժտված Սուրբ, ընտանիքներով կնքված տաճարում, մեր նախնիների

և մեր սերունդների հետ, վերադառնա Նրա մոտ:¹⁵

Մենք Հանգստության օրը բերկրանք ենք դարձնում, երբ մեր զավակներին ուսուցանում ենք ավետարանը: Որպես ծնողներ մեր պատասխանատվությունը լիովին պարզ է: Տերն ասել է. «Եվ բացի այդ, որքան որ ծնողները երեխաներ ունեն Սիոնում . . . որոնց *չեն* ուսուցանում, որպեսզի մինչև ութ տարեկանը նրանք հասկանան վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևի, մեղքը լինի ծնողների գլխին»:¹⁶

Տարիներ առաջ Առաջին Նախագահությունը մատնանշել է ընտանիքով ժամանակ անցկացնելու առանձնահատկությունը: Նրանք գրել են.

«Մենք կոչ ենք անում ծնողներին իրենց լավագույն ջանքերը նվիրել իրենց երեխաներին ավետարանի սկզբունքներն ուսուցանելու և ըստ այդ սկզբունքների դաստիարակելու, ինչը նրանց մոտ կպահի Եկեղեցուն: Տունը արդարակյաց կյանքի հիմքն է և ոչ մի այլ միջոց չի կարող փոխարինել կամ կատարել նրա հիմնական գործառնությունը՝ այդ աստվածատուր պատասխանատվությունն իրականացնելու գործում:

Մենք խորհուրդ ենք տալիս ծնողներին և երեխաներին





մեծագույն առաջնահերթություն տալ ընտանեկան աղոթքին, ընտանեկան երեկոներին, ավետարանի ուսումնասիրությանը և հրահանգներին և ընտանեկան առողջ միջոցառումներին: Որքան էլ արժանի և պատշաճ լինեն այլ պահանջներն ու միջոցառումները, չպետք է թույլ տալ, որ դրանք փոխարինեն աստվածայնորեն նշանակված պարտականություններին, որ միայն ծնողները և ընտանիքները կարող են հավուր պատշաճ կատարել:»¹⁷

Երբ խորհում եմ այդ խորհրդի շուրջ, ես գրեթե ցանկանում եմ, որ ես կրկին անգամ լինեի երիտասարդ հայր: Այժմ ծնողներն այնպիսի հիանալի միջոցներ ունեն Հանգստության օրը, ինչպես նաև մյուս օրերը ընտանեկան ժամանցն ավելի նշանակալից դարձնելու համար: Նրանք ունեն՝ LDS.org, Mormon.org կայքերը, աստվածաշնչյան ֆիլմերի տեսաշարը, մորմոնական ալիքը, առցանց մեդիա գրադարանը, *Friend, New Era, Ensign*, և *Liahonlu* ամսագրերն ու շատ ավելին: Այդ միջոցները շատ օգտակար են ծնողների համար, որպեսզի նրանք իրականացնեն իրենց երեխաներին ուսուցանելու սրբազան պարտականությունը: Ոչ մի այլ գործ այնքան կարևոր

չէ, որքան արդարամիտ, հոգատար ծնող լինելը:

Երբ դուք ուսուցանեք ավետարանը, դուք կսովորեք ավելին: Դա Տիրոջ եղանակն է, որով Նա օգնում է ձեզ հասկանալ Իր ավետարանը: Նա ասել է.

«Եվ ես ձեզ տալիս եմ պատվիրան, որ դուք միմյանց պետք է ուսուցանեք արքայության վարդապետությունը:

Ուսուցանեք ջանասիրաբար . . . , որպեսզի դուք ավելի կատարյալ ձևով հրահանգվեք ավետարանի տեսության, . . . վարդապետության և օրենքի մեջ, բոլոր բաներում, որոնք վերաբերում են Աստծո արքայությանը»:¹⁸

Ավետարանի այդպիսի ուսումնասիրությունը Հանգստության օրը բերկրանք է դարձնում: Այդ խոստումն ուժի մեջ է, անկախ ընտանիքի չափսից, կազմից կամ վայրից:

Բացի ընտանիքի հետ ժամանակ անցկացնելուց, դուք Հանգստյան օրն իրական բերկրանք կարող եք ստանալ ընտանեկան պատմության աշխատանք կատարելուց: Փնտրելով և գտնելով այն ընտանիքի անդամներին, ովքեր նախորդել են ձեզ այս երկրի վրա՝ նրանց, ովքեր հնարավորություն չեն ունեցել ընդունելու

ավետարանն այստեղ գտնվելու ժամանակ, կարող է ձեզ մեծ ուրախություն պատճառել:

Ես դա իմ աչքերով եմ տեսել: Մի քանի տարի առաջ իմ կինը՝ Վենդին, սովորեց, թե ինչպես կատարել ընտանեկան պատմության աշխատանքը: Սկզբում նրա առաջընթացը դանդաղ էր, սակայն քիչ-քիչ նա սովորեց, թե որքան հեշտ էր այդ սրբազան աշխատանքը կատարելը: Եվ ես երբեք նրանք այդքան երջանիկ չեի տեսել: Դուք նույնպես կարիք չունեք գնալու այլ երկրներ կամ նույնիսկ ընտանեկան պատմության կենտրոն: Տանը՝ համակարգչի կամ շարժական սարքերի օգնությամբ, դուք կարող եք գտնել այն հոգիներին, ովքեր կարոտ են իրենց արարողություններին: Հանգստության օրը բերկրանք դարձրեք՝ գտնելով ձեր նախնիներին և ազատելով նրանց հոգևոր բանտից:¹⁹

Հանգստության օրը բերկրանք դարձրեք՝ ծառայելով ուրիշներին, հատկապես նրանց, ովքեր վատառողջ են, միայնակ են կամ կարիքի մեջ են:²⁰ Բարձրացնելով նրանց հոգիները՝ ձերը, նույնպես կբարձանա:

Երբ Եսիայիան Շաբաթը բերկրանք անվանեց, նա նաև



ուսուցանեց, թե ինչպես դարձնել այն բերկրալի: Նա ասել է.

«Եթէ ետ դարձնես . . . բաղձանքդ չկատարես իմ սուրբ օրը, եւ շաբաթը կոչես [բերկրանք], . . . եւ [Տիրոջը] պատուես՝ քո ճանապարհները չկատարելով, եւ քո բաղձանքը չլրացնելով եւ դատարկաբանութիւն չանելով.

Այն ժամանակ [բերկրանք կապրես] *Տէրուր:*»²¹

Հանգստության օրը «քո բաղձանքը» չհետապնդելը պահանջում է ինքնակառավարում: Դուք պետք է հրաժարվեք մի բանից, որը գուցե սիրում եք: Եթե դուք ընտրեք բերկրանք ապրել *Տիրոջով*, դուք ինքնեդ ձեզ թույլ չեք տա վերաբերել դրան, ինչպես մեկ այլ օրվա: Առօրյա և ժամանցային միջոցառումները կարող եք կատարել մեկ ուրիշ ժամանակ:

Մտածեք այս մասին. Տասանորդ վճարելով, մենք մեր եկամտուղի մեկ տասներորդ մասը վերադարձնում ենք Տիրոջը: Հանգստության օրը սուրբ պահելով, մենք յոթ օրից մեկը պահում ենք, որպես Նրա օր: Այնպես որ, դա մեր արտոնությունն է նվիրաբերել և՛ գումար և՛ ժամանակ Նրան, ով ամեն օր նվիրում է մեզ կյանք:²²

Աստծո հանդեպ հավատքը ծնում է սեր Հանգստության օրվա հանդեպ: Հանգստության օրվա հանդեպ հավատքը ծնում է սեր Աստծո հանդեպ: Սուրբ Հանգստության օրն իսկապես բերկրանք է:

Այժմ, երբ համաժողովն իր ավարտին է մոտենում, մենք գիտենք, որ որտեղ էլ ապրենք, մենք պետք է օրինակ ծառայենք մեր ընտանիքների, հարևանների և ընկերների համար:²³ Ճշմարիտ հավատացյալները Հանգստության օրը սուրբ են պահում:

Ես կեզրափակեմ Մորոնիի հրաժեշտի աղոթքով, երբ նա ավարտեց Մորմոնի Գիրքը: Նա գրեց. «Այո, եկեք Քրիստոսի մոտ և կատարելագործվեք նրանում, և հրաժարվեք ամեն անաստվածությունից. և եթե դուք հրաժարվեք ամեն անաստվածությունից և սիրեք Աստծուն, ձեր ողջ զորությամբ, մտքով և ուժով, սպա. . . դուք կսրբագործվեք Քրիստոսում»:²⁴

Մերը սրտում՝ ես այս ամենը թողնում եմ ձեզ, որպես իմ աղոթք, վկայություն և օրհնություն: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄԵՐ

1. Եսայիա 58.13:
2. Մարկոս 2.27:
3. Տես Ծննդոց 2.2–3:
4. Ելից 20.8; տես նաև Բ Օրինաց 5.12; Մոսիա 13.16; 18.23:
5. Տես Բ Օրինաց 5.14–15: Այն մարդիկ, ովքեր աշխատում են շաբաթական յոթ օր, ըստ Էության, գերության մեջ են՝ աշխատանքի կամ միզուցե փողի ձեռքը, բայց, այնուամենայնիվ, նրանք գերության մեջ են: Միլիոնատերը, ով շաբաթական յոթ օր աշխատում է, հարուստ գերի է:
6. Տես Ելից 31.13, 16:

7. Տես Վարդապետություն և Ուխտեր 59.12: Նախքան Իր խաչելությունը, Տերը հաղորդության արարողությունը ներկայացրեց Իր աշակերտներին Ջատիկի խնջույքի ժամանակ (տես Մատթեոս 26.26–28; Մարկոս 14.22–24): Հարություն առած Տերն Իր Քավության հիշատակին հաղորդություն մատուցեց հնագույն Ամբրիկայի ժողովրդին (տես 3 Նեփի 18.5–12; Մորոնի 4.1–3; 5.2) և վերականգնեց այն մեր ժամանակներում (տես Վարդապետություն և Ուխտեր 20.77, 79): Հաղորդություն ընդունելը նորոգում է Նրա պատվիրանները պահելու մեր ուխտը, որը մենք կապել ենք մկրտության ժամանակ (տես Վարդապետություն և Ուխտեր 20.68):
8. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.37, 77:
9. Տես Մատթեոս 12.8; Մարկոս 2.28; Դուկաս 6.5:
10. Տես Ելից 31.13; Դևտագոց 19.3, 30; 26.2; Վարդապետություն և Ուխտեր 68.29:
11. Տես Եզեկիել 20.20; 44.24:
12. Տես Ելից 31.13; Եզեկիել 20.12, 20:
13. Վարդապետություն և Ուխտեր 59.9–10, 13, 15–16:
14. Տես Դևտագոց 26.2–4:
15. Տես Վարդապետություն և Ուխտեր 128.15–18:
16. Վարդապետություն և Ուխտեր 68.25; շեշտադրումն ավելացված է; տես նաև Մովսես 6.58–62:
17. First Presidency letter, Feb. 11, 1999. Մեթրեբլյաձ է *Չեմուսյի Բ. Սպասասիորեյ Եկեղեցում* (2010), 1.4.1.
18. Վարդապետություն և Ուխտեր 88.77–78:
19. Տես Եսայիա 61.1; Վարդապետություն և Ուխտեր 128.22; 138.57–59:
20. Տես Մատթեոս 25.35–40:
21. Եսայիա 58.13–14; շեշտադրումն ավելացված է:
22. Տես Մոսիա 2.21:
23. Տես 1 Տիմոթեոս 4.12:
24. Մորոնի 10.32–33:

Համաժողովի պատմությունների ցուցիչ

Ստորև տրվում է գերագույն համաժողովի ելույթներից ընտրված փորձառությունների մի ցանկ, որը կարելի է օգտագործել անձնական ուսումնասիրության, ընտանեկան երեկոների և ուսուցանման այլ առիթների ժամանակ: Համարը ցույց է տալիս ելույթի առաջին էջը:

Խոսնակ	Պատմություն
Նիլ Լ. Սևերսեն	(119) Սյր ժամանակ երեք լինելով, Թոմաս Ս. Մոնսոնն ասում է Նիլ Լ Սևերսենին, որ Տերը բացում է դրներ և գործում հրաշքեր: Թայլանդում ամուսինների հավատքը ամուր է մնում նրանից հետո, երբ ամուսինը կաթվածահար է լինում: Փղոսկրի արված ժողովից հետո Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու երկու զույգ այնտեղ կառուցում են Աստծո արքայությունը:
Վիլֆորդ Վ. Սևերսեն	(54) Բնիկ ամերիկացի տղամարդը ասում է բժշկին, որ կարող է սովորեցնել նրան պարել, բայց նա պետք է լսի երաժշտությունը:
Դեյվիդ Ա. Բեդևար	(46) Փոքր հասակում Դեյվիդ Ա Բեդևարը վախեցել է, որ բանտ կընկնի խանութի պատուհանը կտրելու պատճառով:
Լինդա Բ. Բրոթ	(29) Հայրն իր երեխաներին ասում է, որ նրանք ապահով կլինեն իրենց բակի շուրջ լարերով պատրաստած ցանկապատի ներսում: Տերն առաջնորդում է մի քրոջ, օգնելով նրան անուսու հետ միասին ստեղծել մի տուն, որտեղ Հոգին կարող է բնակվել:
Ջեռալդ Կոսե	(98) Փարիզի տարածքում 22 տարի արդյունք հետո Կոսեների ընտանիքը հասկանում է, որ երբեք չի այցելել Էյֆելյան աշտարակը: Երեք աֆրիկացի տղամարդ անցնում են ավելի քան 480 կմ. տարածաշրջանի համաժողովին մասնակցելու, տասանորդ վճարելու և Մորմոնի Գրքի օրինակներ ձեռք բերելու համար:
Դ. Թոդ Զրիստոֆերսոն	(50) Դ Թոդ Զրիստոֆերսոնը խրախուսում է մի կնոջ, որն իրեն պատշաճ մայր չի համարում, և աղոթում է նրա համար:
Լ. Ուիթնի Բլեյթոն	(36) Յոթ տարեկան աղջիկը, որը մնալով ամառանոցից հետո, սողալով գնում է դեպի հեռավոր երևացող լույսը մինչև որ հասնում է ապահով տեղ:
Զվենթին Լ. Բուր	(62) Զվենթին Լ Բուրի քեռին սպասկում է Երկրորդ Համաշխարհային պատերազմի ճակատամարտում: Սամուայում Եկեղեցու մի անդամ, ցանկանալով աղոթել իր հիվանդության համար, հանդիպում է մի բժշկի՝ հիվանդության պատճառը հասկանալու համար:
Չերիլ Ա. Եսփիլին	(8) Չերիլ Ա. Եսփիլինը հաճախում է մի հավաքի, որտեղ քույրերը սովորում են, որ ճշմարտությունը և Սուրբ Հոգին իրենց տներին և ընտանիքներին գործություն են տալիս դիմակայելու չարին: Չերիլ Ա Եսփիլինի նախապապի քույրը գործը հուշում է ստանում իր վկայությամբ կիսվելու մասին:
Չերիլ Բ. Այրինգ	(17) Սուրբ Հոգին միաթարություն և ուժ է տալիս վթարից մահացած փոքր տղայի վշտացող ծնողներին: (22) Չերիլ Բ Այրինգը օրհնված է զգում, քանի որ իր ծոմի նվիրատվությունը կարող է օգնել Վանուատուի Սրբերին, ովքեր տուժել են արևադարձային կործանարար փոթորկից: Մի քույր շնորհակալություն է հայտնում ծոմի նվիրատվությունների համար, որոնց հաշվին նա և Եկեղեցու այլ անդամներ գոյատևել են Սիեռա Լեոնեյի քաղաքացիական պատերազմի ընթացքում: (84) 13 տարեկան Չերիլ Բ Այրինգը հավաքում է ծոմի նվիրատվությունները և մի մարդ նրան ասում է հեռանալ: Չերիլ Բ Այրինգը ոգեշնչվում է օրհնելու վնասվածք ստացած երեխային, որն ապրում է: Սուրբ Հոգին ոգեշնչում է մահացող տղամարդուն ծառայել իր կոչման մեջ և թույլ է տալիս զգալ իր Եպիսկոպոսի ծանր բեռը:
Լարի Մ. Գիբսոն	(77) Լարի Մ Գիբսոնի հայրը իրեն արժաթե մեկ դոլար է տալիս, հիշեցնելով իր հավերժական ճակատագրի մասին: Լարի Մ Գիբսոնն իր որդիների հետ անցնում է 80 կմ. 19 ժամում:
Ջեֆրի Ռ. Հոլլանդ	(104) Երիտասարդ տղամարդը փրկում է իր ավագ եղբորը կիրճն ընկնելուց, բռնելով նրա դաստակից և քաշելով վերև:
Թոմաս Ս. Մոնսոն	(88) Որպես սարկավագ Թոմաս Ս Մոնսոնը իրեն օրհնված է զգում, երբ հաղորդություն է սպասավորում հիվանդ մարդուն: Թոմաս Ս Մոնսոնը սկսում է սիրել Մորմոնի Գիրքը Մարտին Հարրիսի գերեզման այցելելուց հետո: Ծովային ուժերում Թոմաս Ս Մոնսոնը քահանայության օրհնություն է տալիս ընկերոջը, որն ապացիսկում է: (91) Միսիա վերադառնալու համար տաճարում աղոթելուց հետո երիտասարդ տղամարդը հավատարմացում է ստանում վերադարձած միսիոներից, որը ծառայել է նույն միսիայում:
Բրենթ Չ. Նիլսոն	(101) Բրենթ Չ Նիլսոնը և նրա ընտանիքի անդամները սիրով և համբերությամբ սպասում են, թե երբ է իրենց ընտանիքի քիչ ակտիվ անդամը վերադառնալու եկելուց:
Բոննի Լ. Օսկարսոն	(14) Երիտասարդ կինը Իտալիայում 1850թ. դուրս է գալիս ամբոխի դեմ: Բոննի Լ Օսկարսոնի դուստրը պաշտպանում է մայրերի դերը իր երեխաների դպրոցում:
Բոյդ Թ. Փաքեր	(26) Բոյդ Թ Փաքերը քույրի դասարանի մոտ սպասում է իր ապագա կնոջը՝ Դոննա Սմիթին, որպեսզի նրան թխվածքաբլիթ և համբույր տա:
Զեվին Վ. Փիրսոն	(114) Նախագահ Չեքեր Ջ Գրանթին աղոթում է, որպեսզի կարողանա հավատքով մնալ մինչև վերջ: Զեվին Վ Փիրսոնը թողնում իր աշխատանքը՝ որպես միսիայի նախագահ իր կոչումն ընդունելու համար:
Ռաֆայել Ի. Փինո	(117) Ռաֆայել է Փինոյի երեխաները հեռանկար են ձեռք բերում հեռուստատեսային շուրջ դիտելուց և գլոբալիզացիայի հավաքելուց: Տղան հարցնում է Միքելանջելոյին, թե որտեղից նա գիտեր, որ Դավթի քանդակը մարմարե կտորի մեջ էր:
Դեյլ Գ. Ռեյլանդ	(56) Հարավային Աֆրիկայում մի մայր ուսուցանում է իր դուստրերին դիմանալ: Միսիոները հուշում է ստանում, որն օգնում է նրան համբերատար լինել իր զուգընկերոջ հանդեպ:
Մայքլ Տ. Ռինգլուդ	(59) Մայքլ Տ Ռինգլուդը իր միսիայում և սեմինարիայում սովորում է, որ ամենակարևոր ծառայությունն այն է, որն ընդունվում է միայն Աստծո կողմից:
Ուիլսոն Սոարես	(70) Սարկավագը նախազգուշացնում է իր համադասարանցիներին պոռնոգրաֆիայի վտանգի մասին: Ուիլսոն Սոարեսը իր միսիայի ժամանակ սովորում է, որ չարը չի կարող խափանել աշակերտի վկայության գործությունը:
Ջոզեֆ Վ. Սիտատի	(126) Ջոզեֆ Վ Սիտատին դուրս է գալիս համեստ պայմաններից լավ կրթություն ստանալու շնորհիվ:
Զերոլ Մ. Սթեֆենս	(11) Զերոլ Մ Սթեֆենսն այցելում է մի բնիկ ամերիկացի քրոջ Սրիզոնայում, ԱՄՆ, ով իրեն համարում է բոլորի տատը:
Դիտեր Ֆ. Ուլդորֆ	(80) Ոուաստանի նահանգապետը հավաքում է գյուղացիներին և քողարկում շինությունների ճակատային մաքր՝ այցելող դեսպանների վրա տպավորություն գործելու նպատակով: Ցցերի ղեկավարները իրենց ծառայության վրա կենտրոնացած նպատակներ են դնում:
Ռոզմարի Մ. Վիքսոն	(93) Զիչ ակտիվ քույրը վերագտնում է իր հավատքը, երբ ուսումնասիրում է ավետարանը, կարդում Մորմոնի Գիրքը և աջակցություն ստանում իր ընտանիքից և ժխի անդամներից:
Խորխե Ֆ. Ջեբալոս	(123) 12-ամյա Խորխե Ֆ Ջեբալոսի հայրը թույլ է տալիս նրան միանալ Եկեղեցուն: Հավատարիմ զույգն ընդունում է երկնային Հոր կամքը, երբ մահանում է նրանց մանուկը:



Համաժողովը մեր կյանքի մասը դարձնելը

Այս վարժությունները և հարցերը կարող եք օգտագործել ընտանեկան քննարկում սկսելու կամ անհատապես խորհելու համար:

Երեխաների համար

- Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, պատմում է, թե որքան էր վախեցել, երբ պատահաբար կոտրել էր իրենց տան կողքի խանութի պատուհանը (էջ 46): Ապա նա ուսուցանում է, որ երբ մենք նայում ենք Հիսուս Քրիստոսին և հետևում ենք Նրան, մենք վախի փոխարեն խաղաղություն ենք զգում: Ի՞նչ կարող եք դուք անել ամեն օր, որպեսզի օգնեք ձեր երեխաներին նայել Փրկչին: Ինչպե՞ս դուք կարող եք սովորեցնել նրանց առաջ գնալ Քրիստոսով անգամ դժվարությունների պահին:
- Քույր Լինդա Կ Բրոքերը՝ Մփոփող Միության գերագույն նախագահը, պատմում է մի ընտանիքի մասին, որը տեղափոխվում է նոր տուն և որտեղ բակը ցանկապատ չունի (էջ 29): Հայրը ցանկապատում է բակը լարերով և ասում իր երեխաներին, որ նրանք ապահով

կլինեն, եթե մնան այդ գծից ներս: Երեխաները հնազանդվում են, անգամ երբ գնդակը դուրս է ցատկում բակից: Ինչպե՞ս կարող են ծնողներն օգնել իրենց երեխաներին ապահով լինել: Ի՞նչ օրհնություններ են գալիս մեր ծնողներին լսելուց: Ի՞նչ սահմաններ է մեզ տալիս Երկնային Հայրը:

- Եպիսկոպոս Ջեռալդ Կոսեն՝ Նախագահող Եպիսկոպոսության Առաջին Խորհրդականը, պատմում է երեք տղամարդկանց մասին Աֆրիկայում, ովքեր երեք օր քայլեցին ցեխոտ ճանապարհներով տարածաշրջանի ժողովին հասնելու համար (էջ 98): Նրանք մնացին մեկ շաբաթ, որպեսզի կարողանային ընդունել հաղորդությունը տուն վերադառնալուց առաջ: Նրանք իրենց գլուխների վրա տարան Մորմոնի Գրքերով լցված արկղեր, որպեսզի բաժանեին իրենց գյուղի մարդկանց: Դուք համարո՞ւմ եք, որ

ավետարանը զարմանալի բան է: Ի՞նչ զոհաբերություններ եք պատրաստ կատարել՝ ավետարանով ապրելու համար:

Երիտասարդների համար

- Այս համաժողովի ելույթներից շատերը շեշտեցին ընտանիքի և տան կարևորությունը: Օրինակ, Քույր Բոննի Լ Օսկարսոնը՝ Երիտասարդ Կանանց գերագույն նախագահը, խնդրեց Եկեղեցու անդամներին «պաշտպանել տունը որպես մի վայր, որը սրբության առումով իր տեղը զիջում է միայն տաճարին» (էջ 14): Ի՞նչ կարող եք անել տունը պաշտպանելու համար: Ինչպե՞ս կարող եք ձեր տունը դարձնել սուրբ վայր:
- Երեց Ռասել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից ուսուցանել է, որ կիրակի օրը մեր վերաբերմունքը և պահվածքը նշան է մեր և Երկնային Հոր միջև (էջ 129): Երեց Նելսոնի ելույթը կարդալիս կարող եք մտածել այս գալիք կիրակի օրվա մասին և հարցնեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ նշան են ես ցանկանում տալ Աստծուն»:
- Երեց Ուլիսես Մոարեսը Յոթանասուներից պատմեց մի սարկավազի մասին, ով հետևում էր Մորմոնի Հրամանատարի օրինակին (էջ 70): Երիտասարդ տղան, տեսնելով, որ իր համադասարանցիները բջջային հեռախոսների վրա պոռնոգրաֆիկ պատկերների էին նայում, ասաց նրանց, որ սխալ են վարվում և պետք է դադարեն դա անել: Ընկերներից մեկը դադարեց: Ինչպե՞ս կարող ենք ուժ ստանալ ճիշտ ընտրելու համար: Ինչպե՞ս կարող ենք իմանալ, թե որ զվարճանքի ձևն է մեզ համար անվտանգ:
- Էլեկտրոնային սարքերը կարող են գործություն տալու պատռանք ստեղծել, որովհետև թույլ են տալիս մուտք գործել տեղեկության և մեդիայի անսահման ծավալների: Մակայն դուք երբևիցե կանգ առե՞լ եք և մտածել միգուցե *դրանք* վերահսկում են *ձեզ*: Երեց Խոսե Ա Թեյքսեյրան՝

Յոթանասունից, ասաց. «Էլեկտրոնային սարքերը որոշ ժամանակով մի կողմ դնելը թարմացնում է» (Էջ 96): Փորձեք: Ընտրեք մոտ ապագայում և անցկացրեք սարքերից ազատ մեկ օր: Դա, գրեթե, վերջին բանն է, որ դուք ցանկանում եք անել, սակայն դուք կգարմանաք, տեսնելով, թե որքան շատ ժամանակ կունենաք ընկերների և ընտանիքի անդամների հետ խոսելու և լավ հիշողություններ կազմելու համար:

- Ծումապահությունը հոգևոր ուժ ստանալու լավագույն եղանակներից է: Առաջին Նախագահության Առաջին Խորհրդակցան՝ Նախագահ Հենրի Բ. Մյրինգը մեզ հիշեցնում է, որ ծումն ու աղոթքն ամրացրեցին Հիսուսին Սատանայի գայթակղությունների դեմ, երբ Փրկիչն անապատում էր (Էջ 22): Հաջորդ կիրակի փորձեք հետևել Հիսուսի օրինակին և նպատակով աղոթել: Դուք նաև կստանաք աստվածային օգնություն և պաշտպանություն:

Չափահասների համար

- Համաժողովի մի քանի խոսնակներ անդրադարձան ամուսնության և ընտանիքի կարևորությանը հասարակության մեջ և փրկության ծրագրին: Դուք կարող եք պատասխանել հինգ հարցերին, որոնք Քույր Բրոթերնը տալիս է էջ 31-ում, և աղոթքով խարհել, թե ինչպես ավելի լավ կարող եք բարձրացնել և սիրել ձեր կողքին գտնվողներին: Ընտանիքով քննարկեք, թե ինչպես կարող եք ավելի լավ կենտրոնացնել ձեր տունը Հիսուս Քրիստոսի վրա և ինչպես կարող եք ավելի լավ աջակցել միմյանց:
- Նախագահ Թոմաս Մ Մոնսոնը հիշեցնում է մեզ այն օրհնությունների մասին, որոնք գալիս են տաճարային երկրպագությունից, այդ թվում՝ հոգևոր լինելը, խաղաղությունը և գայթակղություններն ու

փորձությունները հաղթահարելու ուժը (Էջ 91): «Տաճար այցելելով մենք հայտնվում ենք հոգևոր մթնոլորտում, զգում խաղաղություն, որը վեր է բոլոր այլ զգացողություններից, որ կարող է զգալ մարդկային սիրտը», - ասաց նա: Ի՞նչ կարող եք անել ձեր տաճարային այցելություններն ավելի իմաստալից դարձնելու համար:

- Առ Հիսուս Քրիստոս հավատքը գործողության սկզբունք է: «Մենք պատահականորեն չենք հավատա Փրկչին և Նրա Ավետարանին, ոչ ավելին, քան պատահականորեն կաղոթենք կամ տասանորդ կվճարենք», - ասաց Երեց Լ Ուիթնի Քլեյթոնը՝ Յոթանասունի Նախագահությունից: «Մենք ակտիվորեն ենք ընտրում հավատալ» (Էջ 36): Կարդալով նրա ելույթը և հետևյալ խոսնակների ելույթները, կազմեք եղանակների մի ցանկ, որոնցով կարող եք ամրացնել ձեր հավատքը Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ. Երեց Դայլին Հ Օուքս՝ Տասներկու Առաքյալների Քվորումից (Էջ 32); Ռոզմարի Մ Վիքսոմ՝ Երեխաների Միության գերագույն նախագահ (Էջ 93); Եպիսկոպոս Ջեռալդ Կոսե (Էջ 98); և Երեց Քեվին Վ Փիրսոն՝ Յոթանասունական (Էջ 114): Ապա խոստացված օրհնությունների

- ցանկ կազմեք, որոնք գալիս են ավելի մեծ հավատքից:
- Երեց Ջեֆրի Ռ Հոլլանդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանեց, որ Փրկչի Քավությունն ու Հարությունը հանդիսանում են «ամենահետևանքային պահը, ամենալիառատ պարզը, ամենատանջալի ցավը և ամենավեհափառ դրսևորումը մաքուր սիրտ, որը երբևէ ցույց է տրվել այս աշխարհի պատմության մեջ» (Էջ 104): Ինչպե՞ս կարող են ձեր մտքերը, խոսքերը և գործողությունները ավելի լավ արտացոլել ձեր երախտագիտությունը այն ամենի համար, ինչ Փրկիչն արել է:
- Նախագահ Դիտեր Ֆ. Ուլդորֆը՝ Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդակցանը, բացատրեց շնորհի հրաշագործ պարզի և հնազանդության ու ապաշխարության կարևորության մասին: «Փորձելով հասկանալ Աստծո շնորհի պարզը մեր ողջ սրտով և մտքով, ավելի շատ պատճառներ ենք ունենում մեր Երկնային Հորը սիրելու և հնազանդվելու, հեզությամբ և երախտագիտությամբ», - ասաց նա (Էջ 107): Կարող եք ավելի սովորել շնորհի մասին, կարդալով Հռովմայեցիս 3.23; 6.1-4; 2 Նեպիի 25.23, 26; Մոսիա 2.21; 5.2; 27.25; Ալմա 34.10, 15; Եթեր 12.27; և Մորոնիի 10.32:





վրա, սակայն տաճար հասնելու համար գրեթե մեկօրյա ուղևորություն է պահանջվում:

Փղոսկրի Ափի Աբիջանի տաճարը

Մոտավորապես 20 միլիոն ազգությամբ Փղոսկրի Ափը (Կոտ դ'Իվուար) ավելի քան 27000 եկեղեցու անդամների բնակավայր է: Միսիոներական աշխատանքը պաշտոնապես սկսվել է 1988 թվականին: Մոտակա տաճարը՝ Աքրա Գանայի տաճարն է, որը 340 մղոն (550 կմ) հեռավորության վրա է:


Թայլանդի Բանգկոկի տաճարը

Մոտավորապես 67 միլիոն ազգությամբ Թայլանդը ավելի քան 19000 վերջին օրերի սրբերի բնակավայր է: Եկեղեցին պաշտոնապես կազմավորվել է Թայլանդում 1966 թվականին: Թայլանդի Բանգկոկի տաճարը կծառայի Թայլանդի վերջին օրերի սրբերին, ինչպես նաև ամբողջ հարավարևելյան Ասիային: Ներկայումս Թայլանդի մոտակա տաճարը Չինաստանի Հոնգ Կոնգի տաճարն է, որը 1000 մղոն (1610 կմ) հեռավորության վրա է:

Լրացուցիչ տաճարային նորություններ

2015 թ. համար հայտարարվել են բաց դռների օրեր, մշակութային միջոցառումներ և բացման ամսաթվեր հինգ տաճարների համար. Կորդովայի (Արգենտինա). Փեյսոնի (Յուտա, ԱՄՆ), Տրոյսիլիոյի (Պերու), Ինդիանապոլիսի (Ինդիանա, ԱՄՆ) և Տիխուանայի (Մեքսիկա): 2015թ. կվերանվիրագործվի նաև Մեքսիկայում Մեյսիկոյի վերակառուցված տաճարը:

Արդեն երկու տարի է, ինչ եկեղեցին կենտրոնացրել է իր ջանքերը նախկինում հայտարարված տաճարներն ավարտելու շուրջ: 3 նոր տաճարներից բացի, կան նաև 144 գործող տաճարներ, 5 վերանորոգվող տաճարներ, 13՝ կառուցվող, և 13 արդեն հայտարարված տաճարներ, որոնք գտնվում են նախապատրաստման տարբեր փուլերում, մինչև կսկսվի շինարարությունը: ■



Հայտարարվել են երեք նոր տաճարներ

Տաճարներ են ծրագրված Պորտ-օ-Պրենսում (Հաիթի), Աբիջանում (Փղոսկրի Ափ), և Բանգկոկում (Թայլանդ), որոնց մասին Նախագահ Թոմաս Մ. Մոնսոնը հայտարարեց գերագույն համաժողովի կիրակի առավոտյան նիստի ժամանակ: Յուրաքանչյուրն այդ երկրներում կառուցվող առաջին տաճարն է լինելու: Տաճարների ճշգրիտ տեղերը կհայտարարվեն ավելի ուշ:

«Ի՞նչ հրաշալի օրհնություններ են սպասում մեր հավատարիմ

անդամներին այդ տարածքներում և, իրոք, որտեղ որ տաճարներ կան ամբողջ աշխարհում», - ասել է Նախագահ Մոնսոնը:

Հաիթիի Պորտ-օ-Պրենսի տաճարը

Մոտավորապես 10 միլիոն ազգությամբ՝ Հաիթին ավելի քան 20000 վերջին օրերի սրբերի բնակավայր է: Միսիոներական աշխատանքը սկսվել է 1980 թվականին: Մոտակա տաճարը՝ Դոմինիկյան Հանրապետության Մանտո Դոմինգոյի տաճարն է: Թեև գտնվում է նույն կղզու

Հաստատված նոր ղեկավարներ

Հինգ նոր բարձրագույն իշխանավորներ են հաստատվել գերագույն համաժողովի ժամանակ, որոնք ծառայելու են Յոթանասունի Առաջին Քվորումում: Նրանք են՝ Երեց Քիմ Բ. Քլարկը, Երեց Ալեն Դ. Հեյնին, Երեց Վոն Գ. Քիչը, Երեց Հյուգո Մոնթոյան և Երեց Վերն Դ. Սթենֆիլդ:

Հաստատվել է նաև Երիտասարդ Տղամարդկանց նոր գերագույն նախագահություն: Մտեֆեն Վ. Օուենը կծառայի որպես նախագահ, Դուգլաս Դ. Հոլմսը՝ առաջին խորհրդական և Մ. Ջոզեֆ Բրուզը՝ երկրորդ խորհրդական:

Հաստատվել է նաև նոր խորհրդական Երեխաների Միության գերագույն նախագահությունում: Մերի Ռ. Դարհեմը կանչվել է ծառայելու որպես երկրորդ խորհրդական: Ռոզմարի Մ. Վիքսոնը կշարունակի ծառայել որպես նախագահ, և Չերիլ Ա. Էսվիլինը, որ նախկինում ծառայում էր որպես երկրորդ խորհրդական, այժմ կծառայի որպես առաջին խորհրդական:

Նոր կանչված ղեկավարների կենսագրությունները կարելի է գտնել 140-144 էջերում: ■



Նախագահ Այրինգը Վատիկանի համագումարում

Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական Նախագահ Հենրի Բ. Այրինգը Վատիկան քաղաքում 2014թ. նոյեմբերի 18-ին՝ կաթոլիկ եկեղեցու կողմից հյուրընկալված միջազգային միջկրոնական համագումարի ժամանակ կոչ է արել, որ «երջանիկ ամուսնությունները վերածնվեն»: «Տղամարդու և կնոջ փոխլրացումը» թեմայով համագումարը համախմբել էր 23 երկրներից 14 հավատքների կրոնական առաջնորդներին:

«Ամուսնությամբ միավորված տղամարդը և կինը, բացառիկ գործություն ունեն երջանկություն ստեղծելու իրենց համար, իրենց ընտանիքի համար և իրենց շրջապատի մարդկանց համար», - ասել է Նախագահ Այրինգը: ■


Մորմոնի Գիրքը՝ 110 լեզուներով

Վերջերս կոսրայերենով հրատարակվելուց հետո՝ Մորմոնի Գիրքն արդեն թարգմանվում է 110 լեզուներով: Կոսրայեն կղզի է Միկրոնեզիայի դաշնային նահանգներում:

Կոսրայերեն Մորմոնի Գրքի տպագիր օրինակները մատչելի կլինեն 2015թ. հուլիսին: Թվային տարբերակներն արդեն մարտ ամսին առկա են LDS.org կայքում, ինչպես նաև Ավետարանական Գրադարանում և Մորմոնի Գրքի շարժական հավելվածներում: Եկեղեցին այժմ թողարկում է սուրբ գրությունների թվային տարբերակները, մինևույն ժամանակ գրքերի տեքստն ուղարկվում է տպագրություն: Այսպիսով, նոր թարգմանված սուրբ գրություններն ավելի շուտ են հասանելի դառնում անդամներին:

Սուրբ գրությունների մի քանի նոր լեզուներով թարգմանություններ կհայտարարվեն առաջիկա երկու տարիների ընթացքում: Մորմոնի Գրքի երեք նոր թարգմանություններ, ինչպես նաև եռահատորի (Մորմոնի Գիրք, Վարդապետություն և Ուխտեր և Թանկագին Մարգարիտ՝ տպագրված մեկ հրատարակությամբ) հինգ լրացուցիչ թարգմանություններ կհրատարակվեն 2015թ. ընթացքում: Երբ թվային տարբերակները պատրաստ կլինեն, այդ լեզուներով խոսող անդամները կտեղեկացվեն: ■





Զորացնել հավատքն՝ աստվածաշնչյան տեսանյութերով

Այս տարի կարող եք օգնել Ազորացնել ձեր և մյուսների հավատքն առ Հիսուս Քրիստոսը՝ դիտելով և առաջարկելով մյուսներին *Հիսուս Քրիստոսի կյանքը, աստվածաշնչյան տեսանյութեր*, որը գտնվում է BibleVideos.org կայքում և Bible Videos հավելվածում:

Հավատք խթանող այս նյութերն ազատ առաջարկվում են մյուս եկեղեցիներին, Փրկչի ուղերձը ողջ աշխարհով հնարավորինս լայն տարածելու նպատակով, օգնելու դիտողներին զգալ Նրա սերը և ոգեշնչել նրանց, որ ցանկանան ավելի շատ նմանվել Նրան:

Այս վերջին երեք տարիներին ընթացքում եկեղեցու թողարկած 92 աստվածաշնչյան տեսանյութերից ավելի քան կեսն արդեն թարգմանվել է անգլերենից իսպաներեն, պորտուգալերեն, իտալերեն, ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն, կորեերեն, ճապոներեն, և չինարեն: ■

Հարց-ու-պատասխան Երեց և Քույր Բեդնարների հետ

Ամբողջ աշխարհի երիտասարդները հրավիրվում են մասնակցելու կենդանի, ինտերակտիվ, դեմ առ դեմ հարց-ու-պատասխանի նիստի՝ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի և նրա կնոջ՝ Սյուզանի հետ:

Երիտասարդությունը կարող է միանալ ինտերակտիվ զրույցին 2015թ. մայիսի 12-ին, ժամը 18:00-ին, դիտելով կենդանի հաղորդումը LDS.org կայքում, LDS Youth ֆեյսբուքյան էջը, Երիտասարդության Միջոցառումներ կայքը (lds.org/youth/activities), կամ the Mormon Channel's YouTube էջը: Հեռարձակումը կենդանի թարգմանությամբ կթարգմանվի նաև իսպաներեն, պորտուգալերեն, իտալերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, կորեերեն, ճապոներեն, և չինարեն:

Երիտասարդները հրավիրվում են հարցեր տալ Երիտասարդության Միջոցառումներ կայքում՝



միջոցառումից առաջ և դրա ընթացքում, նրանք կարող են նաև հետևել զրույցին #LDSface2face-ով:

«Մենք քաջալերում ենք երիտասարդությանը, այս միջոցառմանը պատրաստվելիս փնտրել Հոգու առաջնորդությունը, երբ խորհում են, թե ինչ հարցեր պետք է տան», - ասել է Երեց Բեդնարը: «Երբ Հոգին ունենք մեզ հետ, մենք բոլորս կարող ենք միասին սովորել»: ■

Համաշխարհային հոգևոր հավաք երիտասարդ չափահասների համար

Յոթանասուսի Նախագահությանից Երեց Լին Գ. Ռոբբինսը կխոսի երիտասարդ չափահասներին սվիրված համաշխարհային հոգևոր հավաքի ժամանակ, որը կհեռարձակվի 2015թ. մայիսի 3-ին, ժամը՝ 18.00-ին: Այս հեռարձակումը՝ 2015թ. համար նախատեսված երեք համաշխարհային հոգևոր հավաքներից երկրորդն է:

Հրավիրվում են 18-30 տարեկան բոլոր երիտասարդ չափահասները և ավագ դպրոցը կամ դրան համարժեք ուսումնական հաստատություն ավարտող ուսանողները: Ժողովը կհեռարձակվի Եկեղեցու արբանյակային համակարգով, համացանցով և այլ լրատվամիջոցներով: Հոգևոր հավաքներին վերաբերող լրացուցիչ նյութեր են մատչելի նաև devotionals.lds.org կայքում: ■

Կայքի սպասարկում

հնչ են անում վերջին օրերի սրբերը՝ բարելավելու համար այն համայքները, որտեղ նրանք ապրում են: Պարզեք՝ այցելելով MormonNewsroom.org կայքը: Ահա մի քանի օրինակներ՝ միջազգային նորությունների կայքերի վերջին հրապարակումներից:

Նոր Ջեյանդիա և Վանուատու

Երբ Պամ ցիկլոնը հարվածեց փոքրիկ Խաղաղ կղզու՝ Վանուատուի բնակիչներին, Նոր Ջեյանդիայի Օբլենդի վերջին օրերի սրբերը Եկեղեցու Մարդասիրական Ծառայությունների օգնությամբ միավորվեցին՝ օգնելու փոքրիկից տուժածներին: Նրանք 2000 արկղ սնունդ փաթեթավորեցին, որքան հնարավոր է շատ տուժած բնակիչների օգնելու համար: Յուրաքանչյուր բեռնարկղ լի էր այլուրով, բրնձով, պահածոյացված մրգերով, լոբազգիներով, աղով պատրաստված տավարի մսով, ձկնեղենով, կրեկերներով, չամիչով, արիշտայով, շոկոլադե կաթի փոշիով, և պահածոների բացիչներով: Բեռնարկղերը կարող էին օգտագործվել նաև այլ նպատակներով՝ օրինակ, ջուր տեղափոխելու համար:

Դոմինիկյան Հանրապետություն և Կանադա

Դոմինիկյան Հանրապետությունում և Կանադայում վերջին օրերի սուրբ կանայք համախմբվել էին տոնելու Կանանց միջազգային օրը, մի իրադարձություն, որը հովանավորվում է Միավորված Ազգերի կազմակերպության կողմից:

Դոմինիկյան Հանրապետությունում ավելի քան 1200 կանայք հավաքվել էին եկեղեցու մի քանի հավաքատներում հարգանքի տուրք մատուցելու կանանց, աշխարհում նրանց ունեցած բազմաթիվ ներդրումների համար: Կրոնական, քաղաքացիական և ռազմական առաջնորդներ էին մասնակցել այդ միջոցառմանը, որի ծրագիրը հագեցած էր երաժշտությամբ և ելույթներով: Կանադայում, վերջին օրերի սուրբ կանայք նույնպես նշել են այդ օրը, կիսելով տեղեկատվություն Միավորված Միության մասին, նշելով, որ դա



«ծառայության հզոր անիվ է՝ ամբողջ աշխարհում»:

Միացյալ Թագավորություն

Նրանց նախնական նպատակն էր՝ 100 զգեստ կարել Աֆրիկայի կարիքավոր երեխաների համար, բայց երբ ավարտեցին՝ Անգլիայի Քովենտրի ծխի կանայք կարեցին ավելի, քան 230 հատ: Բարձի երեսներից կարված այս պարզ զգեստները շատ հեշտ էր պատրաստել: Մի քույր, որը երբևէ չէր կարել, կարողացել էր 3 հատ պատրաստել:

Արկանզաս, ԱՄՆ

Ավելի քան 600 մարդ էր մասնակցել կրոնի ազատության թեմայով՝ միջոգավանական համայնքային հոգևոր հավաքին, որը կազմակերպել էր Լիթլ Ռոք Արկանզաս ցիցը, որին ներկա էին կաթոլիկ, մեթոդիստական և իսլամական համայնքների ներկայացուցիչները, ինչպես նաև ավետարանական ռադիոյի անձնակազմը: Բազմաժանր աղջիկները միջոցառմանը ցուցադրվեց նաև նահանգային տեղակալի տեսագրված ուղերձը և փակման աղոթքն ասաց նահանգի սենատորներից մեկը, որոնք երկուսն էլ՝ բապտիստներ էին: Կազմակերպիչներն ասացին, որ միջոցառումը «փոխըմբռնման կամուրջներ» կառուցեց: ■

Ավելի կատարելագործված LDS.org

LDS.org կայքը մայիս ամսից կունենա մեկուկես նոր կառուցվածք և լավ մշակված նավիգացիա՝ իր պաշտոնական կայքն ավելի անհատականացված և օգտագործման մեջ ավելի ոյուրին դարձնելու եկեղեցու շարունակական բարելավումների ամենավերջին տարբերակը:

Ծրագրավորողները և դիզայներները՝ համարելով տարիների ընթացքում ստացած օգտվողների

կարծիքները և լրացուցիչ հետազոտությունները, ստեղծել են ավելի կռահունակ մենյու: Փորձարկումը ցույց տվեց, որ նոր նավիգացիան զգալիորեն ավելի հեշտ է դարձնում բովանդակության և ռեսուրսների փնտրումը:

Առկա է նաև վիդեո ծանոթություն LDS.org կայքին, օգնելու անդամներին ընտելանալ նոր կառուցվածքին: ■

Պատմություններ Առաջին Տեսիլքի մասին

Ամիջապես Ջոզեֆ Սմիթի կողմից գրված Առաջին Տեսիլքի մասին չորս պատմություններն այժմ հասանելի են 10 լեզուներով: Դրանք կարելի է գտնել josephsmithpapers.org կայքում, որտեղ առցանց հեռուստադիտողին նաև մուտք է բացվում դեպի բնօրինակ փաստաթղթերն ու օրագրերը: ■



Մեր ժամանակների ուսմունքները

2015 թ. մայիսից մինչև 2015 թ. հոկտեմբեր ամիսը Մեքսիկոյի Քահանայության և Սփոփող Միության չորրորդ կիրակի օրվա դասերը պետք է պատրաստվեն 2015 թ. ապրիլի գերագույն համաժողովի ելույթների հիման վրա: 2015 թ. հոկտեմբերին ելույթներ կարող են ընտրվել կամ 2015 թ. ապրիլի, կամ 2015 թ. հոկտեմբերի գերագույն համաժողովից: Ցցերի և շրջանների նախագահները պետք է ընտրեն այն ելույթները, որոնք կօգտագործվեն իրենց տարածքներում, կամ նրանք կարող են հանձնարարել այդ պարտականությունը եպիսկոպոսներին և ճյուղերի նախագահներին:

Երանք, ովքեր մասնակցում են չորրորդ կիրակի օրվա դասերին, խրախուսվում են նախօրոք ուսումնասիրել ընտրված ելույթները: Համաժողովի ելույթները տարբեր լեզուներով մատչելի են conference.lds.org կայքում: ■



Երեց Քիմ Բ. Քլարկ
Յոթանասունի Առաջին Քվորում

Ողջ կյանքի տևողությամբ կրթությունը՝ որպես ուսանող և որպես ուսուցիչ, օգուտ կբերի Երեց Քիմ Բրյուս Քլարկին իր նոր նշանակման մեջ՝ Յոթանասունի Առաջին Քվորումում: Հաստատվելով 2015 թ. ապրիլի 4-ին, Երեց Քլարկը կսկսի իր ծառայությունը ընդամենը շաբաթներ անց, երբ կավարտի իր աշխատանքը՝ որպես Այդահոյի Բրիգամ Յանգ Համալսարանի նախագահ:

«Հինգ տարեկանից ես դպրոցում եմ եղել», - ասել է նոր կանչված Յոթանասունականը: «Ես սիրում եմ սովորել և ուսուցանել»:

Նա ծնվել է 1949 թ. մարտի 20-ին Յուտայի Սույթ Լեյք Սիթիում, Մերիլին և Հելեն Մար Քլարկերի ընտանիքում, լինելով երեք երեխաներից ավագը: Իր մանկությունը նա անցկացրել է Սույթ Լեյք Սիթիում, մինչև 11 տարեկան հասակը, երբ նրա հայրը աշխատանք է ձեռք բերել Մոնթանայում, Վաշինգտոն:

Չնայած որ նա ծրագրել էր հաճախել Բրիգամ Յանգի Համալսարանը Պրովոյում, Յուտա, որպես ավագ դպրոցի կրտսեր աշակերտ, նա զգացել է, որ պետք է ուսումնասիրել այլ տարբերակներ, և որոշել է դիմել Հարվարդի Համալսարան Մասաչուսեթսում՝ մի վայր, որն, ի վերջո, դառել է նրա տունը՝ ավելի քան երեք տասնամյակների ընթացքում:

Հարվարդում առաջին տարին սովորելուց հետո Երեց Քլարկը ծառայել է Հարավային Գերմանիայի Միսիսիպիում՝ 1968 թ.-ից մինչև 1970 թ.: Վերադարձից հետո նա հաճախել է ԲՅՀ, որտեղ շուտով հանդիպել է Սյու Լորենյն Հանթին՝ իր ծխում: Մի քանի ամիս հետո՝ 1971 թ. հունիսի 14-ին նրանք ամուսնացել են: Նրանք յոթ երեխաների ծնողներ են:

Ամուսնությունից անմիջապես հետո զույգը տեղափոխվել է Բոստոն, Մասաչուսեթս, որտեղ Երեց Քլարկը կրկին ներգրավվել է Հարվարդում: Այնտեղ նա ստացել է բակալավրի, մագիստրոսի և դոկտորի կոչումները՝ բոլորը տնտեսագիտության ոլորտում: 1978 թ. Երեց Քլարկը դարձել է Հարվարդի Բիզնես Դպրոցի անդամը, իսկ հետագայում, 1995 թ.՝ այդ դպրոցի ղեկավար: 2005 թ. նա դարձել է Այդահոյի ԲՅՀ նախագահը, որտեղ նա ծառայել է գրեթե մեկ տասնամյակ:

Երեց Քլարկը ծառայել է որպես երեցների քվորումի նախագահ, ծխի գործադիր քարտուղար, եպիսկոպոսի խորհրդական, եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական, ցցի միսիսիպի նախագահի խորհրդական և Տարածքային Յոթանասունական: ■



Երեց Ալլեն Դ. Հեյսի

Յոթանասունի Առաջին Քվորումի

Երեց Ալլեն Դեքեր Հեյսին հաստատվել է որպես Յոթանասունի Առաջին Քվորումի անդամ 2015թ. ապրիլի 4-ին:

Երեց Հեյսին ծնվել է 1958թ. օգոստոսի 29-ին Վան Լյոյդի և Սառա Լույու Լյուիս Հեյսիների ընտանիքում:

Նա ծնվել է Յուտայի Լոզանում, սակայն իր երիտասարդության շատ տարիներն անցկացրել է հյուսիսային Յուտայի մյուս քաղաքներում և Կալիֆորնիայի Միլիկոն Վալիում: Նա հաճախել է հինգ տարբեր տարրական դպրոցներ, երկու կրոսեր ավագ դպրոցներ, և վերջապես, հաճախել է ավագ դպրոց՝ Բաունթիֆուլում, Յուտա:

Այս փորձի բազմազանությունը «սովորեցրել է ինձ մի մեծ դաս՝ սովորել գնահատել յուրաքանչյուրին», - ասել է նա, - «քանի որ, կարծես, ամեն տարի ես փոխում էի տեղս, և ամեն անգամ կրկին պետք է ընկերներ ձեռք բերեի: Եկեղեցու հետ կապված իմ սիրած բաներից մեկն այն է, որ այն հնարավորություն է տալիս մեզ շփվել մարդկանց հետ և արժեքներ գտնել նրանց տարբեր ծագումների, փորձի, տաղանդների և ընդունակությունների մեջ»:

Նա ծառայել է Արգենտինայի Կորդովա միսիայում 1977թ.-ից մինչև 1979թ.:

Բրիգամ Յանգ Համալսարանի քաղաքական գիտությունների գծով բակալավրի աստիճան ունենալով, Երեց Հեյսին շարունակեց ուսումը՝ ձեռք բերելով իրավագիտության դոկտորի կոչում համալսարանի Ջ. Ռուբեն Քլարկ իրավագիտության դպրոցում 1985թ.:

Շուրջ մեկ տարի նա կատարել է դատական քարտուղարություն ԱՄՆ իններորդ շրջանի վերաքննիչ դատարանում՝ Սան Դիեգոյում, Կալիֆորնիա, որից հետո միացել է Լաթհամ և Ուոթկինս իրավաբանական ընկերությանը, աշխատելով Սան Դիեգոյի գրասենյակում: Մոտ հինգ տարի առաջ նա և իր եղբայրը հիմնեցին իրենց սեփական իրավաբանական ընկերությունը:

Երեց Հեյսին ծառայել է նաև որպես երեցների քվորումի նախագահ, ծխի Երիտասարդ Տղամարդկանց նախագահ, սեմինարիայի ուսուցիչ, բարձրագույն խորհրդական, եպիսկոպոս, ցցի նախագահ, և Տարածքային Յոթանասունական:

ԲՅՀ հաճախելու ժամանակ նա հանդիպել է Դեբորա Ռուբ Հուլին և նրանք ամուսնացել են 1983թ. դեկտեմբերի 19-ին, Սույթ Լեյքի Տաճարում: Նրանք վեց երեխաների ծնողներ են:

Հուզվելով, երբ խոսում է իր վկայության մասին, Երեց Հեյսին ասել է, որ առաջին անգամ նա կարդացել է նշումներ է արել Մորմոնի Գրքում, երբ 12 տարեկան էր: «Ես չունեմ այդպիսի հիշողություն, որ երբևէ չեմ հավատացել, և, չունեմ հիշողություն՝ որ չեմ աղոթել»: ■



Երեց Վոն Գ. Քիչ

Յոթանասունի Առաջին Քվորում

Երեց Վոն Գ. Քիչի կյանքում մի որոշիչ պահ էր, երբ նա ավարտում էր դատական քարտուղարությունը Միացյալ Նահանգների Գերագույն դատարանի գլխավոր դատավոր Ուորրեն Ի. Բրոգերի և դատավոր՝ Անտոնին Սկալիայի հետ, և երբ պատրաստվում էր լրիվ դրույթով զբաղվել իրավաբանությամբ:

Նա կարող էր աշխատել Միացյալ Նահանգների ցանկացած քաղաքում, քանի որ կային բազմաթիվ խոշոր իրավաբանական ընկերություններ: Փոխարենը, նա և նրա կինը՝ Բերնիս Թիմմ Քիչը, աղոթեցին ոգեշնչման համար, թե ինչ պետք է անեն: Որոշումների մի շրջանից հետո գույզը վերադարձավ Սույթ Լեյք Միթի, Յուտա, որտեղ նա գնաց աշխատելու Քիրթոն Մակքոնկի իրավաբանական ընկերությունում:

Միևնույն ժամանակ Երեց Քիչը մտածեց, որ կարող է զոհաբերել իր աշխատանքը իրավաբանական գործերի առաջատար դիրքերում, որպեսզի իր ընտանիքի կողքին լինի: Փոխարենը, որպես արտաքին իրավաբանական խորհրդի նախագահ, Երեց Քիչը Եկեղեցու համար պաշտպանել է կրոնական ազատության սահմանադրական խնդիրները և նախադեպային ընդլայնված դեպքերը: Նա ներկայացրել է երկրի գրեթե բոլոր մեծ կրոնական դավանանքները: «Ես սիրեցի այն, որ կարող եմ աշխատել նման մեծ հաճախորդի համար և նման մեծ հարցերի շուրջ», - ասել է նա:

Ծնված 1960թ. մարտի 17-ին Դրովոյում, Յուտա, Գերի և Դիննե Քիչերի ընտանիքում, Երեց Քիչը ավագն է՝ չորս երեխաներից: Նրա ընտանիքը ապրում էր Օրեմում, Յուտա, մինչև Փլեզանթ Գրով տեղափոխվելը, որտեղ նա և նրա ապագա կինը միսին ծառայել են ավագ դպրոցի սեմինարիայի խորհրդում:

Երեց Քիչը ծառայել է Գերմանիայի Դյուսելդորֆ Միսիայում և սկսել է սիրել գերմանացիներին: Միսիայից վերադառնալուց հետո նա ամուսնացել է Բերնիս Փիմմի հետ Սույթ Լեյքի Տաճարում, 1981թ. նոյեմբերի 21-ին, նրանք ունեն վեց երեխա: Երեց Քիչն ավարտել է Բրիգամ Յանգ Համալսարանը 1984թ.՝ քաղաքական գիտությունների աստիճանով և ստացել է նաև իրավագիտության աստիճան համալսարանում՝ 1987թ.:

Տարիների ընթացքում, Երեց Քիչը, ով 2015թ. ապրիլի 4-ին հաստատվել է Յոթանասունի Առաջին Քվորումում, ծառայել է եպիսկոպոսությունում, բարձրագույն խորհուրդներում, որպես ցցի նախագահ և որպես Տարածքային Յոթանասունական: ■



Երեց Հյուզո Մոնթոյա

Յոթանասունի Առաջին Քվորում

Երեց Հյուզո Մոնթոյան զգալիորեն ծանրաբեռնված էր, երբ կանչվեց Յոթանասունի Առաջին Քվորում: Նա մխիթարություն գտավ Նախագահ Թոմաս Մ. Մոնտոնի մեղմ խոսքերում, որոնք ասվեցին նոր բարձրագույն իշխանավորների ուսուցման հավաքին. «Դուք այստեղ եք, քանի որ սիրում եք Փրկչին»: Երեց Մոնթոյան իրեն վեհացած զգաց, իմանալով, որ նոր կոչման շնորհիվ նա հայտնվել է Տիրոջ այգում:

«Ես սիրում եմ Փրկչին և ես կգնամ, ուր որ ինձ ասվի», - ասել է նա: «Ես կանեմ, ինչ որ ինձ ասվի»: Երեց Մոնթոյան հաստատվել է Եկեղեցու 185-րդ ամենամյա Գերագույն Համաժողովի շաբաթ երեկոյան նիստի ժամանակ:

Երեց Մոնթոյան նաև ուժ է գտել իր ընտանիքի հավատքի ժառանգության մեջ: Նրա մեծ պապը՝ Ռաֆայել Մոնրոն, Մեքսիկայում Եկեղեցու պատմության կարկառուն ներկայացուցիչներից էր: 1915թ. եղբայր Մոնրոն և անդամ-ընկերներից մեկը՝ Վիսենտե Մորալեսը ձերբակալվել էին մի խումբ հեղափոխականների հետ Մեքսիկայի հեղափոխության ժամանակ: Երկուսին էլ ասվել էր, որ ազատ կարձակվեն, եթե, ի թիվս այլ պահանջների, նրանք հրաժարվեն իրենց կրոնից:

Երկուսն էլ հրաժարվել էին և գնդակահարվել՝ ջոկատայինների կողմից:

Երեց Մոնթոյան ասել է, որ իր մեծ պապի օրինակը մի զորավոր ազդեցություն է թողել նրա կյանքում: «Ես հասկացա, որ վախի զգացմունքները կարելի է հաղթահարել հավատքի զգացմունքներով և վկայությամբ, երբ դուք գիտեք, որ անում եք ճիշտ բաներ»:

Երեց Մոնթոյան ծնվել է 1960թ. ապրիլի 2-ին Ֆրեզնոյում, Կալիֆոռնիա, Աբել Մոնթոյայի և Մակյովիա Մոնրոյի ընտանիքում: Նա իր կյանքի մեծ մասն ապրել է Մեքսիկայում:

Նա ամուսնացել է Մարիա դել Կարմեն Բավաստորոյի հետ Հերմոսիլյոյում, նրանք կնքվել են Մեսա Արիզոնա Տաճարում 1983թ. ապրիլի 6-ին: Նրանք ունեն հինգ երեխա:

Որպես լիաժամկետ միսիոներ Մեքսիկայի Հյուսիսային Միսիայում 1979–1981թթ. ծառայելուց հետո, նա ծառայել է որպես ծխի Երիտասարդ Տղամարդկանց նախագահ, բարձրագույն խորհրդական, եպիսկոպոս, ցցի նախագահ, տարածքային առաջնորդ և Տարածքային Յոթանասունական:

1986 թ. նա ավարտել է Մոնորայի պետական համալսարանը, գյուղատնտեսական ինժեների աստիճանով և աշխատել է մի շարք ղեկավար պաշտոններում Xerox ընկերությունում, ինչպես նաև որպես ինստիտուտի ուսուցիչ՝ Եկեղեցում: ■



Երեց Վերն Փ. Սթենֆիլ

Յոթանասունի Առաջին Քվորում

Երեց Վերն Փերի Սթենֆիլը հավատում է, որ չկա պատահականություն: Նա կարծում է, որ այս կյանքում մարդկանց միջև հանդիպումներ են լինում ինչ-որ նպատակով, և Տերը կարող է ոգեշնչել Իր զավակներին, որ օրհնություն լինեն մյուսների համար:

Երեց Սթենֆիլը վայելում է մարդկանց սպասավորելն ավետարանում, հատկապես երբ մարդկանց հետ առանձին-առանձին է հանդիպում:

Երեց Սթենֆիլը ծնվել է 1957թ. օգոստոսի 8-ին Ջեդ և Պեզզի Սթենֆիլների ընտանիքում և մեծացել է Մոնտանայի Թաունսենդ քաղաքի մերձակա ֆերմայում: Նա իմացել է քրոնաջան աշխատանքի արժեքը և վկայություն է ձեռք բերել Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի մասին: Լինելով չորս երեխաներից երրորդը՝ Երեց Սթենֆիլն ունի երկու ավագ եղբայրներ և կրտսեր քույր, ովքեր հավատարմորեն ծառայել են Եկեղեցում:

«Տիրոջ ձեռքը ներկա է մեր կյանքում, չնայած մեր թույլություններին», - ասել է նա: «Կինս և ես կատարյալ մարդիկ չենք: Մենք չունենք կատարյալ ընտանիք: Մենք սովորական մարդիկ ենք, օրեցօր ապրող մեր կյանքով և թույլ տալով, որ Տերը լինի մեր կյանքի մասը»:

Ֆրանսիայի Թուրոզ քաղաքում իր լիաժամկետ միսիան ծառայելուց և Բրիզամ Յանգ Համալսարանում գյուղատնտեսության ոլորտում աստիճան ստանալուց հետո նա հանդիպել և ամուսնացել է Ալիսիա Կոքսի հետ: Նրանք ամուսնացել են 1980թ. դեկտեմբերի 17-ին, Սոլթ Լեյքի տաճարում:

Համալսարանն ավարտելուց հետո, Սթենֆիլները վերադարձել են Մոնտանա, որպեսզի նա կարողանար օգնել ընտանիքին ֆերմայի գործերում՝ անասնազմում, չոր խոտի և հացահատիկի հետ կապված: Նա վաճառել է բիզնեսը 1998թ., և սկսել է կառավարել անշարժ գույքի գործակալության գործերը և ֆինանսական լծակները, ինչպես նաև նախաձեռնել՝ բարեգործական և գույքի հետ կապված գործեր:

Երեց Սթենֆիլը ներգրավված է եղել ավիացիայի ոլորտում, ինչպես բիզնեսի գծով, այնպես էլ՝ սիրողական:

Կնոջ հետ միասին չորս դուստրերին մեծացնելուց բացի, Երեց Սթենֆիլը հնարավորություն է ունեցել ծառայելու Եկեղեցում որպես երեցների քվորումի նախագահ, եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական, ցցի նախագահ և Տարածքային Յոթանասունական: Նա ծառայում էր Յոթանասունի Վեցերորդ Քվորումում այն պահին, երբ կանչվեց Առաջին Քվորում: ■



Մերի Ռ. Դարհեմ

Երեխաների Միության Գերագույն
Նախագահության Երկրորդ
խորհրդական

Բալանսի բերելով ընտանեկան կյանքի, Եկեղեցու կոչումների, կարիերայի և այլ պարտականությունների պահանջներն իր ողջ ամուսնական կյանքի ընթացքում, Մերի Ռիչարդս Դարհեմը նկատել է, որ երբ նա և իր ամուսինը Տիրոջը առաջին տեղն են դասում, ամեն ինչ իր տեղն է ընկնում: «Դա քաղցր զգացում է: Երբ ապավինում եք Նրան, Տերը օրհնում է ձեզ», - ասել է նա:

Դա այն է, ինչ նա տեսել է կրկնվելիս մի քանի անգամ: Նա կանչվել էր ծառայելու որպես ծխի Երիտասարդ Կանանց նախագահ, մինչ նրա ամուսինը ծառայում էր ցցի նախագահությունում: Ավելի ուշ, նրանք ծառայել են միասին, երբ նրա ամուսինը նախագահում էր ճապոնիայի Տոկիո Միսիան 2000թ.-ից մինչև 2003թ.: Այժմ նա ծառայելու է որպես Երեխաների Միության Գերագույն Նախագահության Երկրորդ խորհրդական, մինևույն ժամանակ նրա ամուսինը սկսելու է իր ծառայությունը որպես Տարածքային Յոթանասունական:

«Քանի որ մենք կապված ենք մեկս մյուսի հետ, և Տիրոջ հետ, ամեն ինչ ավելի հեշտ է դառնում», - ասել է նա:

Մերի Լյուսի Ռիչարդսը ծնվել է 1954թ. մարտի 15-ին Վիրջինիայի Փորթսմաութ քաղաքում, Լ. Սթեֆեն Ռիչարդս կրտ. և Անետ Ռիչարդսի ընտանիքում: Մինչդեռ նրա հայրը սովորում էր բժշկական աստիճանի համար, ընտանիքը տեղափոխվեց Մինեսոտայի, Մինեսոտա, մինչև բնակվելը Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա:

Օնոդների և մեծ ընտանիքի կողմից հավատքով ու սիրով գործարկված, նա հասկացավ, որ ավետարանը ճշմարիտ է: «Դա մի երջանիկ փորձառություն էր՝ ապրել ըստ ավետարանի: Դա դժվար չէր: Դա հաճելի էր», - ասել է քույր Դարհեմը:

Որպես երիտասարդ աղջիկ նա տպավորվել էր ամուսնանալու նպատակով արժանի երիտասարդի փնտրելու կարևորությամբ և դա դարձրել էր առօրյա աղոթքների և շաբաթական ծոմապահության առարկա: Ավագ դպրոցից հետո նա հաճախում էր Բրիգամ Յանգ Համալսարան՝ պարային դասերի և այնտեղ հանդիպել է Մարկ Դարհեմին, որը Յուտայի Համալսարանի ուսանող էր: «Ես անմիջապես ճանաչեցի նրա բարի էությունը», - ասել է նա:

Չույզն ամուսնացել է 1974թ. հունիսին՝ Սոլթ Լեյքի տաճարում: Նրանք ունեն յոթ երեխա:

Քույր Դարհեմը ծառայել է որպես ցցի Սփոփող Միության նախագահ, ծխի Սփոփող Միության նախագահության խորհրդական, ավետարանի վարդապետության հրահանգիչ, ծխի Երիտասարդ Կանանց նախագահ, և, վերջերս, որպես Երեխաների Միության գերագույն խորհրդի անդամ: ■



Ստեֆեն Վ. Օուեն

Երիտասարդ Տղամարդկանց Գերագույն
Նախագահ

Երբ Ստեֆեն Վ. Օուենը 14 տարեկան էր, նրա Խարևանն ընդունեց նրան աշխատանքի, որ կտրի խոտը իր ընդարձակ բակում, և ամեն շաբաթ մաքրի այգին: «Երեք օր պահանջվեց, որ հնձեմ այդ մարգագետինը», - ծայտով ասել է եղբայր Օուենը, ով 2015թ. ապրիլի 4-ին հաստատվել է որպես Երիտասարդ Տղամարդկանց Գերագույն Նախագահ:

Երբ երիտասարդ Ստեֆենը վերջապես ավարտել է աշխատանքը, նրա իմաստուն գործատուն խնդրել է նրան, որ միանա իրեն և զբոսնեն այգում, որպեսզի մատնանշի մի քանի անտեսված մուլախոտեր:

«Նա ինձ ասել էր, որ ես պետք է պոկեմ բոլոր մուլախոտերը», - ասել է նա: «Դա իմ առաջին աշխատանքն էր, և այն օգնեց ինձ հասկանալ, թե ինչ է նշանակում պարտավորված լինել»:

Եղբայր Օուենը դասեր քաղեց այդ տարի և շատ հեռու գնաց մարգագետիններից և այգու խնամքից: Առաջինը, նա հայտնաբերել է, որ բավարարվածությունն առաջանում է նրանից, երբ դժվար բաները ճիշտ են կատարվում: Նա նաև սովորել է գնահատել ուսուցիչներին:

Հարևանը միայն լավագույնն էր ակնկալում Ստեֆենից: Կարծես նա ասեր ինձ. «Ես գիտեմ, թե դու ինչ ես դառնալու և ես ցանկանում եմ օգնել քեզ»:

Նա ավելացրել է, որ Եկեղեցու յուրաքանչյուր երիտասարդ այդպիսի ուսուցիչների կարիք ունի, որ օգնեն նրան դառնալ քահանայություն կրող՝ իր լավագույններով չափով: «Ես շատ մեծ համակրանք եմ զգում երիտասարդների հանդեպ», - ասել է նա: «Ես սիրում եմ նրանց և գիտեմ, որ սա կրիտիկական շրջան է, որը օրինակելի կլինի նրանց ողջ կյանքի ընթացքում»:

Եղբայր Օուենը ծառայել է Տեխասի Ման Անտոնիո Միսիայում, իսկ հետագայում ծառայել է որպես սքաուտների ջոկատավար, ծխի Երիտասարդ Տղամարդկանց նախագահ, եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական, և ցցի նախագահ:

Նա նաև նախագահել է Կալիֆոռնիա Արկադա Միսիան՝ 2005թ.-ից մինչև 2008թ., որտեղ նա ծառայել է իր կնոջ՝ Ջեյն Մորիսգիամ Օուենի հետ: Նրանք ամուսնացել են 1979թ. դեկտեմբերի 28-ին, Պրովո Յուտա տաճարում: Նրանք ունեն հինգ երեխա:

Նա ծնվել է 1958թ. մարտի 22-ին Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, Գորդոն և Կարոլին Օուենների ընտանիքում: Նա ավարտել է Յուտայի Համալսարանը ֆինանսական աստիճանով և այժմ՝ Յուտայի Պրովո քաղաքի «Գրեյթ Հարվեսթ Բրեդ» ընկերության նախագահն է: ■



Դուզլաս Դ. Հոլմս

Երիտասարդ Տղամարդկանց Գերագույն Նախագահության առաջին խորհրդակալ

Երիտասարդների այս սերունդը հնազանդության ավելի մեծ ունակություն ունի, քան ցանկացած նախորդ սերունդ: Կարծում եմ, որ դա Տիրոջ ժամանակացույցի և ներկա օրերում ապրելու նախապատրաստման մի մասն է», - ասել է եղբայր Դուզլաս Դ. Հոլմսը, ով 2015թ. ապրիլի 4-ին հաստատվել է որպես Երիտասարդ Տղամարդկանց Գերագույն Նախագահության առաջին խորհրդակալ:

Եղբայր Հոլմսը ծնվել է 1961թ. փետրվարի 27-ին Մոլթ Լեյք Սիթիում, Յուտա, Դի Վ. և Մելբա Հովել Հովմսերի ընտանիքում, և մեծացել է Յուտայի Քոթոնվուդ Հայթսում:

Շոտլանդիայի Գլազգոյի միսիայում 1980թ.–1982թ. ծառայելուց հետո, եղբայր Հոլմսը 1986թ. ստացել է բակալավրի աստիճան Բրիգամ Յանգ Համալսարանի ընտանեկան գիտությունների գծով և շարունակել է ուսումը՝ համալսարանի կառավարման Մարիոթ Դայրցում, ստանալով բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան:

Ավարտելուց հետո, երեք տարի նա աշխատել է կառավարման խորհրդատու, և ապա հաջող կարիերա է ստեղծել հեռահաղորդակցման ոլորտում, դառնալով Մեդիա Ուան Գրուպի ընկերության գործադիր փոխնախագահ՝ ռազմավարության և կորպորատիվ զարգացման գծով: 2000թ. սկսած, մինչև 2010թ. միսիայի նախագահ կանչվելը, և կրկին 2013թ.-ից նա աշխատում էր իր սեփական բիզնեսում՝ անշարժ գույքի զարգացման և ներդրումների ոլորտում:

Նա իր ժամանակի և տաղանդների մեծ մասը նվիրել է ոչ առևտրային կազմակերպություններին, ծառայելով Դեյվիս գավառի «Միացյալ ճանապարհ» ընկերության խորհրդում՝ Յուտայում, «Մոտոները կրթության ընտրության համար» կազմակերպությունում, «Ապահով սպաստան կանանց համար»՝ Դեյվիս գավառում, և Ձեռնարկությունների հիմնադրման ակադեմիայում:

Նա ծառայել է որպես ծխի միսիայի ղեկավար, ծխի Երիտասարդ Տղամարդկանց նախագահ, եպիսկոպոս, և վերջերս՝ որպես ցցի նախագահության խորհրդակալ: Նախագահել է Միչիգան Դետրոյտ Միսիան 2010թ.–2013թ.:

Նա ամուսնացել է Էրին Սյու Տունեի հետ 1985թ. հունիսի 22-ին, Մոլթ Լեյքի տաճարում: Նրանք վեց երեխաների ծնողներ են:

«Մենք տեսել ենք խոսքի զորությունը մեր կյանքում, անկախ նրանից, թե դա եղել է մարգարեների խոսքը, սուրբ գրությունների խոսքը, թե Սուրբ Հոգու շնչոցը», - ասել է եղբայր Հոլմսը: ■



Մ. Ջոզեֆ Բրուզ

Երիտասարդ Տղամարդկանց Գերագույն Նախագահության երկրորդ խորհրդակալ

Երեք տարիների ընթացքում, երբ Մ. Ջոզեֆ Բրուզը ծառայում էր որպես նախագահ Գվատեմալայի Գվատեմալա քաղաքի կենտրոնական միսիայում (2011թ.-ից մինչև 2014թ.), մահացան և՛ նրա հայրը, և՛ նրա կնոջ հայրը:

Թեև նրա կինը կարող էր վերադառնալ Միացյալ Նահանգներ՝ թաղմանը ներկա լինելու համար, սակայն երկու դեպքերում էլ զույգը որոշեց, որ նա մնա Գվատեմալայում և շարունակի իրենց միսիոներական աշխատանքը: «Մենք գիտեինք, որ ավելի լավ է մնալինք և աշխատեինք, որքան որ կարող էինք», - ասել է եղբայր Բրուզը, ով 2015թ. ապրիլի 4-ին հաստատվել է որպես Երիտասարդ Տղամարդկանց Գերագույն Նախագահության երկրորդ խորհրդակալ: «Դա այն էր, ինչ մեզանից կակրնկալեին նրա և իմ հայրերը»:

Եղբայր Բրուզը ծնվել է 1963թ. դեկտեմբերի 11-ին Մոլթ Լեյք Սիթիում, Մոնթե Ջ. և Ադա Բ. Բրուզերի ընտանիքում: Իր երիտասարդ տարիները նա անցկացրել է Յուտայի Ֆարմինգթոն և Վալյոմինգի Ռոբերթսոն քաղաքներում: Ընտանիքը տեղափոխվել է Մինեսոտա, երբ Ջոզեֆի հայրը, որը հետագայում ծառայել է որպես Յոթանասունի անդամ, կանչվել էր որպես միսիայի նախագահ: Ջոզեֆը ավագ դպրոցի ավագ աշակերտ էր, երբ նրա հայրն ավարտեց միսիայի նախագահի իր ծառայությունը: Ավագ դպրոց վերադառնալու փոխարեն Ջոզեֆը ավագ դպրոցի մակարդակի քննություն հանձնեց և միանգամից ընդունվեց Վեբերի Պետական Համալսարան՝ Օգդենում, Յուտա:

Նրա ծնողները, սակայն, պնդեցին, որ նա ավարտի սեմինարիան՝ քառամյա վկայականով: Դեյվիսի ավագ դպրոցի սեմինարիա հաճախելու ժամանակ նա հանդիպել է իր ապագա կնոջը՝ Էմիլի Ջեյն Թոմպսոնին: Նրանք ամուսնացել են 1985թ. ապրիլի 25-ին Մոլթ Լեյքի տաճարում, և չորս երեխաների ծնողներ են:

Նախքան ամուսնանալը եղբայր Բրուզը միսիոներ էր՝ Գվատեմալայի Քուեցցալտենանգո միսիայում: Նա ասել է, որ իր միսիայի նախագահը՝ Ջորջ Հ. Պերեզը դարձել է իր կյանքի ամենաազդեցիկ մարդը:

Յուտայում Ռոթեյշնըր Մոլդինգի հիմնադիրը և սեփականատերը լինելով, նա բակալավրի աստիճան է ստացել ֆինանսների ոլորտում, ինչպես նաև բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան՝ Յուտայի Համալսարանում: Եկեղեցում նա ծառայել է որպես եպիսկոպոս, ծխի Երիտասարդ Տղամարդկանց նախագահ և բարձրագույն խորհրդակալ: ■



Քո առաջ, Տեր, Անէթ Էվերէթ

*Քո առաջ, Տեր, գլուխս եւ խոնարհում,
Խոսքերի համար շնորհակալություն հայտնում:
Հոգիս հրճվում է, խեղճ սիրտս երգում,
Երբ Հոգիդ քաղցր այս մեղեդիին է նվագում:
Որքան քաղցր էր խոսքդ, որ լսեցի այսօր:
Առաջնորդիի ինձ, աղոթում եմ, Տեր:
Համբերությամբ թող ես իմ մասն անեմ:
Մտտում իմ թող դրոշմվի խոսքդ վսեմ:
(Օրհներգեր, հ. 158)*



«Թող որ մեր Երկնային Հայրն օրհնի մեզ, որ մենք ունենանք տաճարային երկրպագության ոգին, հնազանդ լինենք Նրա պատվիրաններին և ուշադիր հետևենք մեր Տեր և Փրկիչ Հիսուս Զրիստոսի քայլերին», - ասաց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Եկեղեցու 185-րդ տարեկան գերագույն համաժողովին: Ես վկայում եմ, որ Նա է մեր Զավիչը: Նա է Աստծո Որդին: Այդ առաջին Չատկի առավոտյան Նա դուրս եկավ գերեզմանից, Իր հետ բերելով հավիտենական կյանքի պարզևը Աստծո բոլոր զավակներին»:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՁՆԻ ՕՐԵՐԻ ՄՐԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ